

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
№ 4 (42)

ԵՐԵՎԱՆ - 2018

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
АРМЕНОБЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ռ. Կ. Միրզախանյան (նախագահ),

Մ. Գ. Գիլավյան (**գլխավոր խմբագիր**),
Ա. Ա. Ավագյան, Ս. Դ. Դանիելյան, Ա. Գ. Դոլուխանյան,
Ա. Կ. Եղիազարյան, Լ. Մ. Խաչատրյան, Ա. Վ. Գալստյան,
Հ. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան, Լ. Շ. Հովհաննիսյան,
Ա. Ա. Մակարյան, Ռ. Ռ. Ղազարյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,
Ա. Սեփեթճյան (Բեյրութ), Հ. Նալբանդյան (ԱՄՆ), Մ. Ադամյան (Մեծ Բրիտանիա)

Լ. Մ. Ալեքսանյան (**տեխնիկական խմբագիր**)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն վերադարձվում:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

«Հայագիտական հանդես» ամսագիրն ընդգրկված է թեկնածուականատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ԲՈՀ-ի կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում (12.05.06թ. 133-01):

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)

Էլեկտրոնային փոստ՝ alexsanyan00@mail.ru

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՀ դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ghazaryanruzan@ysu.am

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
anna.khachatryan@ysu.am
ՀՏԴ 81

ԲԱՌԱԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Բանալի բառեր և արտահայտություններ. բառախաղ, թարգմանություն, ճարտասանական գործառույթ, բազմիմաստություն, համանունություն, կոմիկական ստեղծագործություն, հումորի արտահայտման միջոց, ձևի և բովանդակության փոխանցում, խոսքային միջոցներ:

Ключевые слова и выражения: игра слов, перевод, риторическая функция, многозначность, омонимия, средство выражения юмора, передача формы и содержания, речевые средства.

Key words and expressions: wordplay, translation, rhetorical function, polysemy, homonymy, comic work, means of expressing humor, conveyance of form and content, verbal means.

Գեղարվեստական /բանաստեղծական/ լեզուն տարբերվում է ամենօրյա սովորական լեզվից իր ձգտումով դեպի վերջինիս մեջ ընդունված նորմերի խախտումը, և սրանով իսկ հակադրվում է դրան: Լեզվական շեղումների տեսությունն իր առջև խնդիր է դնում բացատրություն տալ որոշ գործնականորեն կարևոր հարցերին, ինչպես՝ ինչո՞ւ են տարբերվում բանաստեղծական շեղումները պարզապես լեզվի սխալ գործածումից, ինչպիսի՞ն է լեզվաարտահայտչական միջոցների, ոճական հնարների իմաստաբանական ազդեցության բնույթը:

Նման հարցերին փորձում է պատասխան տալ ճարտասանության տեսությունը: Բանաստեղծական շեղումները տարբերվում են լեզվի սխալ

գործածումից իրենց միտումնավոր կիրառմամբ: Դրանք համատեքստ են ներմուծվում՝ խոսքին արտահայտչականություն հաղորդելու նպատակով: Լեզվական շեղումների դերը հատկապես մեծ է գեղարվեստական կերպարի խոսքային նկարագրի բնութագրման մեջ, քանի որ դրանք բացահայտում են այս կամ այն հասարակական կամ սոցիալական խավի ներկայացուցիչների աշխարհայացքը հասարակական արժեքների նկատմամբ, հասարակության մեջ ունեցած դերը և դիրքը:

Այսպիսով, առանց ժխտելու գիտակցաբար կատարվող լեզվական շեղումների փաստը՝ ճարտասանության տեսությունն իր ուշադրությունը կենտրոնացնում է այդ շեղումների տիպերի բացահայտման և դրանց ըմբռնման ապահովման համապատասխան մեխանիզմների վրա: Լեզվի տարբեր մակարդակներում ճարտասանական գործառույթի իրականացումը կարող է անդրադառնալ տեքստի թե արտահայտության, թե բովանդակության պլանին:

Ճարտասանական գործառույթի իրականացման ձևերից մեկը **բառախաղն** է, որը միևնույն ուղղագրություն կամ արտասանություն, սակայն տարբեր իմաստներ ունեցող բառերի /հաճախ հոմոնիմային/ գործածումն է, երբ խաղարկվում են բառի երկու և ավելի հնարավոր կիրառություններ, այսինքն՝ այն «բառերի խաղ է»: Բառախաղի էությունը հետևյալն է. միևնույն հնչյունական կամ ուղղագրական ձևի մեջ բախվում կամ, ընդհակառակը, անսպասելիորեն միավորվում են երկու անհամատեղելի նշանակություններ, այսինքն՝ բառախաղը հիմնված է այնպիսի հասկացությունների մերձեցման, համադրման և համեմատության վրա, որոնք սովորական պայմաններում համադրելի չեն: Մարկ Տվենն ասում էր. «Սրամտությունը այն մտքերի անսպասելի միավորումն է, որոնք մինչ այդ, թվում էր, որևէ հարաբերությունների մեջ չէին գտնվում միմյանց հետ»¹:

Բառախաղի գործելու մեխանիզմը կարելի է նկարագրել որպես բառերի հնչողության և իմաստի հակադրման սկզբունք, այսինքն՝ նման հնչողությամբ և տարբեր իմաստով բառերի շահարկում: Այն կարելի է սահմանել որպես «հակադրությունների անսպասելի համադրում, այսինքն՝ այս ոճական դարձվածքը հիմնված է տարբեր իմաստներ, սակայն միևնույն հնչողություն ունեցող բառերի գործածության վրա, կամ բառերի և բառակապակցությունների նման հնչողության վրա, և կամ միևնույն բառի, բառակապակցության տարբեր իմաստների շահարկման վրա: Բառախաղի

¹ Твен М., Библиотека крокодила, #15, М, 1947, стр 18

հաջողության գրավականը նրա անկանխատեսելիությունն ու անսպասելիությունն են:

Այսպիսով, բառախաղը ձևավորվում է բառի մեջ տարբեր նշանակությունների բախումից և կամ էլ համանունների նշանակությունների բախումից: Հնարավոր են նաև բառախաղի ստեղծման այլ խոսքային միջոցներ, ինչպես օր. հնչողությամբ մոտ, բայց իմաստով տարբեր բառերի վրա հիմնված, և կամ դարձվածքների տրոհման վրա հիմնված և այլն: Բառախաղը բանադարձում է², որ կառուցվում է տարիմաստ բառերի արտաքին հնչյունական նմանությունը կամ նույն բառի տարբեր իմաստներն օգտագործելով, որի ժամանակ ստեղծվում է մի տեսակ «իմաստների խաղ»: Բառախաղերում բացի բացի համանուն և բազմիմաստ բառերից օգտագործվում են նաև հարանուններ, շրջաբառայիններ և այլն:

Բառախաղն օգտագործվում է երգիծական ժանրերում, գեղարվեստական երկերում, հրապարակախոսության մեջ և խոսակցական լեզվում: Այն ոչ միայն ծաղրելու, այլև խոսքի իմաստային խորությունն ուժեղացնելու, խոսքն արտահայտիչ ու պատկերավոր դարձնելու համար է: Բառախաղը մարդկանց մտքերը երկվությամբ արտահայտող լավագույն միջոցն է:

Բառախաղերը կոչվում են նաև բանավոր, գործնական կատակներ **/verbal practical jokes/**, դրանք հատկանշական են մի շարք լեզվական համատեքստերի համար, ինչպես սև հումորը, գրքերի վերնագրերը և այլն»³:

Բառախաղի գործածականության աստիճանը կախված է նախ և առաջ ժողովրդի խառնվածքից: Դրանց տարածվածության աստիճանը յուրաքանչյուր լեզվում և մշակույթում տարբեր է, օրինակ՝ դրանց գործածությունը ավելի շատ ընդունված է Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում, քան, ասենք, ԱՄՆ – ում և Գերմանիայում:

Իտալերենում **puntiglio** բառը նշանակում է **նուրբ ակնարկ**: 17-րդ դարի վերջում – 18-րդ դարի սկզբում Անգլիայում խիստ գործածական էր **pundigrion** բառը, որն իրականում հենց այն էր նշանակում, ինչ այսօր անգլերենում **pun** բառը, և որը համարվում է վերջինիս ծագման սկզբնաղբյուրը⁴:

² Խլիպայան Ֆ. Հ., Ոճաբանական բառարան հայերեն-ռուսերեն-անգլերեն, Ե., Ջանգակ-97, 2000, էջ 30

³ The Cambridge Encyclopedia of Language, 1987, p. 63

⁴ /http://go.to/puns/

Բառախաղը հաճախ համարվում է ակնհայտ ակնարկ. դրան դիմող անձը փորձում է երկու տարբեր իմաստային միավորների խաղարկման միջոցով հասնել որոշակի նպատակի՝ ձգտելով խոսակցին /ունկնդրին կամ ընթերցողին/ նույնպես ներքաշել այդ խաղի մեջ, այդ իսկ պատճառով այն հաճախ ընկալվում է որպես հումոր: Մրամտության զենք լինելով՝ բառախաղը սովորաբար հանդես է գալիս որպես կոմիկական ստեղծագործության օրգանական տարր:

Սակայն հազվադեպ չէ նաև բառախաղերի գործածությունը լուրջ դրամատիկ ստեղծագործություններում: Բառախաղի կիրարկումը ողբերգության մեջ ունի որոշակի նպատակայնություն: Երբեմն այն կիրառվում է ոչ թե կոմիկական ազդեցություն թողնելու, այլ ընդհակառակը՝ լուրջ տեսարաններին խորին իմաստ հաղորդելու համար: Ցավոք սրտի, հայերենում այս դրսևորումները մետալեզվական տարբերակում չեն ստացել. հնչյունական նմանություն ունեցող բառային միավորների ցանկացած շահարկումը, անկախ դրա գործածության հանգամանքներից և նպատակներից, կոչվում է բառախաղ: Մինչդեռ բառախաղը կարող է կատարել երկու գործառույթ՝ կոմիկական և լուրջ: Անգլերենում բառախաղի վերոհիշյալ գործառույթներն իրականացնող դրսևորումները ունեն իրենց համապատասխան մետալեզվական միավորները՝ *pun* և *wordplay*: Ուստի առավել նպատակահարմար է բառախաղ հասկացությունը սահմանել որպես բառերի խաղարկման ցանկացած տարատեսակ /ինչպես լուրջ, այնպես էլ կոմիկական ուղղվածություն ունեցող/:

Ձուտ կոմիկական միտում իրացնող բառախաղերի բնութագրման համար նպատակահարմար է գտնվել ներմուծել բառակատակ տերմինը, որպես անգլերենի *pun* և ռուսերենի *каламбур* տերմինների համարժեք:

Այսպիսով, բառախաղը և բառակատակը միմյանցից սահմանազատվում են գործածության նպատակայնությամբ: Ընդ որում, վերջինս որոշվում է երկու կարևորագույն գործոններով. համատեքստ և կերպարի անհատականություն: Կախված այն բանից, թե ինչպիսի իրավիճակում և ում կողմից է այն գործածվում, միևնույն լեզվական արտահայտությունը կարող է կիրառվել և/ որպես բառախաղ, և/ որպես բառակատակ: Բառախաղերի կերտման իսկական վարպետ էր մեծն Շեքսպիրը: *Ռոմեո և Ջուլիետ* ողբերգության մեջ որդու տխրությամբ մտահոգված հայրը՝ Մոնտեգյուն, ասում է. “*Away from light steals home my heavy son, and private in his chamber pens himself.*” /“*Romeo and Juliet*”, Act I, scene I, 139-143/, սա, անշուշտ, *light* /լույս/ գոյականի և *light* /թեթև/ ածականի մասնակի համանունության վրա հիմնված բառախաղ է, որը բացարձակապես չի հետապնդում կոմիկական ազդեցություն թողնելու

նպատակ: Սա պարզ երևում է համատեքստից /տեր և տիկին Մոնտեգյուները իրենց որդու ընկերոջ՝ Բենվոլիոյի հետ քննարկում են Ռոմեոյի ծանր հոգեվիճակը/, սա ակնարկվում է նաև Մոնտեգյուի հոգեբանական կերպարի բնութագրմամբ:

Մյուս կողմից, մասնակի համանունության միևնույն լեզվական արտահայտությանը հանդիպում ենք Ռոմեոյի խոսքերում, սակայն այստեղ դրա գործածության նպատակայնությունը բոլորովին այլ է. *“Give me a torch: I am not for this ambling; being but heavy, I will bear the light.” /“Romeo and Juliet”, Act I, scene IV, 11-12/*: Սա ակնհայտորեն կոմիկական ազդեցություն թողնելու նպատակով կիրառված բառակատակ է, ինչը պարզ երևում է համատեքստից. Ռոմեոն, Մերկուտիոն և մյուս ընկերները գնում են Կապուլետի տուն՝ պարահանդեսին մասնակցելու, և նրանց զրույցն առնչվում է այն հարցին, թե ինչպես են ուրախանալու այդ պարահանդեսում: Տեսարանը պարզապես ողողված է բազմա- քանակ բառակատակներով, որոնք գործածվում են թե/ Ռոմեոյի, թե/ Մերկուտիոյի և մյուսների խոսքում:

Այսպիսով, բառախաղի գործառույթները բազմազան են. մերթ ծաղրել, խարազանել, մերթ խոսքը դարձնել գրավիչ, հետաքրքրաշարժ, մերթ էլ արտահայտել գրողի կամ կերպարի խորիմաստությունը: Այն մի տեսակ թևավոր արտահայտություն է, որը հաճախ տարածվում է և դառնում ընդհանուրի սեփականությունը: Այս տեսակետից էլ բառախաղ ստեղծելը պահանջում է նրբամտություն, զգուշություն և վարպետություն:

Ինչպես նշվեց վերևում, բառախաղի ստեղծման մեջ մեծ նշանակություն ունի համատեքստը, քանի որ հենց դրանով է պայմանավորված բառախաղի կոմիկական լիցքի առկայությունը կամ բացակայությունը: Բառախաղի սրամտության հիմնական նախապայմանը արտալեզվական համատեքստում անմիջական և բնական երևալն է:

Համատեքստի շնորհիվ դրսևորվում են բառերի բազմաթիվ իմաստային նրբերանգները և ոճական հատկանիշները: Համատեքստից դուրս միշտ չէ, որ կարելի է ընկալել բառի արտահայտչականությունն ու պատկերավորությունը, այն կենդանի շունչը, որը միտված է ընթերցողի վրա անհրաժեշտ գեղագիտական ազդեցությունը գործելու:

Բառախաղի ստեղծման համար անհրաժեշտ է համապատասխան դարձվածային միջավայր, որն ընթերցողի ուշադրությունն ուղղում է միաժամանակ բառի թե մեկ, թե մյուս նշանակության վրա: Այլ կերպ ասած, նման դեպքերում մեկ համատեքստում կարծես ի հայտ են գալիս միանգամից երկու համատեքստ, որոնցից յուրաքանչյուրում նույն բառն ունի որոշակի, մյուսից տարբեր նշանակություն:

Բառախաղի կոմիկական լիցքի մյուս կարևոր գործոնը կերպարի անհատականությունն է, քանի որ այն կերպարների բնութագրման լեզվական կարևոր միջոց է: Գեղարվեստական գրականության մեջ բառախաղի հեղինակը ոչ թե հենց ինքը՝ գրողն է, այլ ստեղծագործության որոշակի կերպար, և բառախաղի ոճական բնույթը պետք է համապատասխանի կերպարի հասարակական-հոգեբանական էությանը: «Եթե բառախաղը չի բացահայտում կերպարի անհատականությունը և մտածելակերպը, այլ վկայում է միայն հեղինակի՝ իր սրամտությունը ցուցադրելու ցանկության մասին, ապա այն դուրս է ընկնում համատեքստից և արհեստական հնչում: Միևնույն ժամանակ, բառախաղը կարող է բոլորովին էլ սրամիտ չլինել, բայց և ոճական տեսակետից միանգամայն արդարացված լինել որոշ կերպարների խոսքում»⁵:

Գոյություն ունեն բառախաղերի դասակարգման տարբեր սկզբունքներ, սակայն բոլորի հիմքը նույնն է. որոշակի համատեքստում բառի առնվազն երկու իմաստի բախում և դրանց համաժամանակյա ընկալում:

Գերմանացի լեզվաբան Լ.Ռայներսը համարում է, որ բառախաղերի դասակարգումը պետք է նախ և առաջ գործնական նշանակություն ունենա: Նա առաջարկում է տարբերակել հետևյալ տեսակի բառախաղեր.

1. բառի երկիմաստության վրա հիմնված բառախաղ,
2. երկու բառերի համահնչյունության վրա հիմնված բառախաղ,
3. բառախաղ, որում մեկ բառի միայն որոշակի մասն է համընկնում մյուսի հետ⁶:

Ռայներսի դասակարգումը այնքան էլ հստակ չէ: Մասնավորապես, հարց է ծագում, թե որ բառախաղերն են մտնում «համահնչյունության վրա հիմնված բառախաղերի» մեջ: Հստ դասակարգման ընդհանուր պատկերի կարելի է եզրակացնել, որ սրանց մեջ պետք է մտնեն նաև համանունության և հարանունության վրա հիմնված բառախաղերը, միևնույն ժամանակ՝ հարանունության վրա հիմնված բառախաղերը կարելի է դասել նաև վերջին՝ երրորդ խմբի մեջ: Իսկ ամենաէական թերությունը որոշ երևույթների բացակայությունն է, օր. բառերի և դարձվածքների տրոհումը և դրանց բաղադրիչների հիման վրա բառախաղի կառուցումը:

⁵ Щербина А. А., Сущность и искусство словесной остроты каламбура, Киев, АН, 1958, стр. 24

⁶ Reiners L., Stilkunst. Ein Lehrbuch Deutscher Prosa, Munchen, 1950, s. 537

Բեքոնի գրական տերմինների բառարանը առաջարկում է բառախաղերի հետևյալ տեսակները.

1. տարբեր իմաստներ ունեցող բառերի գործածում /այսինքն՝ բազմիմաստության հիման վրա/;

2. տարբեր ուղղագրություն, բայց միևնույն կամ նման արտասանություն ունեցող բառերի գործածում /այսինքն՝ համահնչյունության և հարանունության հիման վրա/;

3. միևնույն ուղղագրություն և արտասանություն, սակայն տարբեր իմաստներ ունեցող բառերի գործածում /այսինքն՝ համանունության հիման վրա⁷:

Վլախովն առաջարկում է դասակարգել բառախաղերը՝ ելնելով նրանց կառուցման տեխնոլոգիայից.

1. բառիմաստային հիմքի վրա կառուցված բառախաղեր,

2. հնչյունական հիմքի վրա կառուցված բառախաղեր,

3. դարձվածային հիմքի վրա կառուցված բառախաղեր:

Սակայն ինքն էլ է խոստովանում, որ նման դասակարգումը պայմանական է, քանի որ բացառապես հնչյունական կամ բառիմաստային հիմքի վրա կառուցված բառախաղ չի կարող լինել այն պարզ պատճառով, որ բառախաղի գոյությունը ի սկզբանե պայմանավորված է բառի հնչողության և իմաստի միջև առկա անհամապատասխանությամբ⁸:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ դասակարգումները չեն կարող ամբողջական համարվել, քանի որ դրանցում ընդգրկված չեն բառախաղերի բոլոր գոյություն ունեցող տեսակները: Բառիմաստային հիմքի վրա կառուցված բառախաղերի մեջ մտնում են միևնույն ուղղագրությամբ և արտասանությամբ, սակայն տարբեր իմաստներով բառերի շահարկման վրա հիմնված բառախաղերը, սրանք *բառիմաստային* /*homograph*/ բառախաղերն են: Հնչյունական հիմքի վրա կառուցված բառախաղերի մեջ մտնում են միևնույն կամ նման արտասանությամբ, սակայն իմաստով և ուղղագրությամբ տարբեր բառերի շահարկման վրա հիմնված բառախաղերը, սրանք *հնչյունական* /*homophone*/ բառախաղերն են:

Բառախաղի էությունը ուսումնասիրված է բազմաթիվ լեզվաբանների կողմից, սակայն այլ լեզվով դրա փոխանցման ուղիների վերաբերյալ նյութերը թարգմանության տեսաբանների մոտ սակավ են և համառոտ: Մինչդեռ բառախաղը՝ հումորի արտահայտման ամենահետաքրքիր

⁷ Beckon K., Ganz A., Literary Terms, New York, Farrar, Straus & Giroux, 1960, p. 200

⁸ Влахов С., Флорин С., Непереводимое в переводе, М., Высш. Шк., 1986, стр. 360

միջոցներից մեկը, դրամատիկական ստեղծագործությանը հատուկ ոճական հնարներից առավել բարդն է թարգմանության տեսակետից:

Բառախաղերի թարգմանությունը վերաբերում է թարգմանական նեղ մասնագիտական հարցերի բնագավառին, սակայն, ինչպես արդարացի նկատել է Ֆյոդորովը, այն սկզբունքային հետաքրքրություն է ներկայացնում և գործնական տեսակետից՝ խնդրի առանձնահատուկ բարդությամբ, և տեսական՝ ձևի և իմաստի չափազանց վառ հարաբերակցությամբ⁹:

Այդ ոճական հնարին նվիրված ուսումնասիրությունների սակավությունը հիմք է տվել համարել այն անթարգմանելի ոճական երևույթ, և դարեր շարունակ թարգմանիչները խուսափել են դրա թարգմանության ուղիները փնտրելուց ու նախընտրել ծանոթագրությամբ կամ տողատակի բացատրությամբ պարզաբանել ընթերցողին, որ բառացի թարգմանված արտահայտությունը բնագրում հնչում է որպես բառախաղ:

Սակայն 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած թարգմանության լեզվաբանական տեսության մեջ հետզհետե տարածում գտավ այն տեսակետը, որ ոճական հնարի հիմքում ընկած է որոշակի անփոփոխակային /ինվարիանտային/ իմաստաբանական մեխանիզմ, որը նրան թույլ է տալիս լինել համափարփակ /ունիվերսալ/ բոլոր լեզուների համար: Այս տեսանկյունից հնարավոր է նորովի նայել ոճական հնարների, մասնավորապես բառախաղերի թարգմանության խնդրին և քննարկել ոչ թե դրանց թարգմանելիության / անթարգմանելիության հարցը, այլ թե հատկապես ինչն է ոճական հնարում թարգմանելի և ինչպես կարող է դա նպաստել ոճական հնարի իմաստային բովանդակության փոխանցմանը:

Բառախաղը փոխանցել հնարավոր է, թեև դա շատ բարդ խնդիր է, քանի որ բառախաղի թարգմանությունը չափազանց անհատական աշխատանք է. այն իրականացնելու համար հարկավոր է երկու լեզուների կատարյալ տիրապետում և մեծ փորձ, սակայն էլ ավելի կարևոր են հումորի զգացումը և տաղանդը: Բայց նույնիսկ ամենատաղանդավոր թարգմանչին որոշ տեսական հենակետ և դրույթներ են անհրաժեշտ: Նա պետք է իմանա՝ որքան էլ յուրահատուկ լինի բառախաղը, դրա թարգմանության խնդրի լուծումը գոյություն ունի:

Բառախաղը կարելի է սկզբունքայնորեն թարգմանելի համարել, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ թարգմանության տեսությունն ընդունում է լեզվական միավորի հարանշանակային բովանդակության հասարակական բնույթը և պահանջում է դիտարկել այն ոչ թե որպես եզակի երևույթ յուրաքանչյուր առանձին վերցրած խոսքում, այլ որպես լեզվի մեջ ի

⁹ Федоров А. В., Основы общей теории перевода, М., Высш. Шк., 1983, стр. 326

սկզբանե գոյություն ունեցող երևույթ, որը խոսող սուբյեկտն օգտագործում է հաղորդակցման որոշակի նպատակների համար: Հակառակ դեպքում խոսքային ստեղծագործության առնշանակային բովանդակությունը կրնակավի որպես գուտ անհատական երևույթ և կենթարկվի միայն սուբյեկտիվ մեկնաբանության, որը հիմնված է թարգմանչի անհատական բնագծի վրա և բացառում է դրա լեզվաբանական փաստարկումը և ստուգումը:

Ի տարբերություն սովորական տեքստի թարգմանության, որի դեպքում բնագրի բովանդակությունը պարզապես նոր լեզվական կաղապարի մեջ է լցվում, բառախաղի թարգմանության ժամանակ վերափոխության է ենթարկվում նաև բնագրի բովանդակությունը, այսինքն այստեղ արտահայտության պլանն ավելի կարևոր է, քան բովանդակության պլանը, և հաճախ հանուն ձևի հարկավոր է փոփոխություններ մտցնել բովանդակության մեջ:

Բառախաղերի թարգմանության ժամանակ բացարձակ արդյունքը հազվադեպ է հնարավոր, այն է՝ պահպանել ձևը /հնչյունական կողմը/ և փոխանցել բովանդակությունը առանց փոփոխությունների: Այդ դեպքում բնագրում շահարկվող բառերը և թարգմանության լեզվում դրանց հարաբերակցվող միավորները պետք է ոչ թե ուղղակի համարժեք լինեն, այլ ավելին՝ երկու և ավելի բնագրի բառի նշանակություններին համարժեք նշանակություն ունենան: Սակայն թարգմանությունը կարող է անհաջող լինել նաև այս դեպքում, քանի որ համարժեքների միջև կարող են առկա լինել որոշակի անհամապատասխանություններ, ինչպես օր.՝ գործածականության, ոճական երանգավորման և զգայական լիքքի, հոմանիշների և հականիշների շարքի, ծագման և բառակազմական հնարավորությունների և այլ տեսակետներից:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ բառախաղերի թարգմանության ժամանակ բացարձակապես ճշգրիտ թարգմանություն, այսինքն՝ ձևի և բովանդակության փոխանցում, կարելի է իրականացնել միայն բացառիկ դեպքերում. որպես կանոն, կորուստներն անխուսափելի են: Երբեմն խնդրի միակ ճիշտ լուծումը բովանդակության գոհաբերումն է հանուն հնչյունական կողմի պահպանման:

«Թարգմանիչները հաճախ են կանգնում երկրնտրանքի առջև. բառախաղից հրաժարվելով՝ փոխանցել բովանդակությունը, թե՞ պահպանել բառախաղը ի հաշիվ ճշգրիտ իմաստի փոխարինման կամ դրանից շեղման: Ո՞րն է չարյաց փոքրագույնը: Տվյալ հարցի լուծումը կախված է մի շարք հանգամանքներից, սակայն առաջին հերթին՝ համատեքստի պահանջներից: Իսկ հետո արդեն հաշվի են առնվում թարգմանության լեզվի «բառախաղային հնարավորությունները»՝

համեմատած բնագրի լեզվի հետ, և միավորների բառային, իմաստային տվյալները»¹⁰:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թարգմանության մեջ բառախաղերի /և ընդհանրապես, ոճական հնարների և լեզվաարտահայտչական միջոցների/ փոխանցումը մեծ նշանակություն ունի թարգմանական համարժեքության ապահովման գործում, քանի որ թարգմանական համարժեքության տեսությունը ելնում է այն դրույթից, որ թարգմանությունը պետք է նույն ներգործությունն ունենա ընթերցողի վրա, ինչ և բնագիրը: Հետևաբար, բառախաղերի թարգմանության ժամանակ փոխարինումներն ու շեղումները ոչ միայն ընդունելի, այլև խրախուսելի են, քանի որ տվյալ դեպքում շեշտը դրվում է ոչ թե բառերի ճշգրիտ իմաստի, այլ դրանց արտաքին՝ հնչյունական կողմի պահպանման վրա:

Բառախաղերի թարգմանության ժամանակ գերակշռող բովանդակային տարրը բառերի իրագործվող նշանակությունների ձևական կապն է, այսինքն՝ դրանք պետք է միևնույն կամ նման հնչողություն ունենան: Գերակշռող բովանդակային հատկանիշը թարգմանվող արտահայտության բովանդակության կարևորագույն մասն է, և այն ճիշտ որոշելու ունակությունը կազմում է թարգմանչի մասնագիտական հմտության հիմնական մասը:

Բառախաղը վերստեղծող թարգմանչից պահանջվում է իրագործել մի գերխնդիր, որի սահմանումը շատ լավ տվել է Ն.Լյուբիմովը. «Եթե բառախաղն ունի միանգամայն որոշակի հասարակական-քաղաքական հասցե, եթե այն գաղափարախոսական նշանակություն ունի, թարգմանիչը պետք է գործադրի իր ողջ եռանդը և փոխանցի այն գեղարվեստական ճշգրտությամբ: Այնտեղ, ուր առկա է զուտ հնչյունական խաղ, թարգմանիչն իրավունք ունի փոքր – ինչ շեղվել բնագրից, եթե այլ կերպ հնարավոր չէ վերստեղծել այն երգիծական ներգործությունը, որին ձգտել է հասնել հեղինակը»¹¹:

Բառախաղի թարգմանությունը չափազանց անհատական աշխատանք է: Ըստ էության, այդ աշխատանքը կարելի է նույնիսկ ոչ թե «թարգմանություն» անվանել, այլ «ազատ ստեղծագործություն»: Վստահ կարելի է ասել, որ այս դեպքում ոչ թե թարգմանչի սեփական երևակայության գործածումը պետք է համարվի շեղում բնագրից, այլ ընդհակառակը՝ բնագրի բառացի վերարտադրումը: Բառախաղի նպատակը ոճական երանգավորում ստեղծելն է: Ուստի բառախաղի նման

¹⁰ Влахов С., Флорин С., Непереводимое в переводе, М., Высш. Шк., 1986, стр. 363

¹¹ Любимов Н., Перевод-искусство, М., Сов. Россия, 1982, стр. 127

հզոր ոճական միջոցի անտեսումը թարգմանչի կողմից աններելի քայլ կլինի: Իսկ թե ինչ միջոցներով է կարելի փոխանցել յուրաքանչյուր առանձին վերցրած բառախաղ, դա արդեն կախված է թարգմանության լեզվի ընձեռած հնարավորություններից և, իհարկե, թարգմանչի ստեղծագործական տաղանդից: Այստեղ կարևորը գործի ընդհանուր ոճական երանգավորման պահպանումն է: Հնարավոր է, նույնիսկ, որ թարգմանիչը դիմի մեկ այլ ոճական հնարի ներմուծման, եթե համոզված է, որ թարգմանության լեզվում տվյալ բառախաղի համարժեք փոխանցումն անհնար է: Բարեբախտաբար, նման դեպքերը խիստ սակավ են, սակայն այսպիսի տարբերակը ևս ընդունելի է թարգմանության տեսության կողմից:

Ռ. Ղազարյան, Ա. Խաչատրյան
Բառախաղը որպես թարգմանական խնդիր
Ամփոփում

Բառախաղի էությունն ուսումնասիրվել է բազմաթիվ լեզվաբանների կողմից, սակայն այլ լեզվով դրա փոխանցման ուղիների վերաբերյալ նյութերը սակավ են և համառոտ թարգմանության տեսության մեջ: Մինչդեռ բառախաղը, որպես հումորի արտահայտման ամենահետքերի միջոց, ոճական հնարներից առավել բարդն է թարգմանության տեսակետից: Սույն հոդվածում փորձ է արվում բազմակողմանի վերլուծության ենթարկել բառախաղի էությունը և տարատեսակները, ինչպես նաև դիտարկել թիրախ լեզվով դրա համարժեք վերարտադրության առանձնահատկությունները:

Р. Казарян, А.Хачатрян
Игра слов как переводческая проблема
Резюме

Лингвистические исследования, посвященные изучению сущности игры слов, достаточно многочисленны, но проблема ее передачи на другой язык все еще представляет особый интерес для переводоведения, так как игра слов является наисложнейшим стилистическим приемом с точки зрения перевода. В настоящей статье предпринимается попытка всестороннего анализа сущности и разновидностей игры слов, а также особенностей ее эквивалентного воспроизведения на языке перевода.

R. Ghazaryan, A. Khachatryan

Wordplay as a Translation Problem

Summary

The notion of wordplay has been investigated in a vast number of linguistic studies, but the problem of its conveyance into another language still arouses particular interest in translation studies, as wordplay is considered to be one of the most complicated stylistic devices from the translation viewpoint. The present article makes an attempt to analyze comprehensively the essence and types of wordplay, as well as the peculiarities of its equivalent rendering in the target language.

ՆԱԴԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՊՀ ընդհանուր և համեմատական
լեզվաբանության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 81

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԻՄՊԱՆԵՐԵՆՈՒՄ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ
ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր և արտահայտություններ. զուգադրական քննություն, հոլովական վերջավորություն, տարածական իմաստ, կապական կապակցություն, նախդիր, բարդ նախդիր, նախդրավոր դարձվածք:

Ключевые слова и выражения: сопоставительное изучение, падежное окончание, пространственное значение, предложное сочетание, предлог, сложный предлог, предложный оборот.

Key words and expressions: contrastive study, declensional endings, spatial meaning, prepositional combination, preposition, compound preposition, prepositional phrase.

Հոլով¹ քերականական կարգ է՝ հատուկ գոյականին և մյուս առարկայանիշ բառերին: Այն թեքման երկու հիմնական դրսևորումներից (հոլովում, խոնարհում) մեկն է, որ պատմական իրողություն է, գոյություն է ունեցել լեզուների զարգացման նախորդ փուլերում, ժամանակի ընթացքում կրել է բազմաթիվ փոփոխություններ և տեղիք տվել բազմաթիվ տարակարծություններին: Քերականագետների մեծամասնության տարակարծություններն առաջին հերթին կապված են հոլովի ձևային և իմաստային հատկանիշների գնահատման, ապա՝ հոլովների քանակի վերջնական որոշման հետ:

Օբյեկտիվ-լեզվական և սուբյեկտիվ-լեզվաբանական պատճառներով աշխարհի լեզուներում գրանցվում է հոլովների տարբեր քանակ՝ սկսած

¹ «Հոլով» եզրույթն առաջինն օգտագործել է հին հույն փիլիսոփա Արիստոտելը: Այդ եզրույթը նշանակել է բառի ցանկացած ձևափոխություն՝ և՛ անվան հոլովաձև (Արիստոտելի մոտ հոլովների համար առանձին անվանումներ դեռևս չկային), և՛ բայի ժամանակաձև (բացի ներկայից), և՛ ածականներից կանոնավոր ձևով առաջացած մակբայական ձև (տե՛ս **Перельмутер И. А.** *Филологические школы эпохи эллинизма* // *История лингвистических учений. Древний мир.* Л.: Наука, 1980, էջ 174):

երկուսից (հին ֆրանսերեն, ժամանակակից անգլերեն, հինդի) մինչև քառասունվեց (թաթասարան)²:

Հայերենի հոլովական համակարգի և հոլովների վերաբերյալ միանշանակ մոտեցում չի ցուցաբերվել առ այսօր. հոլովի ձևային հատկանիշներին առաջնություն տվող լեզվաբանները **հինգ** հոլովի կողմնակիցներն են, մինչդեռ **յոթ** հոլով նախընտրողները կարևորում են հոլովի իմաստային կողմը, ճիշտ չեն համարում հնչյունական ձևի և քերականական նշանակության առանձնացումը: Միջին դիրք է գրավում **վեց** հոլովի տեսությունը³: Հոլովների վերջնական քանակի և լիարժեք սահմանման հարցն անմիջականորեն առնչվում է *հոլովական իմաստի* հարցին. այս հարցին անդրադառնալիս հայ լեզվաբաններից յուրաքանչյուրը հետևում է հոլովի ուսումնասիրության իր համար ընդունելի սկզբունքներին ու մոտեցումներին՝ անշուշտ, որոշակի տեսական հիմնավորումներով ու ըմբռնումներով: Տարածական իմաստներն առանձնացնելիս նախապատվություն ենք տվել *յոթ* հոլովի տեսությանը՝ այն համարելով բովանդակության պլանի առավելագույնս խոր ու բազմակողմանի ուսումնասիրության լավագույն տարբերակ, որ մեր առջև դրված խնդրի քննությունը դարձնում է ավելի մատչելի:

Հոլովների պակասը ծածկում կամ նրանց փոխարեն կիրառվում են *կապերը*: Կապերի իմաստային դասակարգման հիմքում նրանց իմաստային ամենաբնորոշ հատկանիշն է: Գործածվելով այս կամ այն հոլովաձևի հետ՝ կապերն արտահայտում են կախման զանազան հարաբերություններ: Կապերը, ինչպես և հոլովները, ցույց են տալիս

² Հ. Աճառյանն աշխարհի լեզուներում ճանաչված հոլովների թվի ընդհանուր գումարը հասցնում է *յոթանասունի*. տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Եր., ԵՊՀ հրատ., 1957, էջ 327-335 (նշելով յոթանասուն թիվը՝ գիտնականը համարակալված ներկայացնում է միայն *քառասունորը*. թե մյուսներից ո՞ր հոլովների հավելումով է ստացվում այդ թիվը, մնում է անորոշ):

³ Մանրամասն տե՛ս **Սևակ Գ.**, Մերոնդների կոնվը քերականության բնագավառում («Կուլտ. ֆրոնտ» 1934, N 33), **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Եր., ԵՊՀ հրատ., 2004, էջ 113, **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1957, էջ 11-171, **Ղաթիբյան Ա.**, Հայոց լեզվի քերականության ավանդույթային հարցերի մասին, Եր., ՊԲՀ, 1967, էջ 92: **Աբելյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 340-399: **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Եր., ԵՊՀ հրատ., 1967, էջ 58-81: **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 217:

ստորադասական հարաբերություններ, որոշում բառի պաշտոնը⁴: Արտահայտելով մոտավորապես նույն հարաբերությունները՝ այս երկու միջոցները ցուցաբերում են երբեմն ընդամենը ոճական-նրբերանգային տարբերություն, որում էլ, ըստ Ս. Աբրահամյանի, թաքնված է կապերի գոյատևման գաղտնիքը⁵:

Ի տարբերություն հայերենի՝ իսպաներենն այսօր չունի հոլովական համակարգ, և համապատասխան իմաստների արտահայտումն իսպաներենում կատարվում է նախդիրներով, բարդ նախդրավոր կառույցներով և նախդրավոր դարձվածքներով⁶: Իսպաներենում նախդիրները չեն համարվում բառային իմաստից զուրկ միավորներ, և ընդունված չէ այն կարծիքը, որ նախդիրները պատկանում են զուտ քերականական ոլորտին. համարվում է, որ քերականական իմաստը նման կարգի բոլոր միավորների համար ընդհանրական բնույթ է կրում, մինչդեռ դրանք իրենց բառային իմաստներով տարբերվում են միմյանցից⁷:

Սույն հոդվածում կատարում ենք հայերենում և իսպաներենում տարածական իմաստների արտահայտման զուգադրական քննություն: Այս իմաստների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ լեզուներում ներկայացվում են լայնորեն և ունեն բազմազան իմաստային երանգներ:

⁴ Տե՛ս **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 545-555:

⁵ Տե՛ս **Աբրահամյան Ս.**, Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1959, էջ 70:

⁶ Բարդ նախդրավոր կառույցների առանձնահատկությունն այն է, որ դրանցում յուրաքանչյուր միավոր գրեթե միշտ պահպանում է իմաստը, բայց լեզվում հանդիպում են որոշ կապակցություններ, որտեղ նախդիրներից մեկն էապես ավելորդ է, ինչպես **está por ante mí = está ante mí «իմ առջևում է»**: Նախդրավոր դարձվածքներում բառը գրկվում է իր դասին պատկանող բառերի գործառնություններից, քերականական հատկանիշներից (մասամբ կամ ամբողջությամբ): Այստեղ կարևոր դերը պատկանում է պարզ նախդիրներին (a, de, en, con, por), որոնք կառույցը դարձնում են «փակ» և «կայուն», մեծ իմաստային ծանրաբեռնվածություն չեն կրում, բայց համարվում են նախդրավոր դարձվածքների ձևավորմանը նպաստող ձևույթներ, մեծացնում նախդրավոր դարձվածքներում եղած պարզ նախդիրների՝ այլ պարզ նախդիրներով փոխարինման հնարավորությունը, օրինակ **de acuerdo a = de acuerdo con «համաձայն»** (տե՛ս **Bosque, I. y Demonte, V.** Gramática de la lengua Española. Madrid: Espasa, 1999, էջ 567-570):

⁷ Մանրամասն տե՛ս **El Real Academia Española y Asociación de Academia de la Lengua Española**. Nueva gramática básica de la lengua Española. Barcelona: Espasa, 2011, էջ 25-165: Տե՛ս նաև Definición de preposición – Qué es, Significado y Concepto.

<http://definicion.de/preposicion/#ixzz3Vsv33BIY>:

Վ. Ա. Պլունգյանը, որ հոլովների հարցը քննության է առնում իմաստային դերերի տարբերակման դիրքերից, կարևոր տեղ է հատկացնում տարածական իմաստներին և առանձնացնում այդ իմաստների երեք կարևոր տարբերակներ, որոնք են՝

1. Շարժման մեկնարկային կետ (օր.՝ *տանից մարդ դուրս եկավ*),

2. Շարժման վերջնական կետ (օր.՝ *նամակը դրեց արկղում, մեր տուն հյուր եկավ*),

3. Հետագիծ (օր.՝ *զինվորն անցնում էր անտառով*)⁸:

Տարածական իմաստների քննությունն էական տեղ է զբաղեցնում նաև Բ. Ա. Մելչուկի աշխատություններում: Լեզվաբանը գտնում է, որ աշխարհի գրեթե բոլոր լեզուներն ունեն տարածական իմաստների արտահայտման խորքային կառույցներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու լեզուների միջև անսպասելի նմանություններ ու տարբերություններ: Ըստ նրա՝ տարածական իմաստները ձևավորվում են դիրք և ուղղություն ցույց տվող իմաստների (դիրք ցույց տվող իմաստները, ըստ նրա, յոթն են, իսկ ուղղություն ցույց տվողները՝ հինգը) հիման վրա, որոնք համատեքստում կիրառվում են քառասուն հնարավոր տրամաբանական համակցություններով⁹:

Հայերենում տարածական իմաստներն արտահայտվում են բոլոր թեք հոլովներով կամ հոլովների և տարածական իմաստներ արտահայտող կապերի կապակցություններով: Հոլովներով արտահայտվում են հետևյալ իմաստները՝

1. Այն տեղի իմաստը, որտեղ գտնվում, լինում, առաջանում է մի առարկա:

1.1. Երկու առարկաների կապերը ցույց տալիս այս իմաստը հայերենում արտահայտվում է **սեռական** հոլովով¹⁰: Նախադասության մեջ այս հոլովաձևերը կատարում են *որոշիչի և հատկացուցիչի պաշտոններ*: Մ. Աբեղյանը նշում է, որ տեղի նշանակությամբ կիրառվում են ինչպես տեղ ցույց տվող բառերը, այնպես էլ մարդու և կենդանիների մարմնի մասեր ցույց տվող անուններ¹¹: Համապատասխան իմաստներն իսպաներենում կազմվում են **de** նախդիրով:

⁸ Տե՛ս Պլունգյան В. А. Общая морфология. М.: Едиториал УРСС, 2003, էջ 180:

⁹ Տե՛ս Мельчук И. А. Модель «Смысл ⇔ Текст». М.: Наука, 1974, էջ 308-312.

¹⁰ Մանրամասն տե՛ս Աբեղյան Մ., նշվ. աշխ. էջ 347-349:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 347:

• **Մարի** ծաղիկներն իրենց գեղեցկությամբ գրավել էին հազարավոր զբոսաշրջիկների ուշադրությունը: - *Las flores **de la montaña** habían atraído la atención de miles de turistas con su belleza.*

• **Ամբողջ օրը մեջքի գոտին** չհանեց: - *No se quitó **el cinturón de la correa** todo el día.*

Առարկայի և գործողության կապը ցույց տալիս բայական անդամի լրացումներում այս իմաստն արտահայտվում է **տրական** և **ներգոյական** հոլովներով: Տվյալ դեպքերում առարկան կապված է ոչ թե ուրիշ առարկայի, այլ գործողության հետ:

1.2. Եթե առարկան ընկալվում է որպես մակերևույթ, ապա տեղի իմաստն արտահայտվում է **տրական** հոլովով: Տարածական իմաստ ունեցող տրական հոլովաձևերը նախադասության մեջ մեծ մասամբ կատարում են *տեղի պարագայի պաշտոն*: Համարժեք կառույցներն իսպաներենում կազմվում են **en** և **sobre** նախդիրներով:

• **Տանը քնած էր, երբ դեպքը պատահեց**: - *Estaba durmiendo **en la casa** cuando ocurrió el incidente.*

Երբեմն որոշ տարածական իմաստ է արտահայտվում նաև հանգման անուղղակի խնդրով:

• **Հենվեց դռանը և սկսեց ծխել**: - *Se apoyó **en la puerta** y empezó a fumar.*

1.3. Եթե գործողության հետ կապված առարկան պատկերացվում է որպես ամբողջական ծավալ, ապա տեղի իմաստն արտահայտվում է **ներգոյական** հոլովով. նախադասության մեջ այդ հոլովաձևն ունենում է *տեղի պարագայի պաշտոն*: Այս իմաստի արտահայտությունն իսպաներենում կազմվում է **en** նախդիրով:

• **Այգում բազմաթիվ մրգատու ծառեր կան**: - *Hay muchos árboles frutales **en el jardín**.*

• **Միջերկրական ծովում շատ նավեր են խորտակվում**: - *Muchos barcos se hunden **en el mar Mediterráneo**.*

• **Պայմանագրում ամեն ինչ ասված է**: - *Todo se dice **en el acuerdo**.*

2. Այն տեղի իմաստը, դեպի ուր ուղղվում է առարկան: Հայերենում արտահայտվում է տեղանիշ գոյականի **հայցական** հոլովով, որը կապվում է շարժում արտահայտող բայերի հետ: Հայցական հոլովաձևը նախադասության մեջ կատարում է *տեղի պարագայի պաշտոն*: Իսպաներենում այս իմաստի արտահայտության համարժեք միջոցները **a**, **para** և **hacia** նախդիրներն են:

• **Մեկնեց Ամերիկա՝ սովորելու նպատակով**: - *Se fue **a (para, hacia)** América para estudiar.*

• Մտալ **տուն** և անմիջապես պառկեց **քնելու**: - Entró **a casa** y se acostó de inmediato.

3. Այն տեղի իմաստը, որտեղից սկիզբ է առնում գործողությունը կամ շարժումը, արտահայտվում է հիմնականում **բացառական** հոլովով և նախադասության մեջ կատարում տեղի պարագայի պաշտոն (տեղի իմաստի մեջ որոշակի չափով զգացվում է բացառական հոլովի ընհանուր՝ անջատման իմաստը): Իսպաներենում այս տարածական իմաստի արտահայտման հիմնական միջոցը **de** նախդիրն է:

• **Որսից դժգոհ վերադարձալ**: - Volvió **de la caza** descontento.

• **Կախվել էին ճյուղերից և ճոճվում էին**: - Habían colgado **de las ramas** y estaban meciendo.

4. Այն տեղի իմաստը, որի վրայով, միջով, եզրով, հարևանությամբ անցնում է մի առարկա: Հայերենում արտահայտվում է սովորաբար **գործիական հոլովով**՝ նախադասության մեջ կատարելով տեղի պարագայի պաշտոն (տեղի իմաստի մեջ որոշակի չափով զգացվում է գործիական հոլովի ընհանուր՝ միջոցի իմաստը): Երբեմն արտահայտվում է **բացառական** հոլովով՝ ցույց տալով, թե որտեղից է անցնում գործողը: Իսպաներենում համապատասխան իմաստներն արտահայտվում են **por** և **vía** նախդիրներով, ինչպես նաև **a través de, por vía de**, նախդրավոր դարձվածքներով կազմված կապակցություններով:

• **Միշտ աննկատ անցնում էր փողոցով**: - Siempre pasaba **por la calle** desapercibido.

• **Սարերով անցնող զորքը կանգ առա հանգստանալու**: - Las tropas pasando **por las montañas** se pararon para descansar.

• **Բաղդադից մեկնեցին Ֆրանկֆուրտով**: - Tomaron un vuelo **vía Frankfurt** desde Bagdad.

• **Դռնից աննկատ ներս մտալ**: - Entró **por (de) la puerta** desapercibido.

Հայերենում տարածական իմաստների ամբողջական պատկերը կազմվում է որոշակի հոլովով բառերի հետ կապերի կիրառությամբ:

Գ. Ջահուկյանը տարածական իմաստներ արտահայտող կապերն անվանում է տեղանիշ կապեր: Լեզվաբանը նշում է, որ այս կապերը ցույց են տալիս **դիրք, տարածական չափ և ուղղություն**: Հնարավոր է նաև, որ միևնույն տեղանիշ կապը արտահայտի նշվածներից երկուսը: Տարածության մեջ մեզ անհրաժեշտ է մի կետ, մի մարմին, որ տարածական կապերի արտահայտած գաղափարը տարածանիշ լինի, ուստի տարածական կապերը ցույց են տալիս **դիրք, տարածական չափ և ուղղություն**, բայց տարածության մեջ հարաբերականորեն ընտրված կետի

նկատմամբ¹²: Հիմք ընդունելով Գ. Ջահուկյանի հիշատակած կապերով արտահայտված տարածական իմաստների խմբերը՝ սույն հոդվածում տարածական կապերը ներկայացնում ենք հետևյալ խմբավորումով և տալիս իսպաներեն համաժեքները¹³:

1. **Տարածական չափ** են արտահայտում **առընթեր, կից, մոտ, մոտիկ, մերձ, հեռու, մինչև** և այլ կապեր:

- *Նրան գտան տանն առընթեր շինությունում* (սրբ. հոլով + կապ): - *Al le encontraron en el edificio **adyacente a la casa**.*

- *Բակին կից տնամերձ հողամաս կար* (սրբ. հոլով + կապ): - *Había un terreno **junto al (cabe, al lado de) patio**.*

- *Զինվորները հավաքվեցին զորանոցին մերձ տարածքում* (սրբ. հոլով + կապ): - *Los soldados se reunieron en el territorio **cerca del cuartel**.*

- *Սովորություն ուներ նստել պատուհանին մոտիկ* (սրբ. հոլով + կապ): - *Tenía costumbre sentarse **cerca de la ventana**.*

- *Աշխատանքիս վայրը տանից հեռու չէ, վերջին խաչմերուկի մոտ* (սեռ. հոլով + կապ): - *El lugar de mi trabajo no está lejos de la casa, está **cerca del último cruce**.*

- *Հարազատներից հեռու իրեն շատ միայնակ էր զգում* (բաց. հոլով + կապ): - *Se sentía muy aislado **lejos de los familiares**.*

- *Հասանք մինչև սահման* (հայց. հոլով + կապ): - *Llegaremos **hasta la frontera**.*

2. **Ուղղություն** են ցույց տալիս **դեպի, ի վար, ի վեր, ուղղությամբ** կապերը:

- *Տիեզերանավը կթռչի դեպի լուսին* (հայց. հոլով + կապ): - *La nave espacial volará **a (hacia, rumbo a) la luna**.*

- *Բարձրանում էին լեռն ի վեր* (հայց. հոլով + կապ): - *Estaban nadando **por abajo del (por arriba de) corriente**.*

¹² Տե՛ս Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1974, էջ 435-436:

¹³ Մանրամասն տե՛ս Matte Bon, F. Gramática Comunicativa del español. España: Edelsa, 2005, էջ 288-291:

• **Հանցագործի ուղղությամբ** կրակոցներ արձակվեցին (սեռ. հոլով + կապ): - *Se escucharon sonidos de disparo **hacia (a) el criminal.***

3. Դիրք են արտահայտում մեջ, միջև, վրա, տակ, վերև, ներքև, առջև, դիմաց, դուրս և այլ կապեր:

• **Հսկայական տան մեջ** միայնակ էր ապրում (սեռ. հոլով + կապ): - *El vivía solo **en una gran casa.***

• Երկու **տների միջև** փոքրիկ առու էր հոսում (սեռ. հոլով + կապ): - *Un pequeño arroyo corría **entre (tras) las dos casas.***

• Չեմ սիրում, երբ հագուստով պառկում են **անկողնու վրա** (սեռ. հոլով + կապ): - *No me gusta cuando están acostados **en (sobre, de sobre, encima de) la cama** con ropa.*

• Կատուն սովորություն ուներ մտնելու **սեղանի տակ** (սեռ. հոլով + կապ): - *El gato tenía la costumbre de entrar **bajo (debajo de) la mesa.***

• Կանգնում էր **դռան առջև** և սպասում էր երեխաներին (սեռ. հոլով + կապ): - *Se paraba **antes de (frente a, delante de, por delante de) la puerta** y esperaba a los niños.*

• Նրա տունը գտնվում է **քաղաքապետարանի դիմաց** (սեռ. հոլով + կապ): - *Su tienda está **contra (frente a) la casa del alcalde.***

• Նստեց **բոլորից ներքև (վերև)** (բաց. հոլով + կապ): - *Se sentó **por debajo de (por encima de, sobre) todos.***

• Սովորաբար ծխում են **գրասենյակից դուրս** (բաց. հոլով + կապ): - *En general fuman **fuera de (desde afuera de) la oficina.***

Վերը շարադրվածի ընդհանուր պատկերը ներկայացնում ենք աղյուսակներով:

Հայերենի հոլովաձևերով արտահայտվող տարածական խմաստները	Հայերենում սովյալ խմաստն արտահայտող հոլովը	Իսպաներեն համարժեքները
1. առարկայի գտնվելու, լինելու, առաջանալու տեղ	1.1. սեռական հոլով 1.2. տրական հոլով 1.3. Ներգոյական հոլով	1.1. de + գոյական 1.2. en (sobre) + գոյական 1.3. en + գոյական
2. ուղղություն	2. հայցական հոլով	2. a (para,

		hacia) + գոյական
3. գործողության սկզբնակետ	3. բացառական հոլով	3. de + գոյական
4. երկու առարկաների միջև շարժման տեղ	4. գործի ական հոլով	4. por (vía) + գոյական, a través de (por vía de) + գոյական,

Հայերենում կապական կապակցություններով արտահայտվող տարածական իմաստները	Հայերեն կապական կապակցությունների կադապարները	Իսպաներեն համարժեքները
տարածական չափ	1. սեռական հոլով + մոտ 2. տրական հոլով + առընթեր, կից, մերձ, մոտիկ 3. մինչև + հայցական հոլով 4. բաց առական հոլով + հեռու	1. cerca de + գոյական, 2. cabe (al lado de) + գոյական, adyacente a + գոյական, cerca de + գոյական, 3. hasta + գոյական, 4. lejos de + գոյական,
ուղղություն	1. սեռական հոլով + ուղղությամբ 2. դեպի + հայցական հոլով հայցական հոլով + ի վար, ի վեր	1. a (hacia) + գոյական, 2. rumbo a, hacia abajo, hacia arriba, por abajo de, por arriba de + գոյական,
դիրք	1. սեռական հոլով + մեջ,	1. en (sobre, de sobre,

	միջև, վրա, տակ, առջև, դիմաց 2. բացառական հոլով + վերև, ներքև, դուրս	encima de), entre (tras), bajo (debajo de), antes de (frente a, delante de, por delante de), contra (frente a) + գոյական, 2. por debajo de (por encima de, sobre), fuera de (desde afuera de), desde + գոյական,
--	---	--

Հայերենում և իսպաներենում տարածական իմաստների արտահայտման միջոցներում տեսնում ենք հետևյալ օրինաչափությունները: Հայերենում տարածական իմաստների արտահայտման գործում մեծ դեր են խաղում ինչպես հոլովական ձևերը, այնպես էլ կապերը: Տարածական իմաստներ արտահայտող կապերը կիրառվում են սեռական, տրական, հայցական և բացառական հոլովներով բառերի հետ: Հայերենի հոլովաձևերի և կապական կապակցությունների տարածական իմաստների համարժեք իմաստներն իսպաներենում արտահայտվում են նախդիրներով, բարդ նախդրավոր կառույցներով և նախդրավոր դարձվածքներով:

Ն. Մեյքոնյան

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԻՍՊԱՆԵՐԵՆՈՒՄ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ամփոփում

Սույն հոդվածը նվիրված է ժամանակակից հայերենում և իսպաներենում տարածական իմաստների արտահայտման միջոցների քննությանը: Հայերենում տարածական իմաստների արտահայտությունները ներկայացված են հոլովաձևերով և կապական կապակցություններով ձևավորված երկու ենթահամակարգով: Ներկայացված են այդ ենթահամակարգերի համարժեք իսպաներեն կառույցները՝ կազմված յնախդրավոր կապակցություններով: Այս քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու և նկարագրելու զուգադրվող լեզուներում տարածական իմաստների արտահայտման ընդհանրությունները:

Н. Мелконян

**СОПОСТАВИТЕЛЬНОЕ ИЗУЧЕНИЕ ВЫРАЖЕНИЯ
ПРОСТРАНСТВЕННЫХ ЗНАЧЕНИЙ В АРМЯНСКОМ И ИСПАНСКОМ
ЯЗЫКАХ**

Резюме

Настоящая статья посвящена изучению средств выражения пространственных значений в современном армянском и испанском языках. Выражение пространственных значений в армянском языке представляем двумя подсистемами, которые образуют падежные формы и предложные сочетания. Одновременно представлены эквивалентные этим двум подсистемам испанские формы выражения пространственных значений, образованные предложными сочетаниями. Такое исследование дает возможность выявить и описать общие черты выражения пространственных значений в сопоставляемых языках.

N. Melkonyan

**CONTRASTIVE STUDY OF EXPRESSION OF SPATIAL MEANINGS IN
ARMENIAN AND SPANISH LANGUAGES**

Summary

Current article focuses on the investigation of the contrastive study of spatial meanings in modern Armenian and Spanish languages. The spatial meanings are expressed by two subsystems, formed by case forms and prepositional combinations in the Armenian language. Spanish equivalent expressions to those subsystems expressed by prepositional combinations are presented in the article at the same time. Such analysis gives an opportunity to identify and describe common expression features of spatial meanings in the languages compared here.

ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՑԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ՀՏՂ 373.5:811.19

**ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. լեզվական համակարգ, բառագիտություն, բառ, բառակազմություն, բառակազմական նշանակություն, արմատ, ածանց, բաղադրություն, հետազոտական մեթոդներ:

Ключевые слова и выражения: языковая система, лексикология, слово, словообразование, словообразовательное значение, корень, суффикс, состав, исследовательские методы.

Key words and expressions: language system, lexicology, word, wordformation, derivational meaning, root, suffix, compound, research methods.

Անհատի զարգացման ու ձևավորման գործում վճռական դեր ունի մայրենի լեզուն, առանց որի լիարժեք հնարավոր չէ իրականացնել բարձր որակներով անձի զարգացումն ու ձևավորումը: Մայրենի լեզուն ոչ միայն հաղորդակցական գործառույթ է կատարում, այլև ավագ սերնդի կուտակած փորձն ու գիտելիքները փոխանցում է կրտսեր սերնդին: Ազգային խնդիրների լուծման և հայրենասիրության դաստիարակման հիմքում, ի վերջո, ընկած է մայրենի լեզվի իմացությունը՝ նրա բազմաշերտ նրբությունների գիտակցումն ու արժևորումը, լեզվի համակարգի յուրացումն ու նրա բաղադրիչների գործնական կիրառությունը: Մյուս կողմից՝ հայտնի է, որ որևէ լեզվի տիրապետման հիմքում ընկած է *բառը, բառի մասին ուսմունքը* (բառագիտությունը), որոնք ներկայացնում են տվյալ լեզուն կրող ժողովրդի անցած հասարակական-քաղաքական և ազգային մտածողության ուղին, նրա լեզվամտածողությունն ու մշակութային արժեքները՝ գլոբալ իմաստով:

Հիմք ընդունելով այս հանգամանքը՝ հանրակրթության առաջին օղակից սկսած՝ կարևորում ենք ոչ միայն լեզվական իրողությունների իմացությունն ու դրանց միջոցով խոսքը հասկանալու, գիտակցելու, իմաստավորելու, վերլուծելու և համադրելու, ընդհանրացնելու և գնահատելու կարողությունների գործառույթները, այլև դրանց դերը աշակերտների տրամաբանական, ստեղծագործական և վերլուծական մտածողության ձևավորմանն ու զարգացման գործում: Սրանք էական

նշանակություն ունեն սովորողների վերացարկված մտածողության, նրանց բանավոր և գրավոր խոսքի կատարելագործման, ուղղագրական և ուղղախոսական հմտությունների ձեռքբերման, ակտիվ բառապաշարի հարստացման ու զարգացման գործընթացում:

Սովորողների բառապաշարի հարստացումը, որպես խոսքի զարգացման կարևոր միջոց, իրականացվում է դեռևս նախադպրոցական տարիքում. նախադպրոցական կրթության ծրագրի բոլոր բաժիններում նախատեսված են բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման խնդիրներ՝ դրանք համարելով սովորողների հոգեկան գործընթացների ակտիվացման խթանիչներ: Նշված խնդիրները կարևորվում են նաև հանրակրթության առաջին օղակում, որտեղ դրվում են բառի, խոսքում նրա իմաստի, արժեքի և դերի ըմբռնման հիմքերը: Հետագայում՝ միջին դպրոցում լեզվի բաժիններն ուսուցանելիս ըստ գործածական հաճախականության՝ զլխավոր տեղում բառն է՝ մեր ուսումնասիրության զլխավոր առարկան՝ պարզ և բաղադրյալ բառերը, որոնց ուսումնասիրումը կարևորվում է թե՛ բառակազմական իմաստների, թե՛ քերականական առանձնահատկությունների ըմբռնման, թե՛ բառակազմության ուսուցման համար հիմք ստեղծելու և թե՛ աշակերտների բառապաշարը հարստացնելու առումներով:

Բառակազմության ուսումնասիրումը միտված է միջին դպրոցի սովորողների լեզվամտածողության, վերլուծահամադրական կարողությունների ձևավորմանը՝ իբրև միջոց և ուղի ծառայեցնելով բանավոր ու գրավոր խոսքում բառաքերականական ձևերի ճիշտ ու նպատակահարմար կիրառելուն, այդ ձևերից յուրաքանչյուրը խոսքային շղթայի մաս դարձնելուն:

Գիտելիքների և կարողությունների ձևավորման այս ճանապարհը կարող է նպաստել սովորողների ինքնադրսևորվելուն, ինքնաարտահայտվելուն, իրենց զգացմունքները կառավարելուն, սեփական լիցքերը միջավայրին հաղորդելուն, իրենց առջև ծառացած բազմաբնույթ ու տարաշերտ հիմնախնդիրները բացատրելուն և լուծելուն:

Բառագիտության ենթաբաժիններից մենք կարևորում ենք բառակազմության ուսումնասիրումը՝ *Բառակազմության* կենտրոնական հասկացությունը բառն է, ուսումնասիրության առարկան՝ բաղադրյալ բառը¹: Բառակազմությունը նոր բառեր կազմելու եղանակների և միջոցների

¹ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 158:

համակարգն է, որ հենվում է լեզվում գոյություն ունեցող կադապարների վրա²:

Այն նպատակ է հետապնդում հարստացնելու սովորողների տեսական գիտելիքները, ընդարձակելու դրանց սահմանները: Դա, անշուշտ, առկա է ծրագրերում և դասագրքերում, սակայն թերի է մնում դրա գործնական մասը՝ սովորողների բառապաշարի հարստացումը, բառակազմական հնարների դերի բարձրացումը, դրանց միջոցով ունեցած բառապաշարը լայն գործածության մեջ դնելը, այդ հիմքի վրա նոր բառեր ստեղծելու կարողությունները, այլ կերպ ասած, ուսուցման տեխնոլոգիացումը:

Բառակազմության ուսումնասիրության արդիականությունն ընդգծվում է նաև այն առումով, որ արդի ժամանակներում մեծացել և առավել կենսունակ են դարձել տարբեր հանրությունների ազգամիջյան և լեզվական շփումները, որոնց հետևանքով հայերենին են անցել (և շարունակում են անցնել) զգալի քանակությամբ բառեր: Օտարամուտ բառերի մի զգալի մասը հայերենում գործածվում է իբրև փոխառություն, մյուս մասը՝ իբրև բառապատճենումներ: Պատճենումները ենթարկվում են հայերենի բառակազմության օրինաչափություններին՝ հանդես գալով լիակատար և մասնակի դրսևորումներով, որոնցով էլ պայմանավորված են նրանց բառակազմական քայլերը: Լիակատար պատճենումների դեպքում թարգմանվում են փոխառյալ բառերի բաղադրիչները, և կազմվում են նոր բառեր՝ բաղադրություններ (луноход - լուսնագնաց, прилунение - լուսնեջր), մասնակի պատճենումների դեպքում բառակազմությանը մասնակցում է փոխառյալ բառերի հիմնական ձևայիններից մեկը. նոր բառեր կազմվում են կա՛մ հայերենի արմատներով (химчистка - քիմապարում, госбанк - պետքանկ), կա՛մ ածանցներով (противогаз - հակազգազ, олимпийский - օլիմպիական) և այլն³: Այս կարգի բառերի ուսումնասիրությունը դուրս է մնացել հանրակրթական դպրոցի ծրագրերից, դասագրքերից և ուսումնական ձեռնարկներից, մինչդեռ դրանց բառակազմական գործընթացների ուսումնասիրությունը ժամանակակից հայերենի բառակազմական իմաստաբանության կարևոր խնդիրներից է:

Հայերենի բառակազմությունն այն առանձնահատկությունն ունի, որ այն նպաստում է եղած արմատների, բառերի ու ածանցների միջոցով բազմաթիվ նորանոր բառեր կերտելուն, օտար լեզուների գիտական ու

² Լ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 149:

³ Էդ. Մկրտչյան, Լ. Խաչատրյան, Հայոց լեզվի պատմություն. գրային ժամանակաշրջան, Ե., 2016, էջ 318-319:

տեխնիկական շատ տերմիններ հայերենով թարգմանելուն և դրանց իմաստները ճիշտ վերարտադրելուն⁴:

Այսպիսով, մեր առաջադիր խնդրի *արդիականությունը* պայմանավորված է ինչպես բառի, բառագիտության և բառակազմության վերաբերյալ սովորողների գիտելիքների և կարողությունների կարևորությամբ, այնպես էլ այնպես էլ այդ շրջանակներն ընդլայնելու անհարժեշտությամբ, նրանց ճանաչողական պահանջմունքներով և միջին դպրոցի մայրենիի ծրագրերում և դասագրքերում նրանց անբավարար ուսումնասիրությամբ:

«Բառակազմություն» թեմայի ուսումնասիրման *նպատակը* միջին դպրոցում սովորողների կողմից բառիմաստի ըմբռնման, բառ և առարկա հասկացությունների, բառիմաստի տեսակների, բառակազմական ածանցների ուսումնասիրման գործընթացի լեզվական և մեթոդաբանական առանձնահատկությունների բացահայտումն է, սովորողների պատկերավոր խոսքի զարգացումն ու բառապաշարի հարստացումը՝ լեզվական իրողությունների ուսուցման համատեքստում, ինչպես նաև դրանք իրականացնելու առումով մեթոդական համալիրի մշակումը:

Բառագործածությունը մեծապես կապված է լեզվաքերականական գիտելիքների մակարդակից, որ աշակերտը ձեռք է բերում աստիճանաբար, քայլ առ քայլ: Լեզվաքերականական գիտելիքների համակարգում կարևորվում է բառերի կազմության իմաստավորումը, որ էական նշանակություն ունի բառիմաստի ըմբռնման և գործածության տեսակետից⁵:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել հիմնախնդրի պատմական զարգացման շարժընթացը,

միջին դպրոցի սովորողների բանավոր և գրավոր խոսքում կարևորել լեզվի բառային կազմի, հիմնական բառապաշարի շերտերի տեղն ու դերը,

2. դիտարկել ածանցների իմաստաբանական և խոսքիմասակերտ առանձնահատկությունները, քննել գոյականակերտ, ածականակերտ,

թվականակերտ, բայակերտ, մակբայակերտ և տարաբժեք ածանցների բառակազմական գործառույթները,

⁴ Վ. Առաքելյան, Ա., Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.1, Ե., 1979, էջ 244:

⁵ Ս. Աբրահամյան, Հայոց լեզու: Բառ և խոսք: Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 7-8-րդ դասարանների նախասիրական պարապմունքների համար, Ե., 1978:

3. գիտականորեն հիմնավորել բարդ բառերի ուսումնասիրման գործընթացի ինքնատիպությունը միջին դպրոցում,

4. մշակել և փորձարարությամբ հիմնավորել ըստ իմաստի ու ձևի ածանցների փուլային ուսուցման մեթոդիկան (ըստ 'Բառակազմություն' բաժնի),

5. մանկավարժական գիտափորձի միջոցով պարզել, թե

- ինչպիսին է սովորողների բառապաշարի վիճակը,

- ինչ փորձ է կուտակվել բառակազմություն թեմայի ուսուցման գծով,

- ինչ խնդիրներ են այսօր դրված միջին դպրոցի առջև բառակազմության ուսուցման ուղղությամբ,

6. բացահայտել և լրամշակել Բառակազմություն՝ թեմայի ուսումնասիրման արդյունավետությանը նպաստող տեխնոլոգիական նոր բաղադրատարրեր:

Թեմայի ուսումնասիրման *հետազոտության մեթոդաբանական հիմք* կարող են դառնալ իմացության գիտական տեսությունը, մանկավարժության նկատմամբ փիլիսոփայական հայեցակարգային մոտեցումները, տեսական և գործնական դրույթները, լեզվաբանության մեջ գոյություն ունեցող տեսակետները, միջին դպրոցի համար նախատեսված հայոց լեզվի առարկայական ծրագրերը և ուսուցման ընդունված հայեցակարգը, ուսուցման տեխնոլոգիական համակարգի մասը կազմող ավանդական և ժամանակակից մեթոդներն ու միջոցները, հետազոտական ու փորձարարական մեթոդիկան, ուսուցման ու դաստիարակության մասին մարդաբանական պատկերացումները:

Բառակազմություն թեմայի ուսումնասիրության արդյունավետությունն ապահովելու նպատակով կարելի է կիրառել հետևյալ *մեթոդները*.

1. *Էմպիրիկ հետազոտության կամ միջնորդավորված մեթոդները*, որոնց մեջ ենթառել ենք՝

- անկետավորումը և թեստավորումը՝ նպատակ ունենալով պարզել հետազոտության սուբյեկտների անձնային և մասնագիտական որակները, տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները, դասավանդած առարկայի և հետազոտվող թեմայի գծով ունեցած գիտելիքների, կարողությունների, ունակությունների ու հմտությունների մակարդակը:

- դիտումը, որը օգնել է մեզ՝ հետազոտության գծով նյութերի հավաքագրմանը և նպաստել հետազոտության գծով դինամիկայի բացահայտմանը,

- գրույցն ու բանավեճը, որոնց օգնությամբ բացահայտել ենք հետազոտվող թեմայի գծով մանկավարժության սուբյեկտների

տեսակետները քննարկվող հիմնախնդրի առարկայական և մանկավարժական ուղղությամբ,

- մանկավարժական գիտափորձն իր արձանագրող, ձևավորող, հավաստող տեսակներով, որոնց օգնությամբ լուծել ենք բառակազմություն թեմայի հետ կապված մեթոդական հանձնարարականների մշակման և գործնական կիրառման, հետազոտության մշակվածության աստիճանի որոշման, առարկայի դասավանդման մակարդակի բարձրացման, աշակերտների բառապաշարի հարստացման հարցերը:

2. *Տեսական վերլուծությունների մեթոդները*, որոնք իրենց մեջ ներառում են նորագույն տեխնոլոգիաները՝ իրենց ողջ բաղադրատարրերով:

3. *Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման, ընդօրինակման մեթոդները*, որտեղ նկատի են առնվել հետազոտության թեմայի ուսուցման գծով եղած դասավանդման նվաճումները և ձեռք բերած արդյունավետությունը:

4. *Փուլային ուսուցման եղանակը*, որ թեմայի ուսումնասիրումը դարձնում է շարունակական՝ յուրաքանչյուր հաջորդ օղակում հաղորդելով ավելի խորը և ամբողջական գիտելիքներ, կրթական գործընթացը տանելով պարզից բարդը մեթոդական ուղիով⁶:

Ըստ այդմ, միջին դպրոցում բառակազմություն թեմայի ուսումնասիրման գիտամեթոդական այս կաղապարը կարող է ապահովել խնդիրների լուծման որոշակի արդյունավետություն, եթե տեսական և մեթոդական մոտեցումները իրականացվեն ճիշտ հարաբերակցությամբ՝ ուշադրության կենտրոնում պահելով ուսուցման աշակերտակենտրոն դասերի մոդելը:

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Հայոց լեզու: Բառ և խոսք: Ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 7-8-րդ դասարանների նախասիրական պարապմունքների համար, Ե., 1978:

2. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ.1, Ե., 1979:

3. Մկրտչյան Էդ., Խաչատրյան Լ., Հայոց լեզվի պատմություն. գրային ժամանակաշրջան, Ե., 2016:

⁶ Ս.Սարուխանյան, Մ.Միրումյան, Ն.Դիշաղաջյան, Փուլային ուսուցման եղանակ, Ե., 2014:

-
- 4.Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
5.Զահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:
6.Սարուխանյան Ս., Միրումյան Մ. և ուրիշներ, Փուլային ուսուցման եղանակ, Ե., 2014:

Ք. Հարոյան

**Բառակազմության ուսումնասիրման հիմնախնդիրները
հանրակրթության միջին դպրոցում
Ամփոփում**

Բառակազմություն թեմայի ուսումնասիրումը կարևորվում է միջին դպրոցում բառիմաստի ըմբռնման, բառ և առարկա հասկացությունների, բառիմաստի տեսակների, բառակազմական ածանցների ուսումնասիրման լեզվական և մեթոդաբանական առանձնահատկությունների բացահայտման առումներով: Բառակազմական գիտելիքները նպաստում են սովորողների պատկերավոր խոսքի զարգացմանն ու բառապաշարի հարստացմանը՝ լեզվական իրողությունների ուսուցման համատեքստում: Բառակազմության ուսումնասիրումն իրականացնվում է մեթոդական որոշակի համալիրի միջոցով, որի բաղադրիչներն են Էմպիրիկ հետազոտության, տեսական վերլուծությունների, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և ընդօրինակման մեթոդները, ինչպես նաև ուսուցման փուլային եղանակը: Բառակազմական գիտելիքների ուսումնասիրման տեսանկյունից էական դեր ունի տարամակարդակ վարժությունների համակարգը:

К. Ароян

**Проблемы обучения словообразования в среднеобразовательной
школе
Резюме**

Изучение темы «Словообразование» в школе значимо для понимания семантики слова, понятий слова и предмета, типов значений, а изучение словообразовательных суффиксов для выявления языковых и методологических особенностей.

Словообразовательные знания способствуют развитию выразительной речи учащихся и обогащению лексики в контексте изучения языковых реалий.

Изучение словообразования осуществляется посредством определенного комплексного метода, компонентами которого являются методы эмпирического исследования, теоритический анализ, исследование

педагогического опыта, методом обобщения и подражания, а также способ поэтапного изучения. С точки зрения изучения словообразовательных знаний существенную роль играет разноуровневая система упражнений.

Q. Haroyan

**Problems of studying the topic "Wordformation"
in the secondary school**

Summary

Studying the topic "Wordformation" in the school is significant for understanding the semantics of the word, the concepts of the word and subject, the types of meanings, and the study of derivational suffixes is to be able to identify linguistic and methodological features.

The knowleges on wordformation topic helps to develop the learners fluent speech and enriche vocabulary in the context of the linguistic realities study.

The learnig of wordformation is realising with the help of peculiar complex methods, the components of which are: the method of empiric reserch, theoretical analyses, the research of pedagogical expearence by the method of generalization and immitation as well as a method of stage study. From the point of studying the wordformation knowlege the multy-level exercises playes an assential role.

ՀՈՒՓՄԻՄԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական
Կոնսերվատորիայի լեզուների ամբիոնի դասախոս
ՀՏՂ 81

**ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ
ԴԱՐՁՎԱԾՍՅՈՒՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. գոյականական դարձվածային միավորներ, անձնանիշ դարձվածքներ, ստորադասական կապակցություն, համաստորադասական կապակցություն, երկանդամ դարձվածքներ, եռանդամ դարձվածքներ, քառանդամ դարձվածքներ:

Ключевые слова и выражения: субстантивные фразеологические еденицы, фразеологические еденицы со значением признака личности, подчинительное сочетание, сочинительно-подчинительное сочетание, двухкомпонентные фразеологизмы, трехкомпонентные фразеологизмы, четырехкомпонентные фразеологизмы.

Key words and expressions: substantive phraseological units, phraseological units denoting a human's appearance, subordinate combinations, coordinate-subordinate combinations, two-component phrases, three-component phrases, four-component phrases.

Ըստ իրենց գործառության ոլորտների՝ հայերենի և պարսկերենի դարձվածքները մի դեպքում վերաիմաստավորված ձևով բնութագրում են առարկան, երևույթը, իսկ մյուս դեպքում դատողություններ են արտահայտում առարկաների, երևույթների ու հատկանիշների մասին: Առաջին դեպքում դարձվածքներն ունեն անվանողական արժեք, իսկ երկրորդ դեպքում՝ հաղորդակցական: Անվանողական դարձվածքները խոսքի մեջ կատարած գործառույթներով օժտված են լինում տվյալ խոսքի մասին բնորոշ հատկանիշներով: Այս կարգի դարձվածքները չունեն հաղորդակցական արժեք և նախադասության մեջ կատարում են տարբեր անդամների պաշտոններ: Անվանողական դարձվածքների խմբերից սույն հոդվածում քննելու ենք հայերենի և պարսկերենի **անձնանիշ գոյականական դարձվածքները:**

Անձնանիշ դարձվածային միավորները դարձվածքների իմաստային խմբերից են, որոնք երկանդամ, եռանդամ կամ բազմանդամ կառույցներ են: Այս միավորները բնութագրվում են ազգային-լեզվամշակութային առանձնահատկություններով, որոնց արտահայտության պլանում կան *կենդանի, թռչուն կամ սողուն նշանակող բառեր* (հայ. առյուծի սիրտ

ունենալ, աղավնու պես անմեղ, ուղտի ականջում քնել, պրսկ. gorbe dar bağal dāştan՝ խորամանկություն անել (բոց. գրկում կատու ունենալ), muš davāndan՝ կոխվ գցել (բոց. կատու վազեցնել), mesl-e mār-e zaxm xorde՝ վիրավոր օձի պես), *մարդու մարմնի անվանումներ* (հայ. լեղին ջուր կտրել, քար սիրտ, պրսկ. pošt-e sar-e kasi namāz xandan՝ վստահել մեկին (բոց. մեկի գլխի հետևում նամազ կարդալ), guš-aš sangin ast՝ լավ չի լսում (բոց. ականջը ծանր է)), *գերագույն ոգու կամ աստվածության անվանումներ* (հայ. Աստծո պես՝ նման, Քրիստոսի պես՝ նման), *կրոնական, պատմական անձնավորության անվանումներ* (պրսկ. mesl-e Rostam՝ Ռոստամի նման, mesl-e Majnun՝ Մաջնունի նման, mesl-e baradārān-e Yusef՝ Հովսեփի եղբայրների նման¹), *հատկանշային առարկաների անվանումներ* (հայ. մեղրի պես քաղցր, ծաղկի պես հոտավետ), *գունանուններ*² (հայ. պատի պես ճերմակ, ածուխի պես սև, նռան (հատիկի) նման կարմիր, պրսկ. siyāh šodan՝ դժբախտանալ (բոց. սև դառնալ)) :

Գոյականական դարձվածային միավորները գոյականական կայուն բառակապակցություններ են, որոնց գերադաս անդամը գոյական է կամ փոխանվանաբար գործածված որևէ այլ խոսքի մաս³: Այնուամենայնիվ, դարձվածքների խոսքիմասային պատկանելությունը որոշելու համար նկատի է առնվում կապակցության միջոցով ձևավորված հասկացությունը⁴:

Ըստ բաղադրիչների կապակցության եղանակի՝ հայերենի գոյականական դարձվածքները կարելի է բաժանել երկու խմբի՝ ստորադասական, համաստորադասական: Պարսկերենի գոյականական դարձվածքների բաղադրիչները միմյանց հետ կարող են կապակցվել իզաֆեթային, զուգադրական, հարադրական կապերով⁵: Պարսկերենում առավել տարածված է բաղադրիչների իզաֆեթային կապակցման եղանակը: Ըստ բաղադրիչների քանակի՝ հայերենի և պարսկերենի գոյականական դարձվածքները լինում են երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, իսկ քառաբաղադրիչ կապակցությունները համեմատաբար սակավաթիվ են: Այս դարձվածային միավորները լինում են լրիվ (դրական, բացասական գնահատականով) կամ մասնակի վերաիմաստավորված:

¹ Пейси́ков Л. С., Лексикология современного персидского языка, М., 1975, էջ 190.

² Խաչատրյան Լ. Ս., Ավետիսյան, Լ.Ն., Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում (5-16-րդ դդ), Ե., 2015, էջ 24-27

³ Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 93:

⁴ Բեղիրյան Պ. Ս., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 133:

⁵ Рубинчик Ю. А., Основы фразеологии персидского языка, М., 1981, էջ 49:

Ստորադասական կապակցություններով գոյականական ԴՄ-ները այն կառույցներն են, որոնց բաղադրիչները իրար նկատմամբ ունեն լրացում-լրացյալի (որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ – հատկացյալ) հարաբերություն: Այս դարձվածքները իմաստաբանորեն կարող են լինել լրիվ կամ մասնակի վերաիմաստավորված:

• Լրիվ վերաիմաստավորված, դրական գնահատականով կապակցություններից են, օրինակ, հայ., *Աբրահամի գառ* – հեզ, *աշխարհի աչք* – բոլորի կողմից սիրելի մարդ, պրսկ.

حاتم طایی Hātem-e Tāyi	առատաձեռն մարդ բոց. Թայեցի Հաթեմը ⁶
میوه دل mive-ye del	սիրելի զավակ բոց. սրտի միրգ

• Լրիվ վերաիմաստավորված, բացասական գնահատականով կապակցություններ են, օրինակ, հայ. *Աղամա եզ*– ծույլ, անհոգ մարդ, *անդուռ բերան* – շատախոս, գաղտնիք չպահող մարդ, *արջ խաղացնող* – կոպիտ, անշնորհք, պրսկ.

juforuš-e gandomnama	երկերեսանի մարդ բոց. ցորեն ցույց տվող, բայց զարի վաճառող
سوهان روح souhān-e ruh	խանգարող մարդ բոց. հոգու խարտոց
خرمگس معرکه	ձանձրացնող, խոսակցությանը

⁶ Հաթեմը կիսալեզանդար արաբ բանաստեղծ էր, որ հռչակվել էր իր բարությամբ և առատաձեռնությամբ:

xarmagas-e mo'areke	խառնվող մարդ բոց. փողոցային ներկայացման բոռ
bum-e šum	դժբախտություն բերող մարդ բոց. դժբախտություն բերող բու

• Լրիվ վերաիմաստավորված, հեզնական գնահատականով կապակցություններից առանձնացրել ենք, օրինակ, հայ. *անպոչ գդալ* – ամեն ինչին խառնվող մարդ, *բամբակը նոսր* – հիմար մարդ, *էջի ականջում քնած* – ամեն ինչից անտեղյակ մարդ, *աչքի արդար յուղ* – թանկագին, սիրելի մարդ, պրսկ.

زنگوله پای تابوت zangule-ye pā-ye tābut	ծեր ծնողների երեխա բոց. գերեզմանի մոտի զանգակ
مرغ گریزا morq-e gorizpā	ա. բարձիթողի երեխա բ. ընկեր, ում հետ ուշ-ուշ են հանդիպում բոց. փախած հավ
بچه ریش دار bache-ye rišdār	երեխայի ուղեղով տարեց մարդ բոց. մորուքով երեխա
حيوان خوش خوراک heyvān-e xošxorāk	ուտելիքից չիրաժարվող մարդ բոց. համեղ ուտելիք

	սիրող կենդանի
--	---------------

Պարսկերենում կան անձնանիշ գոյականական կապակցություններ, որ արտահայտում են նաև առարկայի հատկանիշ, օրինակ,

گاو شیرده gāv-e širdah	կաթնատու կով բոց. կաթնատու կով
مروارید ناسفته morvārid-e nāsofte	ա. կույս բ. յուրահատուկ, նոր արտահայտություն բոց. չծակած մարգարիտ
ه ناجور vasle-ye nājur	ա. սպիտակ ագռավ բ. անհամապատասխան, անպատեհ պաշտոն բոց. ոչ միահենք կարկատան

• Մասնակի վերաիմաստավորված կապակցություններից են, օրինակ, հայ. *աստղով մարդ*–հաճելի, դուրեկան մարդ, *անհոտ ծաղիկ* – անհրապույր, վանող մարդ, պրսկ.

دختر ترشیده doxtar-e toršide	պառաված օրիորդ բոց. թթված աղջիկ
šam-e majles	հասարակության սիրելին բոց. հավաքույթի

	մոմը
--	------

Ստորադասական կապակցությամբ գոյականական դարձվածքներն ըստ բաղադրիչների քանակի՝ կարող են լինել երկբաղադրիչ, եռաբաղադրիչ, հազվադեպ նաև քառաբաղադրիչ:

Երկանադամ գոյականական դարձվածքները դրսևորվում են գոյական+ գոյական, ածական+գոյական, դերբայ+գոյական կաղապարներով: Այս կառուցվածքային ձևերը գործում են և՛ հայերենի, և՛ պարսկերենի գոյականական կապակցությունների կազմավորման ժամանակ, սակայն կան որոշ տարբերություններ, որ ցույց կտրվեն օրինակների միջոցով:

Գոյական+գոյական կաղապարով դարձվածքներ կան և՛ հայերենում, և՛ պարսկերենում: Օրինակ, հայ. *հոգու ախպեր* – շատ հարազատ մարդ, *կաշի եզ* – ձրիակեր մարդ, *մեխի գլուխ* – ավելորդ մարդ, *աչքի փուշ* – ոչ սիրելի անձնավորություն, *աչքի լույս* – սիրելի մարդ: Վերջին դարձվածքն ունի իր պարսկերեն համարժեքը՝ nur-e čašm: Պարսկերենի **գոյական+գոյական** կառուցատիպով երկբաղադրիչ դարձվածքներից են՝

šam-e majles	հասարակության սիրելին բոց. հավաքույթի մոմը
میوه دل mive-ye del	սիրելի զավակ բոց. սրտի միրգ
گنجشک روزی gonješk-ruzi	աղքատ մարդ բոց. ճնճղուկի օրաբաժնով

Ածական+գոյական կառուցատիպով դարձվածքները նույնպես հատուկ են հայերենին և պարսկերենին: Պարսկերենում այս կառուցատիպն ունի **գոյական + ածական** համադրությունը, քանի որ որոշիչ-որոշյալ

(ինչպես նաև հատկացուցիչ – հատկացյալ) հարաբերությունն արտահայտվում է իզաֆեթային կապով⁷: Օրինակ, հայ. *հին գայլ* – ճարպիկ մարդ, *աջ ձեռք* – օգնական, *սպիտակ ազոռ* – բոլորից տարբերվող առանձնացող մարդ, *երկաթե բազուկ* – ուժով՝ բռնությամբ ղեկավարող մարդ, *տարեց երեխա* – միամիտ մարդ: Սրանցից **աջ ձեռք** դարձվածքն ունի պարսկերեն համարժեք՝ **dast-e rast**: **Սպիտակ ազոռ** և **տարեց երեխա** կապակցություններն ունեն պարսկերեն անալոգներ՝ **gāv-e pišāni sefid** և **bače-ye rišdār**: Այս դարձվածքներն իմաստով նույնական են, սակայն տարբերվում են բաղադրիչների մասնավոր իմաստներով: Gāv-e pišāni sefid դարձվածքը թարգմանվում է *սպիտակ ճակատով կոշ*, իսկ bače-ye rišdār դարձվածքը՝ *մորուքավոր երեխա*: Բերենք պարսկերենին հատուկ մի քանի օրինակ.

یقه چرکین yaqe-čerkin	ցածր խավին պատկանող մարդ բոց. կեղտոտ օձիք
دم کلفت dom-koloft	հարուստ մարդ բոց. հաստ պոչ
کلاه نمادی kolāh-namadi	հասարակ մարդ բոց. թաղիքե զիսարկ

Gonješk-ruzi, yaqe-čerkin, dom-koloft, kolāh-namadi կապակցությունները կազմությամբ բարդ բառեր են⁸, սակայն իրանցի լեզվաբան Մ. Շաքին⁹ նմանատիպ կազմությունները ներկայացնում է դարձվածքների շարքում:

⁷ Իզաֆեթային կապի մասին մանրամասն տե՛ս, Кодухов В. И., Введение в языкознанаие, Москва, 1987, էջ 237. Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 230: Perry J.R, Sadeghi A. A, «Ezāfa», <http://www.iranicaonline.org/articles/ezafa>,

⁸ Պարսկերենի բառակազմության մասին տե՛ս, Пейсиков Л. С., Очерки по словообразованию персидского языка, М., 1973:

⁹ Shaki M., A study on nominal compound in neo-persian, Praha, 1964, էջ 48:

Եթե վերջին երեք՝ **yaqe-čerkin, dom-koloft, kolāh-namadi** դարձվածքը դիտարկենք որպես իզաֆեթային կապակցություն՝ yaqe-ye čerkin, dom-e koloft, kolāh-e namadi, ապա այս կապակցությունները, կորցնելով վերաիմաստավորումը, կդառնան ազատ բառակապակցություններ:

Գոյական+դերբայ կառուցատիպը հատուկ է և՛ պարսկերենին, և՛ հայերենին: Հայերենում բաղադրիչ անդամի դերում կարող են հանդես գալ ենթակայական և հարակատար դերբայները: Ենթակայական դերբայով կապակցություններում դերբայը հաջորդում է գոյականին, իսկ հարակատար դերբայով կապակցություններում նախադաս է: Օրինակ, *էշ ներկող* – խաբեբա մարդ, *շուն բռնող* – անգործ, պարապ, թափառաշրջիկ մարդ, *ճանճ քշող* – պորտաբույծ մարդ, *թրջված հավ* – խեղճ ու անճար մարդ, *կոտրած գդալ* – մի բանի անկոչի պես խառնվող մարդ: Պարսկերենի գոյականական դարձվածքներում որպես բաղադրիչ անդամ հանդես է գալիս անցյալի դերբայը: Օրինակ,

پاردم ساییده pārdom-sāyide	անպետք, խաբեբա մարդ
پاچه ورمالیده pāče-varmālide	ճարպիկ բոց. տաբատի փողքերը ծալած
دم بریده dom-boride	խորամանկ մարդ բոց. պոչը կտրած

Պարսկերենում, ի տարբերություն հայերենի, անձնանիշ գոյականական դարձվածքներ կարող են կազմվել նաև **գոյական+բայաձևիմբ** բաղադրիչներով: Օրինակ,

xāl-bāz	խաբեբա բոց. խաղացող
خر رنگ کن xar-rang-kon	խաբեբա, բոց. էշ ներկող

Xar rangkon դարձվածքը հայերենում ունի իր համարժեքը՝ *էշ ներկող*: Այս կապակցությունները տարբերվում են միայն բայական բաղադրիչի կազմությամբ: Հայերենում որպես երկրորդ բաղադրիչ հանդես է գալիս *ներկել* բայի ենթակայական դերբայը: Մինչդեռ պարսկերենում *ներկել* բայը կազմությամբ հարադիր բայ է:

Եռանդամ գոյականական դարձվածքները համեմատաբար նվազ են, թեև ունեն կառուցվածքային հարուստ կաղապարներ: Այս կապակցություններում անդամներից մեկն ունի մոդելավորող գործառույթ և հանդես է գալիս որպես գլխավոր անդամ: Այս անդամը հիմնականում արտահայտվում է գոյականով և եզրափակում է կառույցը, իսկ մյուս անդամները կատարում են լրացման պաշտոններ:

Գոյական+գոյական+գոյական կաղապարով կազմված հայերեն դարձվածքներում գերադաս անդամը վերջադաս է՝ ուղղական հոլովով: Պարսկերեն դարձվածքներում մոդելավորող անդամը նախադաս է, քանի որ կապակցությունը ձևավորվում է իզաֆեթային կապով: Օրինակ. հայ. *գառան մորթով գալ, սիրամարգի փետուրներով ագռավ*, պրսկ.

gol-e sar-e sabad	լավագույն ներկայացուցիչ բոց. զամբյուղի գլխավոր ծաղիկը
زنگوله پای تابوت zangule-ye pā-ye tābut	վերջին երեխա բոց. զանգակ գերեզմանի մոտ

Հայերենում ավելի շատ տարածված են երկու գոյականով և մեկ ածականով կազմված դարձվածային միավորները, օրինակ, *աչքի արդար յուղ* – թանկագին, ամենասիրելի մարդ (հեգնական իմաստով), *վերին արտի ցորեն* – ընտրյալ, արտոնյալ մարդ, *ցամաք ձորի աղվես* – խիստ հյուծված, նիհար մարդ, *գարե հացի հյուր* – ոչ մեծ հարգանք ու պատիվ վայելող մարդ:

Թվական խոսքի մասով կառույցները ավելի բնորոշ են հայերենին, քան պարսկերենին: Հայերենում թվականը կարող է լինել կապակցության առաջին կամ երկրորդ անդամը, քանի որ վերջին անդամը միշտ գերադաս գոյականն է՝ ուղղական հոլովով: Օրինակ, *մի տան ճրագ*– տան միակ

հույսը, *յոթ ծովի մերան*– շատ բան տեսած, խորամանկ մարդ, *յոթ գութանի տեր*– շատ հարուստ մարդ:

Դերբայով եռանդամ կառույցները հատուկ են և՛ հայերենին և՛ պարսկերենին: Հայերենում գործածվում են հարակատար և ենթակայական դերբայները, իսկ պարսկերենում՝ անցյալ դերբայը: Պարսկերենում դերբայով եռանդամ դարձվածքները հիմնականում համեմատություն դարձվածքներ են: Հայերենում դերբայով եռանդամ դարձվածքներից են՝ *աղվամազը երեսին չբուսնած* – դեռատի պատանի, *ասեղ կերած շուն* – շատ նիհար, հյուծված մարդ, *ատամները հանած գալլ* – այլևս վտանգ չներկայացնող մարդ, *կաթ թափած կատու* – մոլորված, վախեցած մարդ, *բեղից ընկած բրինձ* – չհարգվող մարդ: Պարսկերենի դերբայով գոյականական դարձվածքներից են՝

مثال هلوی پوست کنده mesl-e holu-ye pust-kande	շատ գեղեցիկ աղջիկ բոց. մաքրած դեղձի նման
مثال گراز تیر خورده mesl-e goraz-e tir- xorde	կատաղած մարդ բոց. վիրավոր վարազի նման
مثال شتر افسار گسیخته mesl-e šotor-e afsār-gosixte	շատ ակտիվ, ձգտող մարդ բոց. սանձերն արձակած ուղտի նման

Քառանդամ գոյականական դարձվածքները և՛ հայերենում, և՛ պարսկերենում ավելի քիչ թիվ են կազմում: Ըստ Խ. Բադիկյանի՝ այդ դարձվածքների սակավության պատճառը մի կողմից՝ լեզվի՝ պարզության ձգտումն է, մյուս կողմից՝ ավելի կարճ դարձվածքների առավել հեշտ մտապահվելը¹⁰: Հայերենում և պարսկերենում այս դարձվածքների բաղադրիչներն ունեն տարբեր խոսքիմասային պատկանելություն: Հայերենում գոյականական դարձվածքները կազմվում են դերբայական դարձված + գոյական կաղապարով, որտեղ ԴԴ–ն եռանդամ կառույց է,

¹⁰ Տե՛ս, Բադիկյան Խ. Գ., նշվ. աշխ., էջ 109:

ինչպես՝ *գառան մորթի հագած գայլ, սիրամարգի փետուրներով զարդարված ագռավ*։ Պարսկերենում քառանդամ գոյականական դարձվածքները կարող են կապակցվել կապի և երեք գոյականների, երեք գոյականների և բայահիմքի համադրությամբ, օրինակ,

بادمجان دور قاب چین bādemjun dour-e qab-čīn	շողոքորթ բոց. մեծ ափսեի շուրջը ինչ-որ մեկի համար բադրիջան շարող
نان به نرخ روز خور nān be nerx-e ruz-xor	իրավիճակին հարմարվող մարդ բոց. հացն օրվա արտարժույթին համապատասխան ուտող
ماه شب چهارده māh-e šab-e čahārdah	գեղեցիկ աղջիկ բոց. տասնչորսերորդ գիշերվա լուսին

Համաստորադասական կապակցությամբ գոյականական դարձվածքներում առկա են և՛ ստորադասական, և՛ համադասական հարաբերություններ։ Այս կարգի անձնանիշ գոյականական դարձվածքները սակավաթիվ են։ Դրանք հայերենում և պարսկերենում ունեն տարբեր կառուցատիպեր, օրինակ, հայ. *իր լավն ու վատը չհասկացող, գրի սեն ու սպիտակը չջոկող*–կիսագրազետ մարդ, պրսկ.

مثل کارد و پنیر mesl-e kārd va panir	անհաշտ մարդիկ բոց. դանակի ու կարագի նման
مثل لیلی و مجنون mesl-e Leili o	Լեյլիի ու Մաջնունի նման

Majnun	
مثل سگ و گربه mesl-e sag va gorbe	շուն ու կատվի նման

Հայերեն դարձվածքները կազմված են նյութական խոսքի մասերով, իսկ պարսկերեն օրինակները՝ համեմատություն դարձվածքները՝ **mesl-e «նման»** կապի և գոյականների կապակցությամբ: Պարսկերեն mesl-e sag va gorbe դարձվածքն ունի իր հայերեն համարժեքը:

Այսպիսով, հայերենի և պարսկերենի անձնանիշ գոյականական դարձվածքների բաղադրիչներն արտահայտում են ստորադասական կամ համաստորադասական հարաբերություններ. Դրանք լրիվ կամ մասնակի վերաիմաստավորմամբ երկբաղադրիչ, եռաբաղադրիչ կամ քառաբաղադրիչ կապակցություններ են: Այս դարձվածքները կայուն բառակապակցություններ են, որ ունեն գոյականի խոսքիմասային նշանակություն: Այս կապակցությունների գերադաս անդամը գոյական է, կամ փոխանվանաբար գործածված որևէ այլ խոսքի մաս:

2. Թորոսյան

Անձի հատկանիշ արտահայտող գոյականական դարձվածային միավորները հայերենում և պարսկերենում

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են հայերենի և պարսկերենի անձնանիշ գոյականական դարձվածքները: Հայերենի և պարսկերենի անձնանիշ գոյականական դարձվածքները հանդես են բերում կառուցվածքային-քերականական նմանություններ, սակայն լիովին չունեն համարժեքներ կամ անալոգներ: Կառուցվածքային-քերականական տեսանկյունից այս կապակցությունները ստորադասական կամ համաստորադասական կապով երկբաղադրիչ, եռաբաղադրիչ կամ քառաբաղադրիչ կապակցություններ են:

Հայերենի և պարսկերենի անձնանիշ գոյականական դարձվածքների քննությունը ցույց է տալիս լեզվակիր տարբեր հանրությունների աշխարհընկալման յուրահատկություններն ու լեզվամտածողական կաղապարների առանձնահատկությունները:

Р. Торосян

**Субстантивные фразеологические еденицы со значением признакан
личности в армянском и персидском языках**

Резюме

В статье рассматриваются субстантивные фразеологические еденицы со значением признака личности в армянском и персидском языках. Субстантивные фразеологические еденицы со значением признака личности в армянском и персидском подчеркиваются структурно-грамматическими особенностями, но полностью не имеют эквивалентов или аналогов. По структурно-грамматическим признакам эти фразеологические еденицы являются двухкомпонентными, трехкомпонентными или четырехкомпонентными подчинительными или сочинительно-подчинительными сочетаниями.

Сопоставительный анализ субстантивных фразеологических едениц со значением признака личности армянского и персидского языках показывает особенности мировоззрения разных обществ и уникальность языковых конструкций.

H. Torosyan

**The substantive phraseological units denoting a human's appearance in
Armenian and Farsi**

Summary

The article discusses the substantive phraseological units denoting a human's appearance in Armenian and Farsi. The substantive phraseological units denoting a human's appearance in Armenian and Farsi have structural-grammatical similarities, but these units have few equivalents and analogues. From the structural-grammatical point of view these units are subordinate or coordinate-subordinate combinations that have two, three or four components.

The analysis of the substantive phraseological units denoting a human's appearance in Armenian and Farsi shows the peculiarities of worldview of different communities and the originalities of language structures.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, Բ.Գ.Թ., դոցենտ
sitanush71@icloud.com

ՀՏԴ 821.19.0

ՑԱՎ, ՈՐ ՈՒԶՈՒՄ Է ԽՈՍԵԼ

Բանալի բառեր և արտահայտություններ. Լևոն Խեչոյան, տոհմի սրբազան առասպել, մեկնության և օտարումի փիլիսոփայություն, խոնարհ հերոսներ:

Ключевые слова и выражения: Левон Хечоян, священная легенда о роде, философия одиночества и отчуждения, покорные герои.

Key words and expressions: Levon Khechoyan, sacred legend of ancestry, philosophy of loneliness and alienation, resigned heroes.

Վաղուց արդեն Լևոն Խեչոյանի գրականությունն իր յուրօրինակ երանգով ու իմաստային ներքին ազդակների բարդ համադրությամբ մի յուրահատուկ էջ է կազմավորում ժամանակակից հայ արձակի համաբնագրում:

Խեչոյանի մասին շատ են գրել. նրա գեղարվեստական ստեղծագործությունը արժևորել են ամենատարբեր դիտանկյուններից, սակայն մի չավարտվող գայթակղություն կրկին ու կրկին ստիպում է անդրադառնալ նրա գրին, առնչվել դրա մեջ ապրող տաք լույսին ու գոյության սրբազան սարսուռներին:

Կերպարային բազմաշերտությամբ, մարդու հոգեկան աշխարհի թաքուն, անտեսանելի կողմերի նուրբ ու խորքային դիտումների, մարդու շուրջը ստեղծված ու նրա ճակատագիրն ուղղորդող անտեսանելի Բանականության պարտադրող ներկայությամբ են ձևավորում Խեչոյանի պատմվածքների սյուժեները, որոնք խորացնում-ամբողջացնում են այն էական միտումները, որ բնորոշ են ժամանակակից հայ արձակի զարգացման ընթացքին:

Գրողի հայացքը փնտրում ու գտնում է կյանքի սովորական, «փոքր» ողբերգությունները, մարդկային բնավորությունների արտասովորությունն ու ողբերգական ճեղքվածքները, նրանց կենսագրությունների խորքերում պահ տված թաքուն-անասելին, որ երբեմն տազնապ ու սպասում, երբեմն

ծանրագույն դրամատիզմ ու հանկարծահաս աղետ են կանխագուշակում՝ առանց երկար-բարակ նախապատրաստության, առանց ներածականների «ներխուժելով» սյուժե: Նրա պատմվածքները փոքրածավալ են՝ երեքից հինգ էջ, խիտ ու հավաքական այնքան, որ շատ հաճախ դրանք նույնիսկ կամ էտյուդ են անվանում: Այսպես ընթերցողն է գնահատում, այնինչ Խեչոյանը հետաքրքիր մեկնաբանություն ունի առհասարակ Գրի ծնունդի, ինքնահաղթահարման ճանապարհի ու իրեն ստեղծողից օտարվելու ինքնակա գոյությամբ ապրելու մասին. «Գրելուց առաջ երբեք չեմ մտածում՝ պատմվածքը կարճ, թե՞ երկար է լինելու: Իմ ստեղծագործական միտքն է այդպիսին, ինքն է ընտրում ճանապարհը, նույնիսկ կարելի է ասել՝ ստեղծագործական ամբողջ գործընթացը ուշաթափության նման է, մեկ էլ վերջում վայրի մեղրի պես դառը և քաղցր մի նստվածք է մնացել»¹:

Ստեղծագործական որոնումների դժվար ճանապարհին գրողը տեսնում է հարաբերություններ երևույթների մեջ, որոնք, թվում է, չեն տրվում բանականությանը և կապակցելի չեն տրամաբանական և ոչ մի հանգրվանում: Այդ արտասովոր աշխարհընկալման մեջ շատ են շանթահարող անակնկալները, նախախնամության աղետալի ներկայության նշաններն ու աստծո անբարեհաճությունը, այնքան շատ, որ երբեմն մարդու ապրելու ճիգը հասցնում են անորոշ վարանքի ու թանձր երկմտության, երբեմն անընդհատ մաքառումի անիմաստ վատնումից մնացած անխուսափելի տագնապի ու դատարկության: Բայց աշխարհաճանաչողության այս էմոցիոնալ պատկերին զուգահեռվում է պատումի միջուկը պահող դատողական ճշմարտությունը, ու գրողի ներսույզ կռահումներն ու դատումները ստեղծում են գիտակցության ու զգացմունքի միասնության մեջ այնքան կատարյալ աշխարհի պատկերը:

Խեչոյանի փոքր կտավի արձակ գործերի սյուժեն առաջին հայացքից պարզ է, առանց արհեստական հնարանքների, առանց երևակայական ու մտացածին դրվագներով տպավորություն ստեղծելու գրողական ճիգի: Ուրիշ խնդիր է, որ Խեչոյանի սյուժեներին միշտ, կամ գրեթե միշտ ուղեկցում է ծանր ու մոգական մի գիտակցություն, անտեսանելիի չանվանվող մի ներկայություն որի ներկայությամբ ոչ երազն է երազի նման, ոչ էլ մեղքն է քավության տարածք որոնում:

Զարմանալի մի նրբանկատությամբ Խեչոյանի գրականության ժամանակը «ներհյուսում է» միֆականն ու միստիկականը, սակայն այն ո՛չ միֆական է, ո՛չ միստիկական այդ ժամանակն իջեցված է մինչև մեն-միակ

¹ Հարցազրույց Ժաննա Կույավայի հետ, Литакцент, 13,01,2014, թարգմ.՝ Նարե Աթոյանի ֆեյսբուքյան էջից:

կյանք, մարդկային մի ճակատագիր, որ մասնատված է բազմաթիվ հատվածների, որ հյուսում է բազում անկումներից, մեծ ու փոքր ողբերգություններից: Մարդկային ճակատագիրը, - ահա Գրի հիմնական տեքստը, ու նրան ուղեկցող զգացողությունը, թե այդ ճակատագրին նայող, ճակատագրից խռով Աստծո սիրտը չի փափկեցնում ոչ մի աղերսանք, չի հուզում ոչ մի տքնանք: Ի սկզբանե դատապարտության. ներսի մերկ-անսահման մենակ լինելու զգացողության այս ներքին մեխանիկան ոչ միայն ձևավորում է պոեզիան, ցավի շարժման հետագծով մարդկային կենսագրությունների պատմությունը լրումի հասցնում, այլ նաև երբեմն շատ նրբորեն, երբեմն հատու, կոշտ, անաստված դաժանությամբ ծնում է ու կործանում, գտնում ու կորցնում կյանքի անհամար հնարավորություններն ու սպանում խոստումները՝ գոյության դատարկ վիճի լցնելու ցավագին հարցումներով. ինչո՞ւ, ինչի՞ համար է այսպես: Մնում է միայն ցավի անսահման զգացողությունը, որ ուզում է խոսել: Յավը, որի մասին խոսում է գրողը:

Խեչոյանը գրականություն է ստեղծում դժվարությամբ ձեռք բերած իր կենսափորձով՝ պաթոսը, կեղծիքն ու շինծու գեղարվեստականությունը բացառելով այնքան, որ ընթերցողին անվերապահ հավատ է ներշնչում իր կենսափորձի ու գրի ազնվության մարդկային ցավը կիսելու իր կարողության նկատմամբ:

«Եվ խելագարության եզրին ապրած իմ կյանքը, անքուն գիշերների տքնանքը չի եղել դափնեպսակին հասնելու ձգտում, որովհետև ճշմարիտ է՝ քիչ հեղինակություն ունենալ արժանիորեն, քան թե մեծ փառք՝ առանց իրավունքի: Նրա իմաստության մեջ ապավինել եմ լույսին ու գրականությանը: Ու գրասեղանի առաջ իմ հաճախագարկ տենդի ժամանակ տեսնում ու ճանաչում էի նրան, իսկ նա առաջնորդում էր ինձ»², - գրում է Խեչոյանը, ապա մի այլ առիթով հավելում, թե՝ «... (նաև) հասկանում եմ, որ մարդկային միտքը մոռացվում է իրար ետևից, քիչ առաջվա ինչ-որ բանի պատմությունը ենթակա է ինքնառնջնացման: Ինձ վիճակված է կորչել ինձ արարողի մեջ: Ներքին՝ երրորդ աչքի տեսողությամբ պետք է ճանաչել մարդկային կյանքի ակնթարթային տևողությունը և նրա էության հավերժական լինելը և նրանց մեջ որոնել զգացական խորությունը, որը դուրս է գիտակցական աշխարհից, սակայն գիտենալով, որ միշտ առաջին

² Լ. Խեչոյան, «Ճառ՝ արտասանված ՀՀ պետական գրական մրցանակ ստանալու առիթով», 2000թ.:

ընկալման սկիզբը հեշտ է կողմնորոշվում հնարավորին և ներկային որոնելիս»³:

Խեչոյանի հերոսները շատ հաճախ մենակ են, իրենց՝ «տաքօրինակ» տեսակի համար օտարն ու օտարացածը, համայնքից դուրս քշվածն ու շարունակական անկումների ու ողբերգությունների մեջ մեռնող-չավարտվողը: Նրանք նաև սովորաբար տխուր են: «Ինչո՞ւ են տխուր: Ինձ նման են, թե՛ ես ուրախ մարդ եմ: Մարդը տխուր է: Էլի մենք անընդհատ ձևացնում ենք, թե այդպես չէ, բայց տխուր է: Եթե մարդը կա, մարդու համար բանտն էլ են սարքել: Եթե բանտ կա, մահն էլ կա: Մենք անընդհատ այդ բանների շրջապատյալի մեջ ենք, փախչում ենք անընդհատ՝ ձևացնելով, թե լավ է ամեն ինչ, գեղեցիկ է: Նմա՞ն եմ իմ հերոսներին: Անպայման նման եմ: Անգամ իմ հերոսուհի կերպարների եմ նման: Այդպես է, գրողը սեռ չունի, չի ունենում: Յուրաքանչյուր գրողի կեսը կին է, կեսը տղամարդ»⁴, - Խեչոյանի այս դատողությունները բացահայտում են իր հերոսների հետ ունեցած հոգեբանական ընդհանրությունը, նաև տիեզերական այն տխրությունն ու անփարատ թախիծը, որ նշանակիչ ու առանձնահատուկ են դարձնում Խեչոյանի գրական աշխարհը:

Ցավ, բաժանում, երազաթափ ճակատագրեր, մահվան սարսափ, լռակյաց, ինքնամփոփ, փակ հերոսներ, որոնց հետ հարաբերվելը՝ գրեթե անհնարին, ծանր, դժվար շրջանակ է ձևավորում ու խոր ապրումակցություն առաջացնում նրանց կյանք ներխուժած բնական ու հրահրված աղետների ու դժբախտությունների նկատմամբ:

Մարդկային ողբերգություններն էլ կյանքի առեղծվածի նման են. խոսել, բացատրել նրանց խորքը դաժանորեն անհասանելի է, բառին, խոսքին, երբեմն անգամ բանականությանը չտրվող: Ծանր, բայց հենց դրանց ներսին առնչվելու սրբազան սարսուռն է բացում Խեչոյանի աշխարհայացքի խորությունը, աշխարհն ու մարդուն «անսպասելի» ներկայությամբ ճանաչելու նրա բացառիկ կարողությունը: «Ոչ մի ստեղծագործություն մինչև վերջ քոնը չէ, անընդհատ փախչում է, ինքը անընդհատ հեռանում է քեզանից, անընդհատ կասկածը մեծանում է քո ուժերի նկատմամբ, անանձնական վախ է... Ստեղծագործելը նաև եկեղեցու դռանը տերտերին բարև տալու պես է, օրհնությունը ստանում ես, սակայն թերահավատություն է մտնում մեջդ, որովհետև խորամանկություն էիր նկատել ժպտացող շուրթերին ... Եթե նկատել եք՝ սրբավայրերը միշտ էլ

³ Լ. Խեչոյան, «Փուշը, հայր, փուշը», Երևան, 2011, էջ 343:

⁴ Հարցազրույց Ժաննա Կույավայի հետ, Литакцент, 13,01,2014, թարգմ.՝ Նարե Աթոյանի ֆեյսբուքյան էջից:

ընդերքից բխող կաթնաղբյուրների վրա են կառուցում, ուրեմն խորհուրդը գրողի ներսի մեջ է»⁵, - Գրի ինքնաստեղծումի ու գրողական տքնանքի ծանրագույն մաքառումն այսպես է բանաձևում Խեչոյանը՝ ում համար ամեն բառի ընտրությունը ծանր փորձություն է այնքան, ասես դրանից է կախված իր, սեփական կյանքը:

Գրողը՝ քչախոս, լռակյաց, երբեմն ջղաձիգ, անվերջորեն մի հատիկ բառի համար կռիվ տվող, փնտրում է այդ դժվար հանդիպումն ու իր լուրջան մեջ խոսում ամենակարևորի մասին:

«Միրիր մարդուն» պատվիրանն այնքան խորն է նստած նրա գրականության մեջ, որ Խեչոյանը քրմեր ու մարգարեներ չի վկայակոչում նշանների ու նշանակների մեջ երևացող Աստծուն ու չերևացող մեղքը իրարից զանազանելու համար: Միրելու պատվիրանն իր խորքային հղումի մեջ բացում է մեկ այլ ճշմարտություն. մարդու խեղճ, ջարդված, արատներով ու ցավերով ճեղքված կյանքն օրինակ է այն բանի, որ առանց սեփական անձի նկատմամբ սիրո անհնար է սերը դեպի մերձավորը, որ ինքնատեղությունը, եսի խեղճությունը նույնանում են սարսափելի մենակությանն ու հուսահատությանը, կամ փոխվում հիվանդ, անձնակենտրոն եսասիրության:

Կյանքում գեղեցիկի ու անօգնական, խեղճ եսասիրության հանդիպման դիլեմայի մեջ է «Զանգը» պատմվածքի գաղափարը: Դեպքերը սկսվում են հանկարծակի, անակնկալ ու առանց նախապատմության. դրաման ծանր է, նկարագրության չտրվող. գեղեցկուհի Նվարդի մահը անհեթեթ ու անիմաստ մի դիպվածից: Խեչոյանն այնքան ծանր է գրում, ասես փորագրում է բառը բառի ետևից՝ խորը, անվրեպ, ցավի ներկայությունը խորքում:

Սկզբում անձրևը թույլ էր, անվտանգ ու սովորական, հետո քիչ-քիչ մեծացավ ու ջրհեղեղ դարձավ: Ջրհեղեղ, որ սպանեց Նվարդի «արծաթահունչ կերպարը»: «Նա բարձրակրունկ կոշիկները բռնել էր ձեռքում ու կանգնել էր տաք անձրևի տակ, կարկամած՝ ոչ օգնություն էր կանչում, ոչ էլ լաց էր լինում»: Դեռատի աղջնակի գոյության տաք լույսին հանդիման այնքան անհեթեթ, այնքան ծիծաղելի էր մահվան ներկայությունը, որ անգամ այն պահին, երբ ջուրը քշեց, տարավ պատերազմի հերոս Հայրոյի զույգ դնովի երկու ոտքերը, երբ ջուրը շիվարած գյուղի աչքի առաջ բռպե-բռպե մեծանում, ահռելի հեղեղ էր դառնում, Նվարդը չէր հավատում մահվանը, սարսափելի տեսարանին ականատես

⁵ Նույն հարցազրույցը:

գյուղն էլ չէր հավատում նրա մահվանը, ու գյուղում «մեզանից ամեն մեկը հավատացած էր, թե դեռ կարող էր փրկել ռուսաց լեզվի ուսուցչուհուն»:

Արագ զարգացող դեպքերը դնում են սահմանային իրավիճակը՝ լարված, ահագնացող, որ սովորական են դարձնում մարդու՝ «մահվան առաջ չնահանջելու» կամ թե մահը չգիտակցելու պատմությունը: Մեկ ժամ առաջ ո՞վ կհավատար Նվարդի՝ մահվանը այդքան մոտ լինելու իրողությունը:

Խեչոյանի փոքր պատմվածքները ծանր խոստովանանք են մարդու ճակատագրի մասին, որ հայտնվել է կյանքի ու երազանքի սահմանին ու հանկարծ հասկացել, որ մոլորված է ոչ այնքան կյանքի հանդեպ, որքան որ երազանքի, որ ուզում էր դարձնել իր միակ կյանքը: Բայց անանուն ինչ-որ նշան, աղետալի ինչ-որ փորձություն ծանրանում է մարդկային այնքան սովորական երազանքի վրա՝ իրենից հետո թողնելով ցավի ու անարդարության բեկորները խզբզված մի կենսագրության պատմության: Խեչոյանը տեսնում է, վկայում իրականությունը գիտի, թե ինչպես ոչնչացնի մարդուն, ու դրա համար ավելի նրբին ու ծանր միջոցներ է գտնում, քան մահը: Իսկ եթե մահն է վերջին ապաստանը՝ գալիս է անպատեհ, անձայն, անհեթեթության չափ անիմաստ ու անսպասելի: Հատո՛ւ, ծա՛նր, ցավեցնո՛ղ,- գրողն այսպես է լուծում փոքր կտավի իր արձակ գործերի գաղափարը՝ այդ անհեթեթության մեջ հակադարձելով տիեզերքի կատարյալ կարգավորվածության ու օրինաչափության ինտելեկտուալ-փիլիսոփայական օրինաչափությունը:

Մի թե այսքան մոտ են ապրում կյանքն ու մահը, մի՞ թե այսքան անիմաստ ու անհեթեթ՝ մահը կարող է սպանել գոյության տաք թրթիռը, լույսի պես գեղեցիկ աղջնակին:

Նվարդին սիրահարված էին գյուղի բոլոր տղամարդիկ, ու նրան ճանաչած օրվանից, իրենց անօգնական, հիվանդ երազներում ամեն անգամ այնքան հեշտ էր Նվարդին ունենալը, Նվարդին, ով «մուգ գույնի շրթներկ էր օգտագործում, խոսելիս խարտյաշ մազերը գլխի թեթն թափահարումով զցում էր ետ ու այտի վրա փոսիկ էր առաջանում», ով անցնում էր գյուղի փողոցով, ու թվում էր, թե արծաթ գանգակ է նվագում:

Հիմա էլ նրանից ամեն մեկին թվում էր, թե ինքը դեռ կհասցնի փրկել «արծաթահունչ» այս հրեշտակին: Իսկ իրականում չկար, չգտնվեց մեկն այս գյուղում, որ ազատվեր եսասիրության ու վախի մղձավանջից ու փրկեր գեղեցկությունը կատաղի տարերքի ճիրաններից. «Նվարդը նստեց, պատից կախ ոտքերն արդեն դեղին ջրերին էին հասնում: Բոբիկ ոտքերին հագավ կոշիկները, նորից հանեց, սկսեց գուլպաները հագնել ու նոր կոշիկները»: Բառեր չկան չոր, անաստված դրամա է, որի ներսում ժամանակը չափվում է այլ միավորով՝ խիտ, սեղմված պատկերին հաղորդելով իմաստային ու

գեղագիտական բացառիկ ուժ: Մարդն է՝ մենակ, աստծուց ու մարդկանցից լքված՝ անասոված տարերքի դեմ, ապա նրա լուռ-չգիտակցված հաշտությունը հեռանալու անհրաժեշտության, ապա պարտությունը մահվան անխուսափելիության առաջ:

... Նվարդին գտան չորս օր հետո, երբ ջրերը քաշվեցին: Հետո ծնողները շքեղ մեքենայով քաղաք տարան հոգուց դատարկված նրա արծաթահունչ մարմինն ու անձայն, վշտից մոխրացած՝ հողին հանձնեցին իրենց միուճարին:

Տիղմից հանեցին ու քիվից կախեցին դպրոցի՝ լեզվակը կտրած գանգը: Գյուղը սկսեց ապրել իր հին կյանքով: Միայն թե ամեն գիշեր գյուղի վրա, չգիտես որտեղից, տաք թրթռում էր արծաթահունչ գանգի լացը, ու նրա ձայնից արթնացած մարդիկ լսում էին երկիրը թողնող հրեշտակների՝ արդեն ծանոթ դարձած թևաբախությունը:

Ահա այսպես, երբ գրողի ամենակարևոր ասելիքը չի տրվում բանականությանը, նա մտքի ուժով ճեղքում է բանականության ժամանակն ու առնչվում ենթագիտակցության խորքերին: Այս իմաստով աշխարհայեցողության նրա սկիզբն անմիջականորեն առնչվում է ենթագիտակցականի, տոհմի սրբազան առասպելի, ծեսի ու արքեստիպի (կոլեկտիվ անգիտակցականի) վերապրումների հետ: Խեչոյանի ներկայացրած գեղարվեստական իրականությունը չունի որոշակիացված ժամանակահատված, այն մշտական ընթացքի մեջ է, ու թեև սկսվել է անցյալի հեռուներում, ընթերցողին պահում է անվերջ ներկայի ժամանակում: Խեչոյանի գրականության կենտրոնը. բոլոր միջերից ու բնագանցությունից դուրս, մարդն է, նրա ներսի աշխարհը, նրա «փոքր» ժամանակը, որ ստեղծվում է անկումների ու հարության անընդհատ կրկնվող պատկերներից, որ ամենակարճ ճանապարհն է Աստծուն առնչվելու, տիեզերական մեծ շրջապտույտը մարդու ներսում «բռնելու», ճանաչելու համար: Աշխարհին առնչվելու հոգեբանական, փիլիսոփայական այս հանձնառության խորքում գրողը պատումը, ենթագիտակցության հոսքը բանական աշխարհընկալման այնպիսի աստիճանի է հասցնում, որ կյանքի ծեսի, գոթական պերճանքից անդին բացում է սահմանային իրավիճակն ու ցույց տալիս, թե անվերջ անկումների ու արարատների մեջ ինչպես է «բացվում» մարդը մարդու մեջ ու թե ինչպես կարելի է անցնել «երկրային դժոխքի ոլորաններով ու անեղծ մնալ»: Խեչոյանի հերոսը համայնքից չանջատված մարդն է համայնքը ներում է անկյալությունը, արատը բայց ճանաչում է մեղքը, հոգեւթության նշանը՝ այլևս դավադիր վրեժխնդրությամբ լարելով դեպքերի զարգացման ներքին դինամիկան՝ մինչև ստեղծված վիճակից միակ հնարավոր պատասխան:

Համայնքի ավանդական մտածողությունը դաժանորեն հետամուտ է ու պարտադրող: Մարդու ու համայնքի կապը դարերի ընթացքում կայունացել է որոշակի ավանդույթներով ու ծիսակարգությամբ: Ծեսը հուսալի ներդաշնակություն է ստեղծում մարդու հոգու ու նրանից դուրս գտնվող անորոշ ու անհասկանալի աշխարհի միջև: Գյուղի հայացքը դառնում է գաղտնագրված մի իրականություն՝ մարդու անապրուստ, անկյանք կյանքը վերահսկելու համար: Մշտապես ներկա, բայց չերևացող այդ իրականությունը խիստ կոլորիտային է՝ իր մեջ ներառած ոչ միայն գյուղացու մտածողությունը, աշխարհատեսությունը, երկխոսություններն ու նիստուկացը, այլև ճակատագրականորեն դաժան ատելությունը, անհանդուրժողականությունը գյուղի՝ ճակատագրորեն խոնարհների, մեղքով նշանակիրների նկատմամբ: Գյուղը կամ սիրում է իր խոնարհներին, կամ ատում՝ սպանելու աստիճան: Գյուղն իրենից վանում, հեռացնում է անիծյալը, գյուղը սպանում է իր միջի օտարը:

Մարդու ողբերգական ճակատագրի ու օտարվածության մասին է «Խոզը» պատմվածքը: Քեռի Մուկուչը, որ չգործած հանցանքի համար բանտ էր ընկել, օրը օրի բանտում սևացնելով, ազատվել, գյուղ էր եկել: «Տեսնո՞ւմ ես, էստեղ վեց օր ու գիշեր պառկել եմ փորիս, որ տղաները մեջքիս եկեղեցի դաջեն», - եղբոր խեղճ ու կրակ տղայի՞ն էր ապրել սովորեցնում, թե՛ կյանքի նկատմամբ իր վախն էր վանում գյուղ նոր ոտք դրած Մուկուչը՝ իբր թե փորձությունն ինչ, փորձանքն ինչ՝ փոքր բաներ են, կգան ու կգնան: Ասում էր՝ տղայի խելճության ու կիսատության մեջ իր կենսագրության ողբերգությունը կրկնելու վտանգը զգալով: Ասում էր՝ արտաքին հերոսության թափանցիկ շղարշի տակ բոլորին օտար լինելու, իր «տարօրինակ» տեսակի ներքին մղձավանջը հաղթահարելու ձգտումով: Բերանո՞վ ես ասում, վեց օր ու գիշեր փորին պառկել էր, որ մեջքին մեծ եկեղեցի դաջեն: Բայց ... Ինչպես կյանքն էր միշտ ծաղրել Մուկուչին, այս անգամ էլ բանտապետն էր որոշել նրա չգործած հանցանքի համար քավության տարածք որոնել: Մեջքին՝ ծոծրակից մինչև գոտկատեղ, մեծ ականջներով խոզ էին դաջել՝ տասը խոճկորներն էլ վրադիր ...

Գրողի գրեթե բոլոր պատմվածքներում կա մի նշան, որ իր ցավեցնող ներկայությամբ ի սկզբանե ապրում է մարդուց անբաժան: Թվում է, թե սոցիալական իրականությունը, սոցիալական ժամանակն՝ իբրև ուղիղ հարցադրում գրեթե բացակայում է Խեչոյանի փոքր կտավի գործերում: Մա, իհարկե, առաջին տպավորությամբ: Խեչոյանի հայացքը շատ խորն է քննում մարդու ճակատագիրը, «փոքր» մարդու ողբերգությունը՝ անապրուստ, անկյանք կյանքի թշվառության զգացողությունն ու այդ նշանի կապը չտեսնելու համար:

Բոլոր ձախորդությունների պատմությունը սկսվում է մի հեռու թշվառությունից, մի անանուն խեղճությունից, մնացած բոլորից տարբեր լինելու ողբերգությունից: Գյուղը, համայքը կրողն է սոցիալական հոգեբանության, սոցիալական հիերարխիայի ու չի թաքցնում վերաբերմունքը ճակատագրով պարտված ու խոնարհ իր հերոսի նկատմամբ:

Ջարդված, անլույս ճակատագրեր մի կողմում, ու անաստված անգղություն խեղճ, խոնարհված ճակատագրերի նկատմամբ մյուս եզրում, - հոգեբանական այս դիլեման մի դրամատիկ շրջանակ է գծում Խեչոյանի գրեթե բոլոր պատմություններում:

Հետաքրքիր մի նկատում էլ: Գրողի աշխարհատեսության խորքային բանաձևումներում աստվածաշնչային հղումների մի համապարփակ բնագիր են ձևավորում՝ երբեմն ուղիղ մեկնաբանությամբ, երբեմն թաքնված, այլասացության նուրբ ակնարկներով: Հինկտակարանային մի շերտ կա Խեչոյանի գրականության մեջ, որ հերոսների ճակատագիրը առնչվելով արատին կամ մեղքին, անիծված լինելու ողբերգությունը լուծում է ապաշխարհության ճանապարհով: Տոհմի սրբազան առասպելի ու Կտակարանի խոսքի նախաստեղծած կապն է սա, որ դրվագ-դրվագ անցնում է սերնդից սերունդ՝ մեկին տալով մեղքն ու արատը, մյուսին՝ ապաշխարումի ծանրությունը: Այս գաղափարի տրանսֆորմացիան ներքին նուրբ դինամիկա է գծում Խեչոյանի գրեթե բոլոր պատմումներում:

Մուկուչն էլ, թվում է, ծնվել էր ձախորդությունների ու անկումների մի անվերջ ճանապարհ անցնելու համար: Խեղճության մեջ նեղեցին, ուրիշի մեղքը վրան բարդած՝ բանտ ուղարկեցին: Բանտում եկեղեցու փոխարեն մեջքին ահռելի խոզ դաջեցին. «Յոթերորդ օրն իմացվեց բաղնիքում: Տղաները շուրջը կանգնած են, դու մերկ, մեջքիդ նկարը բոլորի աչքի առաջ, ստամոքսս բերանիցս էր դուրս թռչում: Տեսնում ես, չեմ վախենում, ապրում եմ»: Ասի. «Բա ձեռքերդ ինչի՞ են դողում, ճակատիդ էլ քրտինք կա»:

Այսպես գյուղը ողբալի ցավի ու անգույթ անհանդուրժողականության սահման է գծում Մուկուչի ու գյուղում ապրողների, Մուկուչի ու նրան մոռացած Աստծո միջև: Գյուղն, իբրև ընդոծին ու օտար, վաղուց վանել էր իր ծնածին, գյուղն այսօր էլ չիր ներում, չիր ընդունում Մուկուչին. եղբոր տղայի ընկնավոր դառնալը, Դարչոյի՝ մատները ջրաղացքարի տակ թողելն ու կտրելը, մուսուլման փնթի կնոջ մոտ գնալն ու գիշերը հետը անկողին կիսելը, - անընդհատ նրան վերադառնում էր «խոզ» անունով ու օտար լինելու զգացողությամբ: «Խոզը», - վերջին արարը այս պատմության ու ամբոխից պարտվող միայնակ մարդու ողբերգության. «Առավոտյան տեսանք, Մուկուչը, մինչև գոտկատեղը մերկ, ծառից կախվել է ...» : Այլ ճանապարհ չկար, սա էր ցավեցնող ճակատագրից

ազատվելու միակ ճանապարհը: Խեչոյանը խոր նրբանկատությամբ չի տալիս անունը՝ ընդարձակելու վաղուց հեռացած պատմությունների, կյանքի չերևացող մանրամասների ու մեղքն ու Աստծուն իրարից զանազանելու սահմանները: Չի տալիս անունը, բայց Կյա՛նքն է, օ՛րն է, ժամանա՛կը՝ երբեմն խոստումնալից ու շքեղ, երբեմն աներազ ու ցավի սահմանին ծվարած: «... Երբ Աստված ընդունեց Աբելի ընծաները, Կայենն արդեն մտածել էր Աբելի սպանության մասին և անծայրածիր դաշտում իրականացրել էր իր մտահղումը,- մի այլ առիթով գրում է Խեչոյանը,- երբ Աստված նրան հարցրեց. «Ո՛ւր է ոք փոքր եղբայր Աբելը»: Կայենը պատասխանեց. «Չգիտեմ, միթե ես իմ եղբոր պահակն եմ»⁶: Ահա անունը, ահա Գիրը, որ խոսում է ցավի մասին:

Այսպես գրողը պատմում է կյանքի մասին իր պատմություններն ու խիզախում է մնալ մարդկային դառը տառապանքի ու ոգու ծանր լույսի հետ, հավատացած, թե «Մեծ մարդ չի նշանակում միայն հաղթող՝ Աստծո ընտրյալը, մեծ էլ, նաև նրանից խփված, պարտության միջով անցածը: Դե հավատացեք ինձ՝ մեծ է նաև կյանքի դատարկությունը ճանաչած, նոր Աստված ստեղծողը, նաև՝ մոլորյալը ... »:

Ս. Մարգարյան

Ամփոփում

Լևոն Խեչոյանը ժամանակակից հայ արձակի ակնառու ներկայացուցիչներից է: Նրա գրականության մասին շատ է գրվել, այն դիտարկվել է՝ ամենատարբեր տեսանկյուններից: Սակայն մեծ է գայթակղությունը՝ կրկին անդրադառնալ նրա գրական ժառանգությանը, առնչվել նրա տաք լույսին ու ազնիվ ոգորումներին: Հոգվածում անդրադարձել ենք պատահականորեն ընտրված երկու պատմվածքի՝ «Զանգը» և «Խոզը», դրանց մեկնաբանությամբ փորձել ներկայացնել Խեչոյանի փոքր կտավի արձակ գործերի ինչ-ինչ առանձնահատկություններ:

С. Маргарян

Резюме

Левон Хечоян - один из выдающихся представителей современной армянской прозы. О его литературе было написано много: она была

⁶ Հարցազրույց Ժաննա Կույավայի հետ, Литакцент, 13,01,2014, թարգմ.՝ Նարեկ Աթոյանի ֆեյսբուքյան էջից:

рассмотрена с самых разных точек зрения. Однако велико искушение снова ссылаться на его литературное наследие, соприкоснуться с его теплым светом и честными художественными стараниями. В статье мы ссылались на его два случайно выбранных коротких рассказов, «Звонок» и «Свинья», и попытались представить некоторые определенные характеристики прозаических работ Хечояна небольшого охвата.

S. Margaryan

Summary

Levon Khechoyan is one of the outstanding representatives of the modern Armenian prose. Much has been written about his literature: it has been reviewed from various perspectives. However, the temptation to refer to his literary heritage again, to relate to his warm light and honest artistic assiduities is great. In the article we have referred to two of his randomly selected short stories, “The call” and “The pig” and have tried to represent some certain characteristics of Khechoyan’s prosaic works of small coverage.

ՆԱԽԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏՆ 821.19.0

**1894-96 թթ. ԶԱՐԴԵՐԻ ԵՐԳԻԾԱՌՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ
ԱՌԱՆՁԱՐԻ ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ**

Բանալի բառեր. արհավիրք, բռնակալ, կամայականություն, անօրենություն, սարսափ, մղձավանջ, տառապանք, զավեշտ, ծիծաղ, ողբերգություն, իրավագուրկ, զոհ, բաղոյթ, հոգեբանություն, հոգեկերտվածք, ցեղասպան:

Ключевые слова: бедствие, тиран, произвол, беззаконие, ужас, кошмар, страдание, курьез, смех, трагедия, бесправный, жертва, комплекс, психология, менталитет, геноцид.

Key words: horror, dictator, connivance, lawlessness, fear, nightmare, suffering, banter, laughter, tragedy, deprived of rights, victim, complex, psychology, psychological disposition, committers of genocide.

1894-1896 թթ. ջարդերին մյուս մտահոգ գրողների (Արփ. Արփիարյան, Եր. Օտյան, Երուխան, Ս. Պարթևյան և այլք) պես իր յուրօրինակ վշտի ծիծաղով արձագանքեց նաև Առանձարը¹՝ քննադատելով սուլթան Համիդի հայաջինջ քաղաքականությունը²: Մեծ դեպքերի ջահել ականատեսը, արյու-

¹ Առանձարի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս **Հակոբջանյան Ա.**, Առանձար, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1972:

² Պատահական չէ, երբ ջարդերից շատ չանցած, Առանձարը «Գերմանացիները Արևելքի մեջ» հոդվածում մեծ վրդովմունքով ու զայրույթով էր խոսում ոչ միայն Թուրքիայի հայաջինջ քաղաքականության, այլև եվրոպական երկրների՝ մասնավորապես Գերմանիայի նենգ դիվանագիտության մասին: Այսպես, «Մյունխենի Արևելյան ընկերության» քարտուղար դոկտոր Հուգո Գրոթեն հանդես է գալիս դասախոսությամբ՝ «Երկաթուղիները Փոքր - Ասիայի մեջ» վերնագրով, որը մի իսկական «ձոն» էր՝ ուղղված թուրք ժողովրդին. «Ստամբուլի անխիղճ և կենցաղամոլ էֆենտիներուն վրայ պետք չէ չափել օսմանցի ժողովուրդը, այլ պետք է ճանչնալ թիւրք հողագործը, մանաւանդ Անատոլիի թիւրք գիւղացին»: (Տե՛ս **Առանձար**, Գերմանացիները Արևելքի մեջ, «Մուրճ», Թիֆլիս, 1901, № 12, դեկտեմբեր, էջ 83): Դոկտոր Գրոթեն այն համոզման է, որ թուրք ժողովուրդն իր ասպետական մեծահոգի բնավորության պատճառով արհամարհում է հարստություն-

նոտ տեսիլներից ազդված, տենդոտ մտքով ու հոգով լծվում է արհավիրքի ներքին պատճառների որոնմանը և դրանց հոգեբանական անդրադարձին իր ժողովրդի հոգեբանության ու հոգեկերտվածքի վրա³: Այս առումով մի բացառիկ ժողովածու է «Վշտի ծիծաղ»-ը (1905), որում զետեղված նորավեպերը (բացառությամբ մի քանիսի) աչքի են ընկնում ազգային ողբերգության հանդեպ ուրույն մոտեցմամբ, արտացոլում ջարդերի հետևանքով ստեղծված մղձավանջը թե՛ իրական, թե՛ հոգեբանական դաշտում: Այստեղ դիպուկ է գրական դիտարկումներով առանձնացող Հ. Ն. Անդրիկյանը. «Առանձար առաջինը չէ որ նորավեպեր կը գրե՝ վերցնելով իրեն նիւթերը վերջին աղետներէն. վերջինն ալ պիտի չըլլայ, անշուշտ: Եւ գրողներու այս լեզունին մէջ չկան երկու հոգի որ յար և նման նոյն արտայայտութիւնն ունենան»⁴:

Համամիտ չենք Առանձարի ստեղծագործության մեկնիչներից մեկի՝ Ա. Հակոբջանյանի այն տեսակետին, համաձայն որի՝ «Առանձարի ստեղծագործություններում գերիշխողը **երևույթների քաղաքական գունավորումն է**: ... Առանձարի կերպարները հանդես են գալիս բացառապես հասարակական - քաղաքական հարաբերությունների մեջ, բնութագրվում դրսի աշխարհի հետ իրենց ունեցած առնչությամբ»⁵ (Այս և հետագայում հանդիպող բոլոր ընդգծումներն իմն են՝ **Ն. Ս.**): Կարծում ենք՝ այստեղ խնդիրը ոչ միայն երևույթների քաղաքական գունավորումն է,

լնը և նախընտրում համեստ կենցաղը: Իսկ հարստությունը հայերի ձեռքում է, որոնք հույների պես երբեք հողագործությամբ չեն զբաղվում և խաբում են «միամիտ, բարի» թուրքին. «Հայկական ջարդերու միջոցին Եւրոպայէն դուրս ընկերային այս պարագան **ուշադրութեան չառնուեցաւ**: Կրօնական մոլէռանդութենէն աւելի՝ **հայերու տգրուկային զբաղումին դէմ եղած բուռն ընդվզումն էր կոտորածներու հիմնապատճառը. թիւրք ժողովրդին համբերութիւնը հասած էր հայերու վաշխառուական հարստահարութեանց հանդէպ**» (ընդգծումներն իմն են՝ **Ն. Ս.**): Նույն տեղում, էջ 84: Առանձարը զայրույթով ու ցավով է ներկայացնում համիդյան հայաջինջ քաղաքականությունը արդարացնող դոկտոր Գրոթեի ելույթը: Գերմանիան իր շահերի համար աջակցում էր սուլթանին և դրանով դառնում նրա արյունոտ քաղաքականության մասնակիցը: «Արևելքի գերմանացիները»՝ այսպես էր անվանում Հուգո Գրոթեն թուրքերին, իսկ Առանձարը գերմանացիներին՝ «եվրոպայի թուրքերը»:

³ Իր նախորդներից՝ (Հ. Պարոնյանից, Եր. Օտյանից), Առանձարի երգիծանքը տարբերվում էր ինքնատիպ ոճով ու արվեստով, մարդու թաքուն ներաշխարհի բացահայտման յուրօրինակ դրսևորումներով (**Ն. Ս.**):

⁴ **Անդրիկյան Հ. Ն.**, Գրական գրոյց, «Բազմավեպ», Վենետիկ, 1906, սեպտեմբեր, թիւ 9, էջ 418:

⁵ **Հակոբջանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 134:

այլև քաղաքական երևույթների առաջ բերած հոգեբանական իրողությունների իմաստավորումը:

Նշենք մի առանձնահատկություն ևս. Առանձարի՝ իբրև գեղագետի հոգու դրաման իր բարձրակետում փոխվում է ծիծաղի. «Եվ չնայած մեր հեղինակը (Առանձարը - Ն. Ս.) նկարագրում է Թուրքիայի տխուր, բարբարոս իրականությունը, բայց երբեք չի կորցնում իր հոգու զվարթությունը, չի ընկնում մռայլ հոռետեսության մեջ. նա վշտանում է և վշտից ծաղրում, ծիծաղում»⁶:

«Բուրդի վաճառականությունս» (1902) նորավեպում⁷ Առանձարը փոքր միջադեպի ներկայացմամբ արծարծում է ազգային մեծ ու ցավոտ խնդիրներ: Նա փոքր, զավեշտ թվացող, սակայն հիմքում դրամատիկ իրողություններ պարունակող միջադեպերի մեջ նույնպես յուրօրինակ բնաջնջման վտանգ էր տեսնում: Բուրդի վաճառականությունը դառնում է միջոց ոչ միայն ջարդերից հետո հայի ծանր ու անելանելի վիճակը ցույց տալու, այլև թշնամու հոգեկերտվածքը բացահայտելու համար: Նորավեպի սյուժեն կառուցված է նաև այս հիմքով:

Այսպես, հոր մահվանից հետո հերոսը հուսահատորեն այրում է իր բանաստեղծությունները և ընտանիքի հոգսերի ծանր բեռը վերցնում իր վրա՝ գրչի տեղ վաճառականի մատյաններին ապավինելով. «Քիչ ատենեն համոզվեցա, որ առևտուրի ավելի շնորհք ունեի, քան բանաստեղծության»⁸: Սա պատահական չի գրում Առանձարը. այս երևույթը գալիս էր ազգային դժբախտությունից. երբ մտավորականը, փոխանակ գեղեցիկը արարելու և գոյավորելու, ստիպված էր թողնել այն և զբաղվել ոչ թե կատարելացման, այլ գոյատևման գործով:

Եվ, իսկապես. կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվում է դառնալ պատվավոր առևտրական: Շուտով, սակայն, առևտրական աշխարհը ևս դառնում է անկայուն, երերուն: Այն մի տեսակ դառնում է զգայնաչափ և վաղաժամ հուշում իրադարձությունների ան-

⁶ Տե՛ս **Առանձար**, Վշտի ծիծաղ, Ստեփան Զորյանի առաջաբանը, «Հայպետհրատ», Եր., 1961, էջ 4 - 5:

⁷ Վ. Փափազյանը «Վշտի ծիծաղ» գիրքը հաջող պատկերների շարք է համարում. «Այդ պատկերներուն մէջ բաւական յաջող են՝ Բուրդի վաճառականութիւնս և Հոսիոսն ու Ինտելիգենտը», - գրում է նա: Տե՛ս **Փափազյան Վ.**, Պատմութիւն հայ գրականութեան, Երկրորդ գիրք, «Արծիւ» ժող. գրավաճառանոցի հրատ., Կ. Պոլիս, 1914, էջ 118:

⁸ Տե՛ս **Առանձար**, Երկեր (Թլկատինցի, Լ. Բաշալյան, Առանձար), «Սովետական գրող» հրատ., Եր., 1982, էջ 494: Այս և հետագա մեջբերումները կարվեն սույն գրգից՝ էջը նշելով փակագծերում:

հաստատ ընթացքը. «Քաղաքին մեջ լեռներեն իջած **Ժանտատեսիլ մարդերու** բազմություն մը կոյիզվեր, շուկային մեջ անցուդարձ կընէին ասոնք, սպառազէն ու դաժան նայվածքներ կնետէին մեր ապրանքներուն ու մեր վրա: **Անծանոթ սպառնալիք մը** կբարդվեր օդին մեջ, մեզ սրտապնդող հույսերը սակայն դեռ շատ մեծ էին, **մտքերնէս կծիծաղէինք** վայրենւոյան այդ ամբողջ թափորին վրա» (495): Շուտով այդ ծիծաղը վերածվում է մտահոգւոյան, ապա՝ տագնապի և զարհուրանքի: Ակնկալվող ավետիսը դառնում է ցնորաբեր բոթ, և ստեղծվում է հոգեբանական անմեկնելի ճգնաժամ. «Բայց ավետիսներուն շուտով բոթեր ալ սկսան խառնվիլ և **սարսափի ու ակնկալւոյան տարօրինակ զգացումի մը տակ ճմլելու վրա էինք**, երբ վերջապէս փոթորիկը փրթավ ու քէց տարավ **հույսն ալ, հուսահատությունն ալ**» (495): Առանձարը կերտել է աղետի բացառիկ գեղարվեստական պատկեր և ոչ միայն: Նա կարողացել է փոխանցել նաև զգացողություն, երբ ժողովուրդը հույսերի շիկացման մեջ հանկարծ արտասովոր մի զգացումով, մի ներքին բնագոյով արագ ընկալում է իրական վտանգը: Առանձարը միտումնավոր շրջանցում է ջարդի ու ավերի մանրամասները՝ նպատակ ունենալով ընդգծելու սարսափի հոգեբանական դրսևորումն ու զգացողությունը: Սկսվում է պանդխտելու, ավելի ճիշտ՝ մահից փրկվելու ծանր գիտակցությունը, որ ճիշտ նկատել է Ա. Հակոբջանյանը. «Զարդի, թալանի դժոխային միջավայրից ազատվելու համար հայը միայն մի ելք է տեսնում՝ դիմել պանդխտության, ինչքան էլ այն ծանր փորձությունների հետ կապված լինի»⁹:

Անցագրի հարցը դառնում է նորավեպի հանգուցային այն կետը, որի շուրջ զարգանում են գործողությունները: Բանն այն է, որ այստեղ ամեն մի անարդարություն օրինականության տեսքով է ներկայանում, որի դեմ անգոր են և՛ ճշմարտություն, և՛ իրավունք: Այդ է պատճառը, որ Սարգիս Չավուշյանը այդպէս էլ չի կարողանում ապացուցել ինքնավստահ գրագիր պաշտոնյային՝ Քյաթիպ էֆենդուն, որ ինքը ոչ թե վեց, այլ երեսուն տարեկան է (ըստ պետական տոմարի՝ երեսուն տարեկան Սարգիսը դարձել էր վեց տարեկան): Զավեշտ թվացող այս իրողության տակ իրականում խոր ենթատեքստ կա: Բարոյագուրկ էֆենդու համար ոչինչ չարժե մարդկային արժանապատվությունը վիրավորելը: Հարցն այստեղ միայն տարիքի փոքրացման մեջ չէ, այլ մարդու, նրա սահմանները փոքրացնելուն հակված բռնակալի գենետիկ - բնագոյային հակման. ... «մտքեն իսկ չէր անցներ (Սարգսի - Ն. Ս.), թե **մարդահամարի տոմարը կրնար այդչափ պզտիկցուցած ըլլար զինքը**» (498): Առանձարն այստեղ, թվում է, դիմում է

⁹ Տե՛ս **Հակոբջանյան Ա.**, Առանձար, Եր., 1972, էջ 87:

սիմվոլացման գրական հնարանքին: Սարգիսն այստեղ նաև ժողովրդի սիմվոլն է, որ չի կարողանում հատել փաստի, անօրենության ու խավարի սահմանը: Սակայն սահմանն անցնողին էլ հեշտ ճակատագիր վիճակված չէր:

Ալի աղան հերոսին ապահով հասցնում է Բաղեշ: Սակայն կասկածների պատճառով նրան տանում են ոստիկանատուն: Մա դառնում է այն վայրը, ուր բացահայտվում է թուրք պաշտոնյայի կերպարը, նրա անփոփոխ ներաշխարհի քարացածությունը:

Մի իսկական զավեշտ է հարցաքննությունը, այն զավեշտալի ողբերգականության տիպիկ օրինակ է: Բանտը՝ «հյուրընկալ օջախը», դառնում է՝ իբրև դաժան իրականությանը վերնից նայելու, վերլուծելու, վերհուշի, ապրումների հնարավորություն. «Էրզրումը, ճամբու տպավորություններս, քիչ առաջվան հարցաքննությունս, Ճիզրեի Բուրդի հակերն ու քումիսերի սպառնացած կախաղանի պատկերը իրար խառնվելով **սարսափելի մղձավանջի մը տակ կճնշեին զիս»** (503): Այլ կերպ՝ բանտը չէր տարբերվում իրական կյանքի բանտարկությունից ու մղձավանջից, ուր մարդու մարմինն ու հոգին դարձել էին մի յուրօրինակ բուրդ, որ աճուրդի էին հանվել. «Բուրդի ժամանակը կանցներ, բայց ո՞վ էր ալ Ճիզրեի բուրդին մասին մտածողը, **երբ հիմա իմ բուրդիս հետ կաշիս ալ աճուրդի կհանեին»**: Նկատենք՝ վերնագիրը նաև այս իմաստն է խորհրդանշում:

Նորավեպի հաջորդ դրվագներում հանդես եկող Օսման բեյի ու Բայրամ աղայի արարքները ուղղակիորեն հաստատում են վերոնշյալը: Նրանք, օգտվելով պետականորեն օրենքի ուժ ստացած ամենաթողությունից, սկսում են հերոսին հոգեբանական տեռորի ենթարկել, բարեկամ ձևանալով, անելանելի դրության հասցնելով՝ շահագործել, փրկության ու ազատության համար թողնելով միայն մեկ հնարավորություն՝ կաշառքը:

Նրանք բոլորն էլ՝ սկսած թուրք ոստիկանապետերից մինչև Սդերդի քուրդ ոստիկանապետը, պտտվում են քսակի շուրջը: Այստեղ դիպուկ է Անդրիկյանը. «Աս իրենց տրամաբանութենէն ու ընչաքաղցութենէն կը ծնանի Պայրամ աղայի երկերեսանի դէմքը: ... Չարածէր աղուէս մը, վարժուած թուրք պաշտօնեայէն միջնորդի դերը կատարելու իր և բուրդի վաճառականին ընդմէջ որ Բաղեշի նկուղներուն մէջ կը բողոքէ, կը հայեծէ, կը զայրանայ, կը սպառնայ, կը համակամի. Պայրամ Աղա շուտով վաճառականին էն մտերիմը կը դառնայ»¹⁰:

¹⁰ Անդրիկյան Հ. Ն., նշվ. հոդվածը, էջ 420:

Առանձարը ներկայացնում է ոչ միայն թուրք տիպական պաշտոնյային ու միջնորդ մարդկանց, այլև, կարծում ենք, կատարում է մի յուրօրինակ գյուտ. նա հայտնաբերում է թուրքական իրականության այդ ժամանակների թուրք «մակաբույծներին», որոնք, ստեղծված իրադրությունից օգտվելով, կողոպտում էին բազմաչարչար հայ ժողովրդին՝ ամենատարբեր մեկնություններով հանդես գալով օրենքի անունից. «Գիշերները շուայտութեանց մէջ լուսցնող, ուժասպառ, ախտաւոր, աղեղած, կառավարական քեաթիպի այդ աննման նմոյշները՝ **առանձին դասակարգ մը և պորտաբոյծներու** վերջապահ գունդը կը գրաւեն թուրք կառավարութեան մէջ, և առանձնապէս շահեկան է անոնց ուսումնասիրութիւնը: ... Եւ արդէն ա՛յ է ամբողջ յաջողութիւնն ու միակ գործը՝ Արուեստագէտին»¹¹, - դիպուկ կերպով նկատել է Ռ. Զարդարյանը:

«Մուրուքի սանտրը» նորավեպը արտացոլում է արևմտահայության սոցիալ - քաղաքական, հոգեբանական ճնշման ընդհանրացված պատկերը: Այստեղ նույնպես արծարծված են թուրքական իրականության զավեշտաողբերգական դրսևորումները: Ինչպես նախորդ, այնպես էլ այս նորավեպում Առանձարը ցույց է տալիս բարոյագուրկ թուրք պաշտոնյաների վայրագություններն օրինականության քողի տակ, որն ամենագոր և ամենակարող է միայն խեղճերի ու իրավագուրկների հանդեպ:

Պատահական մի դեպքը դառնում է մեծ պատմություն: Թուրք մոլլան խանութպան Առաքելից գնել է մի սանր, որի ատամի մեկը կոտրվել է մորուքը սանրելիս և մի փունջ «մազ փետել»: Մոլլան եկել և ետ է պահանջում իր գումարը: Այս զավեշտալի դեպքը շարժում է Առաքելի զարմանքը՝ «այս տեսակ փորձանքի դեռ չէի հանդիպեր»: Երբ շատ է համառում մոլլան, Առաքելը կորցնում է զգոնությունը և իրերը կոչում իրենց անունով. «Երկաթ ըլլա չի դիմանար այդ աղտոտ մորուքիդ»: Եվ սա Առաքելի համար դառնում է ճակատագրական: Առաքելը և Կարապետ Թորոսյանը զգուշանում են թուրքին հարվածելուց. հետևանքները կարող էին սարսափելի լինել. «Էշ նահատակ պիտի ըլլայինք»:

Արդար թե մեղավոր, միևնույն է, թուրք ոստիկանապետը պաշտպանում է Հասան Էֆենդուն. «կարծես թե դեռ վիճաբանելիք խնդիր մը ըլլար պատկառելի, սուրբ մոլլայի մը և ... հայ խանութպանի կտորի մը համեմատությունը, հա՛, հա՛, հա՛, հա՛. ինձի նայե, **դուք շատ երես եք առեր, ձեր չափը վաղուց մոռցեր եք, բայց ես ձեզի նորեն այնպես մը սորվեցնեմ ձեր չափը, որ հավիտյան չմոռնաք**» (486): Սա գալիք մեծ աղետը իրագործելու ոչ միայն նախահիմքի վկայությունն է, այլև թուրքական այն

¹¹ Տե՛ս «Ռազմիկ», Բուլղարիա, 1906, թիւ 52, ապրիլ 29, էջ 2:

ենթագիտակցության ապացույցը, որ նման ընդգրկման հանցանք հնարավոր եղավ իրագործել զուտ միայն այն պատճառով, որ հիմնական գործիքը հենց թուրքն էր:

Վերջապես գործին միջամտում է Հյուսնի Չաուշը՝ խոստանալով օգնել Առաքելին, տասնհինգ ոսկի տրամադրելու դեպքում: Օսման բեյը, Բայրամ աղան, Հյուսնի չաուշը, նաև դատավորը տեսակի մեջ նույնանում են: Նրանք օգտագործում են ցանկացած առիթ և օրենքի անունից կողոպտում իրենց գոհերին: Երբ Առաքելը հայթայթում է պահանջված գումարը, մեղմանում են թուրք պաշտոնյաները. «Ամբաստանյալը ամբաստանիչին ոչ թե ամբողջ մորուքին, այլ մորուքին միմիայն մեկ թելին հայհոյած է» (492): Միայն ոսկին է կարողանում զսպել ու հալեցնել օրինախախտ դատավորին, բայց դատավորը արդարացման մեջ էլ փորձում է բարեգութ ձևանալ՝ «քաղաքակրթորեն» նվաստացնելով հային. «ամբաստանյալը քանիցս աչքերը անկեղծ գոշումի արցունքով լեցված և պաղատագին ներողություն խնդրած է ամբաստանիչեն և հոճա էֆենդին ալ իր նվիրական աստիճանին և առաքինագարդ անձին վայել գթասրտությամբ ներել կուզե» (492):

Արևմտահայ կյանքի ողբերգության, մասնավորապես 1894-96 թթ. աղետալի դեպքերի մի դրվագ է «Կախաղանեն... ամուսնություն» նորավեպը: Վերնագիրն արդեն իսկ հուշում է երկու ծայրահեղ բևեռների՝ զավեշտի և ողբերգականության դրամատիկ ընթացքը:

Նորավեպը սկսվում է արհավիրքից հետո գաղթական հայության ծանր վիճակի նկարագրությամբ այնպես, ինչպես Երուխանի «Գաղթականները» անավարտ վեպում: Օտար հողի վրա գաղթական հայությունը անց է կացնում առաջին նոր տարին. նույնիսկ ձմեռն էր անսովոր: Այն ներկայացվում է իբրև արհավիրքի գեղարվեստական խտացում. «Մանավանդ այն տարին, անպիտանը հարկավ զգալով տաճկահայ գաղթականներուս ներկայությունը՝ արտասովոր հրահանգներ տված էր իր մեծ ու պզտիկ գործակալներուն» (512): Սակայն ցուրտը չի կարող սարսռեցնող լինել այնպես, ինչպես նրանց տեսածն ու զլխով անցածը:

Անպարագիծ թախիծը համախմբելու էներգիա ունի իր մեջ. այն իրար է բերում արհավիրքի ցավից կուչ եկած ու փոքրացած հոգիներին կրակի շուրջ՝ վերհիշելու կորցրած երանելի եզերքներն ու անդարձ հեռացած, երազի վերածված երեկվա իրականությունը. «Կրակին տաքությունը հալեցուցած էր ամենքիս ալ լեզվին ու հիշողության կապանքները» (512): Երբ մեղմորեն ծավալվում էր մարդկային հիշողությունների պատումը, այն ընդհատում է մի երիտասարդ, որին Անապատցի էին կոչում: Նա հեռվից՝ Բաղդադից էր լսել հայրենի բույնը քանդող «մրրիկի» մասին և խորապես

տանջվել էր, մորմոքել. «կմեկնեին երբեմն այդ սարսափներու հրահանգները: Այն օրերեն ի վեր կջարդեն, հոգնած, պատրաստած դահիճներուն **նորեր** հաջորդելով անընդհատ: **Ինչ հսկայաքայլ հառաջադիմություն սակայն»** (513):

Հետաքրքրական է մեկ այլ իրողություն, ինչն էլ հենց Առանձարի նորավեպի կարևոր առանձնահատկություններից է: Այստեղ առաջին անգամ խոսք է բացվում աղետի պատճառներից մեկի՝ տարօրինակ քաղաքակրթության, գիտության մասին, որն ի գորու է ավերելու ամեն ինչ. «Նոր քաղաքակրթությունը ուրիշ շատ մը բաներու հետ **ջարդերն ալ դյուրացուց**: Էլեքտրական հոսանքը՝ մահվան ձեռքին պես աներևույթ՝ ուղղակի դահձապետին չորս պատերեն ակնթարթի մեջ անոր կամքը կհասցնե ամեն կողմ: Եվ ահա զոհերը իրենց էն աներկևան մեկ պահուն կիյնան արյունլվա, արևածագին դեռ կանգուն գյուղեր ու ավաններ արևու մուտքը ալ չեն տեսներ:

Շնորհիվ գիտության՝ նորանոր գյուտեր ապագային անշուշտ ավելի պիտի կատարելագործեն այս սիստեմը» (514):

Էլ - Քաղիֆում զինվորական բժիշկ դոկտոր Սարգիսը քաղաքական շատ ծանր մեղադրանքով ձերբակալվել և Բաղդադ է բերվել՝ դատվելու: Սարգսին մեղադրում են անգլիական պետության հետ բանակցություն սկսելու և Էլ - Քաղիֆը վաճառելու, ինչպես նաև Անգլիայից Ձեյթունի ապստամբներին օգնելու խոստում առնելու մեջ: Այդ պատճառով քաղաքի պահակազորի գնդապետը ձերբակալել է Սարգսին, և պետք է նրան կախադան հանեն հրապարակի վրա:

Այստեղ էլ դատավարությունն ընթանում է անհասկանալի և անհեթեթ մթնոլորտում՝ պայմանավորված թուրք ոստիկանների ոչ միայն կաշառակերությամբ, այլև նրանց հոգեկերտվածքային առանձնահատկությամբ: Նուրբ է նկատել գրականագետ Ա. Հակոբջանյանը այն, որ «իրենց արտաքինով նրանք տարբեր են, բայց էությամբ մեծապես համանման, բոլորի մոտ էլ շեշտվում է մի բնորոշ հատկանիշ՝ **անպաշտպան հայությանը պատուհասելու, ունեցվածքը թալանելու տենչը**, որ համակել է բոլորին»¹²:

Փաստն այն է, որ պաշտոնյաներից յուրաքանչյուրն ունի ոչնչացնելու իր մոլուցքն ու տեսլականը, ցեղասպանի յուրօրինակ մտածելակերպը, ըմբռնումը և դրան համապատասխան գործադրությունը. «ա խ, իմ ձեռքս տային, ցիցի վրա կնստեցնեի կամ արքանով մը միսեն ամեն օր մեկ կտոր կփրցնեի և կամ ավելի լավը» (516): Իսկ հազարապետի՝ հայ

¹² Հակոբջանյան Ա., նշվ. աշխ., էջ 114:

սպանելու ցանկությունը այնքան ուժգին է, որ այդ պատկերացումը վայր է նետում նրան աթոռից. «Պարզված տեսարանը **ջարդի կատարյալ մանրանկար մըն էր**, սա տարբերությամբ միայն, որ **հոս գոհերը անշունչ առարկաներ էին**, իսկ կյավուրի պիղծ արյունին փոխարեն ջարդուփշուր եղած նարկիլեներու **դեղնած ջուրն էր, որ կհոսեր**: Երկու սպաները, սրճարանին երեք սպասավորները և ես միացած՝ հազիվ կրցանք ոտքի հանել **ահեղ հերոսը**» (517): Սարսափելի պատիժների ազդեցությունից Անապատցին ահաբեկվում է, երկյուղում. «Կյավուր շուն շանորդի, **խընգիր**, էշ, սրիկա, դավաճան, թնդանոթին մեղք չէ՞, մեղք չէ՞ վառողին. ոտքերը կկապեմ, վիզը չվան մը կանցնեմ և հրեայի մը ձեռքը տալով՝ ամբողջ քաղաքը պտտցնել կուտամ քաշկոտելով: Շա՛ն ծնունդ քեզի» (517):

Իրավիճակը փրկում է Բաղդադի բանակի հրամանատարը. «Էշրեֆ սահաթ»-ի (իմա՝ բարի ժամ) խորհրդի շնորհիվ Սարգիսն ազատվում է կախաղանից: Նրան ամուսնացնում են հույն դաստիարակչուհու հետ:

«Երկու պատկեր» (1906) նորավեպում ևս Առանձարը շոշափում է ջարդի բերած հետևանքների հոգեբանական ու թուրքական հոգեմտածական խնդիրները: Գրողը չի մանրամասնում ու պատկերում ջարդի կոնկրետ տեսարանները, թեև պատմվածքի համակենտրոնը համազգային արհավիրքն է, որում հոգեբանական ու գեղարվեստական, ինչո՞ւ չէ՞ փիլիսոփայական բարձր մակարդակով պատկերվում են ստեղծարար ու շենշող ժողովրդի հոգեկան մղձավանջները:

Գյավուր - Բողա՛ն:

Անունը վրան»: Ոչ մի հայ չի հանդգնում այս դաժան տարածքը մուտք գործել, ուր «քաղաքին թրքության է՛ն հարազատ մասը խտացած է»: Թրքական այս տարածքը դառնում է այն հոգեբանական անընկալելի տարածությունը, որն իր մեջ կրում է տեղի բնակչության սարսափի հոգեբանությունը. ամեն մի տարածք կերտվում է տվյալ բնակչության ընկալումների դրսևորումներով. «Հսկայական աղբակույտ մը, որու մեջ հյուղակները - ավելի **որջերու** քան մարդկային բնակարաններու նման - այնպիսի ծամածուռ ու անկարելի դիրքերով խրված են, որ կարծես անծանոթ տիտան մը ժամանակին ամբողջ քաղաքը ավլած և աղբյուսը իր վիթխարի թիովը միջնաբերդի բարձունքեն վար նետելով ակամա հիմնադիրը եղած է այս թաղին» (519):

Թաղամասի «տիրուհին»՝ Ֆաթման, սովորականի պես նստել է խրճիթի շեմին և չի հուզվում բնության և ոչ մի գեղեցիկ պատկերով. նրան հուզողը իր սեփականությունը պահելու և պահպանելու մտահոգությունն է: Չափազանց նուրբ է Առանձարի տեսողությունը հատկապես այնտեղ, երբ Ֆաթմայի թոռնիկը՝ Դուրսունը, ոչ թե նստել, այլ բազմել է տատիկի

գիրկը: Կարծում ենք՝ այս պատկերով Առանձարը Մարիամի գրկում ծվարած Քրիստոսի պատկերն է նորովի իմաստավորում՝ նրան հակադրելով արտաքուստ նման, բովանդակությամբ հակադիր թուրքի պատկերի հետ: Ֆաթման թուրք «աստվածակերտիչ» մայր է՝ զուրկ աստվածայնությունից: Դժվար է ասել՝ եղե՞լ է գրականության մեջ այսպիսի բացառիկ պատկեր: Բայց Ֆաթման դեռ հեռու է լուսավոր աստվածամայր լինելուց, նա ավելի ճիշտ գազանության մեջ մնացած դաժան կնոջ միֆականացված կերպար է, իսկ նրա գրկի երեխան հեռու է մանուկ Քրիստոսից, նա մերկ է ու աղտոտ. «մերկ, ցեխոտ սրունքները մամիկին ծունկերուն վրա կախած և ձվաձև ճղճիմ գլուխը անոր կուրծքին հանգչեցուցած: Մորթը աղտի սովար խավի մը տակ կորսված, եռանկյունի լայնանիստ քթով, մանրիկ, ճպոտտ աչքերով երեխա մը» (519): Դուրսունի մեջ չկա խեղճության, երկյուղի և ոչ մի նշույլ, ընդհակառակը, դեռ մանուկ՝ ձգտում է անհասանելիին, ձգտում է արևին՝ այդ խոշոր, «աղվոր սեխին», որ փախչում էր որկրամոլ բռնակալ հերոսից՝ «Իսկ արևը՝ այդ փոքրիկ որկրամոլ բռնավորին վտանգավոր ախորժակեն **սարսափահար**՝ արագ քայլերով դեպի մարը կփախչի» (519):

Փոքրիկ Դուրսունը արդեն իսկ ի հայտ է բերում իր ցեղին բնորոշ կամային հատկանիշներ: Սա արագ նկատում է տատը, որ «բեկ» տիտղոսն է տալիս նրան: Բնագղաբա՞ր, թե՞՞ գիտակցաբար է անում Ֆաթման: Թերևս՝ երկուսը միասին: Նա չափազանց իրատես, զգոն ու հաշվենկատ կին է: Նրան պետք չէ բնությամբ, մարդկային գեղեցկությամբ ապրող բարոյական սերունդ, նրան պետք է ամեն ինչի գնով սեփական տեսլական ունեցող և իր յուրատեսակ երջանկությունը կերտող սերունդ: Նվաճող, տիրող, ամեն գնով հարատևող սերունդ: Ֆաթման թոռան մեջ ներարկում է գերմարդուն՝ հերոսին՝ հեռացնելով հավերժորեն պարսվողի հոգեբանությունից, թերաբժեքության բարդույթից. «Ոչ միայն որովհետև ամեն թուրք ավելի կամ պակաս բեկ կծնի արդեն, այլև Ֆաթման իր փորձառու աչքերով այժմեն իսկ **գտած է այն բնորոշ նշանները, որոնք կխոստանան արժանի հանդիսացնել իր թոռնիկը այդ տիտղոսին**» (519): Այդ բնորոշ նշաններից մեկը Դուրսունի ձգտումն էր «սեխին», որ ոգեշնչում է տատը. «երկու միևարեններուն միջև փայլող այն կլորակ բանը սովորական սեխ մը չէ, այլ **համակ ոսկիէ** վիթխարի սեխ մը, որ հեռո՞ւն, շատ հեռո՞ւն շղթայով մը կախված է երկինքեն և որուն ան միայն կրնա տիրանալ, ով որ իր ձին մինչև հոն քշելու և իր սուրին մեկ հարվածովը այն շղթան կտրելու արիությունն ու ուժը ունենա» (520): Սակայն այս երանելի քաղցր երագից սթափեցնում է շունը: Սարսափահար եղած թոռանը հանգստացնում է տատը, հորդորում չվախենալ. «Զարկ, մի վախնար, զարկ սա **շան գլավորին**»: Նա կարողանում է երկյուղած թոռանը դուրս բերել այդ հոգեվիճակից, դարձնել համարձակ: Մյուս կողմից՝ Դուրսունին ուժ է

տալիս շան խեղճությունը. «Բայց տեսնելով, որ անասունը **ձայն, ծայտուն չի հաներ, հետզհետե կարտապնդի** և վերջապես ազատ ձեռքով կսկսի իջեցնել իր հարվածները» (521): Հասկանալի է, թե ինչի հետ է նույնացվում շունը. նա կարծես անպաշտպան հայր լիներ:

Հենց այսպիսի միջավայրում է ծնվում ցեղասպանի հոգեբանությունը, հակումը: Ուշագրավ է, որ նորավեպի առաջին պատկերի երեք դրվագներում էլ՝ փոքրիկ Դուրսունից մինչև իր հայրը, զարգանում է մարդասպանության անբարո ընթացքը: Նրանք դառնում են պատժող չաստվածներ, ձևավորվում՝ իբրև մարդկության դահիճներ:

Նորավեպի երկրորդ մասում Առանձարը պատկերում է ջարդից փրկվածների հոգեբանությունը՝ իբրև հակադրություն առաջին պատկերի: Մարթան, ի տարբերություն Ֆաթմայի հարսի, տագնապած սպասում է որդու վերադարձին, որ գնացել էր փայտ բերելու. մի շաբաթ է՝ ինչ տաք կերակուր չէին կերել: Ջարդերից հետո խարխուլել էր նրանց ընտանեկան երջանկությունը, նրանք կորցրել էին հույսն ու հավատը: Աշխարհը դարձել էր անգույն ու տգեղ: Երբ բզկտված հագուստով, արյունոտված դեմքով ներս է մտնում Մարթայի որդին, որին ծեծել էին Ֆաթմայի թոռները և խլել հավաքած փայտերը, փոխանակ որդուն ուժ տալու և ըմբոստացնելու, մայրը սաստում է որդուն: Այստեղ Մարթայի որդին կարծես նմանվում է նախորդ պատկերում նկարագրված «փախչող արևին», կամ հենց նրան՝ փոքրիկին նկատի ունենալով Առանձարը, որը, սարսափած թուրք որկրամոլից, փախչում էր դեպի մայրը. «Բնկ արևը՝ այդ **փոքրիկ որկրամոլ բռնավորին** վտանգավոր ախորժակեն սարսափահար՝ արագ քայլերով **դեպի մարը կփախչի**» (519):

Մարթան հաշտվում է ճակատագրի անողոք հարվածներին և դրանից դառնում անգոր: Նա պատժող մայր չէ, ինչպես Ֆաթման, այլ Աստծուն է թողնում չար մարդուն պատժելու, նրան դիմակայելու ծանր պարտականությունը. «Ի՞նչ կրնանք ընել, աստուծմե գտնան»: Գորովագույթ մայրը դարձել էր երկյուղի ու տագնապի մեջ տառապող կին, որ անգոր էր անիրավության առաջ: Երբ ամուսինը՝ Տիգրանը, իմանում է թուրք երեխաների կոդմից որդու ծեծվելու մասին, կշտամբում է որդուն՝ ճիշտ որակելով թուրք երեխաների արարքը, որին հոգու խորքում ինքն, այնուամենայնիվ, համաձայն չէր: Նա դա անում էր անգորությունից և հուսահատությունից՝ պարտադրելով որդուն հնազանդվողի վարքագիծ, մեղավորի պահվածք, զոհի բարդույթ. «Չարին ձեռքերը հանկարծ երկնցան և մեկ հարվածով խանութեն իր հարստությունը և տունեն իր երջանկությունը հափշտակեցին» (525): Տիգրանը տեսնում էր նաև մյուս կողմավածի՝ կնոջ դժբախտությունը: Մարթան անհուն թախծի ու տառապանքի շիկացման մեջ է. նա երգում է մոր վիշտը. «Քամին ելավ էրան,

էրան // Մշո մայրեր սևավորան»: Ահա անգորության և անել կացության գիտակցումից ծնված ողբերգ է, որ հայ մայրերին պարտադրված է արդեն քանի դար: Իսկ վերևում Աստծո դատաստանի փոխարեն սարդերն էին արագորեն իրենց ոստայնները հյուսում՝ «վաղվա որսի համար»:

Երկու պատկերներում էլ Առանձարը ներկայացնում է տարբեր կրոնական և ցեղային առանձնահատկություններ: Ջարդերից հետո երկու կողմերի վրա էլ նկատելի են հոգեկերտվածքային փոփոխությունները:

«Վշտի ծիծաղը» նորավեպը Առանձարի ստեղծագործությունների բարձրակետն է: Սրանում կարծես բացահայտվում է այն խոր ցավի խորհուրդը, որն զգում էր Առանձարը իր ժողովրդի հանդեպ: Այն արհավիրքի գեղարվեստական, հոգեբանական ու փիլիսոփայական իմաստավորման մի կատարյալ կերտվածք է:

Գրողը, դիմելով անցյալին, փորձում է ավելի տեսանելի դարձնել իր ժամանակի հոգեբանական դրսևորումները: Եվ սա պատահական չէր: Առանձարը իր ժամանակների մեջ տեսնում էր այնպիսի դժոխային գերբնականայի, ինչպիսին սուլթան Համիդն էր: Նրա կերպարը հավերժական կերպար է, որ հանդիպել և ուղեկցել է մարդկությանը երկար դարեր: Մի թե Լենկթեմուրը և սուլթան Համիդը տարբերվում են միմյանցից իրենց վայրագությանմբ: Նույնն էր նրանց էությունը, տարբեր են միայն ժամանակները:

Երկար դիմադրությունից հետո Լենկթեմուրին հաջողվում է գրավել Մեքաստիան: Սակայն սա դեռ ամենը չէր. նա պետք է վրեժ լուծի համառ հայ ժողովրդից՝ իրեն պատճառած տառապանքի և զինվորների մահվան համար: Անգութ Խալիլը կատարում է նրա հրամանը. սպանություն, թալան, բռնաբարություն հաշիվ չեն ունենում: Սակայն սա չի բավարարում Լենկթեմուրին: Խալիլը նորից է սպանում նախորդից բյուր անգամ շատ՝ կոտորելով 7000 մանուկների: Բայց դեռ անկատար էր հրամանը: Երրորդ անգամ Խալիլը աննկարագրելի վայրագությամբ է կոտորում ժողովրդին: Ոչինչ չէր մնացել այլևս կողոպտելու և թալանելու. միայն մի բան էր մնացել. **«ողջ մնացողները ... փողերով ու թմբուկներով փողոցները ինկած կերգեն, կպարեն ու կխնդան»:** Սա վշտի ծիծաղն է: Դիվային ժպիտ է շողում Լենկթեմուրի շրթունքների վրա. հրամանը գործադրված էր: Ժողովուրդը հոգեվարքի մեջ էր. նա հոգով էր բնաջնջվել. ծիծաղը հոգու խելագարության ու վշտի արտացոլքն է դառնում: Այստեղ կրկին դիպուկ է Անդրիկյանը. Առանձար այս ծիծաղն առած՝ իր ոգին ըրած է: Նուազ հոգեբաններ թերեւս անգութ գտնեն այս ժպիտը, դիպային, հրեշավոր: **Եւ սակայն խոր ցաւերու վերջի արտայայտութիւնը ծիծաղն է:** Ամեն կիրք՝ երբ շատ յառաջ կը մղուի, հակազդեցութեան մը սահմաններուն կը մօտենայ: Մեծ ուրախութիւն մը արցունքներ կը թափէ, և մեծ վիշտը

ծալիտը կը ծաղկեցնէ: Հին պատմիչները կ'ըսեն թէ Պերիկլէսի ատեն եղած ժանտախտին ժամանակ, ամէն աթենացի կը ջանար քիչ մը զուարճանալ դեռ չըողած զաստիս և զարբուն տիս ... **Ասիկա մարդկութեան հոգեբանութիւնն է**¹³:

Այսպիսով, Առանձարը դարձավ այն խորագետ գրողներից, որ արտահայտեց իր ժամանակի ողբերգական դիմագիծը, տեսավ մարդու ու մարդկայինի կորուստը և խորապէս դառնացավ իր ժողովրդին բաժին հասած ծանր ճակատագրի համար: Բայց նա չհուսահատվեց, ինչպես թվում է, այլ փնտրեց արևոտ ուղիներ գալիքի երջանկության համար:

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

**1894-96 թթ. ԶԱՐԴԵՐԻ ԵՐԳԻՄԱՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ
ԱՌԱՆՁԱՐԻ ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ
ԱՄՓՈՓՈՒՄ**

Հողվածում քննված է Առանձարի «Վշտի ծիծաղ» ժողովածուն, որն արտացոլում է իր ժամանակի ողբերգականության զավեշտով լի դրսևորումները: Ժողովածուում ամփոփված նորավեպերը աչքի են ընկնում ազգային ողբերգության հանդեպ ուրույն մոտեցմամբ, արտացոլում ջարդերի հետևանքով ստեղծված մղձավանջը թե՛ իրական, թե՛ հոգեբանական դաշտում: Նորավեպերում նորովի քննվել են այնպիսի հոգեբանական երևույթներ, որ առաջ են բերել հոգեկերտվածքային խնդիրներ: Շեշտադրվել է օտարի բռնության ճիրաններում տառապող մարդու հոգու դրաման:

Н. САРГСЯН

**ТРАГИКОМИЧЕСКОЕ ОТРАЖЕНИЕ ПОГРОМОВ 1894-96 Г.Г. В
НОВЕЛЛАХ АРАНДЗАРА**

Резюме

В статье рассмотрен сборник Арандзара “Смех скорби”, который отражает “полные скорби” проявления трагизма своего времени. Собранные в сборнике новеллы выделяются особым подходом к национальной трагедии, отражают созданный вследствие погромов кошмар, как в реальном, так и в психологическом плане. В новеллах рассмотрены такие психологические

¹³ Անդրիկեան Հ. Ն., նշվ. հոդվածը, էջ 419:

явления, которые вызвали менталитетные проблемы. Акцентируется душевная драма человека, страдающего в когтях чужого насилия.

N.SARGSYAN

**THE TRAGICOMEDIC EXPRESSION OF 1894-1896 MASSACRES IN
ARANDZAR'S NOVELS**

Summary

The article discusses Arandzar's «Sorrow's laughter» which shows «ridiculous» expressions of the tragedy of his times. The novels of the collection interpret the national tragedy in a unique way, depict the nightmare of massacres in both real and psychological terms. The novels scrutinize, in a new way, psychological events that have caused psychological disposition problems. They stress the drama of people that suffered under foreign yoke.

ЭГИНЕ СААКЯН

Соискатель кафедры литературы ВГУ

УДК 82.0

СКАЗКА А. М. РЕМИЗОВА «САРКСИ-ШУН»: ВОЛКИ И ПСЫ
СВЯТЫХ ПОЛКОВОДЦЕВ

Բանալի բառեր և արտահայտություններ. Ա. Ռեմիզով, հայկական հեքիաթներ, սուրբ, եկեղեցի, շուն, Սուրբ Սարգսի ձի, Սուրբ Գևորգ, Սուրբ Նիկողայոս, հեքիաթ-ավանդություն

Ключевые слова и выражения: А.М. Ремизов, армянские сказки, волки, конь св. Саркиса, предание-сказка, св. Георгий, св. Николай, собака, церковь.

Key words and expressions: A.M. Remizov, Armenian fairy tales, saint, church, dog, St. Sargis's horse, legend-fairy tale.

Сказка армянского происхождения «Саркси-шун» (букв. "Саркисова собака") входит в цикл «кавказских сказок» А. Ремизова (1915 г.). Текст этого произведения впервые был опубликован в журнале «Огонек» за 1916 год (№ 20, с. 1-2). В этой публикации произведение называлось иначе – «Шун-Саркиси» (букв. – "Собака Саркиса"), а церковь, вокруг которой разворачивается основное действие, – «Сурп-Саркиси» (по-армянски – Святого Саркиса). Из комментария и подзаголовка следует, что сказка в первой публикации, а также во второй редакции сборника «Среди мурья», где она была опубликована в составе «Кавказских сказок», первоначально считалась грузинской. В первом издании сказка «Саркси-шун» расположена среди грузинских сказок по алфавитному порядку – между сказками «Под павлином» и «Мтеулетинские камни».¹

Впоследствии в дарственной надписи С.П. Ремизовой-Довгелло от 7 октября 1922 года А. Ремизов определил смысл этой сказки так: «Вл. Мих. Зензинов² заметил Тер-Погосяну³: «Почему армянские сказки все глупые. А я

¹ Ремизов А.М. Среди мурья. М.: Северные дни, 1917. С. 179-180.

² Зензинов Владимир Михайлович – (1880-1953) – знакомый А. Ремизова, публицист, член ЦК эсеровской партии, депутат Учредительного Собрания. В 1905 году, во время массовых арестов в Москве был арестован и после шестимесячного пребывания в Таганской тюрьме приговорен к административной ссылке в Восточную Сибирь на 5 лет. Из-за русско-японской войны ссылка в Сибирь была заменена на ссылку в Архангельск. Сразу после прибытия в Архангельск Зензинов бежал из ссылки.

скажу (я так и сказал) самая проникновенная – армянская *Столб золотой и Саркси-шун*.⁴ В Саркси-шуне – вера и по вере все и радость, по которой красен мир».⁵

Вера, религия, сакральный смысл всего видимого и невидимого имели для А. Ремизова особое значение. Он, по своему собственному образному выражению, «подстриженными глазами» смотрел и воспринимал мир глазами героев своих сказок, впрочем, и себя он называл «сюжетом рассказа».⁶

А. Ремизов верил, что «только создавая легенду, сказку, можно объяснить существо человека».⁷ «Природа его купальского существа» наглядно проявляется в образе героя-весельчака из сказки «Саркси-шун». Волшебство сказки «Саркси-шун» очень органично вписывается в ремизовский мир с его графическим дневником, куда он тщательно записывал, точнее, зарисовывал свои сны. В этой сказке, одной из любимых сказок А. Ремизова, можно вывести и его самого, как действующего персонажа сказки. Он не раз изображал себя в облике какого-нибудь персонажа во время важных исторических событий. Он – А. Ремизов – «участвовал в строительстве Вавилона, был при казни Аввакума, был в шайке Ивана Каина, и первый печатный дом поджег «и это далеко не все его превращения».⁸ Но сам А. Ремизов подчеркивает: «Это не прием. Я живо чувствую свое присутствие в высоких событиях человеческой истории или даже легенд. Но у меня нет сознания какой-то избранности. У меня скорее чувство: где-то в стороне тихо смотрю на жизнь и вспоминаю / ... / Я был там, но кем?»⁹

В этой легенде-сказке А. Ремизов незримо присутствует в образе безымянного парня-весельчака, разыгравшего всех.

По убеждению писателя, необходимо «принаровление чужих сказаний к своей национальности: перевод чужого понятия на современный язык.

³ Тер-Погосян Михаил (Микаэль) Матвеевич – (1890 – 1967) – знакомый А. Ремизова, член эсеровской партии, в 1917 году был членом Центрального Комитета партии эсеров и Комиссаром Временного Правительства. После октябрьского переворота эмигрировал в Париж.

⁴ Здесь и в дальнейших цитатах мы будем сохранять авторскую орфографию и пунктуацию.

⁵ Волшебный мир Алексея Ремизова. Каталог выставки. СПб.: Хронограф, 1992. С. 22.

⁶ Кодрянская Н.В. Алексей Ремизов. Париж, 1959. С. 96.

⁷ Кодрянская Н.В. Там же. С. 89.

⁸ Там же. С.124.

⁹ Там же. С.124.

Выбор материала – встреча на словесной земле и спуск под землю, – попалась легенда, я читаю и вдруг вспомнил: я принимал участие в сказочном событии. И начинаю по-своему рассказывать. «Пересказ» никогда не оттиск. А воспроизведение протооригинала очевидца». ¹⁰

А. Ремизов отмечает, что сказку «Саркси-шун» «сказывал Аршак сторож в Бакурьянах (Красная церковь), толмачом был сын священника Валериан Иасонович Лобадзе, записал Н. А. Чернявский». ¹¹

В письмах Н. Чернявского и в комментариях А. Ремизова, которые опирались на сведения корреспондента, нами выявлены некоторые переводческие ошибки. Так, Н. Чернявский записал, что слово «шун» по-армянски означает 'пес', а «сурб» – 'церковь'. ¹² Мы должны отметить ошибочный перевод Н. Чернявского и указать, что «сурб» на армянском языке означает 'святой', а не 'церковь'.

Подобный просчет, на наш взгляд, является следствием недостаточного владения языком. Известно, что А. Чернявский знал грузинский язык, занимался переводческой деятельностью, а армянский материал к нему попадал, вероятно, опосредованно – через грузинских армян.

Нам известно, что А. Ремизов был знаком и с другими легендами о св. Саркисе. В письме к А. Ремизову Н. Чернявский сам разъясняет образ святого, идентифицируя его со св. Георгием и спрашивает: «Прислать ли записанный мной от того же стражника С. Долмазова, что и Нарибекка рассказал, армяно-татарский вариант Лермонтовского «Ашик-Кериба»? ¹³ Н. Чернявский имеет в виду сказку армянского происхождения «Царь Нарибег» из числа «Кавказских сказок» А. Ремизова, напечатанных в сборнике «Среди мурья». ¹⁴ В письме Н. Чернявский сопоставляет лермонтовскую сказку с армянской легендой, устанавливает сходства, в качестве отличий приводит пример изменения имен действующих лиц и святого: «Я ошибся, это не вариант, а версия. Как Вы увидите, очень древняя, т.к. в ней приведены остатки татарской песни. Вместо Хадерлиаза (св. Георгия), как у Лермонтова, здесь Ваш знакомец Сурп

¹⁰ Там же. С.132.

¹¹ Ремизов А.М. Собр. Соч. в 10 томах. Том 2. Докука и балагурье. М.: Русская книга, 2000. С. 589.

¹² Там же. С. 589.

¹³ Архив Ремизова. Письма Николая Чернявского Алексею Ремизову // ИРЛИ. Ф. 256, Оп. 3. Ед. хр. 226. Л.8

¹⁴ Ремизов А.М. Среди мурья. М.: Северные дни, 1917. С. 165-171.

Саркис (св. Саркис). Мугиль-Хесгери, невеста названа иначе, Бек – также».¹⁵ Но какой-либо информацией о работе А. Ремизова над этой сказкой мы не располагаем. Однако из письма становится понятно, что эту легенду А. Ремизову Н. Чернявский тоже посылает, как и остальные «обещанные сказки».¹⁶ Армянский вариант легенды «Ашуг-Гариб» представляет собой историю любви бедного юноши Ашуга Гариба и Шах-Санаме – дочери богатого человека. Согласно легенде, Святой Саркис помог Ашугу Гарибу спасти свою любовь.

Святой Саркис – один из самых любимых и почитаемых святых. Ему посвящено множество храмов как в самой Армении, так и в странах с компактным проживанием армянского населения. Святой считается покровителем и помощником влюбленных, молниеносным заступником перед Богом. Жизнь Святого Саркиса представлена многочисленными легендами и сказками.

Сохранилось множество сведений о народных обычаях с упоминанием имени св. Саркиса, не связанных с церковными ритуалами. Например, в пятницу первой недели Передового поста ставили на крышу или у порога блюдце с жареной мукой (похиндз), чтобы конь святого оставил на нем след своего копыта.¹⁷

По легенде, Святой Саркис должен с ангелами пролететь над домами. И если в подносе с мукой оставит след от копыта своего белого коня, то в этом году исполнится мечта влюбленного юноши или девушки.

В народе бытовали предания, связанные с праздником св. Саркиса. Первые три дня поста св. Саркиса (Передовой пост) парни и девушки голодали до вечернего часа. Вечером третьего дня на ночь съедали очень соленые лепешки и ложились спать с определенной верой: кто во сне им даст воды напиться, тот и будет их суженым.¹⁸

Армяне почитали св. Саркиса, между тем, греки недолюбливали его за то, что он похитил некую греческую принцессу. По словам очевидцев, если греки не могли раздобыть мясо в пост праздника святого, варили и съедали собственные лапти.¹⁹

¹⁵ Архив Ремизова. Письма Николая Чернявского Алексею Ремизову // ИРЛИ. Ф. 256, Оп. 3. Ед. хр. 226. Л.9

¹⁶ Архив Ремизова. Письма Николая Чернявского Алексею Ремизову // ИРЛИ. Ф. 256, Оп. 3. Ед. хр. 226. Л.5

¹⁷ Там же. С. 22.

¹⁸ Там же. С. 22.

¹⁹ Там же. С. 23.

Самый большой грех по мнению древних армян – нарушение поста в честь св. Саркиса. Сохранилось предание, согласно которому молодая женщина покаялась во всех своих грехах, в числе которых были воровство и прелюбодеяние, но не решалась покаяться в одном грехе. После наставлений священника она призналась, что однажды в пост случайно съела кусочек хлеба, который лежал на горле кувшина с маслом.²⁰

Фольклорный сюжет легенды о св. Саркисе и следа копыта его коня претерпел определенные изменения в сказке А. Ремизова «Саркси-шун» – добавляется сюжетная линия поста в честь собаки: «За армянским базаром церковь Сурб-Саркиса (Святого Саркиса). У св. Саркиса был пес – «шун», умный, хороший пес, всегда при церкви находился, и все его любили и за мудреца почитали. Но однажды он пропал, потом его нашли убитого. И положено было в его память каждый год справлять пост – «неделю Саркси-шун». Всю неделю постились и на ночь ставили на крыльцо горшок с кашей и ждали, что собака придет и оставит след лапы. Но собака не вспоминала. «А был один парень – весельчак». И поднес он своего коня к каше и опустил копыто в кашу. На камне остался след. По утру все смотрели на след и радовались, что Саркси-шун помнит о них».²¹

Нет никаких сведений о наличии собаки у Святого Саркиса. Мы можем только предположительно отметить причины, которые, вероятно, обусловили появление этого – отнюдь не второстепенного – персонажа. В архиве Института русской литературы (Пушкинский дом) хранятся письма Н. Чернявского, из которых явствует факт передачи записанных им кавказских сказок. Сами сказки либо безвозвратно утеряны, либо находятся в других еще необнародованных архивах А. Ремизова отдельно от писем. В связи с невозможностью сличения текста сказки, присланного Н. Чернявским и текста ремизовского «Саркси-шуна», мы не можем утверждать, что образ собаки введен А. Ремизовым позднее.

Об армянских поверьях, связанных с «бешеной собакой» сообщает «Этнографический журнал» за 1913 год: Е. Лалаян рассказывает о суевериях армян, которые посвящали первую пятницу Великого поста «бешеной собаке» – они «постились, чтобы бешеные собаки их не кусали».²²

²⁰ Лалаян Е. Джавахк // Этнографический журнал. Тифлис. N3, 1896. С. 371. (на арм. яз.).

²¹ Ремизов А.М. Среди мурья. М.: Северные дни, 1917. С. 179-180.

²² Лалаян Е. Васапуракан // Этнографический журнал. Тифлис. N XV, 1913. С. 49. (на арм. яз.).

В «Этнографическом журнале» также находим описание Передового поста и связанного с ним "заблуждения" греческой церкви. Из-за того, что праздник святого выпадал на Передовой пост в народе его называли постом св. Саркиса и армянская церковь обвинялась со стороны греческой в ереси.

Мы можем предположить, что основой для развития легенды «Против ереси армянской» послужило как раз вышеупомянутое суеверие армян – ложный пост «бешеной собаки». Автором обвинения выступает некий католикос Саак, якобы живший в 12 веке. В этом объемном произведении (на греческом языке) рассказывается об учителе армян (вардапете) Саркисе, у которого была собака по прозвищу Арцывур. Куда бы не направлялся Саркис для проповеди своего учения, сначала на место отправлял свою собаку. Народ, увидев Арцывура, готовился и встречал учителя с большими почестями. Однажды, по дороге в одну деревню, волки загрызли собаку. Приехав в данную местность, учитель не был принят народом как обычно. По найденным костям вардапет понял, что случилось, и повелел армянам отныне скорбить и голодать, а пост в честь собаки получил название «Арцывурцев пост».²³

Вероятно, что А. Ремизов встретил главы «Против ереси армянской» в т.н. «Кирилловой книге», учитывая его любовь к древностям, в частности – к старым рукописям и церковным записям. Этот сборник XVII века содержит разные статьи догматико-полемиического содержания против латинян, лютеран и армян ("ереси армянской" посвящены 4 статьи: 30–33 главы). В числе нелепых сказаний, мнений и обличений в книге в главе "О посте арменском арцьюрском" приводится рассказ об армянах: якобы у них установлен пост Арцьюрцев, – в честь съеденной волками собаки их учителя Арцы (собаку звали Урцы), а также и об «армянском причастии» (главы 31 и 32).²⁴

По одной версии, мы предполагаем, что А. Ремизов, мог украсить сказку, рассказанную церковным сторожем, мотивами сюжета легенды «Кирилловой книги». Писатель признавался: «Я никогда не мог рассказать, как было в действительности. Скелет жизни беден (он прост), украшение этого механизма – цвет жизни. Когда я слышал, рассказывают о каком-нибудь происшествии, мне всегда казалось мелко. Я никогда не мог передать рассказанное слово в слово, я рассказывал по-своему – украшая уже этот

²³ Шахазиз Е. Новый Нахичевань и новонахичеванцы // Этнографический журнал. Тифлис. N IX, 1902. С. 14–15. (на арм. яз.).

²⁴ Кириллова Книга. М.: Печатный двор, 1644. С. 267.

скелет, так как для меня рассказанное было скелетом. Это тоже основа работы над материалом».²⁵

Со стороны А. Ремизова подобный пересказ можно рассмотреть как способ сохранения волшебства и сказочности: «В сказке надо беречь волшебство, а его легко развеять, стоит только приблизить содержание к действительности. В сказке много несообразного на трезвый глаз. Если «несообразность» убедительна, она оправдана. Мелочи-подробности сказки создают сказочность, таинственность; окорнать – значит погубить, выщипать».²⁶

Нужно отметить, что А. Ремизов и до сказки «Саркси-шун» разрабатывал тематику сказок-легенд о святых полководцах. Писатель переработал сказку «Про охотника и Егория Храброго», напечатанную в журнале «Живая старина» в 1911 году. Сказка вошла в сборник «Сказки русского народа, сказанные Алексеем Ремизовым».²⁷ В своей сказке А. Ремизов вместо безымянного охотника героем сделал писателя М. Пришвина. В сказке «Про охотника и Егория Храброго» тоже прослеживается мотив съеденной волками собаки: «Охотник в ночь на 23 апреля заночевал в лесу. К его костру стали выходить белые волки, а потом выехал сам Егорий и предложил охотнику, чтобы его собака сразилась с двумя волками, потом с пятью, а потом и с десятью. Каждый раз собака побеждала волков. Тогда Егорий приказал охотнику связать собаку и волки загрызли ее. Егорий разъяснил охотнику за что наказывает: «Ты не должен ночевать под мое праздновство на охоте, потому што я и над зверями пастырь...»».²⁸

В сказке А. Ремизова Егорий говорит охотнику: «Я над зверями пастырь! По моему повелению режут звери скотину. И вот я со своим стадом и настиг тебя, чтобы наказать».²⁹

В сборнике А. Афанасьева также приводится легенда о пастухе и св. Георгии: Два пастуха пасли овечье стадо, одному захотелось выпить воды, и пошел он через лес к колодцу. Шел, шел и увидел большой, ветвистый дуб /.../ влез на самую верхушку дерева. «Глядь – едет св. Георгий, а вслед за ним бежит многое множество волков. Остановился Георгий у самого дуба: начал

²⁵ Кодрянская Н.В. Там же. С. 87-88.

²⁶ Там же. С. 135.

²⁷ Ремизов А.М. Сказки русского народа, сказанные Алексеем Ремизовым. Берлин-СПб.-М.: Изд. З.И. Гржебина, 1923. С. 312-316.

²⁸ Васильев А. Шесть сказок, слышанных от крестьянина Ф.Н. Календарева // Живая старина. 1911. Вып. 1. С. 127.

²⁹ Ремизов А.М. Там же. С. 315.

рассылать волков в разные стороны и наказывает всякому, чем и где пропитаться. Всех разослал; собирается уж ехать; на ту пору тащится хромой волк и спрашивает: «А мне-то чтож?» Егорий говорит: «А тебе вон на дубу сидит!» Волк день ждал, и два ждал, чтобы пастух слез с дерева, так и не дождался; отошел подальше и схоронился за куст. Пастух огляделся, спустился с дуба – и бежать! А волк как выскочит из-за куста: схватил его и тут же съел».³⁰

Иногда пастуху везет больше: св. Георгий или св. Юрий напоминает ему, что если он будет всегда мешать волкам охотиться на овец, то сам станет их добычей.³¹

Нужно отметить, что Святой Георгий является аналогом Святого Саркиса в славянской фольклорной традиции. В своих исследованиях А. Фаминцын искал прообразы Георгия-Егория не только у древних славян, но и в античном мире. А. Фаминцын характеризует следующие функции Егория Храброго в славянской традиции: а) Св. Георгий – "бог с небес"; б) Св. Георгий – конь (Хорс); в) Св. Георгий – Белбог или Дажьдбог; г) Св. Георгий – победитель дракона; д) Св. Георгий – бог весны; е) Св. Георгий – "волчий пастырь", покровитель и защитник стад от хищных зверей и недугов; ж) Св. Георгий – покровитель охотников (Леший – Полисун – Лисовик); з) Св. Георгий – оракул, податель женихов. А. Фаминцын утверждает, что образ Егория «соединил в себе все черты, которыми народная фантазия во времена язычества наделяла бога солнца...»³²

Как видим, определенные функции и атрибуты, отмеченные исследователем, имеют непосредственную связь с образом и фольклорно-мифологическими функциями св. Саркиса. Например, упоминание коня, функция подателя женихов. Данная ипостась св. Саркиса – самая известная в народе и в фольклорных источниках. В ремизовской сказке тоже есть намек на фрагмент брачного ритуала, правда, с определенной идейной трансформацией. Следует отметить, что в обобщении А.С. Фаминцына в одном пункте наряду с функцией «волчьего пастыря» отмечается функция Георгия-Егория, как «покровителя и защитника стад от хищных зверей и недугов». Известно, что армяне не только постились, во время праздника св.

³⁰ Афанасьев А.Н. Народные русские легенды. Казань: Молодые силы, 1914. С.196.

³¹ Кирпичников А. Св. Георгий и Егорий Храбрый. Исследование литературной истории христианской легенды. СПб.: Тип. В. С. Балашева, 1879. С. 144-145.

³² Фаминцын А. С. Божества древних славян. СПб.: Типография Э. Аригольда, 1884. С. 306.

Саркиса, но и голодали несколько дней. Или добровольно увеличивали срок поста для выздоровления кого-то из родных.³³ День св. Саркиса предшествовал Великому посту и по ошибке считался постом в честь св. Саркиса. Пост предшествовал Пасхе, с празднования которой наступала весна.

Святой Георгий считается покровителем волков. По другой версии, мы предполагаем, что А. Ремизов мог осуществить перенос определенных атрибутов (наличие собаки) св. Георгия на св. Саркиса. По сведениям А. Гуры, святой Георгий считается покровителем волков у всех славянских народов, а в Северо-Восточной Боснии волков называют **собаками Святого Георгия**. В Сербии, Герцеговине, Косово и Метохии волки – псы святого Саввы, который собирает их и указывает им их добычу. А по польским поверьям, святой Николай в свой день (6. XII) собирает волков и определяет каждому его добычу.³⁴

В народных сказках встречаются тексты, где волкам назначает пищу Егорий или Христос. Например, легенда «Бедная вдова», «Чудесные странники» (АaTh 750 В****)³⁵: «Чудесные странники (Христос и св. Петр на ночлеге, на перевозе): богатые не принимают (не перевозят) Христа, бедные принимают; богатым на этом свете – награда, на том – наказание, бедным – наоборот».³⁶ Или сказка «Волк» из сборника легенд А. Афанасьева: «Дело было в старину, когда еще Христос ходил по земле вместе с апостолами. Раз идут они дорогою, идут широкою: попадается навстречу волк и говорит: "Господи! мне есть хочется! – "Поди, – сказал ему Христос, – съешь кобылу».³⁷

В притче А. Ремизова «Никола Милостливый» также имеет место подобная сюжетная линия: Христа и Николу приютила и накормила солдатка, а на следующий день странствий прибежал на поляну серый волк, поклонился Христу и просит есть:

«Поди, волк, к солдатке, – сказал Христос, – изба ее с краю при дороге, есть у нее корова-белуха, ту корову ты и съешь».

³³ Лалаян Е. Джавахк. Там же. С. 371.

³⁴ Гура А.В. Символика животных в славянской народной традиции. М.: Индрик, 1997. С. 131-132.

³⁵ При классификации типов сказок мы будем придерживаться Указателя сказочных сюжетов по системе Аарне-Томпсона с дополнениями Н. Андреева, Л. Багара и др.

³⁶ Сравнительный указатель сюжетов. Восточнославянская сказка. Л.: Наука, 1979. С. 186.

³⁷ Афанасьев А.Н. Народные русские сказки и легенды. Берлин: Издательство И. П. Лажечникова, 1922. В 2х томах. Т.2. С. 575.

Никола как не старался, не смог помешать этому. «И когда хватилась солдатка, от ее белухи только рожки да ножки остались.

– «Бог дал, Бог и взял, Его воля!» – приняла несчастная свою горькую долю». Бочка золота тоже катится мимо дома бедной женщины к богатому мельнику, несмотря на просьбы Николы.

Но в отличие от сказки, в притче А. Ремизова каждый получил по заслугам. Христос показывает Николе умирающего от жажды мельника, и ту самую солдатку в райском саду.³⁸

Данный сюжетный тип известен также под названием «Волк-дурень» (AaTh 122)³⁹.

В варианте армянской сказки «Глупый человек» Бог определяет человека волку в добычу: «Бог наказывает вечно голодного волка найти и съесть глупого человека, чтобы насытиться. Волк считает, что не сможет найти человека глупее того, кто пришел к нему с этим посланием».⁴⁰

Следует подчеркнуть особое значение волков в памятниках письменности в сюжетах о битве за христианскую веру против иноземцев. Например, в «Слове о полку Игореве», «Повести о Светомире царевиче» Вяч. Иванова и др.⁴¹

Дикие животные, в том числе волки, в религиозных текстах и в разных мифологиях сопровождают воинов во время битв, а также сражаются на их стороне.

В некоторых источниках волчий пастырь сам появляется в образе волка: «По хуританским преданиям *vučji pastir* выезжает верхом на волке, имея в руках длинный бич, или шествует впереди многочисленной стаи волков и умирят их дубинкою. Он то показывается в виде старого деда, то сам превращается в волка, рыщет по лесам хищным зверем и нападает на деревенские стада».⁴²

³⁸ Ремизов А.М. Собр. Соч. в 10 томах. Том 6. Лимонарь. М.: Русская книга, 2001. С. 225-229.

³⁹ Андреев Н.П. Указатель сказочных сюжетов по системе Аарне. Л.: Государственное русское географическое общество, 1929. С. 19.

⁴⁰ Бакунц А. Сочинения в 4 томах. Ереван: АН Арм. ССР, Том 2. 1979. С. 651-652. (на арм. яз.).

⁴¹ Топорков А.Л. Источники «Повести о Светомире царевиче» Вяч. Иванова: древняя и средневековая книжность и фольклор М.: Индрик, 2012. С. 220-223.

⁴² Афанасьев А.Н. Поэтические воззрения славян на природу. М.: Тип. Грачева и Комп, 1869. Т. 3. С. 529.

В сказках волки часто помогают героям в выполнении трудных задач: достать Жар-птицу, украсть невесту, оживить убитого героя живой водой. В сказке А. Афанасьева под номером 168 «Сказка об Иване-царевиче, Жар-птице и о сером волке» встречается эпизод, когда герой седлает волка, причем волк сам предлагает свою помощь.

В прозаическом предании о Егории, опубликованном А. Афанасьевым, рассказывается: «Вскочил Егорий на коня, приуправился и поехал в лес; повстречал здесь много волков и напустил их на Брагима хана грозного». ⁴³ В стихотворном же тексте Егорий говорит волкам: «Соберитесь вы, волки! / *Будьте вы мои собаки*, / готовьтесь для страшных драки», ⁴⁴ а после Егорий напускает волков на змия.

Таким образом, можем заключить, что волки и собаки находятся на одном функциональном культурно-семантическом поле. Это дает нам возможность говорить об атрибутивной идентичности волков св. Георгия и собаки св. Саркиса. С учетом данного обстоятельства добавление А. Ремизовым образа собаки можно расценить как попытку «приспособления материала к своей земле (обстановке) и к своим чувствам и понятиям». ⁴⁵

К теме Георгия-Егория в творчестве А. Ремизова относится написание апокрифа «Отчего нечистый без пят и о сотворении волка. Слово Егория волчьего пастыря Николе Угоднику» в 1907 году. Апокриф состоит из двух частей. Первая часть – странствие Егория и Николы Угодника. Вторая часть – рассказ Егория о сотворении волка. ⁴⁶ Позднее А. Ремизов включил рассказ о сотворении волка в собрание сочинений под заглавием «Страсти сатанинские»: ⁴⁷ «Егорий и Никола Угодник, заблудившись в лесу развели костер. Их сопровождают три волка, а волк Самоглот, который встречается и в других сказках Ремизова, варит святым кашу. И спрашивает Никола Угодник Егория: «Расскажи, Егорий, Ты Волчий Пастырь, почему Нечистый твоих волков боится?» ⁴⁸ По словам Егория, Сатана решил слепить из глины

⁴³ Афанасьев А.Н. Народные русские легенды / Под редакцией И.П. Кочергина. Казань: Молодые силы, 1914. С. 77.

⁴⁴ Афанасьев А.Н. Народные русские сказки и легенды. Берлин: Издательство И. П. Лажечникова, 1922. В 2-х томах. Т. 2. С. 499.

⁴⁵ Кодрянская Н.В. Там же. С.132.

⁴⁶ Беловой автограф «„Отчего нечистый без пят и о сотворении волка. Слово Егория Волчьего пастыря Николе Угоднику“. Сказка» // РГАЛИ. Ф. 420. Оп. 1. Ед. хр. 17. 5 л.

⁴⁷ Ремизов А.М. Сочинения. Отреченные повести. СПб.: Сирин, Т. 7. 1910-1912. С.113-115.

⁴⁸ Ремизов А.М. Собр. Соч. в 10 томах. Том 6. Лимонарь. М.: Русская книга, 2001. С. 23.

женщину, чтобы она соблазнила Адама, однако, у него получилось что-то бесформенное, но он все-таки вдохнул в глину жизнь, «кости наполнились мозгом, в жилах брызнула кровь, и зашевелились члены».⁴⁹ Но тут Бог решил пресечь деятельность Сатаны и ударил глиняную фигурку своим жезлом по боку. «И тотчас сорвался из глины волк, бросился на Сатану, Сатана от него – хотел Нечистый взлечь на дерево, но догнал его волк, схватил за ноги и откусил ему пяты».⁵⁰ С тех пор волки стали заклятыми врагами Сатаны и его воинства. «И бояться их нечистые пуще креста, и гонятся волки за нечистыми, не дают им пощады»⁵¹. В примечаниях к апокрифу А. Ремизов сообщает, что «материалом Слову послужила малорусская легенда о сотворении волка»,⁵² а источником первой части апокрифа являются украинские легенды, в которых св. Юрий, св. Николай или апостолы Петр и Павел странствуют в сопровождении волка или ночуют в лесу вместе с волками. В произведении А. Ремизова «Образ Николая Чудотворца» есть упоминание о странствии св. Николы по Малой Армении: «Он пришел в Малую Армению и странствовал год и девять месяцев. Из Армении удалился в Сирию».⁵³

Для полного освещения образа Егория в произведениях А. Ремизова необходимо отметить также «Действо о Егории Храбром», написанное в 1911 году на основе духовных стихов. Но, как справедливо отмечает А. Топорков: «В «Апофеозе», которым завершается «Действо», Егорий назван «змеиным пастырем», однако тема «волчьего пастыря» / ... / в «Действе» не получила разработки».⁵⁴

В сказке «Саркси-шун» объединились т.н. «армянская ересь», народные традиции праздника в честь Святого Саркиса, а также многочисленные легенды-предания о Святом Саркисе и его аналогах в славянской культуре.

Сказку А. Ремизова «Саркси-шун», а также другие сказки писателя, где выступает аналог Саркиса Георгий-Егорий, по классификации сказочных сюжетов Аарне-Томпсона считаем возможным отнести к группе сказок о

⁴⁹ Там же. С. 25.

⁵⁰ Там же. С. 25.

⁵¹ Там же. С. 25.

⁵² Там же. С. 41.

⁵³ Там же. С. 619.

⁵⁴ Топорков А.Л. Сюжет о Егории Храбром – волчьем пастыре в славянском фольклоре и русской литературе первой трети XX в. // Письменность, литература, фольклор славянских народов. История славистики. XV Международный съезд славистов. Минск, 20-27 августа 2013 г. Доклады российской делегации. М., 2013. С. 529-557.

собаках св. Георгия – Собаки св. Георгия: волки, черт, убегает от «собак» (AaTh 1150).⁵⁵

Что касается апокрифа «Отчего нечистый без пят и о сотворении волка. Слово Егория волчьего пастыря Николе Угоднику», то вторую часть апокрифа можно также отнести к типу преданий Аарне-Томпсона – Легенды о происхождении различных животных, их свойств и явлений окружающей природы (этиологические легенды), которые нашли отражение в приложении, причем к части 1-ого подтипа – Сотворение и устройство мира. Легенда о творении мира Богом и Сатанаилом (AaTh XII.I.1).⁵⁶

Вероятно, что многие произведения русской литературы были написаны под влиянием разработок А. Ремизова. Например, «Егорий – волчий пастырь» (1908) А.Н. Толстого, стихотворение С.А. Есенина «Егорий» (1914) и ряд других.⁵⁷ Во всяком случае, ремизовские произведения предшествовали им и ознаменовали усиление интереса к теме Георгия-Егория.

А. Ремизов был уверен в том, что «немыслимость, невозможность подойти к Богу, – побудила человека создать легенду о праведном человеке... / ... / И в веках сложились легенды: чудеса при жизни и чудеса по смерти праведного человека». И эти легенды потом «вышли сказкой».⁵⁸ Таковы же истории о Святом Саркисе, которые обогатились новыми мотивами, новым смыслом и трансформировались в самостоятельную авторскую сказку на традиционный армянский сюжет.

Հ. Սահակյան

Ա. Մ. Ռեմիզովի «Սարգսի շուն» հեքիաթը. սուրբ գորավարների գայլերն ու շները Ամփոփում

Հոգիվածում փորձ է արված բացահայտելու Սուրբ Սարգսի մասին հեքիաթ-ավանդությունում շան կերպարի առաջացման պատճառները: Դիտարկվում են սրբի անվան հետ կապվող կրոնական ավանդույթներն ու սովորույթները, որոնք նկարագրվել են «Սարգսի շուն» հեքիաթում: Ուսումնասիրվում են նաև սլավոնական մշակույթում Սարգսի համարժեքը

⁵⁵ Андреев Н.П. Указатель сказочных сюжетов по системе Аарне, Л.: Государственное русское географическое общество, 1929. С. 77.

⁵⁶ Там же. С. 117.

⁵⁷ Топорков А.Л. Сюжет о Егории Храбром... С. 529-557.

⁵⁸ Кодрянская Н.В. Там же. С. 85.

հանդիսացող սրբերի մասին պահպանված անասպել-հեքիաթները՝ այդ թվում Ա. Ռեմիզովի մշակմամբ:

Э. Саакян

Сказка А. М. Ремизова «Саркси-шун»: волки и псы святых полководцев

Резюме

В статье сделана попытка выявления причин возникновения образа собаки в сказке-легенде о Святом Саркисе. Рассматриваются традиции и обычаи связанные с святым, которые описываются в сказке «Саркси-шун», а также сохранившиеся предания-сказки об аналогах Саркиса в славянской культуре – в том числе в авторской обработке А. М. Ремизова.

H. Sahakyan

A.M. Remizov's fairy-tale «Sargsi shun» (Sargis's dog): Saint warriors' wolves and dogs

Summary

An attempt has been made in this article to reveal the reasons for the appearance of the dog's character in the legend-tale about St. Sargis.

The article examines the religious customs and traditions connected with the Saint's name which were described in the fairy-tale «Sargsi shun» (Sargis's dog), as well as the legend-tales about the counterparts of St. Sargis preserved in the Slavic culture including the ones rewritten by A. Remizov.

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ՀՏԴ 002.0

ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ՏՊԱԳԻՐ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԴԱՍԱԳՐԵՐԸ

Բանալի բառեր. այբբենարան, քերականություն, շարական, մատենագրություն, Ռիվոլա, Կղեմես Գալանոս, Հռոմ, դասագիրք:

Ключевые слова: азбука, грамматика, псалом, библиография, Ривьола, Клемент Галанос, Рим, учебник.

Key words: primer, grammar, canticle, bibliography, Rivola, Kghemes Galanos, Rome, textbook.

Ամեն մի լեզվի ուսուցում սկսվում է այբբենարանից ու տվյալ լեզվի քերականության դասագրքից: Այս առումով հետաքրքիր են հայերենի առաջին այբբենարաններն ու քերականության դասագրքերը, որոնք հանդես եկան հայ տպագրական գործի արշալույսին: Երեք դասագրքերն էլ տպագրվել են Իտալիայում և ոչ հայ հեղինակների կողմից: Դա հասկանալի է, որովհետև պապական Հռոմի միարարական շարժումը առավել հաջողություն կունենար, եթե կաթոլիկ քարոզիչները հայերենով ծավալեին իրենց գործունեությունը:

Առաջին դասագիրքը կոչվում է «Այբուբեն Հայոց – ALPHABETUM ARMENUM » և տպագրվել է 1623 թվականին:

Տիտղոսաթերթում գրված է, որ Գրիգոր ԺԵ Պապի հրամանով տպագրվել է «վասն հաստատութեան հաւատոյն կարգեալ» ժողովի, այսինքն՝ Պապական պրոպագանդի կամ Հավատասփյուռի ժողովի կողմից:

Ինչպես նշում է Ռ. Իշխանյանը, սա Հայոց այբուբենի երկրորդ հրատարակությունն է 1567թ. «Փոքր քերականութիւն»-ից հետո¹:


Քերականությունը, ինչպես նաև հայերենով բերված նյութը ներկայացվում է զուգահեռ լատիներենով: Հայոց Այբուբենի վերևում գրված է «ALPHABETVM ARMENIUM», իսկ նրա ներքո՝ «Աիբուբիենք հայոց»: **Այբ**-ի փոխարեն **Աիբ** գրերը տպագրական վրիպակ չէ, որովհետև Այբուբենի տառերի շարքում ևս **Ա**-ի դիմաց այդպես է գրված: Նույնը վերաբերում է նաև լատիներենին, ուր **Ajb**-ի փոխարեն գրված է **Aip**:

Այբուբենը ներկայացված է հետևյալ սկզբունքով: Նախ տառերն են իրենց գրաֆիկական նշաններով, ապա անվանումը և վերջապես չորրորդ

¹ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, Երևան, 1977, էջ 329:

սյունակում լատիներենով գրված է տվյալ տառի հնչյունական արտասանությունը լատիներեն տառադարձությամբ և նրա կողքին՝ ունեցած թվային արժեքը: Չորս սյուններից յուրաքանչյուրի վերևում գրված է վերջինիս բացատրությունը լատիներենով:

Figura	Nominatio		
Potestas			
Ա ա	Աիբ	Aip	a 1
Բ բ	Բեն	Pien	p 2



Ք-ից հետո բերված են նաև **և, օ, Ֆ** տառերը:

Որպես քերականության տարբեր ձևերի համար բերվող օրինակներ՝ հայերենի տառաշարքից բերված են հոգևոր հասկացություններ ներկայացնող բառեր, որով ընդգծվում է նաև գրքի ոչ միայն քերականական ուսուցողական բնույթը, այլև, որ այն տպագրվել է Հռոմեական եկեղեցու կողմից: Երկրորդ՝ այն ուներ գործնական նպատակ, քանի որ դրանք լատին քարոզիչների կողմից իրենց խոսքում բոլորից շատ գործածվող բառերն էին լինելու, ինչպես, օրինակ, **Աստուած, Քրիստոս, Յիսուս, Տէր, սրբութիւն, կաթողիկոս, վարդապետ, ծառայ, թագաւոր, հրեշտակ, առաքեալ** բառերը:

Գրքի վերջում հայերենով և հայատառ լատիներենով բերված են «Տէրունական աղօթք ըստ հայոց», Մարիամին ուղղված հրեշտակի Ողջոյնը՝ «Ողջոյն քեզ Մարիամ» լատիներեն նշանակող «Ավե Մարիա»-ն, «Հավատո հանգանակը»: Գիրքն ավարտվում է «Լեթանիայք Սրբուհոյ Աստուածածնին» շարքով, որտեղ որպես գովասանք Տիրամորն ուղղված տարբեր բնորոշումներ են միջնադարյան բնագրերից, որոնց կողքը գրված է «բարեխօսեա», ինչպես օրինակ.

Մայր Աստուծոյ բարեխօսեա

Մայր ամբիժ բարեխօսեա

Մայր հիանալի բարեխօսեա

Նման արտահայտությունների մի մասը վերցված են Տիրամոր քարեխոսությանը ապավինելու հայ միջնադարյան բանաստեղծության տարբեր տողերից կամ Տիրամորը վերաբերող աստվածաբանական բնորոշումներ են, ինչպես օրինակ.

Հաեղիի արդարութեան,

Աթոռ իմաստութեան,

Վարդենի փթթեալ,

Տապանակ ուխտի,

Դուռն երկնից:²

Վերջում Քրիստոսին ուղղված խոսքն է «Գառն Աստուծոյ» բնորոշմամբ, որը գալիս է Հովհաննես Մկրտչի «Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զեղոս աշխարհի» նշանավոր բնորոշումից:

Այսպիսով՝ սկսած հայոց այբուբենին նվիրված առաջին գրքից, որպես քերականական և լեզվի ուսուցման օրինակներ բերված են բնագրային հատվածներ հին մատենագրությունից:

Այստեղ դրանք բացառապես կրոնական են՝ Աստվածաշնչից և լատին ծիսական ավանդույթից:

Ժամանակի ընթացքում աստիճանաբար օրինակներ են բերվում նաև հայ հոգևոր գրականությունից:

Երկրորդ դասագիրքը վերնագրված է Grammaticae Armenae- «Քերականություն հայոց»: Այն լույս է տեսել 1624թվականին Միլանում: Գրքի հեղինակն է ֆրանսիացի գիտնական , Միլանի Ս. Թովմաս եկեղեցու հոգևորական Ֆրանչիսկոս Ռիվոլան:

Քերականությունը գրված է լատիներեն: Հայերեն բերված են միայն լեզվական տերմինները և հայրենի քերականական ձևերը և դրանցով հոլովված և խոնարհված բառերը:

Ինչպես գրում է Վ. Դերիկյանը. «Վերածնության շրջանի քերականագիտական աշխատանքներին բնորոշ ձևով՝ Ռիվոլայի քերականությունը կառուցված է գործնական քերականությունների օրինակով, որը լիովին համահունչ է Ամբրոսյան դպրոցի հետապնդած գործնական նպատակներին՝ ոչ թե ուսումնասիրել հայոց լեզուն, այլ այն սովորեցնել Արևելք ուղարկվող քարոզիչներին»³:

Քերականության այս ձեռնարկը կազմված է չորս մասից: Առաջինը հնչյունաբանությունն է, ուր ներկայացված է հայոց այբուբենը՝ ամեն տառի

² Նույն տեղում, էջ 14-15:

³ Դերիկյան Վ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մասն Բ, Լվովից Ամստերդամ (17-րդ դար), Երևան, 2014, էջ 57:

անվանմամբ և լատիներեն տառադարձությամբ: Ինչպես Հռոմի 1624թ. հրատարակության մեջ, այնպես և այստեղ Ա-ի դիմաց գրված է **Աիյր**:

Հայոց Այբուբերը Ռիվոլան ներկայացնում է գրեթե այնպես, ինչպես այն բերված էր Հռոմի վերը նշված հրատարակության մեջ:

Հայ գրականության պատմության ուսումնասիրման տեսանկյունից շատ կարևոր է հայերենի գրատեսակներին նվիրված բաժինը, ուր հայերեն տառատեսակները ներկայացված են հետևյալ հաջորդականությամբ՝ բոլորգիր, նոտրգիր, երկաթագիր, գլխագիր, ծաղկագիր, գազանագիր: Վերջին երկուսը իրականում ոչ թե գրատեսակներ են, այլ զարդագրի տեսակներ: Ռիվոլան, գազանագիր ասելով, նկատի ունի կենդանագիրը:

Գրքի վերջում հայերենին զուգահեռ լատիներենով տեղ են գտել «Հայր Մերը» և «Երանեալ է այր» սկսվածքով սաղմոսը:

«Հայր մեր»-ի շարվածքում վերևի տողը հայերեն է, ներքևինը՝ նույնը լատիներեն: Համանման ձևով է բերված «Երանեալ է այր» սկսվածքով սաղմոսը:

Երկուսն էլ բնագրերից հետո բառ առ բառ իմաստաբերականական վերլուծության են ենթարկված, որը գրականագիտական բնույթի տեքստաբանական աշխատանք է:

Երրորդ դասագիրքը Կղեմես Գալանոսի «Քերական եւ տրամաբանական ներածութիւն» անվանվող գիրքն է: Այն տպագրվել է Հռոմում 1645 թվականին:

Գիրքը տիտղոսաթերթում վերնագրված է «Քերականական, եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ»: Թեատինյան միաբանության անդամ Կղեմես Գալանոսը (1610-1666թթ.) որպես քարոզիչ գրում է գործնական քերականություն, որպեսզի դրա հիման վրա հայկական միջավայրում իրենց քարոզությունն իրականացնող լատին հոգևորականները կարողանային անմիջաբար հայերեն խոսել և ոչ թե թարգմանիչների օգնությամբ: «Շահելոյ» բառը, որը կցված է քերականությանը, ունի նաև օգտվել իմաստը: Նշանակում է, որ սա մի ձեռնարկ է, որից օգտվելու են հայերենի քերականությունը սովորելու համար:

Գրքի վերջում կա հայերեն-լատիներեն բառարան, որն ունի 1800 բառահոդված: Անհրաժեշտ է նշել, որ այն հայոց լեզվի ողջ բառապաշարին է վերաբերում:

Ռիվոլայի քերականությունը գրված էր լատիներեն, և փակագծերում հայերենով բերվում էին քերականական հասկացությունները և անվանումները: Գալանոսի քերականությունը այնինչ գրված է հայերեն, և փակագծերում քերականական հասկացությունները և տերմինները բերված են լատիներեն: Քանի որ սա ոչ թե տեսական քերականություն էր, այլ հայոց

լեզուն սովորելու գործնական ձեռնարկ, ուստի Գալանոսն ասում է, որ քերականության նպատակն է սովորեցնել ուղիղ (ճիշտ) գրել և խոսել:

Գալանոսը քերականությունը բաժանում է չորս մասի.

1. *«Յաղագս տառի և ուղղագրութեան»*
2. *«Յաղագս վանգի և բանաստեղծութեան»*
3. *«Յաղագս բառի և արտաբերութեան»*
4. *«Յաղագս բանի և շարադրութեան»*

Քերականության սկզբի ծավալուն խորագրում ևս քերականությունը բաժանված է չորս մասի. «Ուղղագրութիւն, բանաստեղծութիւն, արտաբերութիւն և շարադրութիւն»: Բանաստեղծությունը, սակայն, ավելի շատ ոչ թե այժմյան ըմբռնմամբ բանաստեղծությանն է վերաբերում, այլ բան-ին, որպես խոսքին, ըստ այդմ՝ խոսքաստեղծությունը:

Պատահական չէ, որ այն քննվում է «Վանգի և բանաստեղծութեան» բաժնում, թե վանկով ինչպես է ստեղծվում բանը՝ խոսքը, բառը:

Առաջին մասի «Յաղագս գրակազմութեան» բաժնում ներկայացնում է գրչության արվեստը՝ վայելչագրությունը: Առանձնացնում է երեք տեսակի գիր՝ գլխագիր՝ մեծատառը, բոլորգիր՝ փոքրատառը, և նոտրգիր: Այնուհետև բերվում է տպատառ Այբուբենը, տառերի անվանումները, որոնց կողքին նշում է դրանց լատիներեն տառադարձումները և տառերի թվային արժեքները:

17-19-րդ էջերում օրինակներ են բերվում շարականներից, որոնք հայ հին բանաստեղծություններից տպագրված առաջին օրինակներից են:

Գալանոսը տալիս է բանաստեղծության հետևյալ սահմանումը. **«Բանաստեղծութիւն է արհեստ քերթողաբանին, որով չափաւոր բանիւ գտաղ յարմարե»**⁴: Ըստ նման բացատրության՝ բանաստեղծական արվեստը չափածո տողերով տաղ գրելն է: Այստեղ բանաստեղծությունը փաստորեն ունի տաղաչափության իմաստը, իսկ տաղը՝ բանաստեղծության:

Տաղաչափության հարցերը քննվում են «Յաղագս Ուտաշարութեան» բաժնում: Տաղաչափությունը այսպես է սահմանվում «Ուտաշարութիւն է հմտութիւն ինչ առ ի բաղկացուցանելոյ զոտսն ոտանաւոր տողին»⁵: Հետևաբար «Ուտաշարությունը»՝ տաղաչափությունը տաղի՝ բանաստեղծության ոտքերը՝ չափը կազմելու հմտությունն է:

Այնուհետև ներկայացվում են բանաստեղծության չափերը: Անապեստը անվանվում է վերջատանջ, քանի որ շեշտն ընկնում է վերջին վանկի վրա:


⁴ Կղեմես Գալանոս, Քերական և տրամաբանական, Ներածութիւն, Հոմ, 1645, էջ 10:

⁵ Նույն տեղում, էջ 15:

Տաղաչափական տարբեր ձևերը ներկայացվում են շարականների տողերի միջոցով: Քանի որ Գալանոսի նպատակը եղել է բանաստեղծական տարբեր չափերը ներկայացնելը, որևէ մատնանշում չկա, թե բերվող տողի հեղինակն ով է, կամ այն որ կանոնի շարականից է վերցված:

Նման առաջին օրինակը հետևյալն է.

Աստուած Քոց Սուրբ վկայից վարձ շնորհեա փառաց՝:



Հաջորդը Հովհաննես Մկրտչին նվիրված շարականի հետևյալ տողն է, որը բերված է տաղաչափական հետևյալ բաժանմամբ.

Արդար. արեգական. կարապետ. ես վեհա. գոյն:

Վանկաշերտային նման բաժանմանը հետևում են նաև՝

Ի Քեզ նայիմք լոյս անմատոյց Փրկիչդ մերոյ:


Կամ

Անստեղծ արեգական լոյս ծագեա հոգոյս:

Քանի որ ըստ չափերի վանկատելիս դժվար էր լինում ընթերցելը, ուստի նախ բերվում է շարականի տողը, ապա ըստ բանաստեղծական չափի տրոհված տարբերակը.

Ճառագայթ փառաց նորոգէ գմբտաց լոյս:

Ճառա.գայթ փառ.աց նորո.գէ գմբ.տաց լոյս:



Որպես օրինակ բերված են շարականային տողեր նման բաժանմամբ:

Այս ուրվագծային վերլուծությունը ներկայացնում է այն կարևոր իրողությունը, որ թեպետ այս դասագրքերը կրոնական ուղղվածություն ունեն, սակայն որոշակիորեն պատկերացում են տալիս հայ միջնադարյան գրականության պաշտոներգության որոշ ժանրերի վերաբերյալ:

⁶ Նույն տեղում, էջ 16:

Ք. Մելքումյան

**Հայոց լեզվի տպագիր առաջին երեք դասագրքերը
Ամփոփում**

Ամեն մի լեզվի ուսուցում սկսվում է այբբենարանից ու տվյալ լեզվի քերականության դասագրքից: Այս առումով հետաքրքիր են հայերենի առաջին այբբենարաններն ու քերականության դասագրքերը, որոնք հանդես եկան հայ տպագրական գործի արշալույսին: Հետաքրքիր է, որ երեք դասագրքերն էլ տպագրվել են Իտալիայում ոչ հայ հեղինակների կողմից: Դա հասկանալի է, որովհետև պապական Հռոմի միաբարական շարժումը առավել հաջողություն կունենար, եթե կաթոլիկ քարոզիչները հայերենով ծավալեին իրենց գործունեությունը: Այս ուրվագծային վերլուծությունը ներկայացնում է այն կարևոր իրողությունը, որ թեպետ այս դասագրքերը կրոնական ուղվածություն ունեն, սակայն որոշակիորեն պատկերացում են տալիս հայ միջնադարյան գրականության պաշտոնական որոշ ժանրերի վերաբերյալ:

К. Мелкумян

**Три первые печатные учебники армянского языка
Резюме**

Изучение любого языка начинается с азбуки и учебника грамматики данного языка. В этой связи интересны первые азбуки армянского языка и учебники грамматики, которые вышли на заре армянской типографии. Интересно, что все три книги были опубликованы в Италии не армянскими авторами. Это понятно, так как братство римского папства имело бы наивысший успех, если бы католические проповедники вели бы свою деятельность по-армянски. В данной работе представлено такое важное обстоятельство, что, даже не имея прямого религиозного направления, эти учебники, однако, определенным образом дают представление о некоторых официальных жанрах армянской средневековой литературы.

K. Melqumyan

**The First Printed Three Books Of Armenian
Summary**

The learning of language begins with primer and with the textbook of language grammar. In this connection it is of paramount importance the first Armenian primers and grammar textbook, which evolved at the dawn of

Armenian printing. The first three textbooks were published in Italy by non-Armenian authors. Evidently the Roman congregation movement will have more success, if Catholic preachers expend their activity in Armenian. Though the textbooks have religious orientation they give an idea about medieval Armenian literature of some genres.

ԱՄԱԼՑԱ ՔՈՉԱՐՑԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու,
Մ. Մաշտոցի անվան համալսարանի դասախոս

ՀՏԴ 82.0

**ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՏԱՂ ՍԵՐՆԻԻ
ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ**

Բանալի բառեր և բառակապակցություններ. բնապատկեր, գույն, երանգ, նրբագիծ, էլնեջ, գեղագիտական դաստիարակություն, հայրենի եզերք, տարվա եղանակներ:

Ключевые слова и выражения: пейзаж, цвет, оттенок, эстетическое воспитание, родной край, времена года.

Մանկական գրականության ամենաբնորոշ յուրահատկությունը դեպի ընթերցողն ունեցած կողմնորոշումն է, նրա զարգացման տարիքային ու մանկավարժահոգեբանական առանձնահատկությունների հետ հաշվի նստելը:

Իր հետաքրքրություններով ժամանակակից մանուկ ընթերցողը զգալիորեն տարբերվում է ոչ հեռու անցյալի իր հասակակիցներից, որոնք անցել են հոկտեմբերիկների ու պիոներների խիստ քաղաքականացված «դպրոցի ճանապարհով» և բոլորովին այլ պատկերացումներ ունեին հայրենիքի, հայրենասիրության, գեղեցիկի մարդկային տարաբայությամբ հոգեբանությունների վերաբերյալ:

Ժամանակակից մանկավարժական միտքը բոլորովին այլ պահանջներ է առաջադրում մատաղ սերնդի դաստիարակությունը, որոնք պայմանավորված են աշխարհաքաղաքական զարգացումներով: Առաջնայինն այժմ հայրենասեր, բազմակողմանիորեն զարգացած, ինքնուրույն մտածողությամբ օժտված սերնդի դաստիարակությունն է, որի կարևոր բաղադրիչներից մեկն էլ գեղագիտական դաստիարակությունն է: Մեր օրերում հայրենասեր, աշխատասեր, ֆիզիկապես ու հոգեպես առողջ, մարդասիրությամբ համակված լինելը աքսիոմատիկ, բայց դեռևս ոչ լիարժեքային բավարար պայման է սերնդի դաստիարակության կազմակերպման համար: Առաջընթացի ճանապարհը բռնած մեր երկրին անհրաժեշտ է վերոհիշյալ բարձր հատկանիշները գեղագիտական բարձր ճաշակի հետ համադրող սերունդ:

Ուստի, առաջնային պետք է համարել նաև մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակությունը, որի կազմակերպման գործում անգնահատելի է գրականության դերը:

«Գիտությունը, գեղարվեստը, գրականությունը – ամեն ինչ երեխան մանկությունից պիտի սովորի¹», - հաճախ էր հրատարակիչներին ասում Հովհաննես Թումանյանը և պահանջում, որ մանուկների համար հրատարակվող գրքերը նախ և առաջ հետաքրքիր պետք է լինեն գեղեցիկ նկարազարդմամբ ու ձևավորմամբ, տպագրված բարձրորակ թերթի վրա:

Նվարդ Թումանյանն իր հուշերում գրում է, թե ինչպիսի բծախնդրությամբ էր բանաստեղծը հետևում իր մանկական ստեղծագործությունների տպագրությանը. «Տպելիս ինքն էր անում վերջին սրբագրությունը, որ սխալ չվրիպի, իսկ եթե առանձին գրքով էր հրապարակում, մինչև գրքի լույս տեսնելը տպարանից չէր հեռանում: Ամեն ինչ իր ճաշակով ու իր ձեռքով էր անում: Նախ լավ թուղթ էր ընտրում, նկարչին պատվիրում էր և հետևում նրա արածին: Հիշում եմ հեքիաթներից մեկի տպագրության ժամանակ (ի նկատի ունի «Ոսկե քաղաքը» - Ա. Ք) հայրիկին բանտարկեցին: Շատ էր անհանգստանում գրքույկի հրապարակման որակով, խնդրում, որ հետևենք, հետաքրքրվենք, որ հանկարծ սխալ չհրապարակվի»²:

Փակագծերում նշենք, որ մեր մանկագիր գրողների գրքերը հաճախ տպագրվում են անհաջող նկարազարդումներով ու ձևավորմամբ, վատորակ թղթի վրա և շատ քիչ տպաքանակով: Այսքանով հանդերձ, նրանց ստեղծագործություններից շատերը կարող են նպաստել մանուկների գեղագիտական ճաշակի բարձրացմանը: Հատկապես բնությանը նվիրված շատ բանաստեղծություններ աչքի են ընկնում հետաքրքիր պատկերավորմամբ, գույների ու հնչյունների ուշագրավ համադրմամբ: Այս առումով ուշադրության արժանի են Երվանդ Պետրոսյանի, Յուրի Սահակյանի, Սուրեն Մուրադյանի, Էդուարդ Միլիտոնյանի բանաստեղծությունները:

Երեխան աշխարհը ճանաչում է գույների ու ձայների միջոցով: Բնությունը գույների ու ձայների մի ներդաշնակ խճանկար է, և յուրաքանչյուր ընթերցող յուրովի է ընկալում արտաքին աշխարհի գույներն ու ձայները.

Իր ձայնն ունի ամեն մեկը,
Եվ ամեն բան,

¹ Թումանյան Ն., հուշեր և զրույցներ, «Էդիթ պրինտ» հրտ; Եր; 2009, էջ 78:

² Նույն տեղում, էջ 120:

Նույնիսկ՝ ձուկը,
Նույնիսկ քարերն անբերան³:
Ձայնը երեխայի աշխարհընկալման բանալին է.
Գույները՝ հույս, ձայները՝ լույս,
Մեզ աշխարհին կապող ուղի,,,
Կան և ուրիշ ձայներ մեր մեջ,
Մեկ-մեկ քնած, մեկ-մեկ արթուն.
Անցյալի ձայն ու գալիքի,
Որ ճանապարհն են մեր հատում⁴:

Ե. Պետրոսյանի բանաստեղծություններում ձայները նաև գույն ու հոտ ունեն, համ («Ձայները գույն ունեն ու համ») և նման են առեղծվածի:

Գույներով է երեխան ճանաչում աշխարհը, և այդ գույները լուսավոր են ու պայծառ, թռիչք են տալիս երևակայությանը, և երեխան ստեղծում է իր աշխարհը, այն ներկում իր գույներով.

Լիներ, լիներ
Ի՞նչ լիներ:
Անապատում լիճ լիներ,
Լճում ձուկ ու հավքերի
Աշխույժ խաղ ու ճիչ լիներ:
Լիներ, լիներ
Ի՞նչ լիներ:
Մուտն աշխարհում քիչ լիներ,
Քչի դեմ էր անսպառ,
Աստվածատուր խիղճ լիներ⁵:

Երեխայի համար ամեն ինչ զարմանալի է. կենդանիները, թռչունները, ծառերն ու ծաղիկները, արևն ու լուսինը: Հրաշք են ծառի սաղարթների մեջ երգող թռչունները.

Մեկը դալայայում է, մեկը ճովողում,
Մեկը դունդունում է, մեկը՝ կչկչում

.....
Երկինք բարձրացող արփին հրաշք է,
Սաղաթին վառվող լույսը հարշք է,
Ճյուղերին ճոճվող քամին հրաշք է:
Ամենն այդ տեսնող աչքը հրաշք է⁶:

³ Պետրոսյան Ե; Ձայների խճանկար, Եր; 2010, էջ 5:

⁴ Նույն տեղը, էջ 28:

⁵ Սահակյան Յու; Խաղիկներ, խաղալիքներ, Եր; 2002, էջ 29:

Երեխան բնապատկերների միջոցով է ճանաչում աշխարհը, սիրում բնությունը և այդ ճանապարհով՝ ենթագիտակցորեն իր հայրենիքը: Բնությունը ոչ միայն երեխային սովորեցնում է տեսնել գեղեցիկը, հրճվել նրանով, այլև համակվել սիրով ու բարությամբ բոլոր շնչավոր արարածների հանդեպ, զգալ, որ բնության յուրաքանչյուր շնչավոր արարած հոգատարության, նաև՝ կարեկցանքի կարոտ ունի:

Ծիծեռնակը ճանապարհին իր թևիկն էր վնասել,

Կուչ էր եկել պատշգամբում

Իրերի տակ հին ու անգույն:

Ջուր ենք տալիս, չի խմում,

Կուտ ենք տալիս՝ չի ուտում;

Ամպերին է նայում տխուր,

Երկնքին է նայում տրտում⁶:

Բնությանը նվիրված բանաստեղծությունները երեխայի առջև փռում են տեսանելի աշխարհի գույները, որոնք տպավորվում են նրա մեջ: Ամեն ինչ՝ տարվա եղանակները, բնության կախարդական գույները, հնչյունները, սիրած կենդանիներն ու թռչունները հետո դառնալու են սովորական և հետագա կյանքում երևակվելու են միայն մանկության օրերի հիշողություններում:

Բնության միջոցով մանկագիր բանաստեղծները արտացոլում են իրական կյանքը, ընտրում այն երևույթները, որոնք կենդանի , տեսանելի պատկերներ ստեղծելու հնարավորություն են տալիս: Այդ երևույթներն արտացոլվում են երեխայի վերաբերմունքի, զգացմունքների ու հույզերի հետ անցած կապերի մեջ՝ ձևավորելով նրանց հայացքը կենդանական ու բուսական աշխարհի վերաբերյալ:

Բնության յուրաքանչյուր երևույթ անպայմանորեն խորհրդանշվում է համապատասխան գույներով ու երանգներով. քամին քշում է ամպերը, շնչում ու արթնանում է հողը, նշանակում է գարունն է գալիս.

Քշեց եկան Հարավ քամին,

Ձյուն ու ձմեռ տարավ քամին,

Որտեղ տխուր ամպեր տեսավ,

Բերեց երկինք արավ քամին:

Ամպը եկավ, ամպից կախվեց,

Ամպը ճոճվեց, ամպին բախվեց

Եվ խնդմնդաց կիրճում պահված

⁶ Նույն տեղում, էջ 51:

⁷ Սահակյան Յու; 101 բանաստեղծություն մանուկներին, Եր; 2008, էջ 23:

Շանթ – որոտի ծարավ քամին:
Անձրև եկավ դաժան – դաժան,
Թելիկ – մելիկ, մաքուր – մաքուր
Շնչեց հողը ու արթնացավ
Ուսին առած Հարավ քամին⁸:

Բնության զարթոնքը խորհրդանշվում է պայծառ ու մաքուր լույսով, և սարերն ու ձորերը պատվում են խնկաբույրով, արևի տաք ճառագայթներով: Սկսվում է արևի տոնը, բոլոր թռչուններն ու կենդանիները երգչախումբ են կազմում.

Երգը թնդաց հովտի մեջ
Ծնեց հազար ելևեջ,
Թռավ – անցավ ձորերից,
Թռավ – անցավ սարերից,
Գնաց հասավ արևին
Որ Ժպտում էր վերևից:
Եվ արևը լուսավառ
Կանչեց՝ ես ձեզ խմբավար⁹:

Ե. Պետրոսյանը երեխաների առջև փռում է ոչ միայն տարվա եղանակների գույները, այլև բացատրում է բնության անկրկնելի հեքիաթը, երեխայի աչքերի առջև պատվում է եղանակների կառուսելը.

Եղանակները կապված են իրար
Ինչ- որ թելերով ամուր ու անտես,
Անվերջ սլանում իրար հետևից
Հա պտտվում են կարուսելի պես:
Փորձում են առաջ ընկնել մեկ մեկուց,
Աչք ունեն հնուց միմյանց տեղերին:
Բայց կարուսելը չի կանգնում բնավ
Փակելով ճամփան նման խաղերի¹⁰:

Գեղարվեստական գրականությունը մանուկ ընթերցողի հայրենասիրական դաստիարակության կարևորագույն միջոցներից մեկն է, իսկ հայրելիքը սիրելու, հայրենի եզերքին արմատներով կապվելու, նրա քաղաքացին ու զինվորը դառնալու համար, առաջին հերթին պետք է լավ ճանաչել հայրենիքը, նրա բնությունը, կենդանական ու բուսական աշխարհը, պետք է հենց մանուկ հասակից զմայլվել հայրենի բնության

⁸ Նույն տեղը, էջ 68:

⁹ Պետրոսյան Ե; Գույների երամ, էջ 14:

¹⁰ Նույն տեղում, էջ 2:

հմայքներով, նրա գույներով ու նրբերանգներով, ինչը շատ կարևոր է երեխայի գեղագիտական դաստիարակության համար:

Ամփոփում

Հոդվածի նպատակն է՝ նորագույն շրջանի մանկագիր քանաստեղծների ստեղծագործությունների միջոցով ներկայացնել այն եղանակներն ու ձևերը, որոնք կարող են օգտակար լինել տարրական ու միջին դասարանների աշակերտների գեղագիտական դաստիարակության կազմակերպման համար:

Резюме

Цель статьи – посредством произведений детских писателей новейшего времени представить те способы и формы, которые могут оказаться полезными при организации процесса эстетического воспитания учащихся начальной и средней школы.

Summary

The purpose of the article is to present the ways and styles which can be useful for organization of aesthetic education of elementary and middle school students, through the works of the modern period children's poets.

ԱՐՓԻՆԵ ՄԻՍՈՆՑԱՆ

Մ. Մաշտոցի անվան գիտահետազոտական ինստիտուտի հայցորդ
Մ. Մաշտոցի անվան գիտահետազոտական ինստիտուտի
Մայր ցուցակի և ձեռագրագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ՀՏԴ 002.2

**ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՎՄԱ ՎԱՆԱՆԴԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. տպագիր գիրք, տպագրություն, թովմա Վանանդեցի, եպիսկոպոս, գաղութ, հանձնարարական նամակ, հրատարակություն:

Ключевые слова и выражения: печатные книги, издания, Товма Ванандеци, епископ, колония, рекомендательное письмо, печать.

Key words and expressions: printed book, printing, Tovma Vanandetsi, bishop, colony, letter of recommendation, publications.

Հայկական այն առևտրական գաղութների շարքում, որոնք միջին դարերից սկսած զանազան ժամանակաշրջաններում հաստատվել են Եվրոպական այլևայլ կենտրոններում, կարևոր տեղ է գրավում Ամստերդամի՝ Հոլանդիայի այս նշանավոր քաղաքի հայ գաղութը: Այստեղ է, որ հայ տպագրությունը, եթե ոչ իր ծագումը, գեթ իր անդրանիկ փայլուն շրջանն է ունեցել, տպագրելով այնպիսի գործեր, որոնք դեռ այսօր էլ կազմում են տպագրական արվեստի զարդը:

Եվ իրոք ԺԷ-ԺԸ. դդ. Արևմտյան Եվրոպայի հայկական տպարանների մեջ առանձնապես ուշագրավ է Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամինը, ուր հայերեն գրքերի տպագրությունն սկսվելով 1660 թ., առժամանակյա դադարից հետո շարունակվում է մինչև 1716 թ., ամբողջ 57 տարի, և ապա վերջանում ընդմիջտ: Հոլանդիայի այս քաղաքում ԺԷ. դարում գոյություն է ունեցել հայկական մի այնպիսի սովոր գաղութ, որ կառուցել է նույնիսկ իր եկեղեցին: Ամստերդամի տպարանի հիմնադիրն է դպիր Մատթեոս Ծաթեցին¹:

¹ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հտ. 1, Հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում, Երևան 1977, էջ 408:

«Սուրբ Էջմիածին և Սուրբ Սարգիս» տպարանի պատմության մեջ իր հրատարակչական գործունեությամբ առանձնանում է Գողթն գավառի Սբ. Խաչ վանքի եպիսկոպոս Թովմա Վանանդեցի Նուրիջանյանը²:

1694 թ. Իսպանիա-Ատլանտյան օվկիանոս-Անգլիա ճանապարհային գծով Ամստերդամ է հասնում Թովմա եպիսկոպոս Նուրիջանյան Վանանդեցին՝ Եռամեծ վարդապետը: Վերջինս 1694 թ. անցնում է տպարանի գլուխը³: Սակայն մինչ իր ժամանելը Հոլանդիա, Ամստերդամում էին գտնվում Թովմա Վանանդեցու եղբոր որդիները՝ Միքայել և Ղուկաս Վանանդեցիները, և մորեղբոր որդին՝ Մատթեոս Վանանդեցին: Վանանդեցիների տպագրական գործունեության կազմակերպողը և մոլիչ ուժը դառնում է հենց ինքը Թովմա Նուրիջանյանը՝ «վեհափայլ եպիսկոպոս եւ բազմաջան վարդապետ»⁴, «եպիսկոպոս Սրբոյ Խաչի վանիցն Գողթնեաց»⁵:

1695 թ. սկիզբը համարվում է Ամստերդամի տպարանի երկրորդ և պտղաբեր գործունեության շրջանը: Թովմա Վանանդեցին գրաշարապետն էր, իսկ Ղուկաս և Միքայել եղբայրները՝ խմբագրողներ և սրբագրիչներ: Վերջիններս եղել են կրթված անձնավորություններ, քաջ տեղյակ լինելով և՛ հայերեն լեզվին և՛ լատիներենին: Թովմա Վանանդեցին նպատակ ուներ նաև իր թեմի մեջ հիմնել լատինա-հայկական դպրության մի բարձրագույն ուսումնարան, որը պետք է ծառայեր բոլոր այն քրիստոնյաների կրթությանը, որոնք գտնվում էին օտարների տիրապետության լծի տակ: Հոլանդական վարպետները վկայում են, որ Թովմա Վանանդեցին ջանքեր է գործադրել իր տպարանը հայրենիք տեղափոխելու, բայց հաջողության չի հասել:

Քսաներկու տարիների ընթացքում (1695-1717 թթ.) Վանանդեցիները հրատարակում են 19 գիրք: Բոլոր գրքերը նշանավոր են իրենց կատարելությամբ և օգտակարությամբ:

Վանանդեցիների առաջին հրատարակությունը **«Համատարած աշխարհացոյց»** կոչվող քարտեզն է՝ հրատարակած 1695 թ.: Քարտեզը հրատարակվել է իր **«Բանալի Համատարած աշխարհացոյց»** կոչվող գրքույկով, որի հեղինակն է Ղուկաս Վանանդեցին: Գրքույկը հրատարակվել

² Մ. Կ. Սևակ, Թովմա Վանանդեցիի տպարանը Ամստերդամի մեջ, Հանդես Ամսթերա, Վիեննա, 1960, շմբ 7, էջ 412-415:

³ Մ. Գրիգորյան, Նոր նիւթեր և դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոյ մասին, Վիեննա 1969, էջ 14-15:

⁴ Մովսէս Խորենացի, «Ազգաբնութիւն տոհմին Յաբթեան», Ամստերդամ, 1695:

⁵ «Բանալի Համատարած Աշխարհացոյցին», Ամստերդամ 1696, էջ 3:

Է 1696 թ.: Դա մի մեծագիր (118x150 սմ), պղնձափորագիր հրատարակություն է, կատարված բարձր ճաշակով: Այդ տվյալները համարվում են ստույգ և անվիճելի. նշված քարտեզի մասին որոշակի և դրականորեն արատահայտվել են ոչ միայն Գ. Լևոնյանը, Լեոն, այլև Մխիթարյան միաբանները⁶: Քարտեզը, որ առաջինն էր հայոց մեջ, իրենից ներկայացնում է երկու կիսագնդեր, որոնք փոխադրել կամ այսպես ասած հայացրել է Թովմա Վանանդեցին: Ունի նաև հիշատակարան: Նրա փորագրիչներն են եղել հոլանդացի Ադրիան և Պետրոս Սկոմբել եղբայրները, որոնք աշխատել են Ղուկաս Վանանդեցու անմիջական մասնակցությամբ⁷: Քարտեզը գեղեցիկ է, զարդարված է հունական դիցաբանությունից և աստղաբաշխությունից վերցված պատկերներով, որոնց կատարումը գերազանց է: Չորս անկյունում նկարված են տարվա չորս եղանակներին համապատասխան կրոնական իմաստի բնական տեսարաններ: Քարտեզի գրվածքն ու շարադրանքը կատարված են նուրբ և մաքուր, լավ թղթի վրա և որակյալ նյութերով: Աշխարհագրույցը բաղկացած է ութ թերթից, փորագրված է հայերեն, բայց կենտրոնում միայն լատիներեն տառերով փորագրիչ վարպետների անունները: Նրա վրա կա Թովմա Եպիսկոպոսի հիշատակարանը: Այս գեղեցիկ գործը, որի գլխավոր արդյունքը պատկանում է Ղուկաս Վանանդեցուն, այժմ էլ հիացմունքի առարկա է ինչպես իր կազմությամբ, այնպես էլ փորագրությամբ: Եվ որպեսզի ամեն ոք հնարավորություն ունենա օգտվել դրանից, Թովմա Վանանդեցին դրան կցել է «Բանալի Համատարած Աշխարհացոյց» անունը կրող առաջաբանը⁸: Քարտեզագրության պատմության մեջ հայկական առաջին այս տպագիր քարտեզը համարվում է լավագույններից մեկը ամբողջ աշխարհում, և նաև իր փորագրական արվեստով փորագրության արվեստի պատմության կարևորագույն էջերից է: Դժվար է պատկերացնել, որ առաջին հայատառ քարտեզը լույս է ընծայվել այդպիսի մեծ ծավալով, այդպիսի բարդ բովանդակությամբ, այդպիսի շքեղ զարդանկարներով:

Առաջին տպագիր գիրքը, որ հրատարակում է Թովմա Վանանդեցին՝ պատմահայր *Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գիրքն է*: Այս գիրքն ունի *«Ազգաբանութիւն Տոհմին Յաբեթեան, յորինալ ի Մովսէս Խորենացոյ յեռանձ վարդապետէ և յոգնեախտ Քերթոդաօրէ»* վերնագիրը: Գիրքը համարվում է Վանանդեցիների երկրորդ

⁶ Ա. Սարգսյան, Հոլլանդան եւ հայերը ԺԶ-ԺԹ դարերում, Հանդես Ամսօրեայ, Վիեննա 1927, Հիմ 7, էջ 392-393:

⁷ Նույն տեղում:

⁸ Ա. Բաբայան, Հայ գիրքը և տպագրությունը, Երևան 1963, էջ 57-63:

հրատարակությունը: Այն հայ ժողովրդի ծագումնաբանության մասին առաջին հետաքրքիր և ծանրակշիռ կարևորություն ունեցող երկն է: Այդ իսկ պատճառով Վանանդեցի եղբայրները հանձն են առնում հրատարակել այն. գործն, ավարտի է հասնում 1695թ.: Աշխատության պատմական նշանակության համար Վիլհելմ և Վիպթոն եղբայրները, լատիներեն թարգմանելով այն, 1736 թ. հրատարակում են Լոնդոնում⁹: Գիրքը բաղկացած է 487 էջից: Այս երկու գործերը բավական էին անմահացնելու Վանանդեցի Նուրիջանյան ընտանիքի անունը¹⁰:

Մյուսը *Թովմա Գեմբացու «Յաղագս համահետևման Քրիստոսի»* գիրքն է՝ հրատարակած 1696 թ.: Այս գիրքը թարգմանել է Հովհաննես վարդապետ Հովով Կոստանդնուպոլսեցին, Ջուղայեցի խոջա Սահրատի որդի պարոն Գասպարի խնդրանքով: Առաջին անգամ այն տպվել է 1674 թ., Հոմի «Հավատոյ Տարածման» տպարանում: 1696 թ. Թովմա Վանանդեցին վերատպում է գիրքը¹¹:

Հաջորդ գիրքը՝ *«Հռոմ իմաստութեան կամ Ոսկեայ դուռն դպրատան»*-ն է, հրատարակած 1699-1700 թվականներին: Այն կազմված է հատուկ «Նորեկ դեռակիրթ և Հայկազունեաց մանկանց» համար, մի դասագիրք զբոսարան է, որը սկսվում է համառոտ քերականությամբ: Գիրքը համարվում է մանկական տարրական գիտելիքների ուսուցողական գրքույկ, որի մեջ գետեղված է նաև երազահան, գուշակարան:

1699 թ. Վանանդեցիները հրատարակում են *«Գանձ Չափոյ, Կշոյ, Թուոյ և Դրամից բոլոր աշխարհի»* գիրքը: Այն գերազանցապես հայ վաճառականների համար գործնական կարևոր նշանակություն ունեցող անհրաժեշտ գիրք է: Մի ձեռնարկ է վաճառականության համար՝ իր մեջ պարունակելով ամեն տեսակ չափերի և կշիռների, ապա նաև երկրների և քաղաքների մասին տեղեկություններ: Գիրքը աշխարհի տարբեր չափերի, դրամների և կշիռների մասին է: Այս գիրքը իսկապես մի «Գանձ» է, հայ վաճառականների, մասնավորապես Ամստերդամում հաստատված ջուղայեցիների համար, որոնք անմիջական հարաբերությունների մեջ էին զանազան առևտրական շուկաների հետ և ստիպված էին տեղյակ լինել այդ երկրների դրամներին, չափերին¹²:

⁹ Մովսես Խորենացի, Պատմություն և Աշխարհագրություն, հայ. և լատ., Լոնդոն, 1736:

¹⁰ Թեոդիկ, ՏԻՊ ՈՒ ՏԱՌ, Նմանահանութիւն, Երևան 2012, էջ 167:

¹¹ Մ. Գրիգորյան, Նոր նիւթեր և դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցուց մասին, Վիեննա 1969, էջ 29-30:

¹² Առաքել Սարուխան, Հովանդան և հայերը, Վիեննա, 1926, էջ 115-116:

1698 թ. հրատարակում են **«Տոմարը»**: Տոմարագետ Ագարիա Ջուղայեցին 1616 թ. կազմել էր բարեփոխված և որոշակի ճշգրտումներով հայոց նոր տոմար, որն ավելի գործածական էր Պարսկաստանում և Հնդկաստանում, որտեղ մեծ քանակությամբ հայեր էին բնակվում: Թովմա Վանանդեցին նկատի ունենալով, որ Ամստերդամում բնակվում են ջուղայեցի և հնդկահայ մեծանուն առևտրականներ, հրատարակում է այս տոմարը: Տպագրված է վայելչագիր և գեղեցիկ հորինվածքով: 1698-1700 թվականներին Վանանդեցիները հրատարակում են «Նոր Կտակարանը»:

1702 թ. տպվում է **«Քնարանութին իմաստասիրական»** գիրքը, որ հրատարակվում է երկու հատորով: Այն հայերեն տպագիր առաջին գիրքն է քիմիայի, օդերևութաբանության և բնության վերաբերյալ: 1704 թ. Վանանդեցիները հրատարակում են **«Պաշտօն Աստուածային»** գիրքը, որը լատիներենից թարգմանել էր Ղուկաս Վանանդեցին: Այն պատկերազարդ, գեղեցիկ գիրք է: Գրքի առաջին երեսի պատկերը ներկայացնում է խորան՝ խաչելությամբ և Քրիստոսի վարշամակով, և երկու աշտանակով: Սեղանի վրա դրված են սկիհ, բաժակներ և Ավետարան: Քահանան պատկերված է ծնրադիր՝ սեղանի առջև: Պատկերի տակ գրվածքը՝ լատիներեն է: Քահանայի զգեստավորումը լատինական է: Կա 33 պատկեր, որոնք ներկայացնում են պատարագի տարբեր հատվածներ: Գիրքն ունի հիշատակարան:

1702-1703 թվականներին հրատարակվում է **«Շարակնոցը»**: «Շարակնոցը» հոգևոր երգերի շարական անվանող տեսակի ստեղծագործությունների ժողովածու է: Նրանում շարականները բերված են ոչ թե ըստ հեղինակների, այլ ըստ Հայոց եկեղեցու տոների, որոնք նվիրված են Հին և Նոր Կտակարանների, ինչպես նաև Ընդհանրական և Հայ եկեղեցական կյանքի տարբեր իրադարձություններին¹³: Յուրաքանչյուր տոնի կանոնը կազմված է տվյալ տոնին նվիրված շարականներից: Մի շարք կանոններից առաջ դրված են տոնի թեմային համահունչ փորագրանկարներ¹⁴:

1704 թ. Վանանդեցիները հրատարակում են **«Յոզնադիմի Աստուածուրանական բարոյական և քաղաքական իրողութեանց սահմանքը»**: 1705 թ. հրատարակվում է **«Ձեռաբանութիւն յերկինս»** կոչող գիրքը, որի հեղանակն է Յոհաննես Պոնան: Նա իր առաջին տպագրությունն

¹³ Վ. Դևրիկյան, Ոսկան Վարդապետ Երևանցի կյանքը և տպագրական գործունեությունը, Երևան 2015թ., էջ 71:

¹⁴ Նույն տեղում:

էր ունեցել Հռոմում 1671 թ.: 1704 և 1705 թվականներին Վանանդեցիները տպագրում են **«Համբոյր սրբութեան»** և **«Ժամագիրքը»** գրքերը:

Վանանդեցիներն Ամստերդամում հաստատվելով, զարգացրեցին ոչ միայն հայկական տպագրությունը, այլ մասամբ զարկ տվեցին նաև հայագիտության տարածմանը Եվրոպայում: Հայերենի ուսումը հրապուրեց մի քանի եվրոպացի նշանավոր արևելագետներին, որոնք հիմնականում օգտվում էին Ղուկաս Վանանդեցու դասերից: Դրանցից երկուսի գործունեությունը կապված է Ամստերդամի տպարանի հետ: Հարկ է նշել գերմանացի Շրեդերի կամ ինչպես ինքն է գրում հայերեն «Յոհաննես Սկրոդերեան»-ի «Գանձ Արամեան Լեզուի» վերնագիրը կրող գիրքը: Այն հայերեն լեզվի ուսումնասիրությանը նվիրված ընդարձակ երկասիրություն է: Շրեդերը եղավ առաջիններից մեկը, որ մաքրեց, լրացրեց և ամփոփեց իր նախորդների խառը և շատ անգամ սխալ տեղեկությունները հայ լեզվի և գրականության մասին, և 1711 թ. համաշխարհային հանրությանը ներկայացրեց իր **«Արամեան լեզուի գանձ»** գիրքը, որը իսկապես հայկական հանրագիտարան էր հայ բանասիրության մասին¹⁵: Նա իր այս գիրքը հրատարակել է Ամստերդամում, հոլանդական տպարանում, օգտագործելով Վանանդեցիների տված հայերեն տառերը: Շրեդերը այս երկասիրության **«Դաւանութիւն Հաւատոյ եկեղեցեաց Հայստանեայց»** բաժինը հրատարակել է Լոնդոնում 1780 թ.: Նա թողել է նաև երկու անտիպ երկասիրություն:

Շրեդերի չափ եթե ոչ ավելի նշանավոր է մյուս հայագետ Լակրոզ Գադիացին, որը բազմաթիվ լուրջ պատմական ուսումնասիրություններ ունի արևելագիտության վերաբերյալ: Նրա լավագույն աշխատանքը համարվում է տպարան Հաագում 1724 թ. հրատարակված «Քրիստոնյաների պատմությունը Հնդկաստանում» (Histoire du Christianisme des Indes) կոչվող աշխատությունը, և 1739 թ. Հոլանդիայի մայրաքաղաքում տպված «Քրիստոնյաների պատմությունը Եթիոպիայում և Հայաստանում» (Histoire du Christianisme d'Ethiopie et d'Armenia) գիրքը, և դրանցից բացի բազմաթիվ անտիպ հեղինակություններ, որոնցից մեծ մասը արևելյան լեզուների բառագրքեր են, որոնց թվում առաջին տեղն է գրավում հայ-լատին բառարանը¹⁶:

¹⁵ **Raymond H. Ke'vorkian**, Pre'face par Jean-Pierre Mahe', Catalogue des Incunables Arme'niens(1511/1695) ou chronique de l'imprimerie Arme'nienne. Gene've 1986, p XXVIII.

¹⁶ Յուշարձան, Մխիթարյան Միաբանություն, Վիեննա, 1911, էջ 181:

Վանանդեցիները Ամստերդամում կապեր են հաստատում ժամանակի մի քանի նշանավոր գիտնականների հետ: Նրանց էր այցելում հռչակավոր գերմանացի փիլիսոփա, մաթեմատիկոս Հոթֆրիդ Վիլհելմ Լայբնիցը:

1713-1717 թվականների ընթացքում Ղուկաս Վանանդեցին հաջորդաբար հրատարակում է *«Հայելի Աստուածաունչ Հին Կտակարանի» (1713թ.), «Պարզատուրար Ազարիայի» (1714թ.), «Մաղմուսարան» (1714-1715թթ.), «Պատկերասեր պատկերատես» (1716թ.), «Ժամագիրք» (1717թ.)* գրքերը:

Վանանդեցիների հրատարակությունները տպագրական արվեստի տեսակետից, մի քայլ առաջ էին նույնիսկ Ոսկանյան տպագիրների համեմատ: Ամստերդամի հայկական տպարանի առաջին շրջանում տպագրված գրքերի կեսից ավելին եկեղեցածիսական ժողովածուներ են, ինչը պատահական չէ: Հռոմը սկսել էր տպագրել հայոց եկեղեցածիսական գրքերը համապատասխան «սրբագրություններով և խմբագրություններով», այսինքն հարմարեցնելով Հռոմեական եկեղեցու ծեսին և դավանանքին: ԺԷ. դարի կեսին չէին բավականեցնում հայոց եկեղեցական արարողությունների ձեռագիր ընդօրինակությունները, ուստի վտանգ կար, որ Պապապական պրոպագանդայի հրատարակություններով կձևափոխվեր հայ ծեսը: Նույն այս վտանգով էր թելադրված նաև Վանանդեցու վարդապետի կողմից հիշյալ հրատարակությունը:

Այն բացառիկ տեղը, որ գրավում է Ամստերդամի օջախը հայ գրքի ու տպագրության պատմության մեջ, չի սահմանափակվում միայն աշխատողների անձնագոհ աշխատանքով, այլև աչքի է ընկնում գրական, հրատարակչական և տպագրական այն գործունեությամբ, որ հանդես են բերել օջախի անխոնջ մշակները հայ գրքի ու տպագրության զարգացման գործում: Այստեղից է սկսվում իր ամբողջության մեջ վերցված հայ տպագիր գրքի բազմաթվանդակ դառնալը, հրատարակվում են ժողովրդի համար պատմական, աշխարհագրական, դպրոցական–ուսումնական գրքեր: Առաջին անգամ այստեղ է հիմք դրվում մեր պատմիչների երկերի հրատարակության գործը:

Պետք է նշել, որ այս օջախի հրատարակած գրքերը համարյա չեն զիջում այդ ժամանակ մեծ զարգացում ունեցած եվրոպական գրքի տպագրական տեխնիկային: Ոսկան Երևանցու *«Աստվածաշնչի»* (1666 թ.) բարձրորակ տպագրությունը Ֆրանսիայի Լյուդովիկոս ԺԴ. թագավորի հատուկ ուշադրությանն ու հավանությանն է արժանանում: Այս օջախում է առաջին անգամ տպագրվել Առաքել Դավրիժեցու *«Պատմութիւն»*-ը (1669 թ.), որը ուշադրության արժանի է նրանով, որ հեղինակը մեր պատմիչներից

առաջինն էր, որի կենդանության օրոք տպագրվեց իր երկը (Դավրիժեցին մահացել է 1671 թ. էջմիածնում):

Եվ այսպես, Ամստերդամի «Սբ. Սարգիս և Սբ. Էջմիածին» տպարանը, որը վաթսուն տարուց ավելի արդյունավետ գործունեություն էր ունեցել, 1717 թ. բոլորովին լռեց: Դրանով Եվրոպայում երկար ժամանակ ընդհատվում է հայկական ինքնուրույն տպագրությունը, հայերեն գրքեր տպագրվում էին միայն իտալացիների տպարաններում: Եվրոպայում որևէ հայկական տպարան չի գործում, մինչև որ 1776 թ. Տրիեստում և 1789 թ. Վենետիկում բացվում են Մխիթարյանների գույգ տպարանները:

Մեծապես մխիթարական է գոնե այն փաստը, որ տպարանի գույքը՝ այսինքն տառերի ամբողջ կազմը, Ղուկասի մահից հետո, անցավ Մխիթարյան միաբանության ձեռքը և հետագայում ծառայեց Մխիթարյան տպարանի ծաղկմանը¹⁷:

Ինչպես տեսանք, հաղթահարելով բազմաբնույթ դժվարություններ, այնուամենայնիվ մի խումբ հայ մտավորականների հաջողվեց օտար ափերում հիմնադրել տպարան և հրատարակել կարևորագույն գրքեր, որոնց թվում հիշատակության են արժանի հատկապես հայերեն լեզվով առաջին տպագիր հայատառ քարտեզը, Աստվածաշունչը, առաջին Շարակնոցն ու աշխարհիկ առաջին գրքերը:

Ա. Սիմոնյան

Եպիսկոպոս Թովմա Վանանդեցին և նրա հրատարակությունները ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածն անդրադառնում է ԺԷ-ԺԸ դդ. Արևմտյան Եվրոպայի հայկական տպարաններից ամենանախնշանավորներից մեկին՝ Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամ քաղաքի հայ տպարանի գործունեությանը: Այդտեղ գրքերի տպագրությունն սկսվելով 1660 թվականից, առժամանակյա դադարից հետո շարունակվում է մինչև 1716 թ., ամբողջ 57 տարի, ապա դադարեց ընդմիջտ: Ամստերդամի հայկական տպարանի պատմության մեջ նշանակալի դեր է խաղացել Վանանդեցիների տպարանը, որի հիմնադիրը հայ տպագրության պատմության նշանավոր դեմքերից մեկը, Գողթն գավառի Սբ. Խաչ վանքի եպիսկոպոս՝ Թովմա Վանանդեցին Նուրիջանյանն

¹⁷ Պոդոսեան Յովհ., Հոլանտայի հայկական տպարանները, Արեգակ, Լոնդոն, 1966, Հ 28, էջ 4-5:

¹⁸ Վ. Դևրիկյան, Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, Մասն Գ, Սուրբ Ղազարից Սուրբ Էջմիածին, 18-րդ դար, Երևան 2016, էջ 84:

է: 1695-1700թթ. ընթացքում Թովմա Վանանդեցին հրատարակում է 14 գրիք, որոնք աչքի են ընկնում իրենց հարուստ գեղարվեստական հարդարանքով:

А. Симонян

Епископ Товма Ванандеци и его издания

РЕЗЮМЕ

В статье упоминается деятельность одного из самых известных Армянских издательств, расположенных в Западной Европе, в столице Голландии, Амстердаме. Здесь публикация книг, начиная с 1660 года, до временной паузы снова продолжалась до 1716 года, всего на 57 лет. В истории амстердамской печатни издательской работой выделяется церкви епископоса Святого Креста провинции Гохт Товма Ванандеци Нуричяна. В 1695 году Товма Ванандеци назначается руководителем амстердамского издательства. За десяти лет 1695-1705 гг. Товма Ванандеци издает 14 книг. Эти книги отличались своими гравированными изображениями, которые выделяются тематическими гравированными изображениями и иллюстрированием.

A.Simonyan

Bishop Tovma Vanandetsi and his publications.

SUMMARY

The article refers to the activity of one of the most famous Armenian publishing houses located in the Western Europe, in the capital of Holland, Amsterdam. Here the publishing of books beginning from 1660, then stopped temporarily and soon continued till 1716, for almost 57 years and then finished for ever. In the history of the Amsterdam's publishing house. Tovma Vanandetsi Nurijanyan, the bishop of the Saint Khach monestry of the Gokhten region is famous for his publisher's activities. In 1695 Tovma Vanandetsi took charge of the management of the Amsterdams publishing house. During approximately ten years (1695-1705) Tovma Vanandetsi published 14 books.

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՍԵՓՑԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ
ՀՏՆ 821.19.0

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ԱՌ ՀԵՂԳ ԱՇԱԿԵՐՏՍՈՒՄՆԵՐԻ

ՅՈՒՍՈՒՄՆ ԵՒ ՀՊԱՐՏՍ ԳՈՒ» ԹՈՒՂԹԸ

(փորձ նոր թարգմանության)

Բանալի բառեր և արտահայտություններ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր, չափածո թուղթ, ձեռագրական տարբերություններ, քնական բնագիր, կրթություն, գիտություն, սովորող, սովորողին ներկայացվող կրթական պահանջներ:

Ключевые слова и выражения: Матенадаран им. Маштоца, рукопись, послание в стихах, рукописные разницы, критический текст, образование, наука, учащийся, образовательные требования, предъявляемые учащемуся.

Key words and expressions: Mashtots Matenadaran, manuscript, epistle in verse, manuscript differences, critical text, instruction, science, pupil, educational requirements for the pupil.

Անվանի լեզվաբան Հր. Աճառյանը, խոսելով Գրիգոր Մագիստրոսի «անիմանալի» չափածո թղթերի մասին, գրում է. «ԺԱ. դարու հեղինակ խրթնախօսն Մագիստրոս՝ չորս փոքր ոտանառք գրութիւն թողուցած է մեզի, որոնք իրենց առաջին բառերու համաձայն՝ կը կոչուին 1. Գամագտական, 2. Սրգուզ փանաք, 3. Գանգին բախին, 4. Կէտ կարթիւ (տպուած վերջին անգամ Աղէքսանդրապօլ 1910, Կ. Կոստանեանցի հրատարակութեամբ, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 133-135 եւ 236-240): Եգիպտական մեհենագիր գրութեանց նման անիմանալի բաներ էին անոնք...»¹: Ծանոթ լինելով Նորայր Բյուզանդացու՝ «Գամագտականի» առաջին մասի թարգմանությանը, «Քաջալերվելով» Գ. Մենեվիշյանի՝ նույն թղթի ամբողջական լուծումից՝ Հր. Աճառյանը ձեռնարկեց «...լուծելու Մագիստրոսի երկրորդ անիմանալի գրութիւնը՝ Սրգուզ փանաքը»²: Փորձենք մեկնաբանել Գրիգոր Մագիստրոսի «Գանգին բախին...» տողերով սկսվող «Առ հեղգ աշակերտս յուսումն եւ

¹ «Հանդէս ամսօրեայ», թիւ 5-6, Մայիս-Յունիս, Երեսնուեօթներորդ տարի, Վիեննա, 1923, էջ 241:

² Նույն տեղում, էջ 242:

հպարտս գոլ» թուղթը՝ իհարկե ներկայացնելով վերջինիս՝ Կ. Կոստանյանցի և Մաշտոցյան մատենադարանի մի քանի ձեռագիր ժողովածուներում եղած տարբերակների համեմատական բնութագիրը: Տարբերությունները բնականաբար անխուսափելի են և ունեն էական նշանակություն թուղթը հասկանալու տեսակետից, որն էլ իր հերթին հնարավորություն կտա առաջարկելու թղթի ավելի ճշգրիտ բնագիրը: Հետաքրքիր է, որ որոշ ձեռագրերում այն դրված է «Մրգուզ փանաքի» անմիջապես շարունակությամբ՝ «Նորին առ հեղգս ոմանս աշակերտացն որք ուսանին զիմաստութիւնս»³ խորագրի ներքո: Ձեռագրերից մեկում էլ «Նորին Գրիգորի Առ հեղգ աշակերտս յուսումն և հպարտ գոլ» խորագրի վերնի հատվածում կետեր են դրված, իսկ էջի վերջում որպես լրացում վերնագրին՝ գրված է «Գրիգորի ասացեալ ի գովութիւն և ի յագուտ ուսումնասրաց»⁴:

ԱՌ ՀԵՂԳ ԱՇԱԿԵՐՏՍ ՅՈՒՍՈՒՄՆ ԵՒ ՀՊԱՐՏՍ ԳՈՒՆ՝

³ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1741, էջ 398բ-399բ, ձեռ. № 3293, թերթ 212-214, ձեռ. № 4232, թերթ 321-322:

⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1805, թերթ 68բ:

⁵ A- ձեռ. № 739-1631թ.

B- ձեռ. № 874-1764-1765թթ.

C- ձեռ. № 1739-1646թ.

D- ձեռ. № 1740-1632թ.

E- ձեռ. № 1741-1651թ.

F- ձեռ. № 1744-ԺԷ դ. (1637-ից առաջ)

G- ձեռ. № 1805- ԺԷ դ.

H- ձեռ. № 1813- ԺԷ դ.

I- ձեռ. № 3062-1765-1767թթ.

J- ձեռ. № 3068- ԺԷ դ.

K- ձեռ. № 3130- ԺԷ դ.

L- ձեռ. № 3293- ԺԸ դ.

M- ձեռ. № 3914-1634թ.

N- ձեռ. № 4232- ԺԷ դ.

O- Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Վիեննա, 1910:

1 L գեղանամ

2 A պարսի B պարսի CDFGIKMO պարսի EJLN պարսալ ABCDEGIKLN իւրատական F իւրատական M իւրական ABCDEGIJKLNO աճապարեալ FM աճապարեալ

3 ABDFGKM ի հիւսկիցն C ի հիւսքիցն EIJLNO ի հուսկիցն H ի հիւսիցն ABCDEFGIJKLMN շահատակեալ H հատակեալ

4 ABCEFGHIJKLMO գերապանձ D գերատար N գերապանձ

5 ACDG որցել BJ որցիալ EFHILMNO որցեալ

7 AEFHJLKNO յայսմէ BCDGI յայսմանէ FK յարիօրաց N յարիացը վրիցդ

8 ABCFEFGHIJKLMO համարեա N հրամեա

-
- 1 **Գ**անգին բախին հասեալ՝ գեղազանամ քեզ ճոխացեալ.
 Բաբայական պայքար պարսի իւրական աճապարեալ.
 Ի հիւսկիցն ի բա՛ց քեցեալ քեզ շոհանամ շահատակեալ.
 Գերապանձ միտ մակտառեալ ոտանաւոր առասացեալ.
- 5 Որոնեմ որցեալ կերտեալ ճեմարանիս էպիդեմեալ.
 Բախարար Ատտիկեցի Ելլադացոց վարժապետեալ.
 Իսկ թէ յայսմէ ոչ պատկառեալ կամ յարհարացն զարհուրեալ.
 Համարեա՛ դու զքեզ քեցեալ, ձաղեալ, ծեծեալ, ի բաց վարեալ.
 Եղկելի, սատանական, ծոյլ, մեղկասէր, վատ, չամոքեալ.
- 10 Ղեկավար գէթ համարեալ ի կոհակաց ոչ զահանդեալ.
 Գեստրաս դատարկաձայն ապաշնորհաց բախտի հասեալ.
 Սողոսկեալ ստաբանական մակացութեանցն ոչ կարօտեալ:
 Հի՛մ ինձ այսոսիկ ո՛չ դժուարել, որ այսպիսում ոչ հասեալք
 արհեստից
 եւ մակացութեանց գիւտի, մինչ զի զկարծր զվճիտ կոփեալ բանս,
 զանգեզ եւ
- 15 անգձական զհոծ, խոշոր կերտացուցանեմ սակս լսողացդ. զի մի՛
 լարծեալ եւ
-

- 9 ABKN սատանական CDEFHIJKLMO տատանական G նախապէս գրված էր
սատանական, այնուհետև լուսանցքում գրված էր *տատանական* տարբերակը
 ABCDEFGIJKLMN մեղկասէր H մեղասաւեր
- 10 H գէտ ABCDFGHIJKM զահանդեալ EN զահընդեալ L զահնդեալ
- 11 ACDFJKNL դատարկայած B դատարկաձայն EGHIO դադարկայած M դասարկայած
 ABCDFGHKM վատաշնորհաց EIJLNO ապաշնորհաց
- 14 ACDFGHKM զանգէն B զանգին EIJO զանգեզ L զանգել
- 15 ABCDFHKM զհոծ EGJLN զհոյծ O հոյծ A զիմ լարծոտ B լարծուալ CGJN զի մի՛
 լարծոտ EI զի մի՛ լարծոտ DFHM զի մի լարծուտ K զիմ լարծուտ L
 զի մի լարծոտ O զի մի՛ զլարծոտ
- 16 ABCDEFGIJKMN իմալակեալ HL ի մալակեալ ABF լակոնաց EJLN դակովնացի
- 17 O գմեալ ABEF իբրև O իբրու A անդամաբէկ B անդամբք CDEFGHIJKLMNO
 անդամաբէկ
- 18 A սատրելով B սադրիլով CDEFGHIJKLMN սադրելով O սատարելով
- 19 ABCDEFGIJKLN պարսաւական H պատուական M պարսական O պարառական A ի
 Հոմերոնէ BCDGFKHM ի Հոմերոնէն EIJLN ի Հոմերովնէն O ի Հոմերովնին
- 20 B սիպիական O սեփական B զգովասանութիւն FHKJO զգովասանականն L
 զգոգասանականն M զգովասանական ACDK վեսիդ B վեսմիդ EHIJLNO վեստիդ FM
 գրված չէ *վեստիդ Վահրամայ*, ավարտվում է *զգովասանականն վեհիցն* G վեստիդ

- ի մալակեալ ողորկատեսիլ ապակատարագ, որ զօրէն լակոնացի վիմացն սահեալք լարծին փայառական եւ լինիցին գմեալ իբրն զխաղքն անդամաբեկ:
- Վասն որոյ դիւրահաս զօտանաւորս սկսայ կատարել, սուղ սաղրելով
- պատուական ի Հոմերովնէն անվարժասէր եւ հեղգից մեղկեալ մանկանց
- 20 որպէս զգովասանութիւն վեհիդ իմոյ սիպիական, վեստիդ Վահրամայ:

Ներկայացնենք թուղթը գրաբարից ժամանակակից հայերենի վերածելու մեր փորձը.

ՈՒՍՄԱՆ ՄԵՋ ԾՈՅԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՒ ԲՈԼՈՐ ԲԱՐՁՐԱՄԻՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Ձայնիս շառաչունին հասնելով՝ վայելուչ կերպով քեզ [գիտելիքով] եմ զարդարում,

Իբրն վարդապետ սեփական/խրատական պարսաքարով կռիվ շտապեցի [սկսել],

Որ կապանքներից քեզ ազատեմ, [միտքդ] լուսավորելով առաջ վազեմ,

Սաստիկ պանծալի միտք հղանալով՝ տաղ ասացի,

Ստեղծելով, վեր հանելով, դպրոցներ կառուցելով՝ դարձյալ պրպտումների մեջ եմ,

Աշակերտեցի հելլենական դպրոցի նշանավոր փիլիսոփաներին,

Իսկ թե այս ամենից չպատկառես կամ սաստիկ վախից զարհուրես,

Համարիր ինքդ քեզ երկատված, ծաղրված, խայտառակված, հեռու շարտված,

Ողորմելի, դիվական, ծուլ թուլամորթ, արհամարհված, անմխիթար:

Գոնե առաջնորդ համարվելով՝ ալիքիներից մի վախվախիր,

Դատարկաձայն հրապուրող ես, անշնորհք/ապերախտ բախտի հասար,

Մխալական ու փուչ գիտություններին կարոտ չեղար:

Մի՞թե ինձ համար դժվար չի, որ մինչ լողներիդ համար ամուր և պարզ, անարատ և անբիծ, ճարտար և անպաճույճ հղկում եմ խոսքս՝ այսպիսով չհասաք գիտության ու արվեստի հանճարին. որպէս մի դյուրին ու պարզունակ, ջինջ ու անսովեր, որ լակոնական հիմունքների օրինաչափությունը տատանելով/խախտելով՝ սայթաքում են և լինում իբր ննջեցյալ ու խեղված խայտառակվածներ: Ահա թե ինչու սկսեցի շարադրել հեշտ ընկալելի ոտանավորներ՝ քիչ թելադրվելով պատվական Հոմերոսից՝ գթալով անվարժասէր և ծուլ աշակերտներին, որպէս ներքող վեհիդ, իմ իշխան Վահրամ:

Խոսենք մեր կատարած թարգմանության ինչ-ինչ հարցերի շուրջ.

- 1) *Գանգին բախին հասեալ գեղազանամ քեզ ճոխացեալ* տողը բավականին բարդ է հասկանալ: Գանգին նշանակում է «ձայն, արձագանք»⁶, «բախին/բախումն»՝ «ընդհարումն, թնդին»⁷, «գեղազան»՝ «գեղեցիկ, պայծառ, վայելուչ»⁸, №3293 ձեռագրում՝ *գեղանամ*⁹ տարբերակին ենք հանդիպում: Ճոխանալ՝ «մեծանալ, լիանալ, փարթամանալ, զարդարիլ»¹⁰, այսինքն՝ *ձայնի շառաչունին, թնդունին* կամ *պայթյունին* հասնելով, սա նշանակում է, որ իր ուժերի գերլարումով, *կոկորդ պատռելով*, որովհետև իր ձայնը տեղ հասցնելու խնդիր ուներ, Մագիստրոսը փորձում է ուսման մեջ թերացողներին ու բարձրամիտ մարդկաց հարստացնել՝ զիտելիքով զինելու իմաստով, այնպես, ինչպես պատշաճ է իրեն՝ որպես մանկավարժի: Երբ Մագիստրոսն ասում է *«գանգին բախին հասեալ»*, ուզում է պատկերավոր ձևով նկարագրել իր տքնաջան աշխատանքը, հետաքրքիր է, որ այս արտահայտությանը մոտ մի ուրիշ արտահայտության ևս հանդիպել ենք Մագիստրոսի մոտ, այն էլ «Պատասխանի տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի ի Ժամանակի քանզի խնդրեաց յաշակերտեաց իւրոց զոմանս, զԲասիլն եւ զԵղիսէ» թղթում, այստեղ վերջինս գրում է. «...փեռեկեցի զգայարանս հանճարոյ»¹¹, *փեռեկեմ/եցի* նշանակում է՝ «պատառել, հատանել, ճեղքել»¹²:
- 2) *Բարայական*՝ հայտնի է նաև *բաբունական* ձևով. նշանակում է՝ «վարդապետական, տիրական, աստվածապետական»¹³:
- 3) *Պարսի իւրական*. ինչպես տեսանք ձեռագրերում հանդիպում ենք նաև *պարիւ, պարսաւ, պարսի* տարբերակներին, բնագրում ունի *պարսատիկի* իմաստը. «փոկ կամ հիւսուած թաթաչափ, յոր ամփոփի քար ողորկ, և ի պտոյտքէն ի ձեռաց թողեալ լինի մի ծայր չուանին, որով թռուցեալ քարն ի միջոյ խաղայ ուժգին ի նպատակ»¹⁴: Մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում,

⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի/Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրսէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան/Տպարան ի Սրբոյն Ղազարու, Հ. 1, Վենետիկ, 1836, էջ 528:

⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 424:

⁸ Նույն տեղում, էջ 534:

⁹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. №3293, թերթ 213:

¹⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի/Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրսէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան/Տպարան ի Սրբոյն Ղազարու, Հ. 2, Վենետիկ, 1837, էջ 185:

¹¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3068, թերթ 96բ:

¹² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 940:

¹³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 902:

¹⁴ Նույն տեղում, էջ 639:

ինչպես նաև Կոստանյանցի հրատարակած բնագրում հանդիպում ենք *խրատական* բառին և միայն № 1744 ձեռագրում ընդօրինակված է *խրատական* տարբերակը: *Իրատական* բառն անծանոթ է, բառարաններում չի հիշված, կարող է հավանական լինել *խրական* բառի գործածությունը, որ նշանակում է՝ «որ ինչ է իւր սեպհական, իւրային, իւրոյին, իւր, իւրոյ»¹⁵: Բնագրում խոսքը կարող է լինել սեփական պարսատիկով կոիվ սկսած վարդապետի մասին՝ բնականաբար փոխաբերական իմաստով: Բովանդակային առումով այն համընկնում է նաև խրատական պարսատիկին, որը պատկանում է կոիվ սկսած վարդապետին:

- 4) *Ի հիւսկիցն ի բաց քեցեալ քեզ շոհանամ շահատակեալ* տողում «շոհանալ» բառի ենթիմաստները հայտնի են «Գամագտականի» թարգմանության մեջ՝ «ճեմիմ, յաղթեալ, ճոհճոհանալ, ճոխանալ»¹⁶: Հիշենք, որ Մանուկ Աբեղյանն այս բառը դիտել հնացած և գավառական բառերի շարքում, որոնց իմաստը դժվար է հասկանալ¹⁷: Մեր թարգմանության մեջ այն գիտելիքով ճոխացնելու, հարստացնելու իմաստն ունի, այսինքն՝ միտքը լուսավորելու ենթիմաստն ենք առաջ բերել: «Հիւսակ» թարգմանվում է «հիւսք, հիւսեալ ինչ, զոդ, կապ»¹⁸: «Ի բաց» նշանակում է՝ «բացեալ, անփակ, անծածկելի»¹⁹, իսկ «քեցեմ»՝ «անջատել, զատուցանել»²⁰, այսինքն՝ այստեղ խոսքը միանշանակ միտքը կապանքներից ազատելու մասին է: Շահատակիմ՝ «համարձակ արշաւել, յարձակիլ, յառաջ խաղալ, սուրալ»²¹:
- 5) *Գերապանձ*՝ «կարի պանծալի, փառաւոր, շքեղ»²²:
- 6) *Առասեմ/ասացի*՝ «կոչել, յորջորջել, անուանել, ասել»²³:
- 7) *Որցեմ*՝ «ի վեր յարուցանել, ի բաց ոստուցանել, ի վեր վազել, յառնել»²⁴
- 8) *Եպիդեմել*՝ «կառուցել, կերտել»²⁵: Հր. Աճառյանն իր «Հայերէն նոր բառեր Գրիգոր Մագիստրոսի թղթերուն մէջ» հոդվածում անդրադարձել է այս բառին՝ «շինել, կերտել, կառուցանել»²⁶:

¹⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ, 875:

¹⁶ Հ. Գաբրիել Մենվիշեան, Գրիգորի Մագիստրոսի «Գամագտականի» ամբողջական լուծումը, էջ 21-22:

¹⁷ Մանուկ Աբեղյան, Երկեր, Դ, Հայոց հին գրականության պատմություն, Հ. Դ, էջ 46:

¹⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ.2, էջ 102:

¹⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 469:

²⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 1005:

²¹ Նույն տեղում, էջ 458:

²² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 546:

²³ Նույն տեղում, էջ 292:

²⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 538:

- 9) Երբ Մագիստրոսը գրում է *«Բախարար Ատտիկեցի Ելլադացոց վարժապետեալ»*, սրանով ուզում է ասել, որ հետևել է հունական, արենական դպրության սկզբունքներին: Բախարար նշանակում է «դասապետ»²⁷, այսինքն՝ Մագիստրոսը խոսում է այն մասին, որ հունական դպրոցի առաջատար փիլիսոփաների հետևորդներից է: Նախորդող «Առ վեստն Վահրամ, որդին իւր» չափածո թղթում նա գրում է. «Առասանութիւնս Պիթագորեան եւ Պդատոնական եւ Ստագիրացոյն իբրու զստինս դիեցեալ, մինչ ի տարերս տակաւին տարբերէիր, տենչացեալ ըղձայի քեզ արբուցանել անդանդադ»²⁸: Ուրեմն մենք տեսնում ենք, թե որտեղից է սնվում Մագիստրոսի ստեղծագործությունը, և նա դժգոհում է, որ հասկանալի լինելու համար իր լեզուն պիտի հարմարեցնի ծույլերի պահանջներին՝ այսպիսով «սուղ» հետևելով Հոմերոսին: Մագիստրոսը փորձում է բացատրել, որ եթե պարզեցնի իր լեզուն ու դարձնի հեշտ ընկալելի, այդ ճանապարհը չի տանի գիտության ու արվեստի հանճարին²⁹, դա մի ճանապարհ է, որը առավել կխորացնի անվարժասեր աշակերտների մեջ տգիտության արմատները: Դարձյալ նախորդող թղթում մեր հեղինակը ունի նույնպիսի մտահոգություն. «...եւ յանուսումնութենէ արիական ջանիւ նահանջեալ եւ յատտիկեցի կրթմունսն»³⁰, ուրեմն տգիտությունից է, որ «արիական ջանիւ», թուլանում է «յատտիկեցի կրթմունսն»: Իսկ եթե ծույլերը հաղթահարեն իրենց տգիտությունն ու ջանքեր գործադրեն, անպայմանորեն կհաղթահարեն և իր լեզվի դժվարությունները, մանավանդ որ ինքը որպես մանկավարժ անդուլ աշխատանք է կատարել. սա է մեր հեղինակի ասելիքը:
- 10) *Քեցեալ/քեց*՝ «զատեալ, որոշեալ»³¹:
- 11) *Արհաւիրք/ւրաց*՝ «երկիւղ, սոսկումն, զարհուրանք»³²:
- 12) *Համարիմ*՝ «կարծել, դատել»³³:

²⁵ Գրաբարի բառարան, Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, էջ 101:

²⁶ Հր. Աճառեան, Հայերէն նոր բառեր հին մատենագրության մէջ, Հ.Բ. Վենետիկ, 1926, էջ 181:

²⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ, 598:

²⁸ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 874, թերթ 202ա:

²⁹ «...արհեստից եւ մակացութեանց գիտի». այսպիսի արտահայտություն գտնում ենք նաև Մագիստրոսի պոեմում՝ «Զգիւտն իմաստութեան և զարուեստի նոր հանճարին» (տե՛ս ձեռ.՝ № 1741, թերթ 292ա):

³⁰ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 874, թերթ 202ա:

³¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 1005:

³² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 364:

-
- 13) *Մատանական*՝ «դիական»³⁴, Կոստանյանցի հրատարակության մեջ եղած *տատանական* ձևը չենք ընտրել, որովհետև վարանելու, երկմտելու իմաստն ունի, իսկ այդ տեսակետից Մագիստրոսն արդեն բնութագրական այլ բառ ընտրել էր, խոսքը *քեցեալի* մասին է:
- 14) *Կոհակ*՝ «ալիք»³⁵:
- 15) *Ջահանդիմ*՝ «զարհուրիլ, խրտչել»³⁶:
- 16) *Գեստրաս դատարկաձայն*՝ ձեռագրերում հանդիպում ենք նաև *դատարկաձայն* տարբերակին. Կոստանյանցի մոտ *դատարկայած* ձևին ենք հանդիպում՝ «դատարկաշրջիկ, ընդ վայր յածեալ»³⁷, իսկ *դատարկաձայնը* կարծում ենք հենց *դատարկաբանն* է, որ նշանակում է՝ «վայրախօս, զրախօս, ունայնաբան, անգործ, փճախօս»³⁸: *Գեստրաս*՝ «որսորդ»³⁹, բնագրում ունի փոխաբերական իմաստ՝ *դատարկաձայն հրապուրող ես*:
- 17) *Սողոսկել*՝ «սայթաքել, գայթել»⁴⁰, *գայթեմ*՝ «սխալիլ»⁴¹, *սողոսկեալ* ունի «սխալական» իմաստը:
- 18) *Անգեգ*՝ «անկիծ և անգծելի, անարատ, անբիծ, անաղտ, վճիտ, սեռն և սերտ»⁴²:
- 19) *Ի մալեալ*. ձեռագրերի մեծ մասում նույնպես հանդիպում է այս տարբերակը, որն անծանոթ է, ենթադրում ենք, որ հավանական է *մալեալ* ձևը՝ «մեղմել և կակղել, ճնշել, տրորել, ճմլել, մաշել, նուաճել»⁴³:
- 20) *Սահեմ/սահիմ*՝ «տարուբերիլ, տատանիլ, շարժիլ, յուզիլ»⁴⁴:
- 21) *Գմեալ*. մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում այս բառը բացակայում է, բառարանում կա *գմեմ* ձևը և նշանակում է՝ «ննջեցուցանել»⁴⁵:
- 22) *Հակոնացի*՝ «լակոնական»⁴⁶:
-

³³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 23:

³⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. №4232, Թերթ 698:

³⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 1110:

³⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 710:

³⁷ Նույն տեղում, էջ 601:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում, էջ 540:

⁴⁰ Նույն տեղում, էջ 727:

⁴¹ Նույն տեղում, էջ 527:

⁴² Նույն տեղում, էջ 125:

⁴³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 189:

⁴⁴ Նույն տեղում, էջ 687:

⁴⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 563:

⁴⁶ Նույն տեղում, էջ 877:

- 23) Փայտական՝ «ոտնառական»⁴⁷, իսկ *ոտնառականը*՝ «կասեցուցիչ ոտից»⁴⁸, *կասեցուցիչը*՝ «խափանիչ»⁴⁹:
- 24) *Ջխաղքն անդամաբեկ. խաղք/խաղ*՝ «ամօթալից, այլան, ծանակ»⁵⁰, անդամաբեկ՝ «բեկեալ անդամօք ինչ, իւեղ»⁵¹:
- 25) *Սաղրեմ*՝ «թելադիր լինել»⁵²:
- 26) *Պատուական*՝ «պատուելի, պատուաւոր, փառաւոր, պատկառելի»⁵³: Նշենք, որ Կոստանյանցի հրատարակության մեջ *պարտական* բառին ենք հանդիպում, «որ պարառէ, պարագրօղ, բովանդակիչ»⁵⁴, ձեռագրերում կա նաև *պարսաւական* տարբերակը, որ նշանակում է «անարգական»⁵⁵: *Պատուական* տարբերակը վերցրել ենք №1813 ձեռագրից: Բնագրում խոսքը պատվելի, պատկառելի Հոմերոսի մասին է:

Ինչպես տեսնում ենք Գրիգոր Մագիստրոսը չափածո քերթվածում ներկայացնում է իր պահանջները գիտության ու կրթության ասպարեզ ոտք դրած սովորողին՝ նշելով, թե ճանապարհը դժվար է, սակայն համառ ու քաջ մարդու համար հաղթահարելի: Չափածո խոսքին հետևում է արձակ մեկնաբանությունը, որից պարզ երևում է Մագիստրոսի՝ Հոմերոսի նկատմամբ ունեցած հիացումը և աշակերտների մեջ դեպի վեհը, կատարյալը ձգտում առաջացնելու մղումը:

Հ. Հովսեփյան

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ԱՌ ՀԵՂԳ ԱՇԱԿԵՐՏՍ ՅՈՒՍՈՒՄՆ ԵՒ

ՀՊԱՐՏՍ ԳՈՒԼ» ԹՈՒՂԹԸ

(փորձ նոր թարգմանության)

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացրել ենք Գրիգոր Մագիստրոսի «Առ հեղգ աշակերտս յուսումն եւ հպարտս գոլ» թղթի՝ Կ. Կոստանյանցի և Մաշտոցյան մատենադարանի ձեռագրերում եղած տարբերակների համեմատական բնութագիրը: Տարբերությունները բնականաբար անխուսափելի են և ունեն էական նշանակություն թուղթը հասկանալու տեսակետից, որն էլ իր հերթին առաջարկելով թղթի ավելի ճշգրիտ

⁴⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 927:

⁴⁸ Նույն տեղում, էջ 525:

⁴⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 1, էջ 1059:

⁵⁰ Նույն տեղում, էջ 917:

⁵¹ Նույն տեղում, էջ 130:

⁵² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Հ. 2, էջ 683:

⁵³ Նույն տեղում, էջ 618:

⁵⁴ Նույն տեղում, էջ 629:

⁵⁵ Նույն տեղում, էջ 639:

տարբերակ: Վեր ենք հանել չափածո քերթվածում ներկայացված՝ Գրիգոր Մագիստրոսի պահանջները գիտության և կրթության ասպարեզ ոտք դրած սովորողի նկատմամբ: Չափածո խոսքին հետևող արձակ մեկնաբանությունից պարզ երևում է Մագիստրոսի՝ Հոմերոսի նկատմամբ ունեցած հիացումը և աշակերտների մեջ դեպի վեհը, կատարյալը ձգտում առաջացնելու մղումը: Իննարվորություն է տվել կազմելու քննական բնագիրը՝ այսպիսով

А. ОВСЕПЯН

**ПОСЛАНИЕ ГРИГОРА МАГИСТРОСА «ДЛЯ УЧЕНИКОВ, ЛЕНИВЫХ
В УЧЕНИИ, И ВСЕХ ВЫСОКОМЕРНЫХ»**

(попытка нового перевода)

РЕЗЮМЕ

В статье представляем сравнительную характеристику содержащихся у К. Костанянца и в рукописях Матенадарана вариантов послания Григора Магистроса «Для учеников, ленивых в учении, и всех высокомерных». Естественно, различия неизбежны и представляют существенное значение для понимания послания, что дало, в свою очередь, возможность составить критический текст последнего. Мы выявили требования, предъявляемые Григором Магистросом в послании в стихах учащемуся, вступившему на стезю науки и образования. В толковании в прозе, которое следует за стихами, ясно видны восхищение Григора Магистроса Гомером и желание породить в учениках стремление к высшему.

Н. HOVSEPYAN

**EPISTLE OF GRIGOR MAGISTROS "FOR STUDENTS LAZY IN STUDY
AND ALL ARROGANT PEOPLE"**

(Attempt of a new translation)

SUMMARY

In the article we present the comparative characteristics of the versions of the epistle "For Students Lazy in Study and all Arrogant People" by Grigor Magistros, contained in K. Kostaniant's work and the manuscripts of the Mesrop Mashtots Matenadaran. Naturally, the differences are inevitable and are essential for the understanding of the epistle, which, in its turn, made it possible to compile a critical text of the latter. We have identified the requirements of Grigor Magistros in his verse epistle for a pupil who has entered the path of science and education. In the interpretation in prose, which follows the verses, the admiration of Grigor Magistros for Homer is obvious, as well as his desire to create in pupils aspiration for the highest.

ՆԱԴԻՆԵ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետ
ՀՏԴ 821.19.0:398 (=19)

ՄԻՐՈ ՄՈՏԻՎԸ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Բանալի բառեր. Կոմիտաս, Մանուկ Աբեղյան, սիրերգ, զգայական պատկերավորում, հուզականություն, ապրում, սեր, կարոտ, սպասում:

Ключевые слова: Комитас, Манук Абегиан, песня любви, чувственное изображение, эмоциональность, переживание, любовь, ностальгия, ожидание.

Key words: Komitas, Manuk Abeghian, love song, sensual depiction, emotionality, feeling, love, nostalgia, waiting.

Հայ երգային բանահյուսությունը հարուստ է ու բազմաբովանդակ: Երգաշարերի թեմատիկան արտահայտում է մարդկային ամենանուրբ զգացողություններն ու ապրումները: Այս են վկայում հատկապես սիրո խաղիկները, որ հավաքագրել ու խմբագրել են Մանուկ Աբեղյանն ու Կոմիտասը «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանում¹: Այն ժողովրդի կյանքի պատմությունն է, ուր բազմակողմանիորեն արտացոլված է հայ մարդն իր զգայական աշխարհով:

Ժողովածուի մաս կազմող սիրո խաղիկները պատկերում են ժողովրդական սովորությունները, ժամանակի ու միջավայրի բարքերը: Սրանք բոլորն էլ հանպատրաստից հորինված ստեղծագործություններ են, որոնք արտահայտել են հորինող երգչի վայրկենապես ծնված, բուռնական տպավորությամբ առաջացած զգացմունքը: Այս երգերում գտնում ենք արտահայտչամիջոցների պարզություն, մտածողության խորություն և զգացմունքի նրբություն, որ պատիվ կարող է բերել ամենանուրբ սիրերգակին: Քնարական այս երգերին, խաղիկներին հիմնականում բնորոշ են սեղմ, փոքր ծավալը, կարճ տողերն ու տները, բազմազան, թեթև շնչով հանգավորման և կրկնակների բազմաթիվ ձևերը, հատկապես

¹ Այս երգարանը տպագրվել է առանձին-առանձին գրքույկներով, որոնցից ամեն մեկն ամփոփում է 50 երգ. «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարան I հիսնյակ՝ տպագրված 1903թ. Վաղարշապատում և II հիսնյակ՝ տպագրված 1905թ. նույնպես Վաղարշապատում: Մենք մեր հոդվածում մեջբերված երգերի հղումները կատարել ենք ըստ հիսնյակների:

ռիթմիկ հանգավորման զանազան տեսակները, երաժշտական հատուկ հնչեղությունը, անպաճույճ ու անկաշկանդ ոճը: Մրանց տաղաչափական հատկանիշների բացատրությունը տալիս է Մ.Աբեղյանը²: Ըստ այդմ, խաղերը լինում են երկտող, եռատող և քառատող, իսկ վանկերի քանակի, տաղաչափական հատվածի և հանգերի դասավորությամբ՝ բազմազան են: Երգերի տաղաչափական էական հատկանիշները բացահայտելով Աբեղյանը հանգում է այն եզրակացության, թե էական տարբերություն չկա մեր ժողովրդական և գրական բանաստեղծության չափերի միջև, դեռ ավելին, ժողովրդական երգի հանգերն ավելի զարգացած ու հնչուն է համարում, քան գրականը: Խաղը քնարերգություն է, այսինքն մի բանաստեղծություն, որ արտահայտում է գլխավորապես երգչի զգացմունքն ու մտածմունքը, նրա ներքին ապրումները, առանձնապես սիրո զգացմունքն իր զանազան վիճակներով: Բայց և անկախ իրենց թեմատիկ-սիրային և ժանրային-քնարական բնույթից, դրանք հնարավորության սահմանում անդրադարձել են ժողովրդի կյանքի տարբեր իրողությունների: Օրինակ.

Արագը հեշտացել ա,

Ճամբեքը կոշտացել ա.

Խաբար տարեք իմ յարին,-

Առնողս շատացել ա³:

Այս խաղի թեմատիկական սիրային է, բայց և պարունակում է ժողովրդի կյանքի վերաբերող յուրօրինակ իրողություն: Խաղի երկու մասի ներքին կապն ըմբռնելը դժվար է առանց գյուղական կյանքի ծանոթության, ուր ժողովրդական կյանքի ու սովորության, տեղական բարքերի գծեր են նշված: Ըստ մեր կարծիքի՝ խաղի մասերի միջև ոչ մի կապ չկա, բայց երբ հարցնենք Արագի վրա բնակվողներին, նրանք կասեն, որ Արագը հեշտանում է ցուրտ աշնանը կամ ձմռանը: Այս ժամանակ է, որ ճանապարհները կոշտանում են. անձրև կամ ձյուն գալուց և հալչելուց հետո՝ ամառվա ճանապարհների վրա դիզված հողը ցեխ է դառնում և մի ցուրտ գիշեր սառչելով մնում է կոշտ-կոշտ: Ահա ցուրտ աշնան կամ ձմեռվա նկարագիր՝ գետի և ճանապարհիի պատկերով: Բայց խաղի բուն իմաստը հասկանալու համար այսքան գիտենալը դեռ բավական չէ: Պետք

² Աբեղյան Մ., Ժողովրդական խաղիկներ, գյուղական փոքր երգեր իրենց փոփոխակներով, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Երևան, 1940, էջ 51:

³ Հազար ու մի խաղ, I հիսնյակ, էջ 11:

Է իմանալ, որ ցուրտ աշնանը կամ ձմռանն են աղջիկ ուզելու գնում և հարսանիք անում: Այժմ երևակայենք մի աղջիկ, ով շատ «ուզողներ» ունի, բայց ինքն ուրիշին է սիրում: Նրա սիրելեկանն ուրիշ տեղ է, և նա ահուդողի մեջ է, թե միգրոցե իրեն ստիպեն ուրիշի և ոչ իր սիրելիի հետ ամուսնանալ: Նա դուրս է գալիս, նայում շուրջը, հեշտացած Արագին ու կոշտացած ճանապարհներին և իր լցված սիրտը գեղում է երգով. //Խաբար տարեք իմ յարին//, Առնողս շատացել ա//: Այս տեսակ սկսվածքի մեջ մտնում է և այն, որ խաղի առաջին մասի մեջ ոչ թե որևէ սիրո զգացումի նկարագիր կա, այլ մի պատմվածք, որին հաջորդում է զգացմունքը՝ փափագը, իբրև հետևանք առաջին մասի մեջ պատմված գործողության: Այսպիսով, ժողովրդական երգերը դիտվում են իբրև հասարակական գիտակցության գեղարվեստական այն ձևերից մեկը, որն արտացոլում է առարկայական իրականությունը և ձեռք բերում պատմամշակութային կարևոր արժեք:

Ամեն մի խաղ, երկյակ լինի թե եռյակ կամ քառյակ, կազմում է մի առանձին երգ: Սակայն երգելիս, իրարից անկախ խաղերը կարելի է երգել միևնույն եղանակով և միևնույն կրկնակով: Ժողովրդական խաղի էական հատկություն է այս, որ հնարավորություն է տալիս խաղերից ամբողջական ընդարձակ երգեր կազմելու: Բերենք օրինակներ. Սափորըն ուսիս դըրի//, Ջա՛ն, յարո՛ ջան//, Երթամ աղբյուրը ջըրի//, Ջա՛ն, յարո՛ ջան//, Ինչ փուշ գա իմ առջևը//, Ջա՛ն, յարո՛ ջան//, Չար աչքի սըրտով խըրի//, Ջա՛ն, յարո՛ ջան, ջա՛ն, յարո՛ ջան//, Ես սիրեցի, ես առա//, Արևը մերը մըտավ, Ջա՛ն... //, Սիրունը տերը գըտավ. Ջա՛ն...//, Օտարի վատ խոսքերը. Ջա՛ն...//, Իրանց սըրտի մեջ փըտավ. Ջա՛ն...//, Աշխարհի մեջ տեր ունիմ, Ջա՛ն...//, Յարիս վըրա սեր ունիմ. Ջա՛ն...//, Ճակատը բաց՝ խոսքի տեր, Ջա՛ն...//, Ինձի պահող հեր ունիմ, Ջա՛ն...⁴:

Այս փոքրիկ գեղջկական երգերի, խաղիկների մեջ երևան է գալիս գյուղի նորահարս ու նորատի մարդկանց, պատանիների ու պարմանուհիների սիրո զգացմունքն իր բազմերանգությամբ: Յուրաքանչյուր երգ կապված է գյուղական կյանքի մեկ թույլի հետ և նկարագրում է միայն այդ թույլում ծնվածն ու զգացածը: Հետևաբար, այս երգերը մեկ թույլում ապրածի նկարագիր են, որ հետո միայն հարազատ դառնալով ուրիշներին, փոխանցվում են սերնդեսերունդ, հարստանում նոր տարբերակներով ու դառնում ժողովրդական ընդարձակ երգի ծնունդ:

Երբ թափանցում ենք կոմիտասական սիրերգերի բավիղներում, տեսնում ենք, որ զարմանալի պարզությամբ մեր առջև հառնում է երգի բովանդակությունը, որը հայ գեղջուկի ներքնաշխարհի, ապրումների ու

⁴ Հազար ու մի խաղ, II հիսնյակ, էջ 33:

տրամադրությունների միաձուլումն է բնության երևույթներին: Այստեղ ամեն մի հնչյունը, ամեն մի բառն ապրված է զգայական անմիջական տաք հույզով: Միրո զգացմունքի դրսևորման ամենաբազմազան ու նրբին երանգները՝ լիակատար բախտավորումից մինչև դժբախտ ողբերգականը, կազմում են հայ գեղջկական քնարական երգի թերևս ամենապարզ, բայց ամենաջերմ հատվածները: Երգերի խոսքերը, որքան էլ որ մարդկային թանկ զգացմունքների արտահայտող խոր ապրումներ են պարունակում, այնուամենայնիվ, մտածածին չեն, այլ միշտ կենսական իրական հիմքից են բխած: Բաղում բանողի ամենամեծ ցավը սրտին դարման գտնել է.

Մեռա բաղում բանելեն,
Մի կողմեն ջուր անելեն.
Ծառերին թուփ չըմընաց.
Դարդիս դարման տանելեն...
Նստած տեղիս քար չունիմ,
Էրված սրտիս ճար չունիմ.
Ա՛յ անօրեն, փուչ աշխարհ,
Բաղ ունիմ ու բար չունիմ⁵:

Իսկ մի ուրիշ խաղում կարոտագին սիրահարի ոտքերն անգամ քայլ անելու ուժ չունեն, աչքերում էլ արցունքի կաթիլ անգամ չկա.

Կայնել եմ գալ չեմ կարող,
Գալ չեմ կարող, գալ չեմ կարող,
Լցուել եմ՝ լալ չեմ կարող,
Լալ չեմ կարող, լալ չեմ կարող՝
Մի տարի է չեմ տեսել,
Տեսնողի, եա՛ր, աչքին մեռնեմ⁶:

Մեկ այլ խաղում էլ հանդիպում ենք կարոտագին սրտով սիրահարի կանչողին, ով իր հոգու ամենանրբին զգացումները պատկերային դարձնելու համար մեր առջև բնապատկեր է բացում ամպոտ երկնքի, մթնկա գիշերվա. //Ամպել ա, ձիւն չի գալի//, Մթնել ա, տուն չի գալի//,

⁵ Նույն տեղում, էջ 6:

⁶ Նույն տեղում, էջ 22:

Հեռու ճանապարհի ես//, Աչքերիս քուն չի գալի//, Կանչում եմ, կանչում եմ,
եա՛ր, արի՛, եա՛ր//, Մութն ընկավ, տուն արի, անջիգեար եար⁷://

Անչափ հուզիչ է վշտով ու ցավով բեռնավորված ու տառապանքի
մեջ այրվող սիրահարի աղերսը սարերին, ձորերին, ամպերին ու ջրերին,
որ մխիթարություն է ակնկալում առանց հուսահատվելու.

Հո՛վ արեք, սարե՛ր ջան, հո՛վ արեք,
Իմ դարդին դարման արեք:–
Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ գո՛վ արեք,
Վարար անձրև թափեք, ծո՛վ արեք–
Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր ու ջրե՛ր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբյուրնե՛ր,
Մի՛ վե՛ր կացեք, իմացե՛ք, Տեսե՛ք իմ սրբոյի ցավե՛ր⁸:

Կոմիտասական երգի ժանրային «սքեմներում» հանդիպող
սիրերգությունը խիստ անաղարտ զգացմունքայնություն է արտահայտում:
Սոնա յարին, Նազան յարին տրվող յուրաքանչյուր բնութագրիչ
կուսականություն ու մաքրություն է խորհրդանշում: Կինը նրա համար
սիրո մարմնացումն է, սիրո կենարար աղբյուրն իր գեղեցկությամբ ու
հմայքներով: Այստեղ խոսքը ձեռք է բերում պատկերային նկարչագեղ
տեսողականություն. //Սո՛նա յա՛ր, Սո՛նա յա՛ր//, Սո՛նա սիրուն, Սո՛նա
յա՛ր//, Կանաչ տեղը՝ բաղում ես, Սո՛նա յա՛ր... //, Պարի միջին խաղում ես.
Սո՛նա սիրուն//, Կաքավի պես սորալով, Սո՛նա յա՛ր...//, Տըղաներին
դաղում ես. Սո՛նա սիրուն...⁹: Այսպիսին է նալև մյուս տաղը. Գարնան
սիրուն ծաղիկ ես//, Հո՛յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ//, Ինձ համար աղունիկ
ես//, Ջա՛ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ//, Գըլխիս վըրով պըտիտ տուր//, Հո՛յ,
Նա՛զան իմ, Նա՛զան իմ//, Նախշուն-թև թիթեռնիկ ես//, Ջա՛ն, Նա՛զան իմ,
Նա՛զան իմ¹⁰: Նունն է նաև հետևյալում. Ես մի պինդ պաղ էի//, Դու մըրմուռ
լացիր//, Քո հրեղեն արցունքով//, Ինձի հալեցիր//, Ես մի չոր ծառ էի//, Դու
գարնան արև//, Քո սիրով ծաղկեցավ//, Իմ ճյուղն ու տերև//, Վա՛յ, վա՛յ,
վա՛յ...¹¹://

⁷ Նույն տեղում, էջ 26:

⁸ Հազար ու մի խաղ, I հիսնյակ, էջ 5:

⁹ Նույն տեղում, էջ 47:

¹⁰ Նույն տեղում, էջ 31:

¹¹ Նույն տեղում, էջ 38:

Կոմիտասական սիրերգության մեջ օրգանապես միաձուլվել են նաև սիրո երգն ու աշխատանքի, աշխատավորի գովքը: Այստեղ արոտավայրը սիրո բնօրրան է, գութանավորին հաց տանող գեղջկուհին բնօրրանն այդ լցնում է իր գեղեցկությամբ, կենարար լույսով, իսկ հավքերից ու հովերից նանիկ ու հով խնդրելով ցանկանում է հանգստություն և ուժ իր սիրելիին:

Գութանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Տե՛ս, քեզ ո՛րքան եմ սիրում,—
Ձուկը տապկած եմ բերում:
Հա՛վքեր, թևանի՛ արեք,
Յարիս հովանի՛ արեք.
Թո՛ղ բարակ քամին փրչի,
Հետն էլ դուք նանի՛ արեք¹²:

Այս քառյակներում քնարական ապրումն անհատական է, այստեղ կա անկրկնելիություն, բայց և կա այնպիսի հուզականություն, որ մեզ ակամայից թվում է, թե այստեղ մենք ճանաչում ենք մեր սեփական զգացմունքներն ու մտքերի արտահայտությունը: Մեղմ քնարական այս ձևերը ազդեցության հսկայական ուժ ունեն, բացահայտում են մտքեր, ապրումներ, ձգտումներ՝ ներկայացնելով դրանց ետևում կանգնած մարդկանց ու մարդկային հարաբերությունները: Կոմիտասական սիրերգում հուզական ապրումը սիրո արվեստի անքակտելի աղբյուրն է: Այստեղ միշտ ներկա է հեղինակը՝ գեղջուկ սիրերգակը, ով նույնանում է բնությանը, բայց և պահպանում իր ինքնությունը: Այսպիսի զգայական պատկերավորման մասին դարեր առաջ խոսել է նաև Արիստոտելը: Նա սահմանում է բնությանը նմանվելու այնպիսի եղանակ, երբ «նմանվողը մնում է իր ինքնության մեջ, չփոխելով իր դեմքը»¹³: Գեղջկական այս երգերը միջնադարյան տաղերգության սքանչելի էջերից են: Ռուսականավոր բանաստեղծ, համաշխարհային մեծ գիտակ Վ.Բրյուսովի գնահատականը մեր միջնադարյան տաղերգությանը խիստ բնորոշչային է: Նրա խորին համոզմամբ մեր միջնադարյան տաղերգությունը «մեկն է մարդկային ոգու այն սքանչելի հաղթանակներից, ինչպիսիք գիտի բովանդակ աշխարհի տարեգրությունը»¹⁴:

¹² Նույն տեղում, էջ 10:

¹³ Аристотель, Поэтика. Об искусстве поэзии, М., 1957, стр.45:

¹⁴ Брюсов В., Поэзия Армении, М., 1967, стр.7:

Հայ միջնադարի վարդի և սոխակի սիրավեպը այլաբանորեն արտահայտում էր կնոջ և տղամարդու սերը:

Կ.Երզնկացին սեր է երգում և նրա երգը միաձուլվել է բնությանը: Նա ոչ միայն հոգևոր սիրո երգիչ է, այլև աշխարհիկ սիրո պատկերներ արտացոլող սիրերգակ: «Ահա եղև պայծառ գարուն, հոտըն բուրեաց անուշ վարդուն» տաղում աշխարհիկ սերն է պատկերված, վարդի ու սոխակի սերն արտահայտում է մարդկային իրական փոխհարաբերություններ: Այս տաղում արդեն իր սերը երգող «երիտասարդը»՝ սոխակը, գովերգում է սիրած էակի գեղեցկությունը հայ միջնադարին բնորոշ արտահայտչամիջոցներով.

Աղաղակեր պըլպուլն ի վարդն.
-Առանց քեզ յո՞նց ելնում ի հուն.
Հանց քաղեցիր զշունչս ու հոգիս՝
Այլ չի մնաց երեսս դուն:
Հանց ողորմուկ ի վարդն ասաց.
-Իմ լուսատու արևըն դու,
Աստղըն գոհալ և մուշտարի,
Շամս ու դամար իմ թաճա դու¹⁵:

Աշխարհականացման ոգով տոգորված մեծ սիրերգակ Հովհաննես Թլկուրանցին բանաստեղծական նյութ է դարձնում այսրաշխարհային կյանքը, հաճույքն ու զվարճությունը, կինն ու սերը.

Դու ստեղծեր զկինն ի կողէն
Վասն Աղամայ սիրոյն համար¹⁶:

Կոստանդին Երզնկացուց հետո եկող հայ միջնադարյան սիրերգակ բանաստեղծների տաղերի հետ ժողովրդական երգերի համեմատությունը մի առանջին ուսումնասիրության թեմա կարող է դառնալ: Դրանք իրականում շատ ընդհանրություններ ունեն ժողովրդական հայ սիրերգության հետ:

Մասնագետները նշել են, որ կոմիտասական երգը զերծ է թուրքական ու պարսկական բանաստեղծության ազդեցությունից, դուրս է սիրո արտահայտման այլաբանական ձևերից, զերծ է գոեհկաբանությունից,

¹⁵ Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ եւ յիւր քերթումները, ուսումնասիր. հրտ. Մ. Պոտուրյան, Վետ., 1905, էջ 135:

¹⁶ Թլկուրանցի Հ., Տաղեր, Երևան, 1960, էջ 12-22:

հուսահատ տրտունջներից: Այստեղ կա հավատ, որ հով կգա, դարդին էլ դարման կգա: Այս երգերում սիրավոր լոր կա ու Մոնա յար կա: Այս երգերը գեղջկական պարզ ու մաքուր զգացմունքների արտահայտիչն են, որ նրբորեն տալիս են մարդկային հոգու, անհատի ներաշխարհի խոր ու ճշմարիտ նկարագիրը: Իրենց էությանմբ, մաքրամաքուր բնույթով այս երգերը հաստատում են մարդու սիրելու և սիրվելու իրավունքը: Կոմիտասական երգը ոչ թե սոսկ պատմական, այլև համամարդկային և գեղարվեստական մեծ արժեք ունի: Հայ գեղջկական սիրերգը հայ երգի տաճար է, որի լույսը լուսավորում է հավատավոր հայ մարդու սիրտն ու հոգին:

Ն.Շահբազյան

ՄԻՐՈ ՄՈՏԻՎԸ «ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ» ԺՈՂՈՎԱԾՈՒՈՒՄ

Ամփոփում

Կոմիտասի և Մանուկ Աբեղյանի կողմից կազմված «Հազար ու մի խաղ» բանահյուսական երգարանը հարստացրել է հայ բանահյուսության գանձարանը: Կոմիտասական երգերը գերծ են թուրքական ու պարսկական բանաստեղծության ազդեցությունից, դուրս են սիրո արտահայտման այլաբանական ձևերից, գերծ են գրեհկաբանությունից, հուսահատ տրտունջներից: Իրենց էությանմբ, մաքրամաքուր բնույթով այս երգերը հաստատում են մարդու սիրելու և սիրվելու իրավունքը: Կոմիտասական սիրերգը ոչ թե սոսկ պատմական, այլև համամարդկային և գեղարվեստական մեծ արժեք ունի: Հայ գեղջկական սիրերգը հայ երգի տաճար է, որի լույսը լուսավորում է հավատավոր հայ մարդու սիրտն ու հոգին:

Н. Шахбазян

МОТИВ ЛЮБВИ В СБОРНИКЕ «ТЫСЯЧА И ОДНА ПЕСНЯ»

Резюме

Фольклорный песенник «Тысяча и одна песня», составленный Комитасом и Мануком Абегианом, обогатил сокровищницу армянского фольклора. Песни Комитаса свободны от влияния турецкой и персидской поэзии, они далеки от аллегорических форм выражения любви, а также свободны от вульгаризмов и отчаянных сетований. В них есть вера, что наступит прохлада, а утешение придет после боли. Чистейшие по своей сути, эти песни утверждают право человека любить и быть любимым. Песни любви Комитаса имеют не только историческую, но и общечеловеческую и художественную ценность. Армянская крестьянская песни любви – храм

армянской песни, свет которой освещает сердце и душу верующего армянина.

N. Shahbazyan

**THE LOVE MOTIF IN THE MIESCELLANY “ONE THOUSAND AND
ONE SONGS”**

Summary

The folkloric book of songs “One Thousand and One Songs” composed by Komitas and Manuk Abeghian enriched the treasury of Armenian folklore. Songs by Komitas are free of the influence of Turkish and Persian poetry; they are far from allegoric forms of love expression, as well as from vulgarisms and desperate complaints. They are full of faith that freshness will come and that pain will be relieved. With the purity of their essence, these songs confirm the right of human being to love and to be loved. Songs of love by Komitas have not only historical, but also an artistic value common to all the mankind. The Armenian rural songs of love are the temple of Armenian songs; their light illuminates the heart and the soul of Armenian faithful people.

ԼԻԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ՀՏԴ 821.19.0

**ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բանալի բառեր. Ն. Մառ, Գ. Հովսեփյան, նամակներ, հայագիտություն, օգնություն, համալսարան, պեղումներ, հնագիտական:

Ключевые слова: Н. Марр, Г. Овсепян, письма, арменоведение, помощь, университет, раскопки, археология

Key words: N. Marr, G. Hovsepian, letters, Armenian studies, help, university, excavations, archeology

Նշանավոր հայագետ Նիկողայոս Մառը մտերիմ հարաբերություններ է ունեցել իր ժամանակի հայտնի հայ պատմաբանների, գրողների, գրականագետների ու ճարտարապետների հետ: Այդ հարաբերություններն ամենից առաջ արտահայտվել են նամակագրությամբ:

Մառն իր նամակները գրում էր աշխարհաբար, թեև գրաբարին տիրապետում էր ավելի կատարյալ: Նրա աշխարհաբար լեզուն ունի որոշ առանձնահատկություններ: Շատ դեպքերում հայերեն «ը» որոշիչ հոդի փոխարեն «դ» է գրում: Նամակներում շատ են հապավված բառերն ու բաց թողնված տառերը:

Մառի նամակներին բնորոշ է որոշակի համակարգվածություն: Նամակներից էլ կարելի է հասկանալ, թե որքան կարգապահ ու կանոնավոր է եղել մեծ գիտնականն իր աշխատանքում: Նա իր խոսքը սկսում և ավարտում էր ողջույններով: Գրեթե միշտ բարևներ էր ուղարկում կնոջ կողմից ևս: Եթե շատ ասելիք ուներ, ապա նախընտրում էր խոսքը շարադրել կետառկետ, միշտ ներողություն էր խնդրում անհանգստացնելու կամ միևնույն բանի մասին երկու անգամ գրելու համար:» Ներողություն, եթե քավ լիցի դուք հիվանդ եք, և ես ձեզ գլխացավ եմ պատճառում իմ նամակներով»:¹

¹ Ադամյան Ա., Նիկոլայ Յակովլևիչ Մառի անտիպ նամակները, Բանբեր Հայաստանի արխիվների, №1, Երևան, 1964, էջ 68:

Մառի նամակներն ունեն գրական ու գիտական մեծ արժեք: Նամակներից բավականին շատ բան ենք իմանում Մառի գործունեության, պեղումների, կատարվող ու կատարվելիք աշխատանքների մասին: Փորձենք այս ամենը ցույց տալ Մառի ու Գարեգին Հովսեփյանի նամակագրությունն ուսումնասիրելով:

1909-1910 թվականներին Գարեգին Հովսեփյանը մասնակցել է Մառի անցկացրած Գառնիի պեղումներին: Քասախ գետի ակունքների մոտ նա հայտնաբերում է Տրդատ Ա թագավորի հունարեն արձանագրությունը, որն էլ դառնում է դարասկզբի հնագիտական նշանավոր գտածոներից մեկը: Այսպես Գարեգին Հովսեփյանի նման պայծառ մտքի տեր գիտնականն իր ողջ կյանքն է նվիրում հայ հին եկեղեցական արվեստին, հայրենիքին, մանրանկարչությանը. «Մեր դարու հայոց պատմութեան էջերուն վրայ, իր անունը ոսկի տառերով քանդակուած պիտի մնայ իբրեւ ակոյեան իրաւ հայրենասիրութեան եւ հայ եկեղեցական միասնութեան»:²

Ն. Մառն ու Գարեգին Հովսեփյանը հայագիտական հարցերի շուրջ մի քանի տասնամյակ նամակագրական կապեր են պահել: Այդ նամակներից շատերը տպագրել է Ավետիք Ադամյանը: Վերջինիս շնորհիվ տպագրվեցին նաև Հովհաննես Մասեյանի, Քերովբե Պատկանյանի, Արշակ Չոպանյանի, Նիկողայոս Ադոնցի և այլոց անտիպ նամակները:

1908 թվականի ամռանը Մառը Երեւոյաց գյուղից նամակ է գրում Գ. Հովսեփյանին, ուր տեղեկացնում է, թե երկրորդ օրն է, ինչ պեղումներ է անում այնտեղ և դեռ մի շաբաթ էլ մնալու է, չնայած կարծում է, որ մի ամիսն էլ բավարար լինել չի կարող: Նա ավստոսանքով նշում է, որ այնտեղ ժամանակից և թշնամիներից բացի տաճարի քայքայվելուն շատ են նպաստել գյուղացիները (քրդերը), որոնց ողորմելի խրճիթներում հոյակապ շինությունները հասարակ քարերի դեր են կատարում: Նա մտավախություն ուներ, որ այդ խրճիթների մեջ կարող են թաքնված լինել ճարտարապետական գոհարներ կամ արձանագրություններ: Այստեղ Մառի հնագիտական արշավախումբը շատ էր չարչարվում, քնելու տեղ չկար, զիշերներն էլ սաստիկ ցուրտ էր: Դա խմբին շատ էր խանգարում:

1909 թվականի փետրվարին Մառը դարձյալ գրում է Գ. Հովսեփյանին: Այս անգամ նա տեղեկացնում է, որ որոշ գումար է հատկացվել Վաղարշապատի և նրա շրջակայքի պեղման համար: Նախկինում Մառը ծանրաբեռնված լինելով Անիի պեղումներով՝ մերժել է հանձն անել այդ

² Վազգեն Ա, Հրատարակություն Ամենրիկայի հայոց առաջնորդարանի, Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ կաթողիկոսին մահուան տասներորդ տարեդարձին առթիւ, Նիւ Եորք, 1962, էջ 4:

աշխատանքը, բայց հասկանալով, որ նման պեղումները հայագիտության համար մեծ կարևորություն ունեն, որոշում է ընդունել առաջարկը: Մառը խնդրում է, որ Գարգին Հովսեփյանն էլ միանա իրեն: Նրանց միանալու էր նաև Ն. Ադոնցը: Նույն նամակում Մառը հայտնում է, որ շուտով Գիտության ճեմարանում կկայանան ընտրություններ, որոնց արդունքում, ըստ ամենայնի, ինքը կզբաղեցնի Ռոզենի տեղը:

Հաջորդ նամակում Մառը կարծիք է հայտնում, թե իրենք պետք է խորհրդակցեն Բաշ-Ապարանի և Գառնիի հետազոտությունների առիթով, սակայն, որպեսզի այդ խորհրդակցությունները գործնական բնույթ կրեն, հարկավոր է ձեռքի տակ ունենալ ոչ միայն Հովսեփյանի զեկույցը Բաշ-Ապարանի հնությունների մասին, այլև լուսանկարներ և տեղեկություններ Գառնիի ներկա դրության մասին:

Մառը տեղեկացնում է նաև, որ Նիկոլայ Տիխոնովն այդ ընթացքում ազատ է լինելու, և ինքն ուզում է, որ նա ուղեկցի Հովսեփյանին Բաշ-Ապարան: Տիխոնովը պետք է նայեր հնությունները և լուսանկարեր կարևոր բեկորները: Մառը հոգալու էր Հովսեփյանի՝ Բաշ-Ապարան և Գառնի գնալու ծախսերը: Վերջում նա գրում է. «Իսկ ինչ ձեր առաջարկությամբ կամ նախաձեռնությամբ երկուսդ միասին և դուք առանձին կիրագործեք, հավատացած լինեք, որ իմ «հավանություն» և համաձայնությունն առաջուց ապահովված է, հիմիկվանց տրվում է»:³

Մառի հայագիտության զարգացմամբ մտահոգված լինելը, դրսևորվում է նաև որոշակի «միջնորդությունների» միջոցով: Նա «միջնորդում» է Պողոս Մակինցյանի համար, որ վերջինս կարողանա իր ուսումը շարունակել Պետրոգրադի համալսարանում: Նա կարծում էր, որ այս համալսարանն էլ ունի լավ հայագետների կարիք: Մակինցյանին հնարավորություն տալով՝ Մառը ցանկանում էր խթանել հայ հասարակության մեջ զարգացող գիտական պահանջները: Պ. Մակինցյանից բացի Մառն աջակցում է նաև իր աշակերտներից մեկին՝ Անատոլիյ Ալլավդինին: Վերջինս եկեղեցու պատմության մասնագետ էր, ասորագետ: Ալլավդինը նպատակ ուներ որոշ եկեղեցական-պատմական հարցերի վերաբերյալ նյութեր հավաքել Էջմիածնի վանքի գրադարանում: Մառը խնդրում է, որ Գ. Հովսեփյանն օգնի նրան:

Փաստորեն Մառից օգնություն է խնդրում նաև հայագետ Կարապետ Կոստանյանի կինը՝ Տիրուհի Կոստանյանը, որ օգնի իրեն Մոսկվայի

³ Ադամյան Ա., Նիկոլայ Յակովլևիչ Մառի անտիպ նամակները, էջ 71:

գրադարանին վաճառել հանգուցյալ ամուսնու գրադարանում եղած ձեռագրերը, գրքերն ու արխիվային նյութերը:

Այսպիսով՝ Մառը պատրաստ էր իր բոլոր կապերն օգտագործել, լարել իր բոլոր ջանքերը, նվիրել իր ողջ ժամանակն ու գիտական հսկայական ունակությունները, եթե գործը վերաբերում էր հայագիտությանն ու դրա զարգացմանը:

Մառը Հովսեփյանից խնդրել էր, որ նա իրեն ուղարկի Քասաղի եկեղեցու նկարագրությունը: Գ. Հովսեփյանն ուղարկում է իր հետազոտությունների արդյունքները, սակայն նշում է, որ նկատել է որոշ անճշտություններ չափումների մեջ և զարնանը դարձյալ պետք է գնա Քասաղ՝ լուսանկարելու և ավելի մանրակրկիտ հետազոտելու համար: Շատ քարեր ու քանդակներ հնարավոր չի եղել հետազոտել ու չափագրել սառույցի հաստ շերտի պատճառով:

Գարեգին Հովսեփյանը իր նամակներից մեկում մտահոգություն է հայտնում, որ գաղթի պատճառով հայ ժողովրդի տարագն ու նիստուկացր, արվեստը, զարդն ու զարդարանքը, բարբառներն ու բանահյուսությունը վտանգի են ենթարկված: Նա մի փոքրիկ գումար էր ձեռք բերել և այդ գործով զբաղվելու համար ձեմարանի բանիմաց մի քանի ուսուցիչներից հանձնաժողով կազմել: Այդ հանձնաժողովը կարողացել էր պատկառելի մի ժողովածու կազմել: Հովսեփյանի խնդրանքն էր Մառին. «Որքան երախտապարտ կմնայինք, եթե Վանի սեպագրության շրջանի պատմության կամ քաղաքակրթության մասին մի բան գրեիք, եթե Ձեր ստորագրությունը, թեկուզ մի քանի երես հոդվածով զարդարեր մեր ժողովածուն»:⁴

1931 թվականին Մառը Լենինգրադից ռուսերենով գրում է Հովսեփյանին: Փաստորեն նա կորցրել էր այն նամակը, որին ժամանակին Հովսեփյանը կցել էր Արուճում պեղված բնեռագիր արձանագրության լուսանկարները, որոնցում խոսվում էր այն մասին, թե այդ արձանագրությունը դժվարությամբ փրկվել և էջմիածին էր տեղափոխվել: Մառը խնդրում էր, որ Հովսեփյանը դարձյալ գրի այդ արձանագրության մասին և տեղեկացնի՝ արդյոք որևէ մեկը գրել է դրա մասին, թե՛ ոչ: Սակայն պատասխան նամակից իմանում ենք, որ այն տեսորը, որտեղ արվել են արձանագրության մասին նշումներ, գտնվում է էջմիածնում: Այդ արձանագրության ուրիշ հրատարակության մասին Հովսեփյանը տեղյակ

⁴ Ադամյան Ա., Գարեգին Հովսեփյանի նամակները Ն. Մառին, Բանբեր Երևանի համալսարանի, հ. 1, 1969, Երևան, էջ 171:

չէր: Միայն գիտեր, որ Լեոն, Մառից օգտվելով, այդ մասին գրել է իր «Հայոց պատմության» առաջին հատորում:

Հովսեփյանը մեծ ուրախությամբ է ընդունում այն լուրը, որ Նյութական կուլտուրայի ակադեմիան տպագրելու է իր «Մանրանկարչություն» աշխատությունը: Քանի որ Հովսեփյանը Մառին համարում էր հայագիտության ամենամեծ վաստակավորներից մեկը, այս անգամ էլ Մառից խնդրում է խրախուսիչ որևէ վկայական իր աշխատության վերաբերյալ:

Սակայն որոշ ժամանակ անց Հովսեփյանն իմանում է, որ Մելքոնյան ֆոնդի հաշվին իր աշխատությունը տպել չի ստացվի: Մի մտերիմ զրույցի ժամանակ նրան հասկացրել էին, որ պետական հաստատությունների ձեռքով կրոնական անձի ստորագրությունը կրող գիրք տպագրելը դեռևս աննախադեպ է: Մա շատ է հիասթափեցնում Հովսեփյանին: Նա կարծում էր, որ Մելքոնյան ֆոնդը ընդհանուր հայագիտական նպատակների է ծառայում և իր կոչումը չպետք է խանգարեր նրանց: Ֆոնդի մերժումը չէր կարող անհետևանք մնալ Հովսեփյանի համար: Նա սպասում էր Մառի օգնությանը:

Գարեգին Հովսեփյանին գրված մի քանի այլ նամակներ էլ տպագրվել են 1968 թվականին: Այս նամակները համեմատաբար կարճառոտ են, այստեղ հիմնականում պայմանավորվածություններ են՝ հանդիպելու օրվա և ժամի հետ կապված. «Անիից մեկնում ենք 5-ին (կիր. օր) և Էջմիածին կհասնենք նույն օրը ցերեկվա ժ. 4 և 50-ին, այսինքն՝ նշանակված ժամանակը կլինենք կայարանում, որ ձեզնե կխնդրենք մեզ սպասած կառքը»:⁵

Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփում

Նշանավոր հայագետ Նիկողայոս Մառը մտերիմ հարաբերություններ է ունեցել իր ժամանակի հայտնի հայ պատմաբանների, գրողների, գրականագետների ու ճարտարապետների հետ: Այդ հարաբերություններն ամենից առաջ արտահայտվել են նամակագրությամբ:

Մառն իր նամակները գրում էր աշխարհաբար, թեև գրաբարին տիրապետում էր ավելի կատարյալ: Նրա աշխարհաբար լեզուն ունի որոշ

⁵ Ադամյան Ա., Ն. Յա. Մառի նամակներից, Բանբեր Հայաստանի արխիվների, 1968, հ.1, Երևան, էջ 88:

առանձնահատկություններ: Շատ դեպքերում հայերեն «ը» որոշիչ հոդի փոխարեն «դ» է գրում: Նամակներում շատ են հապավված բառերն ու բաց թողնված տառերը:

Ն. Մարի և Գ. Հովսեփյանի նամակագրությունը պարզում է երկու հայագետների հետաքրքրության շրջանակը և նրանց միահամուռ մղումը հայագիտությունը առաջ տանելու պատվավոր գործում:

Л. АРУТЮНЯН

**КОРРЕСПОНДЕНЦИЯ НИКОЛАЯ МАРРА И
ГАРЕГИНА ОВСЕПЯНА**

Резюме

Знаменитый арменовед Николай Марр поддерживал близкие отношения со знаменитыми армянскими историками, писателями, литературоведами и архитекторами своего времени. Эти отношения в первую очередь отражались в корреспонденции.

Марр свои письма писал на современном армянском языке, хотя древнеармянским он владел более совершенно. Его современный армянский язык имеет некоторые особенности. Во многих случаях вместо армянского определённого артикля «ը», он пишет «դ». В письмах много аббревиатур и пропущенных букв.

Корреспонденция Н. Марра и Г. Овсепяна выявляет круг интересов двух арменоведов и их общие стремления в благородном деле продвижения арменоведения.

L. HARUTYUNYAN

THE CORRESPONDENCE OF N. MARR AND G. HOVSEPIAN

Summary

The well-known armenologist Nikolai Marr maintained close relations with famous Armenian historians, writers, literary critics and architects of his time. These relationships were first of all reflected in their correspondence.

Marr wrote his letters in Modern Armenian, although he mastered much better the Old Armenian language. His modern Armenian has some peculiarities. In many cases, instead of the Armenian definite article “ը”, he wrote “դ”. The letters contain a lot of abbreviations and have missing letters.

The correspondence of N. Marr and G. Hovsepian reveals the circle of interests of the two armenologists and their common aspirations in the noble cause of promoting armenology.

ՎԱԼՏԵՐ ԲԵՐԲԵՐՅԱՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ

Էլ. փոստ՝ walter.berberyan@mail.ru

ՀՏՂ 821.19.0

**ՎԱՆԿԱՇԵՇՏԱԿԱՆ ՈՏԱՆԱՎՈՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
Վ. ՏԵՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Բանալի բառեր. տաղաչափություն, Վ. Տերյան, վանկաշեշտական ոտանավոր, անապեստ, երկոտնյա անապեստ, եռոտնյա անապեստ, եռոտնյա-երկոտնյա անապեստ, ամֆիբրաքս, դակտիլ, հատած, ոճ:

Ключевые слова: метрика, В. Терян, силлабо-тоническое стихосложение, анапест, двухстопный анапест, трёхстопный анапест, трёхстопный-двухстопный анапест, амфибрахий, дактиль, цезура, стиль.

Key words: metre, V. Terian, accentual-syllabic verse, anapaest, two-foot anapaest, three-foot anapaest, two-foot and three-foot anapaest, amphibrach, dactyl, caesura, style.

Վ. Տերյանը բանաստեղծական ձևերի և արտահայտչական միջոցների մեծ նորարար, բանաստեղծ-տեսաբան է: Նա հեղինակել է «Մթնշաղի անուրջներ», «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ», «Վերադարձ», «Ոսկե շղթա», «Կատվի դրախտ», «Երկիր Նաիրի» շարքերը, այլ բանաստեղծություններ: Մեզ է հասել շուրջ 414 բանաստեղծություն, որից նա ավարտված համարել և տպագրության է հանձնել 221-ը, հոդվածներ, զեկուցումներ, թարգմանություններ¹: Վ. Տերյանը հեղաբեկում կատարեց. բերեց նոր քնարական հերոս, նոր լեզու, նոր հոգեվիճակներ և գեղարվեստական նոր համակարգ: Նա ստեղծել է ինքնատիպ գրական ոճ ու դպրոց, որին, անտարակույս, հետևել են շատ բանաստեղծներ: Բանաստեղծի քնարական հերոսի բարդ և հաճախ հակասական ապրումների մեջ արտահայտվեցին 20-րդ դարասկզբի հասարակական մեծ հեղաբեկումները, խորհող անհատի բարձր մղումներն ու երազանքները, հոգևոր տվայտանքն ու որոնումները, ոգևորության և հուսահատության պահերը: Նշենք, որ Տերյանի քնարերգության մեջ նոր մեկնաբանություն ստացան ավանդական թեմաները՝ սերը, բնությունը, ինչպես նաև աշխարհի և կյանքի խոհական մտորումները:

¹ Տե՛ս Է. Զրբաշյան, Վահան Տերյանի տաղաչափական համակարգը, Եր., 1995, էջ 8:

Կատարելության հասցնելով վանկական ոտանավորի տեսակները՝ բանաստեղծը միաժամանակ հայ տաղաչափության մեջ բազմազան դարձրեց վանկաշեշտական համակարգը: Հավելենք, որ վանկաշեշտական ոտանավորի անապետության չափը երբեմն կոչվել է «տերյանական չափ», իսկ գրողի նախընտրած չափը եղել է 10 վանկանի ոտանավորը, որով գրել է առաջին գրքի «Մթնշաղի անուրջների» (1908) 77 բանաստեղծություններից 44-ը: Վերջին շրջանի իր գործերում Տերյանը դիմել է նաև համաշեշտ (տոնիկական) ոտանավորի ձևերին: Բազմազան են գրողի կիրառած բանաստեղծական տան կառուցման և հանգավորման տեսակները, որոնց մեջ կան նաև ոտանավորի ավանդական ձևեր (սոնետ, տրիոլետ, գագեյ): Ճշգրիտ հանգերի կողքին նա սկսեց օգտվել նաև մոտավոր (ասոնանսային) հանգերից, ցույց տալով մեր լեզվի «հանգային ռեսուրսների» մեծ ուղին: Պետք է նշել, որ Տերյանի պոեզիայում մեծապես ընդգծվեց բանաստեղծական հնչյունաբանության նշանակությունը ինչպես բաղաձայն և ձայնավոր հնչյունների կուտակման (բաղաձայնայնություն և առձայնայնություն), հարուստ հանգերի կիրառման շնորհիվ, այնպես էլ՝ լեզվի բացառիկ սահունության ու ներդաշնակության: Մեր համոզմամբ, հեղինակի լեզուն իր հղկվածությամբ, մաքրությամբ և հարստությամբ արևելահայ գրական լեզվի բարձր ու կատարյալ դրսևորումներից է:

Բոլորովին պատահական չէ, որ «ամենայն հայոց բանաստեղծը»՝ Հ. Թումանյանը, «նաիրյան երկրի երգչի»՝ Վ. Տերյանի մասին գրել է. «Նա մի նոր գույնով, մի նոր ձայնով երգեց և՛ սերը, և՛ հայրենիքը, և՛ բնությունը: Նա թարմացրեց հայ պոեզիայի և՛ նյութը, և՛ լեզուն»²:

Գրականագիտական առանձնահատկությունների տեսանկյունից դիտարկելով Տերյանի պոեզիան՝ այս հոդվածում անդրադարձել ենք տաղաչափության մի քանի հարցերի, քննության ենք ենթարկել վանկաշեշտական ոտանավորի կառուցման եղանակները:

Նախ տաղաչափություն մասին. հայերենագիտական բառարանում տրված է այս տերմինի հետևյալ բնորոշումը³.

ա) այն բանասիրական գիտակարգ է,

բ) մշակում է բանաստեղծական խոսքի հիմունքները,

գ) ուսումնասիրում է չափածո ստեղծագործությունների կառուցվածքը, դրանց ձևերն ու տեսակները:

² Ե. Մնացականյան, Հայ գրականություն հարցեր և պատասխաններ, Եր., 2011, էջ 217:

³ Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 568:

Հին հայոց տաղաչափության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Ավետիք Բահաթրյանը: Նա նշում է, որ հայ իրականության մեջ դարեր շարունակ գործել է ոտանավորի երկու տեսակ (երկու սկզբունք), այն է՝ համաչափ ոտանավորը և անհամաչափ ոտանավորը: Ա. Բահաթրյանը փաստում է, որ ոտանավորի տեսակները պայմանավորված են ազգային լեզուների որոշ առանձնահատկություններով (շեշտադրությամբ, արտասանությամբ և այլն), որի հիման վրա նա առանձնացնում է ոտանավորի երեք հիմնական տեսակ (տաղաչափական համակարգ)։

1. «Այն լեզուները, որոնց մեջ բառաշեշտը կայուն տեղ չունի, այլ կարող է դրվել տարբեր մասերում, «իրանց տաղաչափական անդամները և տողերը ևս շեշտերով են պայմանավորում»: Սա ոտանավորի այն տեսակն է, որը ժամանակակից բանասիրության մեջ կոչվում է վանկաշեշտային (սիլաբո-տոնիկական) ոտանավոր և հատուկ է ռուսերենին, անգլերենին, գերմաներենին և մի շարք այլ լեզուների:

2. Այն լեզուները, որոնք տարբերում են արտասանությամբ երկար և կարճ ձայնավորներ և համապատասխան վանկեր, «իրանց տաղաչափական պայմանները ևս որոշվում են սուղ և երկար վանգերով»: Դա ամանակային կամ չափական (մետրական) ոտանավորն է, որը հատուկ է եղել անտիկ աշխարհում, հին պարսկերեն, արաբերեն և այլ լեզուների:

3. Իսկ այն լեզուները, ուր չկան ոչ «թափառող շեշտեր» և ոչ էլ երկար կամ կարճ արտասանվող վանկեր, նշում է Բահաթրյանը, «սոցա տաղերը չափվում են բնական առոգանությամբ միայն՝ այսինքն վանգաչափով, և ամեն տաղաչափական անդամներ և տողեր տրոհվում են որոշ վանգերի թվով»: Սա արդեն վանկային (սիլաբիկ) ոտանավորն է, որը հատուկ է ֆրանսերենին, լեհերենին, վրացերենին և շատ ուրիշ լեզուների»⁴:

Հայտնի են նաև համաշեշտ (տոնիկական) և ազատ ոտանավոր տաղաչափական համակարգերը:


Պետք է նշել, որ վանկաշեշտական բանաստեղծության մեջ շեշտված և անշեշտ վանկերն իրար հաջորդում են որոշ կարգով և կազմում՝ ոտքեր: Վերջիններս լինում են երկվանկ, եռավանկ, քառավանկ, հնգավանկ: Այսպես՝

⁴ Ա. Բահաթրյան, Հին հայոց տաղաչափական արվեստը, Եր., 1984, էջ XXVIII (Պահպանել ենք հեղինակային ուղղագրությունը և կետադրությունը):

երկվանկ ոտքեր	եռավանկ ոտքեր	քառավանկ ոտքեր	հնգավանկ ոտքեր
(<u> </u> <u> </u>) քորեյ (մեծասար)	(<u> </u> <u> </u> <u> </u>) դակտիլ (ստեղն)	(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 1-ին պեոն	(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 1-ին պենտոն
(<u> </u> <u> </u>) յամբ (մեծավերջ)	(<u> </u> <u> </u> <u> </u>) ամֆիբրա- քոս (քողադոտ)	(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 2-րդ պեոն	(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 2-րդ պենտոն
	(<u> </u> <u> </u> <u> </u>) անապեստ (վերջա- տանջ)	(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 3-րդ պեոն	(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 3-րդ պենտոն
		(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 4-րդ պեոն	(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 4-րդ պենտոն
			(<u> </u> <u> </u> <u> </u> <u> </u> <u> </u>) 5-րդ պենտոն

Ուսումնասիրելով Տերյանի պոեզիան նկատեցինք, որ նա հիմնականում օգտագործել է մեր լեզվին բնութագրական վանկական համակարգը, բայց վանկաշեշտական համակարգի կիրառումը ևս առկա է նրա գործերում: Երկու հատորներում զետեղված 412 ինքնուրույն (ավարտուն և սևագիր) բանաստեղծություններից վանկաշեշտական համակարգին են պատկանում միայն 57 գործ, որոնցից սոսկ 11-ն են գրված ճշգրիտ կայուն շեշտադրություն ունեցող պարզոտնյա ոտքերով, իսկ մնացածը թեև գրված են պարզոտնյա չափերով, այնուամենայնիվ, ունեն շեշտադրության առանձին խախտումներ⁵: Վիճակագրորեն այսպես*.

⁵ Տե՛ս **Դ. Գասպարյան**, Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը, Եր., 1979, էջ 27:
*Վիճակագրությունը ներկայացնում ենք ըստ Դ. Գասպարյանի տվյալների:



Վ. Տերյանը հայ բանաստեղծության մեջ հաստատեց անապեստյան (վերջատանջ) ոտանավորը: «Այս ձևը ենթադրում է տողի այնպիսի կառույց, երբ բառաշեշտերը կանոնավոր կերպով ընկնում են բոլոր 3-րդ վանկերի վրա (3, 6, 9, 12)»⁶: Հավելենք, որ այս ձևը կիրառել են նաև Ռ. Պատկանյան, Հովհ. Հովհաննիսյան, Խ. Աբովյան, Ավ. Բասահկյանը, Մ. Մեծարենց և այլք: Է. Ջրբաշյանը նշում է, որ այս չափի կիրառումը Տերյանի պոեզիայում ոչ միայն գրողի անհատական նախասիրությամբ է պայմանավորված, այլև՝ լեզվական նյութի թելադրանքով⁷: Նշենք, որ անապեստյան սկզբունքով գրված է 34 բանաստեղծություն: Բերենք օրինակներ՝

*Ոչ տրտո՛ւնջ, ոչ մրմո՛ւնջ սգավոր,
Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ.
Իմ ուղին միշտ մթին, մենավոր,
Կըզնամ իմ դժկամ ցավի հետ*:*
(«Հրաժեշտի խոսքերից»,
հ. 1, էջ 63:)

Հոգնեցի գրքերից անհամար,

⁶ Է. Ջրբաշյան, Վահան Տերյանի տաղաչափական համակարգը, Եր., 1995, էջ 59:

⁷ Նույն տեղում, էջ 60:

*Այսուհետ մեջբերվող Վ. Տերյանի բոլոր բանաստեղծությունները քաղել ենք հետևյալ հրատարակություններից՝ **Վահան Տերյան**, Երկերի ժողովածու 1, 1972, Եր., **Վահան Տերյան**, Երկերի ժողովածու 2, 1973, Եր.: Հրատարակությունից մեջբերումների էջերը՝ բանաստեղծությունից հետո՝ փակագծերի մեջ:

*Աշխարհից այս խավար ինձ տարեք,
Ինձ տարեք այս երկրից անարեգ:*

*Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ,
Մեր սարերն անառիկ, վեհանիստ,
Մեր արտերն արևոտ ու հանգիստ:*

*Փրկեցեք մտքերից այս անծայր ,
Փրկեցեք խոսքերից այս խելոք,
Դարձրեք ինձ մանուկ ու անհոգ:
(«Հոգնեցի գրքերից անհամար...»,
հ. 2, էջ 65:)*

*Իմ մեռած հարսնացուն ամեն օր,
Երբ խաղաղ երեկոն է փոփում,
Հայտնվում է անհայտ, հեռավոր
Իր երկրից ու կրծքիս է փարվում:*

*Մեռնելիս նա ասաց՝ ես կըգամ,
Մեկնելիս նա թողեց մի ավանդ.
Ու գալիս է որպես ուրվական,
Փայփայում է իմ սիրտը հիվանդ:*

*Համբուրում է շուրթերը իմ ցուրտ,
Շշնջում է խոսքեր դյուրական,
Ինձ հայտնում է պայծառ մի խորհուրդ
Ու նորից շշնջում՝ ես կըգամ:
(«Խորհրդավոր սեր»,
հ. 1, էջ 194:)*

Մեր համոզմամբ, Տերյանի պոեզիայում մաքուր անապեստյան տողերը շատ չեն և շատ անգամ շեշտադրության որոշ խախտումներով են երևան գալիս: «Առանձին դեպքերում այս կարգը խախտվում է՝ անապեստին խառնվում են քողադոտային և նույնիսկ դակտիլյան ոտքեր»⁸: Աներկբա է, այս ձևում կարևորվում են նաև միավանկ բառերը, որոնք հենց խթան են որոշ խախտումների: Շատ դեպքերում ոտքի գլխավոր շեշտը

⁸ Է. Զրբաշյան, Վահան Տերյանի տաղաչափական համակարգը, Եր., 1995, էջ 63:

կրում են ոչ թե երկվանկ բառերը, այլ՝ միավանկ: Խնդիր է առաջանում նաև բառի (և՛ միավանկ, և՛ երկվանկ) երկու հարևան ոտքերի միջև բաժանման: Սա է պատճառը, որ Տերյանը անհրաժեշտության դեպքում դիմում է այն միջոցին, որը տաղաչափության մեջ կոչվում է բառական ոտքերի հատում՝ ռիթմական ոտքերով⁹: Հավելենք, որ Վ. Տերյանի գործերում հանդիպում ենք երկոտնյա անապեստ («Անան երգ»), եռոտնյա անապեստ («Անջատման երգ», Անհանգիստ է հոգիս ու տրտում»), եռոտնյա-երկոտնյա անապեստ («Չըզիտեմ՝ այս տխուր աշխարհում»), եռոտնյա անապեստ՝ մեկոտնյա, երկոտնյա անապեստյան տողերի խառնուրդով («Տխուր երգ», «Հեկեկում է անվերջ»), քառոտնյա-եռոտնյա անապեստ («Մութն ընկավ»):

Ուշագրավ է, որ Վ. Տերյանից առաջ հայերենում առհասարակ չեն կիրառվել ամֆիբրաքս (քողադոտ) և դակտիլ (ստեղն) տաղաչափական ձևերը: Մրանցից առաջինի դեպքում շեշտվում է երկրորդ վանկը, իսկ դակտիլի պարագայում՝ առաջին վանկը: Անշուշտ, այս տաղաչափական ձևերի կիրառման համար անհրաժեշտ է հատուկ նպատակադրում, քանի որ մեր լեզուն լայն հնարավորություն չի ընձեռում սրանց գործադրման համար: Այս ձևերում կարևորվում է որոշիչ հոդը, օժանդակ բայը, ինչպես նաև ոտքերի վերջում, շեշտից հետո հանդիսացող միավանկ բառը: Տեղին է հիշատակել, որ ռիթմի պահպանման համար, եռոտնյա տողն ընկալվում է իբրև մեկ արտասանական ամբողջություն, որի մեջ երեք անգամ, խստորեն միևնույն տեղում շեշտի շնորհիվ բարձրանում է հնչերանգը: Այսպես՝

*Պայծառ են աստղերը,
Աստղերը շողուն են,
Սրտում իմ ըստվեր է,
Խավար է հոգում իմ:
Ուղին իմ խոտոր է
Ու միշտ ես մեկին եմ,
Տրտում ու մոլոր է,
Մոլոր է հոգին իմ...*

(«Պայծառ են աստղերը...»,
հ. 2, էջ 78:)

*Աշուն է. օրերը ցրտում են...
Գիշերը սուզվում է միգում.
Այնքան քնքշություն կա սրտում իմ,
Այնքան մեղմություն իմ հոգում:*

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

*Այնքա՛ն տխրություն, և անուշ է,
Անուշ է ցավն այս հետին.-
Բոլորը երազ է և հուշ է,
Ոսկի է — թափվում է գետին...*

*(«Աշուն է. օրերը ցրտում են...»,
հ. 1, էջ 230:)*

*Գինով եմ, գինով եմ ես էլ,
Թեթև եմ, անհոգ, լեզվանի.
Օրորիր, մեզ պանդոկ կարուսեղ,
Օրորիր, օրորիր մեզ գինի:*

*(«Գինով եմ, գինով եմ ես էլ...»,
հ. 2, էջ 48:)*

Վ. Տերյանի պոեզիայում հետաքրքիր է դակտիլային տողի կառուցումը: «Նա տողերի սկզբում միշտ դնում է առաջին վանկի վրա անպայման շեշտ կրող որևէ բառ, որով և սկիզբ է դրվում տողի դակտիլային ընթացքին: Մնացածը արդեն, ինչպես ասվում է, տեխնիկայի հարց է. 1-ին վանկի շեշտից հետո պետք է ընտրել այնպիսի բառեր, որոնք ապահովեն նաև 4, 7-րդ վանկերի շեշտադրությունը, այսինքն՝ դակտիլային կարգը»¹⁰: Վ. Տերյանն այս չափով ունի գրված ընդամենը 6 բանաստեղծություն: Օրինակ՝

*Դուրսը՝ մայիսն է, արքածը,
Դուրսը՝ խնդում ու աղմուկ.
Ցուրտ է զնդանը մեր, թաց է,
Միրտ իմ, անբախտ դու մանուկ.
Լույս է երկինքն ու փողոցը,
Դուրսը՝ գարուն է անմութ.
Դառն են հուշերը մեր, խոց են,
Ողջը անխինդ ու անգութ.
Միրտ իմ, հիվանդ իմ, բալիկ իմ,
Օրը մեր, տունը մեր՝ ցուրտ.
Ցավ է անցյալն ու գալիքը,
Ցավ է երազ ու խորհուրդ...*

*(«Դուրսը՝ մայիսն է, արքածը...»,
հ. 2, էջ 13:)*

¹⁰ նույն տեղում, էջ 72:

*Նույնն է հասցեդ հնամյա,
Նույնն է՝ օթելը «Պարիժ».
Բայց տրտմությունըս հիմա
Այլ է, կարոտըս՝ ուրիշ:*

*Նույնն է խանութը դեմի,
Նույն ցուցանակը հիմար.
Նույն մեղմախոս Վեռլենի
Երգն էս կրկնում դու համար:*
(«Նույնն է հասցեդ հնամյա...»,
հ. 1, էջ 274):

*Դիր քո կնիքը սրտում իմ,
Նիշըդ անկեղծ ու անջինջ.
Օ, հրեղեն էս դու և ջինջ,
Դիր քո կնիքը սրտում իմ:
Քեզ իմ աղոթքն ու երդումը,
Քեզ պատարագ ամեն ինչ.
Դիր քո կնիքը սրտում իմ,
Նիշըդ՝ անկեղծ ու անջինջ...*
(«Դիր քո կնիքը սրտում իմ...»,
հ. 1, էջ 226:)

Սակավ կիրառության են հասնում յամբական չափերը: Գրողը գիտակցում է, որ մեկ-երկու վանկերի բացարձակ գերակշռության սկզբունքը բոլոր պարագաներում կիրառելի չէ, որ չարաշահելու դեպքում այն կարող է կաշկանդել բանաստեղծական արտահայտման հնարավորությունները¹¹: Հայոց լեզվի վանկաբառային յուրահատկություններից ելնելով՝ Վ. Տերյանը մնաց մի քանի փորձերի սահմաններում և յամբական ձևին դիպվածային դեր հատկացրեց: Բերենք այս տաղաչափական ձևին բնորոշ դասական օրինակ՝

*Տեսա երազ մի վառ.
Ոսկի մի դուռ տեսա,
Վըրան փերուզ կամար,
Սյուները հուր տեսա:*

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 79:


*Վիճակագրությունը ներկայացնում ենք ըստ Է. Զրբաշյանի տվյալների:

Տեսա ծաղկած այգին,
Սոսի սուրբ ծառ տեսա,
Մի հրեշտակ անգին
Սոսից պայծառ տեսա:
Երկու բաժակ տեսա,
Ոսկի գինին էր վառ.
Երկու նիզակ տեսա,
Երկու անգին զոհար:
Միրտրս խոցված տեսա,
Վերքիս արյունն էր վառ.
Դահճիս կանգնած տեսա
Ասի — արևըս ա՛ն...

(«Տեսա երազ մի վառ...»,
հ. 1, էջ 228:)

Գծապատկերների օգնությամբ ներկայացնենք Վ. Տերյանի վանկաշեշտական ոտանավորի ընդհանուր պատկերը*.

■ անապետ (34) ■ ամփիթրաբոս (7) ■ դաքսիլ (6) ■ յամբ (8)



Վալտեր Բերբերյան

Վանկաշեշտական ոտանավորի կառուցման եղանակները

Վ. Տերյանի պոեզիայում

Ամփոփում

Վ. Տերյանը բանաստեղծական ձևերի և արտահայտչական միջոցների մեծ նորարար, բանաստեղծ-տեսաբան է: Տաղաչափության բնագավառում Վ. Տերյանը հեղափելում կատարեց՝ հասնելով երաժշտականության, ներդաշնակության և համաչափության: Նա հիմնականում օգտագործել է մեր լեզվին բնութագրական վանկական համակարգը՝ նախընտրելով 10=5+5 տողաչափը, բայց վանկաշեշտական համակարգի կիրառումը ևս կիրարկվել է նրա գործերում: Վանկաշեշտական համակարգին են պատկանում 57 գործ, որոնցից սուսկ 11-ն են գրված ճշգրիտ կայուն շեշտադրություն ունեցող պարզոտնյա ոտքերով, իսկ մնացածը թեև գրված են պարզոտնյա չափերով, այնուամենայնիվ, ունեն շեշտադրության առանձին խախտումներ:

Մեր զեկուցման մեջ բացահայտել ենք վանկաշեշտական ոտանավորի կառուցման եղանակները Վ. Տերյանի պոեզիայում և ապացուցել, որ որքան էլ գրավիչ լինեն վանկաշեշտական ոտանավորի սկզբունքները, դրանք հայերենում չեն կարող դառնալ համատարած: Ընդհանուր պատկերը ներկայացրել ենք վիճակագրության միջոցով:

В.Берберян

Способы организации силлабо-тонического стихосложения

в поэзии В. Терьяна

Резюме

В. Терьян является поэтом-теоретиком и великим новатором стихотворных форм и средств выражения. В. Терьян совершил революцию в области метрики, достигнув музыкальности, гармоничности и соразмерности. Он преимущественно пользовался слоговой системой, характерной для армянского языка, предпочитая 10=5+5 размер строки. Однако, в его произведениях применена также и силлабо-тоническая система. К таковой принадлежат 57 произведений, из которых лишь 11 написаны регулярной стопой с точным и стабильным акцентированием, а остальные, хотя и написаны регулярным размером, тем не менее имеют отдельные нарушения акцентирования.

В настоящем докладе нам удалось раскрыть способы организации силлабо-тонического стихосложения в поэзии В. Терьяна и доказать, что какими бы привлекательными ни были принципы силлабо-тонического

стихосложения, данный тип стиха не может стать общераспространенным в армянском языке. Общая картина представлена статистикой.

V.Berberyan

**The means of composition of accentual-syllabic verse
in the poetry of Vahan Terian**

Summary

Vahan Terian was a poet, theorist, and a great innovator of poetic forms and literary devices. He revolutionized the metre, achieving musicality, proportionality, and harmony. He mainly employed the syllabic system typical for the Armenian language, preferring the 10=5+5 line, but also introduced the accentual-syllabic system into his works. His works include 57 poems of accentual-syllabic type, yet only 11 of those are composed in regular meter with precise and consistent accentuation, while the rest, still using the regular meter, nevertheless exhibit several deviations of accentuation.

In this article, we have uncovered the means of composition of accentual-syllabic verse in the poetry of Vahan Terian and proved that however attractive the principles of accentual-syllabic verse might be, they cannot become widespread in Armenian. The overall pattern is represented statistically.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ԾՈՎԻՆԱՐ ՇԱՀԻՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու

ՄԵՏԱՔՍՅԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ,

ԱՐԵՎԻԿ ՄԱՂՈՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ օտար լեզուների
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մագիստրոսներ

ՀՏՂ 373.3:811.19:004

ՀՀ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԴԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

**ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ/ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ**

Բանալի բառեր. հիմնական թեմա, մուլտիմեդիա տեխնոլոգիա, տեսողական և անիմացիոն ազդեցություններ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, փոխադարձ հարաբերություններ, ուսումնական միջավայր, մոտիվացիա, համագործակցություն, հիշելու կարողություն:

Ключевые слова: основной предмет, мультимедийные технологии, визуальные и анимационные эффекты, информационные и коммуникационные технологии, взаимные отношения, среда обучения, мотивация, сотрудничество, способность запоминания.

Key words: key subject; multimedia technology; visual and animation effects; information and communication technologies; mutual relationship; learning environment; motivation; collaboration; retention.

The new era assigns new challenges and duties on the modern teacher. The tradition of English teaching has been changed with the remarkable entry of technology. Technology provides so many options as making teaching interesting and also making teaching more productive in terms of improvements. Technology is one of the most significant drivers of both social and linguistic change.

At present the role and status of English is that it is the language of social context, political, sociocultural, business, education, industries, media, library, communication across borders, and key subject in curriculum and language of imparting education. It is also a crucial determinant for university entrance and processing well paid jobs in the commercial sector.

With the rapid development of science and technology, the emerging and developing of multimedia technology and its application to teaching, featuring audio, visual, animation effects comes into full play in English class teaching and sets a favorable platform for reform and exploration on English teaching model in the new era. Technological innovations have gone hand - in -hand with the growth of English and are changing the way in which we communicate.

The effect of technology has become huge in teaching and learning the language in addition to the instructor's role. In other words, the role of the instructor together with the role of the technology can lead to advanced learning results.

It is undeniable that vocabulary plays an important role in mastering a foreign language. Vocabulary is an important element in second language acquisition. By having rich vocabulary, students can improve their listening, speaking, reading and writing abilities; not only in the way they comprehend but also in the way they produce language. It is the first and foremost important step in language acquisition. In a classroom where students are not finding themselves comfortable with L2, language learning can be made interactive and interesting with the introduction of appropriate vocabulary exercises.

Vocabulary is an essential component for successful communication in the second language classroom. While grammar is important, a lack of vocabulary may result in complete failure to convey a message. Vocabulary of a language is just like bricks of a high building. Despite quite small pieces, they are vital to the great structure. Wilkins rightly says, “Without grammar very little can be conveyed....but without vocabulary nothing can be conveyed”. Therefore the study of vocabulary is at the center while learning a new language. English being a second language or foreign language, one needs to learn vocabulary in the systematic way.

The main aim of this article is to show what modern technologies are predominantly used in vocabulary teaching and learning and in what way. When we come across a word and try to understand its meaning we will have to look at the context in which it is used. In the past, students were usually presented with reading texts or text books when they studied vocabulary. The development of information and communication technologies (ICT) through teaching and studying activities become more varied, especially when dealing with vocabulary. According to Dudeney and Young the use of technology as a tool

to develop the different language skills has received great attention, so that teachers are frequently exposed to new materials.¹

ICT is known to be the best source to any conventional classroom, especially when used properly and could be a useful thing to the foreign language to increase the vocabulary use in the classroom. We can state that the Internet is a tool which has great potential in the language classroom, but its effectiveness in practice depends to a large extent on the way it is exploited by teachers and students.

Lanni points out that these resources let teachers to make everything noticeable as well as more comprehensible that helps in analyzing and organizing information, therefore allowing students to get in touch with different types of media, texts, styles, and registers, which in turn improves vocabulary and language understanding.²

Most research on vocabulary acquisition and CALL (Computer Assisted Language Learning) has focused on the effects of multimedia glosses, and the same is true for reading comprehension, since vocabulary and reading are closely and mutually related. This mutual relationship accounts for the fact that many research studies on vocabulary development and CALL also examine reading comprehension, and vice versa. One example of the effect of multimedia glosses for vocabulary development were carried out by Chun and Plass who presented the positive results of three studies with students in their second year of German who used Cyberbuch, a multimedia application offering different types of annotations (picture, text, video). The goals of this study included the exploration of incidental vocabulary learning and the examination of the effectiveness of multimedia annotations on vocabulary acquisition. The results of the mentioned case study supported previous research on the effectiveness of different types of

¹ Dudeney G., (2000). The Internet and the Language Classroom (Vol. X). Cambridge: Cambridge University Press, p. 12

² Lanni Daniela. (2005). The Rationale: ICT in Language Teaching in 6 Points. <http://www.Itiscannizzaro.net/lanni/articles/rationale.htm>. Retrieved on January 29th, pp. 5-6

annotations according to which visual imagery was found to help in learning and retention of new foreign words and structures. ³

Moreover, visual multimedia advance organizers were found to help not only recalling new words and structures, but also act as facilitators of reading comprehension, which stresses the close relationship between vocabulary and reading. Text + picture annotations produced the best results in the recall protocol focusing on reading comprehension. Multimedia is not used only for glossing texts. Multimedia is a central component of good computer-assisted skill-building software. ⁴

Other research that focused on vocabulary development with technology argued for the increased effectiveness of multimedia-enhanced electronic dictionaries designed specifically for English language learners, and which have several built-in aids that their book counterparts cannot provide (e.g. the Longman Interactive English Dictionary, the Oxford Picture Dictionary Interactive, etc.)⁵

Current applications of information technology in educational contexts express approval that new technology-based models of teaching and learning have the potential to bloom all through educational outcomes. Technology-based innovations provide particular challenges and opportunities via the trustworthy adoption of Information Communication Technologies (ICTs) and CALL applications whereby technology can be used to improve the learning environment for teachers and students simply because the goal is to create learning environments where students are actively engaged in the learning process. Nowadays, theories of learning highlight the significance of engaging students in the learning process and lately different technologies has been

³ Chun D. and Plass J., (1996). Effects of Multimedia Annotations on Vocabulary Acquisition. The Modern Language Journal, 80 (ii), University of Pittsburgh, Blackwell Publishing Ltd, pp. 183-185

⁴ 12 Chun D. and Plass J., (1996). Facilitating Reading Comprehension with Multimedia System, 24 (4), Great Britain, Pergamon, pp. 503-519

⁵ Butler-Pascoe M. E. and Wiburg K. M., (2003). Technology and Teaching English Language Learners, Belgrade, Pearson Education, Inc., pp. 126-127

designed to support active engagement in learning. One such technology is the Interactive White Board (IWB).

The value of the IWB is that it improves conversation. Becta study claims that foreign language teachers realize that the Interactive White Board can aid certain kinds of conversations and all pupils in the classroom may focus on the same point at the same time and conversation may then appear from that. When the teacher is navigating from one item to another, he or she looks at and interacts with the class. The teacher can concentrate on the student's language production. The teacher can sit and participate with the students, when reading, discussing, interacting with each other. When new vocabulary is required, the teacher can type the new word into the keyboard, and then it will be showed on the board in an atmosphere of flexibility, and accessibility, captivating students' attention, engagement, and motivation. Just by writing the new word onto the board, the conversation may start effectively. The students do not need to note down the word forthwith. By the end of the lesson, the reinforcement of the vocabulary can be done through demonstrating, underlying or circling. It can then be printed for the students and kept for the teacher. ⁶

The second suggestion of using an IWB in EFL classroom is because it delivers an authentic presentation of language. Campbell states that the IWB supports in presenting linguistic elements. The teacher can prepare a lesson in a Notebook file or Word Document, with the benefit of using the features of the Interactive Whiteboard by overwriting, highlighting or circling the items that he wants to underline.⁷

The IWB is an important support for language learning. Firstly, it gives a bridge that permits using the features of computers without interrupting communication. Secondly, it may develop new kinds of learning processes to captivate pupils' engagement, motivation, collaboration, retention as major psycho-pedagogical factors that promote the process of a successful language teaching and learning process.

⁶ Becta (2007). The Impact of ICT in Schools - A landscape review. Retrieved 18 December, 2009, from http://www.pedagogy.ir/images/pdf/impact_ict_schools.Pdf, p. 21

⁷ Campbell C., & Martin D., (2010). Interactive Whiteboards and the First Year Experience. Integrating IWBs into pre-service teacher education. Australian Journal of Teacher Education, Australia, Edith Cowan University, p. 6

The interactive board is an ideal device to teach vocabulary. Teachers do not need to bring any posters or pictures or any other visual materials. Everything can be brought to the lesson on a flash disc.

This presentation called “Shopping” can serve as an example of various kinds of exercises that can be used when teaching vocabulary. The first slide can be used as a motivation. A well known activity called “Hangman” encourages the pupils to find out what the lesson is going to be about.

The teacher can work with the whole class or divide the pupils into groups who try to win a point. The teacher moves the correct letter in its place in the line whenever the pupils’ tip is correct. The letters can also make sounds so that the pupils can hear the right pronunciation. The teacher holds a pen and writes a line in the picture whenever the letter is not correct. The second slide reveals the topic and encourages the pupils to think and talk about their own experience and knowledge.



The third slide easily checks or improves the pupils’ knowledge of the vocabulary. They move the squares with names of the shops to the right pictures. In this slide, the sentences are hidden behind “the screen shade” so that they are revealed one by one. The class can be divided into groups again and the groups win a point when they know the answer.



What kinds of shops can you show?

Any other kinds of shops?

You can buy toys in a ...

You can buy soap, toothpaste and perfumes in a ...

You can buy nails, hammers, brushes, ... in a ...

You can buy books in a ...

You can buy CD's in a ...

In this shop you can buy cheap second hand clothes, books and other things and you help to the charity...

In the forth slide the already known pictures are used again but one of them is hidden under the white rectangle. The pupils try to guess which one is missing. The teachers can play this game any times they wish and the pupils fix the vocabulary in a pleasant way. The next slide is similar to number four. Pupils have to read short descriptions and decide what kind of shop the particular sentence describes. Pupils can e.g. write their guesses on little pieces of paper and compete with the classmate. The one, who knows the correct answer, takes the piece of paper of the other one. The winner is the one with more pieces of paper.



The aim of this slide is to place the words in correct places.



Pupils practice body vocabulary and try to find the mistakes which were made by replacing the words under a correct picture.




Wordsearch – pupils are supposed to find the body words in all eight directions. They practice spelling. After the pupils complete the task they click on a “Click me for the answer” button and they see the correct answers .



The aim of this slide is to learn a body rhyme. First pupils try to read it and replace the pictures with words. After the reading practice they may learn it either in groups, pairs, individually or as a whole class.



Pupils may practice vocabulary by playing a well known game called Tic Tac Toe. This activity is also mentioned in the theoretical part and is supposed to be a type of a short activity which may be used in any lessons either to practice the language features or to have fun with the language. Teacher either uses flashcards or pupils translate words. For each correct answer they get either a cross or a naught and place them in a place they choose. The aim is to have three of their signs either in diagonal or vertical direction. The IWB offers the possibility of saving objects for further use so anytime a teacher thinks that she or he has time for a Tic Tac Toe places a grid from her or his gallery into a slide and pupils can enjoy the game.




This activity is for all the students to check their knowledge of clothes words. They come to the IWB, roll the dice and name a picture according to the numbers on them.



The teachers can also use computer resources for developing vocabulary skills.

Teacher may provide students with some words at the form of nouns, and students are asked to give the adjectives or adverbs of those words.

This exercise helps students learn different forms of each word such as noun, verb, adverb, adjective, etc., therefore, students can remember more words that share the same meanings but have different functions and usages.



This strategy is an excellent way to help students to visualize new words. It includes the following elements:

- vocabulary term
- phonetic spelling
- brief description
- linking word
- cartoon
- sentence that uses the vocabulary term. ⁸

Here is another fun vocabulary review game for a big or small class. Students gain listening practice and word meaning practice.

1. your vocabulary list all over the board. Don't write them in rows or columns, but all over the board so students need to find them.
- 2.Next, set up your class into 2 teams.
- 3.Call 1 student from each team to the front of the board. Then, when they are ready, say a clue about one of the words on the boards. "It is red and it's a fruit" Say it 2-3 times depending on class level.
- 4.The student who says the word "apple" the teacher is describing first wins a point for their team.
- 5.The winner of the game may sit, but the loser must stay and keep playing.
- 6.Choose another team member of the winning team to come up. Say a clue about another word...etc.
- 7.The game ends when everyone on the teams has had one or more chances to play. Count up the team points and declare a winner. ⁹

⁸https://is.muni.cz/th/ue6sl/interactive_whiteboard_in_teaching_english_to_young_learners.pdf?so=nx

In recent years, the usage of new information technologies in schools has been raised increasingly. Since the main goal of teaching foreign languages is the formation and development of a communicative culture of schoolchildren, the training of practical mastering a foreign language, the use of computer technology, Internet resources is the best approach in teaching. ICT becomes an integral tool in increasing students' interest and developing visual-figurative thinking. Everyone understood that the use of ICT in the learning process has the potential to activate cognitive, intellectual and independent activities of students. Information technology makes it is possible to change significantly the forms and methods of academic work.

The digital age has changed the conditions of life, formation and education. Everything changes around, and accordingly, the attitude towards learning must change.

**Ծ. Էդ. Շահիրյան,
Մ.Թադևոսյան, Ա. Մադոյան**

**ՀՀ հիմնական դպրոցի տարրական դասարաններում բառապաշարի
ուսուցումն/ուսումնառությունը նորագույն տեխնոլոգիաների
կիրառման միջոցով
Ամփոփում**

Սույն հոդվածը նվիրված է նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով անգլերենի բառապաշարի ուսուցմանը հայկական դպրոցների տարրական դասարաններում: Վերջին տարիներին շատ ավելի հաճախ է բարձրացվում դպրոցում նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման հարցը: Անգլերեն լեզվի դասավանդման գործընթացում, ուսուցանող համակարգչային ծրագրերի աշխատանքային ձևերից է բառապաշարի ուսուցումը: Որպես տեղեկատվական համակարգ, համացանցն իր օգտատերերին առաջարկում է ինֆորմացիայի և աղբյուրների հսկայական տեսականի: Բառապաշարի հարստացման համար շատ արդյունավետ է դասարանում օգտագործել էլեկտրոնային

⁹ <https://www.englishintaiwan.com/english-hub/lesson-plans/vocabulary-whiteboard-game-for-meanings>

գրատախտակ, որը մատուցվող նյութը ավելի հստակ, հետաքրքիր և ցայտուն է դարձնում:

Շ. ՁԺ. Շաիրյան, Մ. Դաժեոսյան, Ա. Մաժոյան
Обучение английскому произношению в начальных классах
основной школы в РА

Резюме

Статья посвящена проблемам развития английского словарного запаса с использованием новейших технологий, в начальных классах армянских основных школ. В последние годы вопрос об использовании новых информационных технологий в школе очень актуален. Одним из рабочих видов преподавания английского языка является преподавание лексики. В качестве информационной системы Интернет предлагает своим пользователям широкий спектр информации и ресурсов. Для обогащения словарного запаса, очень эффективно использовать в классе электронную доску, которая делает материал более доступным, интересным и наглядным.

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վանաձորի պետական համալսարանի հայոց լեզվի
ամբիոնի ասիստենտ, ք. գ. թ., դոցենտ

ՓԱՌԱՆՁԵՄ ՏՈՆՈՅԱՆ

Լոռու մարզ, գյուղ Ջրաշեն
տարրական դասարանների ուսուցչուհի

ՀՏԴ 37.016:811.19

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԾԱԿԱՆՆԵՐԸ Խ.

ԱՐՈՎՅԱՆԻ ՆԱԽԱՇԱԽԻՂ ԵՐԿՈՒՄ

Ключевые слова: учитель, ученик, способность мыслить и исследовать, философским направления, человеческое знание.

Key words: Teacher, pupile, ability to think and explore, philosophical trends, human knowledge.

Կառուցողական գաղափարն ուսուցիչներին մղում է ստեղծելու աշակերտներին մտածելու և հետազոտելու կարողություններով օժտված միջավայր, որի կարևոր բաղադրիչներն են.

1. Դասն սկսել հետաքրքիր և ուշագրավ հարցի առաջադրմամբ:

2. Ուսուցումը կառուցել առաջնային գաղափարների շուրջ:

3. Կարևորել աշակերտների տեսակետները և ուշադրություն դարձնել՝ նրանց կարիքներին և ուսումնական ծրագրերը համապատասխանեցնել դրանց:

4. Յուրաքանչյուր գնահատումը կատարել ուսուցման համատեքստում [1, 49-51]:

Ներկայացված չորս սկզբունքները կետ առ կետ համապատասխանում են Խ. Աբովյանի հեղինակած դասերին, ինչպես՝ «Նախ քան զդասն վարժապետն սկսանի խօսիլ ընդ մանկանց» [2, 9] զրույց-դասի շրջանակներում Խ. Աբովյանը, կարդալը և գրելը անվանելով *գրաւոր խոսակցություն*, հավաստում է, որ *մարդն ամէն ժամանակ չի կորոշ լեզուով խօսիլ*: Այնուհետև առաջադրում է *Մի թէ՛ էս յետի եկողքն չէին ուզել՝ որ իմանան թէ ինչ բան մեզ պատահեցաւ, Ո՛վ կարէր նոցա պատմել*: Որոնց անմիջապես հաջորդում է տրամաբանական պատասխանը. *էս հարկաւորութիւնը տեսնելով մարդիք հնարեցին տառք՝ կամ գրերը*: Տառուսուցման համար կարևորելով գծի գաղափարը, խորհուրդ է տալիս *զամենայն ջանք անել առանց շտապելոյ կամ գրել՝ ի վերայ տախտակի, կամ ցուցանել՝ ի վերայ աղիւսակին ըստ օրինակի. թէ ո՞րպէս՝ ի միոյ գծէ*

ելանեն բազում գիրք: Ուսումնական ծրագրերը համապատասխանեցնելով նորավարժների կարիքներին, Աբովյանը պարզապես խնդրում է՝ ի փառս Աստուծոյ ի բաց թողուլ գլխար անուանակոչութիւն տառից:

Յուրաքանչյուր դիտարկում Աբովյանը եզրափակում է *գոր և փորձով իսկ արարեալ է իմ* արտահայտությամբ, որը հուշում է նրա կատարած աշխատանքի մասին: Դասի յուրացման մասին Աբովյանը գրում է. *Այնքան պա՛րտ է հանդարտութեամբ վերակրկնել, մինչև երեխայն հասկացի և ինքն պատմեցէ:* Իսկ **ուշիմ** որոշիչով գնահատվում են այն աշակերտները, որոնք կկարողանան կարդացած գրերը գտնել բառերի մեջ [2, 12]:

Իր գիտամանկավարժական գործունեության ընթացքում Խ. Աբովյանը մաշտոցյան կերպով էր ըմբռնել դասավանդման փիլիսոփայությունը՝ լաւական և բարեխորհուրդ, և սեփական մասնագիտական տեսական ընտրությունից հետո սկսել էր ազատորեն զբաղվել մասնագիտական ստեղծագործ աշխատանքով: Որպես ուսուցիչ՝ Աբովյանը հստակ գիտեր, թե ինչ է ուզում. *Ձեզ համար սուրբ օրէնք շինեցէ՛ք, մէկ, բառ, մէկ խօսք չի կարդալ առանց միտք իմանալոյ, չէք գիտում, հարցրէ՛ք* (10) պատգամով նա դիմում է ոչ միայն նորավարժներին, այլ նաև ուսուցիչներին, որոնք հետագայում շարունակելու էին իր ազգանվեր գործունեությունը տարբեր ձևակերպումներով՝ այսօր կառուցողական կրթության իրատեսական՝ *ճշմարտությունը պետք է պարզել անմիջական դիտարկման մեթոդների և գիտական հետազոտության միջոցով* սահմանամաբ:

«Նախաշավիղը» այբբենարան է՝ իր ընթերցարանով, որն ունի ազգային ինքնաճանաչության նպատակ: «Նախաշավիղի» ընթերցարանը, խրատները և գերմանագիր բացատրականն ու «Նախագղեցությունը» Ռուբեն Զարյանն անվանում է «Աբովյանի մանկավարժական մտքի համարձակ խոյանքի վկայագրեր» [2, Ե-Զ], որոնք հայ ժողովրդի համար երբեք չպետք է կորցնեն իրենց կարևորությունը և միշտ պետք է մնան հայ ընթերցողի սեղանի զրքերը հատկապես դասագրքեր հեղինակելիս և մատաղ սերնդին կրթելիս, քանի որ մարդկային հիմնական գաղափարները՝ մարդասիրությունը, ծնողասիրությունը, ազգասիրությունը երբեք չեն հնանում և անընդհատ նորանալու էություն ունեն:

Ընթերցանության բաժնում Խ. Աբովյանը ներկայացնում է 11 դասեր, որոնք կարելի է դասակարգել ըստ կառուցողական կրթության նախահիմքը հանդիսացող տարբեր փիլիսոփայական ուղղությունների: Այսպես «Աստուծոյ երկիւղը պէտք է ունենալ», «Այլոց պէտք է օգնութիւն անել», «Միշտ ճշմարիտն պէտք է ասել» խրատ-դասերը հաստատում են թովիստների այն դրույթը, թե դատողության ու հավատի միավորումը մարդուն հնարավորություն է տալիս երևան հանել ճշմարտությունը:

«Երեխայն միշտ պետք է գթած լինի», «Ամենին պետք է սիրել» պատմությունները հաստատում են հումանիստների այն դրույթը, որ բոլոր երեխաներն ի ծնե լավն են ու բարի: «Աղքատասիրություն», «Ուղղամտություն» դասերը բացատրում են միջավայրի ու մարդու վարքագծի միջև եղած հարաբերակցությունները: «Ծնողասեր զաւակն», «Ծույլ երեխայն վերջը աղքատ կենայ», «Կամապաշտութիւնն ատելի է», «Անգգոյշ չի պետք է ըլիլ» դասերը պատմում են մարդկանց հատուկ փորձությունների մասին, որոնք ուրիշների օրինակով ստուգման են ենթարկվում և փոխվում են անհրաժեշտության դեպքում: Բոլոր խրատ-դասերի մեջ, սակայն, կա մի ընդհանրություն, հարակավոր է սովորել հանուն սեփական շահի, որը տարբեր ժամանակաշրջաններում տարբեր մոտիվացիաներ է ունենում, ուստի կրթության միջոցով պետք է վերափոխել դպրոցը և այն համայնքները, որոնցում ապրում են երեխաները՝ ապագա սերունդը:

Խ. Աբովյանի սեփական կրթական գործունեությունը փաստում է այն մասին, որ նա այն փիլիսոփայության կրողն է, ըստ որի սովորեցնելու համար միշտ էլ անհրաժեշտ է սովորել, քանի որ դրանք անխզելի գործընթացեր են. այդպես են կառուցվում մարդկային գիտելիքները: Նրա առաջնային նպատակը ուսուցումն արդյունավետ կազմակերպելն էր, որի համար էլ նա ջանում էր քաջատեղյակ լինել կրթության ժամանակակից մեթոդներին, տեսակետներին, որպեսզի ընտրի դասավանդման ուրույն հայեցակարգ: Այս մասին են վկայում նրա գիտամանկավարժական աշխատանքները: «Ճանաչել և դատել զամենայն՝ գոր լսեմք և տեսանեմք», - գրում է Աբովյանը: Երեխան պետք է իրը, առարկան շոշափի, որ կարենա մտքով հասու լինել նրան. *հարկ է նախ մեզ զգայարանօք բերել ի յայտ, ապա ի միտս ըմբռնել քաջ զնոցայն տիպար*: Մանկան միտքը բնական ընթացքից շեղել է նշանակում, երբ ստիպված է *կրկնել զբառս, որոց իմաստք չեն նմա յայտնի*:

Երեխան պետք է ճանաչի իրականությունը, բնական երևույթները: Տեսածը, շոշափածը բովանդակություն են դնում երեխայի սովորած բառերի ու հասկացողությունների մեջ: Այս հարցն ավելի մանրամասնաբար արծարծել է Խ. Աբովյանը *Պատմութիւն Տիգրանի կամ բարոյական խրատներ* հայ մանուկների համար գրվածքում: Տիգրանի մեջ խորացնելով նույն մտքերը, ֆրանսիական լուսավորիչների միջոցով ծանոթանալով վերածնության փիլիսոփայության հիմունքներին՝ նա ներկայացնում է փորձը՝ իբրև երևույթների ճանաչողության հիմք և մտահանգում խիզախ եզրակացությունների: Այս իմաստով Աբովյանը ընդհանուր գծեր ունի Պեստալոցցու հետ: Վերջինս «Ինչպես էր Գերտրուդը երեխաներին

ուսուցանում» գրվածքում ասում է. «Ամեն մի իմացության հիմք պետք է ընդունել դիտողականությունը, փորձը» [3, §1]:

Նախաշավիղում ներկայացված լեզվական յուրաքանչյուր դաս սկսվում է հստակ ձևակերպված նպատակի առաջադրումից և ապա նոր միայն ներկայացվում են դրան հասնելու ուղիները, օրինակ՝ «Վասն ցուցանելոյ զգօրութիւն վանկից» դասն սկսվում է *գորօրինակ բառդ մէկ քանի անգամ ա մարդու բերանից դուս գալիս հարցադրմամբ*, այնուհետև հանձնարարելով ուսուցիչներին բառերը պարզ արտասանելով սովորեցնել վանկատման կանոնները՝ սահմանում է վանկը որպէս մէկ անգամ բերնից դուրս եկած ձայն, այնուհետև կատարում է դասակարգում, բառերն ըստ վանկերի քանակի: Ուղղգրության ուսուցումը զուգահեռելով ուղղախոսությանը՝ Աբովյանը ներկայացնում է իր հաջորդ նպատակը. *վարժել զնկատողական հոգիս երեխային առ ամենայն առարկայս, որք կան զնովաւ*: Լեզվական դասերն ավարտվում են լեզվի կառուցվածքայնության բացատրությամբ, որը համեմատվում է նոր կառուցող տան հետ:

Նախաշավիղ երկի ուսումնասիրությունը փաստում է, որ Աբովյանը կերտել է այն՝ ուսումնառության նկատմամբ ունենալով կառուցողական մոտեցում, վերջինս ինքնակարգավորվող գործունեություն է, որը գաղափարական կառույցներ է ստեղծում դատողությունների և վերացական միջոցով: Վանկի գաղափարի ամրակայումից հետո մանկավարժ հեղինակը ներկայացնում է ձայնավոր և բաղաձայն հնչյունների էությունը, տարբերակման հիմքը աշակերտների օգնությամբ, քանի որ ուսումնառությունը ակտիվ գործընթաց է, և յուրաքանչյուր պահի նոր ընկալումները ձևավորվում են սովորողի գիտակցության մեջ արդեն գոյություն ունեցող գիտելիքների կառույցում: Գիտելիքի ամրակայման համար Խ. Աբովյանը առաջարկում է *բազումք կարեն դիտաւորութեամբ սխալ գիրք գրել և նովաւ փորձել զմտառութիւն երեխային*, հավաստելով, որ *յայսպիսի պարապման վարժապետն կարէ շատ անգամ ցոյց տալ թէ հարկաւոր տառք մոռացեալ է ինքն գրել այլ գիր, և թողուլ երեխային զի նա ուղղեսցէ զսխալն վարժապետին, թէ որքան զուրաճանան և խնդան նորա ոչ կարեմ պատմել*:

2000 թ. Ջեքլին և Մարտին Բրուքսներ հրատարակեցին «Ըմբռնման ոլորաններում, գործ կառուցողական դասասենյակի համար» գիրքը [4, 16], որտեղ ներկայացրին կառուցողական մեթոդներով աշխատող ուսուցչի 12 չափորոշիչները.

1. խրախուսել և ընդունել աշակերտների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը:

2. փոխներգործուն և ֆիզիկական միջոցներին զուգահեռ կիրառել նաև չմշակված, նախնական տվյալներ ու սկզբնաղբյուրներ:

3. Առաջադրանքները ձևակերպելիս կիրառել ճանաչողական եզրաբանություն, օրինակ՝ դասակարգել, վերլուծել, կանխատեսել, ստեղծել և այլն:

4. Թույլ տալ աշակերտներին իրենց պատասխաններով ուղղորդել դասը, վերափոխել դասավանդման ռազմավարությունները, մեթոդներն ու դասի բովանդակությունը:

5. Որևէ գաղափարի, հասկացության մասին սեփական պատկերացումն աշակերտներին հաղորդելուց առաջ նախ պարզել տվյալ հասկացության մասին աշակերտների գիտելիքներն ու կարծիքը:

6. Խրախուսել աշակերտներին երկխոսության մեջ մտնել թե իր, թե միմյանց հետ:

7. Քաջալերել հարցադրումները՝ աշակերտներին առաջադրելով բովանդակային և բաց հարցեր, ինչպես նաև դրդել նրանց՝ հարցեր տալ միմյանց:

8. Ձգտել լրացնել և զարգացնել աշակերտների նախնական պատասխանները:

9. Աշակերտներին ներգրավել այնպիսի փորձառությունների մեջ, որոնք հակասություններ են ծնում իրենց առաջադրած նախնական վարկածների հետ: Այնուհետև խրախուսել դրանց շուրջ ծավալած քննարկումները:

10. Հարցեր տալուց հետո աշակերտներին մտածելու ժամանակ տալ՝ սպասելով պատասխանների:

11. Աշակերտներին փոխհարաբերություններ կառուցելու և փոխհարաբերություններ ստեղծելու ժամանակ տալ:

12. Ուսումնառության պարբերական մոդելի հաճախակի օգտագործման միջոցով խթանել և զարգացնել աշակերտների բնական հետաքրքրասիրությունը:

Այսպիսով՝ համեմատելով արդիական թվացող այս չափորոշիչները աբովյանական մանակավարժական դրույթների հետ՝ կարող ենք ասել, որ դրանց հայ հեղինակը անդրադարձել է դեռևս 19-րդ դարում՝ կրթելով հայ մանուկներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, էջ 49-51:

2. **Խաչատուր Աբովյան**, Նախաշավիղ կրթութեան ի պետս նորավարժից, Հայկական ԽՍՀ պետական հրատարակչություն, Յերեվան, 1940, էջ 9:

3. **Иоганн Генрих Песталоцци**, Как Гертруда учит своих детей, Письмо девятое.

4. **Jacqueline Grennon Brooks, Martin G. Brooks**, In Search of Understanding, the Case for Constructivist Classrooms, 2000:

Լ. Պետրոսյան, Փ. Տոնոյան

**Կառուցողական կրթության նախադրյալները
Խ. Աբովյանի Նախաշտաբի երկում
Ամփոփում**

Կառուցողական գաղափարն ուսուցիչներին մղում է ստեղծելու աշակերտներին մտածելու և հետազոտելու կարողություններով օժտված միջավայր՝ առաջարկելով չորս սկզբունքներ, որոնք համապատասխանում են Խ. Աբովյանի հեղինակած դասերին:

«Նախաշավիղը» այբբենարան է՝ իր ընթերցարանով, որն ունի ազգային ինքնաճանաչության նպատակ: Ընթերցանության բաժնում Խ. Աբովյանը ներկայացնում է 11 դասեր, որոնք դասակարգվում են ըստ կառուցողական կրթության նախահիմքը հանդիսացող տարբեր փիլիսոփայական ուղղությունների:

Խ. Աբովյանի սեփական կրթական գործունեությունը փաստում է այն մասին, որ նա այն փիլիսոփայության կրողն է, ըստ որի սովորեցնելու համար միշտ էլ անհրաժեշտ է սովորել, քանի որ դրանք անխզելի գործընթացեր են. այդպես են կառուցվում մարդկային գիտելիքները: Համեմատելով արդիական թվացող չափորոշիչները աբովյանական մանակավարժական դրույթների հետ՝ կարող ենք ասել, որ դրանց հայ հեղինակը անդրադարձել է դեռևս 19-րդ դարում՝ կրթելով հայ մանուկներին:

Л. Петросян, П. Тоноян

**Предпосылки конструктивного образования в работе Хачатура Абовяна
«Основы образования»
Резюме**

Конструктивные идеи мотивируют учителей создавать среду, которая способна обеспечить ученикам способность мыслить и исследовать.

Конструктивные идеи предполагают четыре принципа, которые полностью соответствуют урокам Хачатура Абовяна. «Основы образования» - это уникальный учебник с секцией чтения и имеет цель национального самосознания. В разделе чтения Х. Абовян представляет 11 уроков, классифицированных по различным философским направлениям, которые составляют основу конструктивного образования.

Образовательная деятельность Абовяна свидетельствует о том, что он является носителем убеждения, что преподавание и обучение это неотделимые процессы, и нужно учиться, чтобы учить. Именно таким образом строится человеческое знание. Сравнивая современные педагогические стандарты с педагогическими положениями Абовяна, мы можем констатировать, что армянский писатель затронул современные педагогические стандарты еще в XIX веке и образовал армянских детей.

L. Petrosyan, P. Tonoyan

**Prerequisites of Constructive Education in Khachatur Abovyan's
"Introduction to Education"**

Summary

Constructive ideas motivate teachers to create an environment that is capable of providing pupils an ability to think and explore. Constructive ideas presuppose four principles that are completely in line with Khachatur Abovyan's lessons.

"Introduction to Education" is a unique primer with a reading section and has a goal of national self-awareness. In the reading section, Kh. Abovyan presents 11 lessons classified according to various philosophical trends that form the basis of constructive education.

Kh. Abovyan's own educational activities testify to the fact that he is the bearer of the belief that teaching and learning are inseparable processes, and one has to learn in order to teach. This is how human knowledge is built. Comparing modern pedagogical standards with Abovyan's pedagogical provisions, we can state that the Armenian writer touched upon the modern pedagogical standards back in the 19th century and educated Armenian children.

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՑԱՆ

Խ. Արուլյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության տեսության
և պատմության ամբիոնի հայցորդ

ՀՏԴ 37.017.4:39

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ
ԷԹՆՈՍՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Բանալի բառեր և արտահայտություններ. ընտանիք, դաստիարակություն, ազգ, էթնիկական, մանկավարժություն, կրոն, պաշտամունք, մարդասիրություն, մշակույթ, ավանդույթ, հոգևոր, արժեքներ:

Ключевые слова и выражения: семья, воспитание, нация, этническая, педагогика, религия, культ, гуманизм, культура, традиция, духовность, ценности.

Key words and expressions: family, upbringing, nation, ethnic, pedagogy, religion, cult, humanism, culture, tradition, spirituality, values.

Մանկավարժ Գ. Ն. Վոլկովը «էթնոմանկավարժություն» եզրույթը սահմանում է որպես աճող սերնդի դաստիարակության գործում ժողովրդի փորձի, մանկավարժական հայացքների, կյանքի, ընտանիքի, ցեղի, տոհմի, ազգի մանկավարժության մասին գիտություն [13, էջ 8]:

Ընտանիքի, ցեղի, տոհմի, ազգի մանկավարժական գաղափարներն արտացոլվում են նրա մանկավարժական մշակույթում, որը հասարակական մշակույթի բաղկացուցիչ մասն է:

Հոգու մշակույթի մասին փոխաբերական իմաստով առաջին անգամ գրել է Մարկոս Ցիցերոնը. «...Ինչպես պարարտ դաշտն առանց մշակելու բերք չի տա, այդպես էլ՝ հոգին: Հոգու մշակումը հենց փիլիսոփայությունն է» [15; հատված՝ V-13]: Ցիցերոնը դրանով առաջ է քաշել մանկավարժական, փիլիսոփայական ուշագրավ գաղափար, ըստ որի՝ մշակել մարդու հոգին նշանակում է ձևավորել մարդուն:

Ըստ Յու.Վոլկովի՝ մշակույթն արժեհամակարգ է, կենսական պատկերացումների, գործունեության օրինակների, մարդկային գործունեության առարկայացած ամբողջություն, որը փոխանցվում է սերունդներին [14, էջ 47]: Անկախ տարբեր տեսանկյուններից կատարվող ձևակերպումների՝ ակներև է այն իրողությունը, որ մարդը մշակույթը ստեղծել է իր զարգացման ընթացքում՝ որպես վայրի բնությունից իրեն սահմանազատող պաշտպանական թաղանթ, և որպես կենսաբանական տեսակ իր զարգացման ներկա փուլում այնքան է հեռացել վայրի

բնությունից, որ առանց մշակութային միջոցների այլևս չի կարող գոյատևել: Այսօրվա մարդը վերածվել է Տիեզերքը յուրացնողի և, բնականաբար, մշակույթի պահպանումն ու զարգացումը հասարակության համար վերածվել են կենսական անհրաժեշտության:

Մշակույթի հետ երեխայի շփումն սկսվում է ընտանիքում, որը, լինելով միջանձնային հարաբերությունների զարգացման արդյունք հանդիսացող խումբ և հասարակության կառուցվածքային միավոր, ոչ միայն իրեն ծնունդ տված մշակույթի կրողն է, այլև ունի իրեն ներհատուկ մշակույթ: *Ընտանեկան դաստիարակչական մշակույթի բաղադրիչներն են լեզուն և լեզվական արտահայտչամիջոցները, կրոնը, ավանդույթները, ծեսերը, ճաշատեսակները, ընտանեկան արխիվը (գրքեր, օրագրեր, փաստաթղթեր, նկարներ, հավաքածուներ), ինչպես նաև ընտանեկան պատմության մաս կազմող իրերն ու կառույցները (տուն, կահավորանք, դամբարան, արհեստանոց և այլն):*

Ընտանեկան մշակույթը փոխանցվում է էթնոմանկավարժության շնորհիվ, որը մշակույթի բաղադրիչ է:

Պայմանավորված այն իրողությամբ, որ մայրական հոգածությունը, խնամքը երեխայի նկատմամբ ավելի նախնական են, քան հայրականը, բնական է ենթադրել, որ ընտանեկան դաստիարակության մշակույթը մայրասկիզբ է և տարերայնորեն սկզբնավորվել է օրորոցի մոտ: Մայրը նախ բնագդաբար, իսկ հետո նաև գիտակցորեն ապահովել է երեխայի նախնական հիգիենիկ պայմանները և առանձնակի սննդակարգը: Նա փորձել է փոքրիկ մարդուն տալ առաջին դասերը, ինչ-որ բան սովորեցնել՝ առաջին բառը, խոսքը, խաղը, երգը: Մայրը երեխային նախնական գիտելիքներ հաղորդելուց ու որոշակի չափանիշներով դաստիարակելուց հետո է նրան հանձնել ազգակից տղամարդկանց խմբին կամ հորը: Կարևորն այն է, որ *ծնողների կողմից երեխայի նկատմամբ բնագդային խնամքն ու պաշտպանությունն աստիճանաբար միահյուսվել են ընտանիքի մյուս անդամների հասարակական խնամակալության, հոգևոր և ֆիզիկական զարգացում ապահովելու միջոցով պաշտպանության ապահովման պարտավորվածության հետ:* Ընտանեկան մշակույթի միջոցով դաստիարակվել ու կանոնավորվել է մարդու բնագդային մղումների իրականացումը՝ սնվելն ու բազմանալը:

Ընտանեկան էթնոդաստիարակչական մշակույթը պայմանավորված է նրա կենսատարածքի գործոնով: Մ. Նալբանդյանը, իմաստավորելով մարդու բնակվելու տարածաշրջանի և մշակույթի կապը, գրում է. «Փարիզի տարազահնարքը, այն շռայլության հեղինակները, որ գրեթե բովանդակ քաղաքակրթյալ աշխարհին հրովարտակ են տալիս այսպես կամ այնպես հագվիլ, իրենք իսկ կթողուն իրենց գեղեցիկ համարված հանդերձը և

կատիավին փաթաթվիլ արջի մորթու մեջ, եթե ընկնին բևեռային սառույցների մեջ» [9, էջ 581]: Ընտանիքին շրջապատող բնաշխարհի առանձնահատկություններն իրենց հետքն են թողնում ծնողի կողմից երեխայի հոգեկանի ձևավորման գործընթացի վրա: Ա. Նալչաջյանը, քննարկելով *իմպրինտինգի* երևույթը, գրում է. «Ցանկացած կենդանու, ինչպես նաև մարդու օնտոգենետիկական զարգացման և վարքի առանձնահատկությունների ըմբռնման համար կարևոր նշանակություն ունի այն, թե ինչպիսին է նրա կյանքի առաջին փորձը, ...միջավայրի ինչպիսի ներգործությունների է ենթարկվել» [11, էջ 114]: *Ծնողների միջնորդությամբ տան և բնաշխարհի հետ զգայական կապը երեխայի մեջ վերածվում է հայրենասիրության դաստիարակման կենսասոցիալական հիմքի:*

Ընտանեկան էթնոդաստիարակության մշակույթի կարևոր գործոն է լեզուն, որը բառային և ոչբառային հաղորդակցման համակարգ է: Լեզվի առանձնահատկությունն այն է, որ նրա միջոցով պահպանվում, հարստացվում ու փոխանցվում է տեղեկությունը, իսկ ամբողջությամբ վերցված՝ մշակույթը: Որպես մշակույթի կրիչ՝ լեզուն միաժամանակ նաև մշակույթի մի մասն է. «Հիմնականում լեզվի յուրացման ընթացքում են ձևավորվում անհատի մտածողությունն ու մյուս իմացական ընդունակությունները» [10, էջ 240]:

Գ.Ն. Վոլկովը մարդու հոգեկանի ձևավորման առանցքային գործոն է համարում կրոնը [13, էջ 146]: Կրոնը մշակույթի բաղկացուցիչ է և պատմականորեն ձևավորված ինքնատիպ երևույթ: Գ.Տ. Խրյուպյանը, քննարկելով հայ սոցիալական իմաստասիրության հարցերը, գրում է, որ Եզնիկը, Եղիշեն, Մ. Խորենացին, Փ. Բուզանդը փորձել են Կտակարանի յուրովի մեկնությամբ նպաստել իրենց ժողովրդի ազատագրական պայքարի որոշ հարցերի մշակմանը [6, էջ 286]:

Էթնոմանկավարժության տեսանկյունից նպատակահարմար ենք գտնում *ընտանեկան դաստիարակությունը դիտարկել որպես ծնողների, նախնիների կողմից սերնդափոխության ընթացքում մշակած առավել ցանկալի, ճիշտ և օգտակար համարվող նորմերի՝ վերացարկված արժեքների համակարգ:*

Պատմականորեն էթնոմանկավարժական մշակույթի տարրերը ծնվել են նախնադարում՝ տոհմացեղային հանրությունների ձևավորման ժամանակաշրջանում: Օրինակ՝ Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող Պորտասարի հնավայրի պեղումների արդյունքները ցույց են տալիս, որ արդեն մ.թ.ա. 9600-7000 թվականներին գոյություն է ունեցել նախնիների, մասնավորապես կնոջ պաշտամունք: Այսինքն՝ հասարակական գիտակցության մեջ պատմական զարգացման այդ

շրջանում, ըստ տոհմացեղային պատկերացումների, արդեն առանձնացվել է գաղափար, համաձայն որի՝ նախնին համարվել է օրինակելի, և եղել է ընտանեկան, տոհմային, ցեղային որոշակի նպատակ՝ սեփական անձի և խմբի միջոցով պահպանել ու փոխանցել այդ օրինակելիությունը: Կարելի է ասել, որ *դա տոհմացեղային պաշտամունքի միջոցով իրականացվող պարզունակ մանկավարժական գործընթաց էր*: Ուշագրավ է այս առումով Զ. Ֆրեյդի մտահանգումը տաբուի և ավանդույթի վերաբերյալ: Նա գրում է. «Դրանք սերնդից սերունդ պահպանվել են հավանաբար որպես ավանդույթների հետևանք՝ ծնողների և հասարակության հեղինակության շնորհիվ, բայց հնարավոր է, որ դրանք ապագա սերունդների մեջ արդեն «կազմակերպվել» են որպես ժառանգված հոգեմտավոր հարստության մաս» [17, էջ 45]: *Ծեսերն ու ավանդույթներն ըստ էության ընտանիք-հասարակության կողմից տարերայնորեն ստեղծված էթնոդաստիարակչական առաջին ինքնաբերական միջոցներն են:*

Գ.Խ. Խրլոպյանը, քննարկելով հայ հասարակության դիցաբանական մտածողությունից դեպի փիլիսոփայական անցում կատարելու գործընթացը, ուշադրություն է հրավիրում մշակույթի բնագավառում արժեքային կողմնորոշման նկատմամբ պետական քաղաքականության վրա: Մեծ Հայքի Արտաշես Ա արքայի մասին Գ.Խ. Խրլոպյանը գրում է հետևյալը. «Նա, ինչպես նաև նրանից հետո եկող գահակալները օրենքի ուժ տվեցին հայկական ցեղային միություններում գործող մի շարք սովորույթների և նորմերի» [6, էջ 33]: Այս առումով հիշատակելի է նաև Տիգրան Բ արքայից արքան, որն Անահիտի ոսկեձուլյ արձանի միջոցով պետականաշինության ասպարեզում կարևորել է ընտանիքի պաշտամունքի գաղափարը: Ամենաթանկ մետաղից ձուլված արձանի միջոցով պետականորեն առարկայացրել է ոչ միայն մայրության կենսաբանական գործառույթի պաշտամունքը, այլև արվեստի միջոցով հայուհի նախամորը վերագրվող՝ «ամենայն զգաստության մայր» էթնոսոցիալական արժեքը, ինչը բխում էր նախնիների ավանդած նորմերից [3, էջ 41]: Բնական է ենթադրել, որ «մայր» կենսասոցիալական երևույթի աստվածացումը, պաշտամունքը հինավուրց շրջանում ընտանեկան էթնոդաստիարակչական միջոցներից էին: Եվ քանի որ հայոց ընտանիքում առկա էր հարազատի պաշտամունք, ապա այդ երևույթը, բնականաբար, բացառում էր նաև ընտանեկան բռնությունը:

Էթնոմանկավարժական մշակույթի պատմության տեսանկյունից ուշագրավ է այն երևույթը, որ նախնիների պաշտամունքին զուգահեռ էթնիկական աստվածների կաճառներում հայտնվում են մշակույթի և մասնավորապես իմաստության, գրի ստեղծող, դպրության հովանավոր աստվածներ: Ըստ Յու. Ն. Ստոյարովի՝ հայկական դիցաբանում գրային

մշակույթի հետ առնչվում են Բախտը, Գրողը, Ժուկով-Ժամանակը և Տիրը [16, էջ 10]:

Ընդունելով սոցիալական հոգեվերլուծության այն գաղափարը, որ նախնիների օրինակով մարդը փորձում է վերագտնել իր «ես»-ը և ինքնադաստիարակվում է, ապա էթնոկաճառի բովանդակության զարգացողական թարմացումը խոսում է այն մասին, որ նախաստեղծ հրեշներից, տոտեմներից, աշխարհ ավերող հսկաներից դուրս՝ մարդը հաջողությամբ ստեղծել է նոր գաղափարական նպատակ. նա սկսել է իրեն նույնաբար փնտրել մշակույթ ստեղծող աստվածակերպ նախնիների մեջ: ***Նրա հոգևոր գիտակցությունն անցում է կատարել սպանող, որսորդ աստվածությունից դեպի կրթող, դաստիարակող աստվածությունը:*** Կարծում ենք, որ նման զարգացումների օրինակ արտացոլվել է հինավուրց Միհր աստծո կերպարում [12, 39-40 էջեր]: Հիսուս Քրիստոսի՝ Ավետարաններում արտացոլված կյանքը և գործունեությունն ուղղված են մարդու դաստիարակմանն ու վերադաստիարակմանը:

Ուշագրավ է մասնատված Մեծ Հայքի Վոսմշապուհ արքայի խաղացած դերը հայ էթնոմանկավարժական մշակույթի պատմության մեջ: Հիանալի հասկանալով, որ առանց պետական և կրոնական համակարգերում մայրենի լեզվի կիրառման ուժային կառույցները չեն կարող պահպանել հայ հանրությանը, նա պետական քաղաքականության խնդիր է դարձնում հայերեն տառերով հայերեն լեզվի համաժողովրդական ուսուցման գործընթացի կազմակերպումը: Այդ գործի իրականացումն արքան հանձնարարում է նախկին զինվորական Մեսրոպ Մաշտոցին, որը հաջողությամբ իրականացնում է այդ աննախադեպ առաքելությունը: Փաստորեն որպես մանկավարժ ազգային սրբության վերածված Մեսրոպ Մաշտոցը մայրենի լեզվանյութի միջոցով իրականացրել է ազգի ինքնապահպանմանն ուղղված դաստիարակություն: *Էթնոգրային համակարգը վերածվել է ազգային փրկության միջոցի և, դրա օգնությամբ հասարակությունը կարողացել է իրականացնել մշակույթի պահպանումը:* Ըստ Ա. Մուրավյովի՝ Մ. Մաշտոցը ստեղծել է Անդրկովկասի ժողովուրդների գիր-գրականությունը [8]: Այսպիսով՝ Մ. Մաշտոցի շնորհիվ հայկական մշակույթը ինքնաբերաբար հավաստվում է որպես ուսուցանող մշակույթ:

Հայ էթնոմանկավարժական գիտելիքների զարգացման գործում Մ. Մաշտոցի գործը շարունակել են Մ. Խորենացին, Անանիա Շիրակացին, Գրիգոր Տաթևացին և այլ մտավորականներ: Ըստ Լ. Ասատրյանի՝ 15-րդ դարի մտավորական Առաքել Սյունեցու մանկավարժական գործունեության մաս է կազմել նաև ազգային ավանդույթների պահպանումը [7, էջ 4]:

Հայ ժողովրդի նոր մանկավարժության անկյունաքարը դնող Խ. Աբովյանը կրթության հարցերի քննարկմանը մոտեցել է ոչ թե նեղ ազգային, այլ տարածաշրջանային և պետական տեսանկյունից: Նա մանկավարժական խնդիրները գիտականորեն լուծելու համար ուսումնասիրում է ոչ միայն հայերի [1, էջ 32], այլև Հայկական լեռնաշխարհում բնակվող այլ էթնոսների՝ քրդերի [1, էջ 243] և եզդիների [1, էջ 259] ազգագրությունը: Մանկավարժն ուսումնասիրում է նաև բնակարանը և արդյունքները հրատարակում «Գյուղական տների կառուցվածքը» հոդվածում [2, էջ 59]: Խ. Աբովյանը տան հատակագծային կառուցվածքին զուգահեռ վերլուծում է, նաև նրա բնակիչների կենցաղը, այդ անձանց միջև զարգացող ներխմբային, մասնավորապես էթնոընտանեկան փոխհարաբերությունները: Նա ուշադրություն է հրավիրում բնակարանում սերունդերի միջև ծավալված սոցիալական բախմանը [2, էջ 65]:

Ըստ Գ. Հակոբյանի՝ էթնոմանկավարժության դերը կարևորել են գրեթե բոլոր հայ մանկավարժները: Նա առանձնացնում է Ղ. Աղայանի գրական-մանկավարժական ժառանգությանը՝ նշելով, որ այն «...թե՛ ընտանիքում և թե՛ դպրոցում էթնոմանկավարժության հիմնարար սկզբունքների կիրառման լավագույն օրինակն է» [5, էջ 8]: Ընտանեկան դաստիարակության մեջ Ղ. Աղայանը կարևորում է ծնողի դերը, նրա անձնային և մանկավարժական մշակույթը [4, էջ 18]:

Էթնոմանկավարժական գաղափարների զարգացման և տեսության ձևավորման պատմական քննությունը ցույց է տալիս, որ պայմանավորված ընտանիքի կենսասոցիալական հիմնարար բնույթով՝ անհատների *ընտանեկան էթնոդաստիարակությունը տարբեր ժողովուրդների և պետությունների կյանքում հիմք է ծառայել ժողովրդի փրկության ծրագրերի մշակման և իրականացման համար: Ընտանիքում տարերայնորեն կամ գիտակցաբար դրվում են մարդու դաստիարակության արժեհամակարգային հիմքերը՝ աշխատանքային, սեռական, գեղագիտական, հայրենասիրական, բնապահպանական:*

Էթնոընտանեկան դաստիարակությունը որպես հիմնահարց ծնունդ տվող երկրորդ իրողությունը, ըստ մեզ, պայմանավորված է ընտանիք-հասարակություն-պետություն անբեկանելի կապով: Ընտանեկան կառույցի քայքայման արդյունքում խաթարվում է ապագա քաղաքացու բնականոն ձևավորման գործընթացը: Դա պարարտ հող է ստեղծում բացասական շղթայական հետևանքների առաջացման համար՝ թմրամոլություն, մարմնավաճառություն, սեռասոցիալական անառողջ վարքագիծ, մանկածնության անկում, հասարակության ծերացում: Արդյունքում վնասվում է ոչ միայն ազգային տնտեսությունը, այլև նրա ուժային կառույցները զրկվում են բնականոն համալրումից: *Ընտանեկան*

դաստիարակության խաթարումով վտանգվում է հասարակության և պետության անվտանգությունը:

Էթնոքոնտանեկան դաստիարակությունը որպես հիմնահարց ծնունդ տվող երրորդ իրողությունը տնտեսության համաշխարհայնացման արդյունքում ընթացող համամարդկային մշակույթի ձևավորման աննախադեպ գործընթացն է: Ժամանակակից ժողովրդավարական պետությունների համար կյանքի հրամայական պահանջ է դարձել իրականացնել այնպիսի կրթական քաղաքականություն, որի շնորհիվ բնականոն կերպով կընթանա մարդու, քաղաքացու քաղաքակիրթ հաղորդակցումն այլ էթնոկիրների հետ: Տիեզերքը նվաճող մարդկության համար կենսական պահանջ է դարձել համամարդկային ընտանիքի անդամի ձևավորման հարցը: Դա, բնականաբար, էթնոմանկավարժության հիմնախնդիր է առաջադրում՝ ***էթնոսի ներկայացուցչի և մարդկության՝ որպես մի մեծ ընտանիքի փոխհարաբերությունների դաստիարակումն ըստ համամարդկային մարդասիրության արժեհամակարգի:***

Հետևաբար ընտանեկան դաստիարակությունը՝ որպես համամարդկային մանկավարժական հիմնահարց, եղել է, կա ու կլինի բոլոր սերունդների համար: Պատմության թատերաբեմից հեռացել են այն ժողովուրդները, որոնք չեն կարողացել ստեղծել ընտանեկան մարդասիրական դաստիարակության համակարգ: Իսկ այն էթնոհանրությունները, որոնք իրենց դաստիարակչական մշակույթի ձևավորման շնորհիվ կարողացել են ստեղծել զարգացողական բնույթի կենսասոցիալական համակարգ, համաշխարհային պատմության մեջ առաջ են անցել մյուսներից՝ կառուցելով առաջատար պետություններ:

Օգտագործված գրականության ցանկ

- 1.Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր 8, -Եր.: ՀՍՍՌ ԳԱ հր., 1961, -471 էջ:
- 2.Աբովյան Խ. Երկերի լիակատար ժողովածու, հատոր 10, -Եր.: ՀՍՍՌ ԳԱ հր., 1961, -457 էջ:
- 3.Ազաթանգեղոս, Հայոց Պատմություն, -Եր.: Սովետական գրող, 1977, -192 էջ:
- 4.Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հատոր 4, -Եր.: Հայպետհրատ, 1963, -684 էջ:
- 5.Էթնոմանկավարժություն: Ուս.ուղեցույց / Կազմ.՝ Գ. Հակոբյան. -Եր.: Արտագերս, 2015, -152 էջ:
- 6.Խրլոպյան Գ.Տ., Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն, -Եր.: Երևանի համալսարանի հրատարակչություն, 1978, -446 էջ:

- 7.«Հայ մանկավարժության երախտավորները ժամանակակից մանկավարժական մոտեցումների համաբնագրում» հանրապետական գիտաժողովի զեկուցումների և գիտական հոդվածների ժողովածու, -Եր.: Արտագերս, 2018, -118 էջ:
- 8.Մեսրոպ Մաշտոցի «իրավունքները» պաշտպանվում են, էլ. հասցե՝ <https://www.alplus.am/12550.html>
- 9.Նալբանդյան Ս., Ընտիր երկեր, -Եր.: Հայկական ՍՍՌ ԳԱ հր.,1953, -684:
10. Նալչաջյան Ա., Մկրտչյան Ս., Էթնիկական մանկավարժություն, - Եր.: Զանգակ-97, 2003, -312 էջ:
11. Նալչաջյան Ա.Ա., Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, գիրք 1, , -Եր.: Լույս, 1991, -512 էջ:
12. Վասիլյան Վ., Առասպելներից մինչև Բյուրական, -Եր.: Սովետական գրող, 1985, -222 էջ:
13. Волков Г.Н., Этнопедагогика, -М.: Академия, 1999, -168 с.
14. Волков Ю.Г., Социология, -Ростов н/Дону.: Феникс, 2009, -571, [2] с.
15. Марк Тулий Цицерон, Тускуланские беседы, эл. ресурс: <http://ancientrome.ru/antlitrt/t.htm?a=1422368002#013>
16. Столяров Ю. Н., Мифы разных народов мира о ниспослании письменности, эл. ресурс: <http://www.gpntb.ru/win/inter-events/crimea2016/disk/1062.pdf>
17. Prof. Freud Sigmund, Тотем и табу, психология первобытной культуры и религии, Психологическая и психоаналитическая библиотека, выпуск VI, Государственное издательство, Москва, Петроград, 1913, -171 с.

Ա.Լ.Մանուկյան

**Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ
էթնոմանկավարժության մեջ
Անփոփում**

Հոդվածում փորձ է արվում մշակույթի և այդ համատեքստում մանկավարժության տեսության պատմական զարգացման ընթացքի վերլուծության միջոցով բացահայտել այն իրողությունները, որոնցով պայմանավորված է ընտանեկան դաստիարակության հիմնահարցը էթնիկական մանկավարժության մեջ:

Манукян А.Л.

**Проблема семейного воспитания в армянской этнопедагогической
культуре
Резюме**

В статье посредством анализа культуры и в этом контексте истории развития педагогической теории делается попытка выявить те реалии,

которыми семейное воспитание обуславливается как этническая педагогическая проблема.

Manukyan A.L.

The problem of family education in the armenian ethnopedagogical culture

Summary

This article attempts to reveals the realities by which family education is determined as an ethn-pedagogical problem. It does this by analyzing the culture, and in that context the history of the development of pedagogical theory.

ՇԱՐՄԱՂ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գեղարքունիքի մարզի Վարդենիկի

հ. 1 հիմնական դպրոց

ՀՏՂ 373:821.19

**ԳՈՒՆԱՅԻՆ ՄԱԿԴԻՐՆԵՐԸ Վ. ՏԵՐՅԱՆԻ «ԳԻՇԵՐ ԵՎ ՀՈՒՇԵՐ»
ՇԱՐՔՈՒՄ**

Տերյանի պոեզիայի կարևոր առանձնահատկություններից մեկը գույնի ինքնատիպ զգացողությունն է: Գույները Տերյանի զգացողության, բանաստեղծական ինքնատիպ երևակայության դրսևորումներն են, որոնք լրացնում, ամբողջական են դարձնում մեծ քնարերգուի նրբահյուս, եթերային, լիրիկական զգացմունքերով լի բանաստեղծական աշխարհը: Բանաստեղծը գույնը իր զգացմունքների թարգմանիչն է դարձրել: Նա գույներով <<թարգմանել>> է ուրիշ ոչ մի բառով չբացատրվող ամենամուրբ զգացմունքներն ու ապրումները՝ պատկերները դարձնելով գունագեղ, խոսքը՝ թրթռուն:

Տերյանի պոեզիայում հանդիպում ենք բազմաթիվ գույների՝ սև, ձերմակ, կապույտ, դեղին, կանաչ, մանուշակագույն, վարդագույն, կարմիր՝ իրենց նրբերանգերով: Իսկ որ գույներն են գործածված <<ԳՀ>> շարքում:

Նախ նշենք, որ այս շարքում այնքան էլ շատ չեն գունային մակդիրները: Դրանք են՝ սև, ձերմակ, կապույտ, դեղին, դեղինի իմաստով գործածված ոսկի բառը:

Շարքի ամենագործածական գույնը սևն է: (7 անգամ-սև խորհուրդ, սև խոսք, սև ճանապարհ, սև խոհեք, սև գիշեր, սև հուշեր, սև լռություն): Ժողովրդական բնույթի սև գունային մակդիրը Տերյանը վարպատորեն է կիրառել տվյալ բառի համար առաջին հայացքից անսովոր թվացող մակադրյալի հետ՝ իրար ձուլելով ժողովրդական ու անհատական լեզվամտածողությունը: Ինչպես՝ սև լռություն, սև խորհուրդ և այլն:

Շարքում տեղ գտած այն բանաստեղծությունները, որոնցում կիրառված է սև գունային մակդիրը, գրողի ամենաթախծոտ բանաստեղծություններն են, որոնցից <<գոհար արցունքի>> պես թափվում են քնարական հերոսի երկինք- հոգու տառապանքի անձրև արցունքները: Դրանք և՛ ներանձնական ապրումների, և՛ բանաստեղծական ներշնչանքի տառապանքներ են: Այդ հորդացող տառապանքի, թախծի արցունք-անձրևները մաքրում ու նոր, թաքմ շնչով են լցնում մարդու հոգին, ինչպես սովորական անձրևը՝ բնությանը: Մարդուն հավասարապես պետք է և՛ տխրություն, և՛ ուրախություն: Ասածի վկայությունն է Ա. Միսկարյանին

Տերյանի գրած նամակի հետևյալ տողերը. <<Թախծի ու տրտմության պահին առանձնանալ և մենության հովանու ներքո լալ ու անրջել՝ դա հոգու պահանջ է նույնքան անհրաժեշտ, որքան սնունդը...>>¹:

Այս գաղափարն է խտացած <<Միայնություն>> ստեղծագործության մեջ: Քնարական հերոսն ուզում է ընդմիշտ մոռանալ սիրտը խոցող հուշերը և տրվել մենության: Հիշելով ապարդյուն ու տաղտկալի անցնող օրերը և խաբեական ցնորքները՝ բանաստեղծն այլևս չի ուզում ո'չ երգել, ո'չ սիրել: Նա ուզում է, որն իր անամոք սրտին փովի սև լռությունը: Գունային **սև** մակդիրի միջոցով գրողն ընդգծել է լռության ու մենության ծանրությունն ու ահավորությունը:

Անցեք հուշեր իմ ապարդյուն, դարձեք ընդմիշտ, մոռացված էջ,
Անհուն փովի սև լռություն, միայնություն՝ իմ հոգու մեջ:

Մեկ այլ՝ <<Սև գիշեր, և հուշեր և խոհեր անհամար>> տողով սկսվող բանաստեղծությունը կարծես քնարական հերոսի հոգու անափ տխրության սիմֆոնիան լինի:

Ամեն ինչ տխուր է ու անխնդում, ամենն ինչ՝ անցյալ: Հերոսի ներքին դրամատիկ ապրումների ու զգացմունքների ողբերգական երանգն ավելի ընդգծելու համար Տերյանը ընտրել է **սև** մակդիրը, որի հաճախակի կրկնությունը դառնում է տառապանքի ու հույզերի լարման գագաթնակետ: Սև են և՛ գիշերը, և՛ հուշերը, և՛ խոհերը.

Սև գիշեր, և հուշեր, և խոհեր՝ անհամար,
Մոռացված երազներ՝ շուշաներ, թառամած...

Սև գունային մակդիրը շատ է գործածված նաև սիրային բանաստեղծություններում, որոնք արտահայտում են քնարական հերոսի՝ դրամատիզմով հագեցած ապրումները, հիասթափությունն ու տխուր տրամադրությունը:

Գույնը դառնում է հերոսի ներաշխարհը գեղարվեստորեն ներկայացնելու միջոց: Թերևս ուրիշ ոչ մի բառով այնքան դիպուկ ու խոր չէր արտահայտվի տրտմության խորությունը, որքան **սև** մակդիրի միջոցով: Այսպես՝

¹ <<Միայն նամականի>>, Երևան, էջ 290:

Խոնարհ եմ լինում ես, որպես գերի,

Եվ տրտմության սև խոսքեր չեմ ասում:

<<Մեղքի մթին քարայրից>> տողով սկսվող բանաստեղծության մեջ գործածված գունային մակդիրները ոչ թե առարկայի ու երևույթի արտաքին, այլ ներքին, անտեսանելի կողմերը բանաստեղծական սեփական ընկալմամբ բացահայտման միջոց են, որոնք այս դեպքում ավելի շատ վերացական նշանակություն ունեն: << Սև գիշեր> ասելով գրողը նկատի չունի գիշերվա մթությունը, այլ գիշերվա մեջ թաքնված անբացատրելի խորհուրդը.

Սև գիշերով ինձ կանչիր

Ամայի խոց ու այնտեղ

Հեզ մարմինս չար տանջիր...

Եթե սև է գիշերը, հետևաբար սև ու առեղծվածային է սիրահարներին գերող խորհուրդը:

Ես քեզ մերժել չեմ կարող

Ես ամեն ինչ կտամ քեզ.-

Սև խորհուրդը մեզ գերող

Ես գիտեմ, և դու գիտես...

Հայրենասիրական թեմայով գրված <<Հայրենիքում>>՝ բանաստեղծության մեջ գրողը նկարագրել է իր անանուն տառապանքը ավերված հայրենական տան նկատմամբ: Եվ բոլոր այն ճամփաները, որ հայրենիքից հեռու են տանում, բանաստեղծի համար սև են: Սև մակդիրի միջոցով բանաստեղծը ցույց է տվել իր սերն ու կապվածությունը հայրենի հողին ու հայրենիքին:

.....

Եվ ուր էլ գնամ՝ գլուխ դնելու

Հարազատ մի հող ես չեմ գտնելու

Սև ճանապարհիս օրերում դժնի:

Գունային հակադրության բացասական բաղադրիչ սև գույնին իրենց բազմազան երանգներով հակադրություն են կազմում շարքում գործածված <<լուսավոր>> գունային ձերմակ, կապույտ մակդիրները: Ձերմակը մաքրության խորհուրդն է, հոգու անաղարտությունն ու պարզությունը, այն ոչ թե առարկայի արտաքին գույնն է մատնանշում, այլ առարկայի, երևույթի ներքին, չերևացող գույնը՝ բանաստեղծի ընկալմամբ: Այս լուսավոր ու մաքուր գույնը Տերյանի պոեզիայում չափազանց եթերային է, որն ավելի շատ զգայական, քան տեսողական պատկերներ է ստեղծում: Տերյանի մոտ եզմամբ ձերմակ կարող են լինել ոչ միայն առարկանները, այլև գործողությունը: <<Ուշացած սեր>> բանաստեղծության մեջ ձերմակ

ածականը գործածվել է մակբայաբար՝ արտահայտչորեն բնութագրելով գործողությունը:

Մեկը կորած շիրմիս մոտ
Հեկեկում է ու լացում.-
Ում լացն է այն ում ցավոտ
Երգն է ճերմակ մրրկում...

Սպիտակ գունանուն մակդիրը գրողը հաճախ փոխարինել է արծաթ գոյականով:

Այն իր մեջ համատեղելով առարկայական ու հատկանշային իմաստ՝ ավելի

Պատկերավոր ու արտահայտիչ է դարձնում նկարագրվող առարկան:

... Որ կողմերով ժպիտով անուշ
Նետում ծիծաղիդ կարկաչն **արծաթե** ...

Տեքյանը գեղանկարչի վարպետությամբ գունային մակդիրների միջոցով ստեղծել է հրաշալի կտավ-բանաստեղծություններ, որոնք խոսքի և գույնի միջոցով տեսողական ու զգայական պատկերների անթերի ներդաշնակություն են կազմում:

Մյուս գույնը, որը բավական գործածական է Տեքյանի պոեզիայում, կապույտն է՝ իր բազմազան երանգներով: Ի տարբերություն մյուս շարքերի, այստեղ կապույտ գունային մակդիրը գործածված է մեկ անգամ՝ կապույտ խավար:

<<Հանդիպում>> բանաստեղծությունը Վ.Տեքյանի ամենանուրբ ու թախծաշունչ ստեղծագործություններից է, որը ոչ այնքան իրական, որքան վերացական նշանակություն ունի թե՛ անանուն սիրով, թե՛ անբացատրելի տառապանքով: Բանաստեղծական պատկերները քնարական հերոսի հույզերն են, որոնք սիմվոլային նշանակություն ունեն: Բանաստեղծությունում իշխող տրամադրությունը տխուր է, բայց խաղաղ (**նուրբ** ստվեր , **քնքուշ** փովել): Անգամ տիրող խավարը սպասվածի պես ոչ թե մութ կամ սև է, այլ՝ կապույտ; **Կապույտ** երազային գույն-մակդիրը նկարագրվող առարկան դարձնում է եթերային՝ իմաստային և զգացական առումով այն ներդաշնակելով մյուս մակդիրների հետ : Բերենք համապատասխան օրինակը.

Նուրբ ստվերները վառվում են քնքուշ,
Կապույտ խավարն է երկինքը պատում.-
Անուշ վարդերից մնաց միայն փուշ
Եվ ցնորքներից վիշտ ու վիատում...

Կապույտ գունանուն մակդիրի իմաստով շարքում գործածված է գոհար գոյականը:

Այն արտահայտում է բանաստեղծի անափ սերը աշնան նկատմամբ :Անձրևը արցունք է, այն էլ՝ գոհար :

... Դյուքանքը քո մեղմ խոսքի,

Արցունքները քո **գոհար**...

Մռայլ, երազային ու մաքրությունը խորհրդանշող գույներին ավելանում է նաև դեղինը, որը չափազանց հոգեհարազատ է Տերյանի հույզերին և սրտակից ընկեր դարձած աշնանը: Թվում է՝ աշունը ոչ թե բնության երևույթ է, այլ մարդ՝ թախծոտ ու քնքուշ զգացումներով լի, որին սիրում , որի դեմ բացում է իր տխուր սիրտը: Միախառնվում են մարդն ու աշունը, և երկուսը միասին դառնում աշուն-մարդ: Բանաստեղծն այնքան է սիրում աշունը, որ նրա տերևները ոչ թե սոսկ դեղին են, այլ՝ ոսկի -դեղին: Դեղինին փոխարինող ոսկի գունային մակդիրը բանաստեղծի՝ աշնան նկատմամբ ունեցած սիրո խտացումն է:

Քո մշուշը, քո ոսկի

Տերևները հողմավար...

Գունային մակդիրների շարքում դեղինը հիմնականում հանդես է գալիս իբրև տխուր տրամադրության գույն: Այլ դեպքերում դեղինով կազմված կապակցությունները դիտարկվում են իբրև քերականական որոշիչներ (օր. դեղին տերև), սակայն համատեքստում դրանք ձեռք են բերել փոխաբերական իմաստ՝ վերածվելով գունային մակդիրների: <<Անդարձություն>>բանաստեղծության մեջ դեղինը ոչ թե տերև լրացյալի գույնն է մատնանշում, այլ բանաստեղծի <<դեղին>>, այսինքն՝ անցած, մեռած հուշերը: Այսպես՝

Հողմը փռում է տերևներ դեղին

Որպես հուշերս-երագ ու մեռած...

Գունային մակդիրների համակարգում բացի տվյալ գույնի այլևայլ երանգներից, ընդունված է նաև մի <<գույն>>՝ անգույնը, որը բացարձակ որևէ գույն չնշելով, այնուամենայնիվ, ենթադրել է տալիս որոշակի գունային երանգ, առանձնապես՝ աղոտություն:

Տերյանի գունային մակդիրների ցանկում հանդիպում ենք նաև անգույն կոչվող մակդիրների: Օրինակ՝ գունատ աղջիկ, (Մ.Ա., էջ 31) (Որը հուզական երանգավորման շնորհիվ համարվում է ուղղակի մակդիր), **գունատ** դեմք, **դալուկ** հիվանդ, **դալուկ** դաշտ (ՄԱ), **դալուկ** շարք, և դալուկին իմաստով մոտ աղոտ բառը (բայց ոչ բոլոր կիրառություններում): Բերենք համապատասխան օրինակները.

Մենք բաժանված ենք: Օրերի փոշին

Դեռ չի աղոտել քո դեմքը գունատ...

Մեկ այլ կիրառության մեջ <<գունատը>>կարող է դիտարկվել իբրև տրամաբանական որոշիչ (ասենք՝ հիվանդը գունատ է,) սակայն այս դեպքում, շնորհիվ հուզարտահայտչական երանգի, այն համարվում է մակդիր: Ըստ Տերյանի՝ դալուկ կարող է լինել ոչ միայն մարդկային դեմքը, այլև...անցած օրերի շարքը՝ դրանով շեշտելով անցած օրերի միապաղաղ և ուրախությունից զուրկ լինելը: Ինչպես՝

Անցած օրերս շարքերով դալուկ


Շողում են ահա և անհետանում...

Կյանքից ու մարդկանցից հեռանալու, մենակ մնալու անգուսպ ցանկությունն է արտահայտված <<Մարդոց ժխտը թողնեմ հեռանամ >> տողով սկսվող բանաստեղծության մեջ: Մոայլ տրամադրությունն ու աննկարագրելի տվայտանքները քնարերգուն զուգորդել է թախծոտ ու անձրևոտ աշնան հետ: Բանաստեղծի ապրում-պատկերները հուզական բարձր լարում են ստացել տառապանքը պատկերավոր արտահայտող մակդիրների /մեռնող վարդ,դառը խոհ և այլն/և, հատկապես, անգույն մակդիրների միջոցով: Դալուկ,դժգունակ բազմակի ետադաս մակդիրներով շեշտված է բանաստեղծի համար թախծող վարդերի անսահման տխրությունը:

Գրկեմ վարդերս դալուկ,դժգունակ, -

Մեռնող վարդերս փայփայեմ ու լամ:

Շարքում գործածված գունային մակդիրների ընդհանուր պատկերը ներկայացնենք գունային աղյուսակի միջոցով:



Գրականություն

1. Վ. Տերյան, Երկեր, Երևան, <<Հայ դասականների գրադարան>>, 1989թ.:
2. Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական տերմինների բառարան, Ե., 1976թ.
3. <<Սիրային նամականի>>, Երևան:

Շ. Հարությունյան

**Գունային մակդիրներ Վ. Տերյանի «Գիշեր և հուշեր» շարքում
Անփոփում**

Հոդվածում անդրադարձել ենք սիրո և թախծի երգիչ Վ. Տերյանի «Գիշեր և հուշեր» բանաստեղծական շարքին: Վերլուծության են ենթարկված շարքում առկա գունանուն մակդիրները, որոնք հենց իր՝ գրողի քնարական ներաշխարհի բանաստեղծական արտացոլումն են:

Ш. АРУТЮНЯН

**Цветовые эпитеты в стихотворении В.Терьяна “Ночь и воспоминания”
Резюме**

В статье мы возвратились к стихотворному циклу Вагана Терьяна “Ночь и воспоминания” певцу любви и печали.

Разбору подлежали цветковые эпитеты, которые отражают внутренний мир поэта.

Sh. Harutyunyan

Colour named epithets in Vahan Teryan' "Night and Memories" series.

Summary

In this article we have come back to the sings of love and sadness Vahan Teryan's series of poems <<Night and Memories>>. In the article we have analysed colour named epithets existing in the series which are the reflection of the poet's lyric poetic inner world.

ԱՐՄԻՆԵ ՇԵԳՈՒՆՑ

ՀՀ Սյունիքի մարզի

Գորիսի N 4 ավագ դպրոցի տնօրեն

ՀՏՂ 37.014.6

**ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՍՈՐԵԼՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. վերահսկողություն, ուսուցում, գնահատում, ախտորոշում, մասնագիտական աճ, ինքնադրսևորում, ինքնարթագհայտում

Ключевые слова и выражения: контроль, обучение, оценивание, диагностика, профессиональный рост, самовыражение, самопознание.

Key words and expressions: supervision, education, assessment, diagnosis, professional growth, self-expression, self-discovery.

Վերահսկողությունը՝ որպես ուսուցման բարելավմանն ուղղված ղեկավարում ունի բավականին երկար պատմություն: Մակայն գրականության մեջ հնարավոր չէ հանդիպել վերահսկողության որևէ համընդհանուր սահմանման: Վերահսկողության ամենավաղ սահմանումներից մեկը լատինական ծագում ունի և նշանակում է հսկել կամ հսկողություն սահմանել որևէ բանի կամ մեկի նկատմամբ: Վերջին երկու տասնամյակների ընթացքում տարբեր հեղինակների կողմից ղեկավարները վերահսկողությունը խմբավորել են ըստ մոտեցումների


1. Դասավանդման վերահսկողություն
2. Կազմակերպչական վերահսկողություն
3. Մարդկային ռեսուրսների վերահսկողություն

Վերահսկողություն իրականացնել չի նշանակում, որ ուսուցիչներն անպայման ունեն մասնագիտական բացթողումներ ու թերություններ: Ըստ վերահսկողության վերաբերյալ բնորոշումներից մեկի, վերահսկողությունը դա երկկողմանի գործընթաց է, որի ընթացքում և ուսուցիչները, և վերահսկողները տարբեր փոխներգործությունների ընթացքում մասնագիտական աճ են ապրում:

Ըստ մեկ այլ մոտեցման վերահսկողը ուսուցչի հետ քայլում է այն ճանապարհով, որը մասնագիտական աճ է ենթադրում, իսկ այդ ճանապարհը անվերջ է և շարունակական բնույթ ունի: Այս ոճը վերահսկողը հաճախ որդեգրում է, երբ աշխատում է հատկապես սկսնակ ուսուցիչների հետ: Շատ դեպքերում դժվար է վերահսկողին ընկալել որպես և խորհրդատու, և իշխանության ներկայացուցիչ, կամ որպես և ընկեր, և

գնահատող միաժամանակ: Դրա համար անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվել: Վերահսկողին վերագրվում են մի շարք դերեր: Այդ դերերը կարելի է ներկայացնել գծապատկերի օգնությամբ, որը տրված է ստորև.

Գծապատկեր.



Վերահսկողները պետք է կարողանան ստեղծել համախոհների թիմ, որը պետք է ունենա նպատակ, այն է՝ մասնագիտական աճի ապահովում և դասավանդման արդյունավետության բարձրացում: Վերահսկողների աշխատանքի արդյունավետության վերաբերյալ իրենց ունեցած համակարգված գիտելիքները ներդնել գործնական հարթության մեջ, որը առկա բոլոր խոչընդոտները հեշտությամբ կհաղթահարվի:

3. Աշխատանքային միջավայրի ստեղծումը կնպաստի ազատ և հստակ հաղորդակցմանը, և ամենակարևորը՝ կնպաստի անկախ մտածելակերպի ձևավորմանը: Շատ կարևոր է, երբ աշխատանքային միջավայրը կայացած է, այն և վերահսկողի, և վերահսկվողի համար անհրաժեշտ է: Երկրորդ քայլում վերահսկողը պետք է կարողանա տվյալ ուսուցչի մասնագիտական և անհատական որակներին համապատասխան վերահսկողական ռազմավարություն մշակել, այնպիսի ոճ ընտրել, որը

համապատասխանում է և իրավիճակին, և ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մակարդակին: Երրորդ վերահսկողության ընթացքում վերահսկողը պետք է ուսուցչին ինքնադրսևորվելու հնարավորություն ընձեռի:

4. Հասարակության ուսումնադաստիարակչական գործընթացի և ուսուցիչների մասնագիտական զարգացման ու աճի համար:

Վերահսկողության իրականացման մոդելները

1. Ախտորոշման վերահսկողությունը

2. Զարգացման վերահսկողությունը

3. Խորհրդակցային- համագործակցային վերահսկողությունը,

4. Ինքնագնահատման վերահսկողությունը:

Ախտորոշման վերահսկողություն.

Ախտորոշման վերահսկողության պատմությունը կարճ է, այն սկսվում է 1960-ական թվականներից, հեղինակը Գուլիամերն է: Տերմինը վերցված է բժշկության ոլորտից: Հեղինակի կողմից նկատի է առնված այն հանգամանքը, որ վերահսկողի կողմից օգնություն և օժանդակություն ցուցաբերելուց առաջ պետք է ունենալ իրավիճակի հստակ ախտորոշում և դրան համապատասխան գործողությունների պլան մշակել: Ախտորոշման վերահսկողությունը երկարատև փուլային գործընթաց է և կրում է դասարանային բնույթ: Նրա նպատակը դասավանդման բարելավումն է: Ինչպես եք վերահսկում: Ախտորոշման վերահսկողությունը դարձնելու հաճախ է կիրառվում, սակայն ոչ միշտ է այն իր նպատակին ծառայում:

1. Նախնական խորհրդակցություն

2. Դասի դիտարկում

3. Վերլուծության և ռազմավարության ճշգրտում

4. Հետխորհրդակցային վերլուծություն

5. Վերահսկողական խորհրդակցություն

Ախտորոշման վերահսկողության հաջողությունները կախված են մի շարք ընդհանուր պայմաններից

1. Փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխօժանդակությունը:

2. Ուսուցիչին է որոշում, թե իր դասավանդման որ կողմերն են ենթական դիտարկման և քննարկման:

3. Գործընթացը շարունակվում է երկարատև ժամանակահատվածի ընթացքում (մոտ երեք ամսից մինչև մի քանի ուսումնական կիսամյակ)

4. Եվ ուսուցիչները, և վերահսկողը պետք է մասնակցեն վերլուծության գործընթացին:

5. Որոշման վերահսկողություն կիրառող վերահսկողը պետք է հստակ իմանա ուսուցիչների զգայական ընկալումները:

Վերահսկողության մյուս մոդելը զարգացման վերահսկողությունն է: Այս վերահսկողության նպատակը տարբեր մասնագիտական մակարդակի վրա գտնվող ուսուցիչներին միևնույն մակարդակի հասցնելն է: Զարգացման վերահսկողության գործընթացը ներկայացված է չորս ոճերով.

1. Դիրեկտիվ-տեղեկատվական
2. Համագործակցային
3. Ոչ դիրեկտիվ
4. Խորհրդակցային

Դիրեկտիվ հսկողության ոճը ներառում է հետևյալ վարքագիծը.

ա/ ուղղություն ցույց տալը

բ/ չափորոշիչներին համապատասխանելը

գ/ արդյունքը կանխատեսելի դարձնելը

Համագործակցային ոճը իր մեջ ներառում է լսելը, խնդիրների լուծելը, բանակցելը:

Արդյունքում ստեղծվում է համատեղ գործողությունների պլան:

Ոչ դիրեկտիվ ոճ. Ուսուցիչն ինքն է մշակում գործողությունների պլան և հասնում ցանկալի արդյունքների: Այս ոճի հատուկ են.

ա/ լսելը

բ/ հստակեցնելը

գ/ խրախուսելը

դ/ անդրադարձնելը

Դիրեկտիվ տեղեկատվական.

ա/ վերահսկողը բացահայտում է պրոբլեմը, ապա խնդրում իրեն տրամադրել հստակեցնող տեղեկատվություններ:

բ/ վերահսկողը լուծում է առաջարկում և խնդրում ուսուցչին մասնակցել պրոբլեմի լուծմանը:

գ/ վերահսկողը ամփոփում է արդյունքը

դ/ ուսուցիչը վերահաստատում է վերջնական եզրակացությունը:

Համագործակցային.

ա/ փորձում է բացայտել այն պրոբլեմը, որ ուսուցիչն է տեսնում իր առջև:

բ/ վերահսկողը և ուսուցիչները համատեղ լուծումներ են փնտրում
գ/ ուսուցիչն ինքն է լուծում պրոբլեմները
դ/ համատեղ մշակվում է գործողությունների պլան:

Ոչ դիփեկտիվ

ա.Վերահսկողը խնդրում է ուսուցչին ինքնուրույն բացահայտել պրոբլեմը

բ.հստակեցում և անդրադարձ, մինչ ուսուցիչը բացահայտում է պրոբլեմը

գ. Ուսուցիչը ինքն է լուծում պրոբլեմը

դ. Վերջնական որոշումը կայացնում է ուսուցիչը:

Խորհրդակցային-համագործակցային վերահսկողություն

Խորհրդակցային վերահսկողությունը դպրոցը դիտարկում է որպես փորձի և գիտելիքների փոխանակման կենտրոն, որտեղ խրախուսվում են փորձարկումները և հայտնագործությունները, նաև համարձակությունը: Խորհրդակցային վերահսկողության դեպքում վերահսկողի դերը համարվում է խմբերի աշխատանքը խթանելը: Այս վերահսկողությունը ուսուցիչների պահանջում են շարունակաբար օժանդակել և խրախուսել միմյանց:

Այն իրականացվում է փոքր խմբերով, քննարկումներ և խորհրդակցություններ անցկացնելու ձևով, որի ժամանակ վերահսկողը տալիս է հարցեր, ինչը օգնում է ուսուցիչներին հստակեցնել դպրոցի և դասավանդման վերաբերյալ իրենց սեփական ընկալումները և մտքերը:

Վերլուծելուց հետո վերահսկողը տալիս է աշխատանքային հրահանքներ, իսկ այդ հնահանքը բխում է դպրոցի հիմնական առաքելությունից, որն էլ օժանդակում է ուսուցիչների միջև համագործակցային հարաբերությունների հաստատմանը:

Համագործակցային վերահսկողության դեպքում անհրաժեշտ է, որ՝

1. Բոլոր ուսուցիչները շահագրգիռ լինեն շարունակական կրթության և մասնագիտական զարգացման գաղափարների իրականացման ուղղությամբ

2. Աշխատանքային խմբի անդամների ընտրությունը կատարվի ուսուցչի անհատական առանձնահատկությունների, նրա ընկալման ոճերի համապատասխան (նպատակահարմար ներառել տարբեր դասարաններում և տարբեր առարկաների դասավանդող ուսուցիչների):

Ավելի հստակ դա կարելի է պատկերացնել հետևյալ ձևով.

8. Դիտարկում-հաղորդակցություն-խնդիրների լուծում

Համագործակցային վերահսկողությունը հաջող է ընթանում, եթե տրամադրվում է ժամանակ, որպեսզի գործընթացում ներգրավված մարդիկ կարողանան համատեղ աշխատել: Ժամանակ տրամադրել՝ նշանակում է ընձեռել:

Վերահսկողության իրականացման հաջորդ մոդելը դա ինքնագնահատման վերահսկողությունն է:

Որն է նպատակը: Սեփական մանկավարժական գործունեությունը վերլուծելու ունակությունը, այսինքն որպեսզի ուսուցչի աշխատանքը լինի արդյունավետ ուսուցիչը պետք է կարողանա դասարանում իր դրսևորած վարքագիծը վերլուծել: Այս պարագայում վերահսկողը դառնում է դասընթացի դիտորդ և դասավանդման բուն գնահատումը կատարում է ուսուցիչն ինքը:

Ինքնագնահատման վերահսկողության գործընթացի կարևոր պահը համարվում է այն պահը, երբ ուսուցիչը հասկանում և ընդունում, որ այդ ընթացքում ստացվել է իր անհատական և մասնագիտական հատկանիշների ճշգրիտ պատկերը: Այն կարելի է պատկերել հետևյալ գծապատկերի միջոցով:

9.Գծապատկեր, ինքնագնահատման վերահսկողություն

Առավել արդյունավետ վերահսկողության մոդել կամ մոտեցում ընտրելը պայմանավորված է ուսուցչի և դասարանի բնութագրի մի շարք առանձնահատկություններով և վերահսկողի որակներով:

Վերահսկողությունն արդյունավետ է, եթե ընտրվում է տվյալ իրավիճակին և պայմաններին ու մարդկային ռեսուրսներին համապատասխան ոճ:

Գրականության ցանկ

1. Педагогическая энциклопедия, Москва, 1965г.
2. Христоматия по истории зарубежной педагогики, Москва, 1981 г.
3. Упражнение качеством образования. Сб. Метод материалов, НОО, ФСР, Москва. Росспен 2002

Ա. Շեգունց

Ուսուցչի աշխատանքի վերահսկողության իրականացման մոդելները Ամփոփում

Վերահսկողության իրականացման համար ընտրում եմ ուսուցման ժողովրդավարական ոճը, երբ բոլորը ընտրության, ազատ արտահայտվելու, առաջարկություններ անելու, որոշումներ կայացնելու հնարավորություն է ընձեռվում: Եվ բոլոր մասնակիցներին ներկայացվում է վերահսկողության

վերաբերյալ առկա մոտեցումները, մոդելները: Ուշադրություն է դարձվում վերահսկողի հատկանիշների, նպատակի, իրականացման մոդելի վրա և հետադարձ կապով ամփոփում թե գործնականում ինչ նորություն կներդնեմ իմ գործունեության մեջ:

А. Шегунц

Резюме

Для осуществления контроля выбираю учебный демократический стиль, когда всем предоставляется возможность выбора, возможность свободно выражать свое мнение, делать предложения, принимать решения. Всем участникам представляются имеющиеся подходы, модели, связанные с контролем. Обращается внимание на качественные данные того, кто контролирует, на цели, на реализацию модели. Обратной связью обобщаю, что нового на практике я внесу в свою деятельность.

A. Shegunts

Summary

In order to supervise, I select democratic teaching methods, when there is a possibility for a choice between teaching methods and there is a free speech, objections and decisions. Existing approaches and models of supervision are presented to the participants. It focuses on the purpose and the implementation model of the supervisor and summarizes the feedback as to what novelty I will put into practice.

ՌԻՄԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Վանաձորի №2 հիմնական դպրոց

ԱՆԱՀԻՏ ԱՎԱԳՅԱՆ

Դարպասի միջն. դպրոց

ՀՏԴ 37.035

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԱՏԱՂ ՄԵՐՆԴԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՁ**

Բանալի բառեր և արտահայտություններ. ավանդույթ, ժառանգականություն, միջազգայնացում, համակողմանի զարգացում, աշխատանքային, ֆիզիկական, բարոյական դաստիարակություն, արդիականություն:

Ключевые слова и выражения: традиция, наследие, интернационализация, всестороннее развитие, трудовое, физическое, нравственное воспитание, современность.

Key words and expressions: tradition, heritage, internationalization, comprehensive development, labor, physical, moral upbringing, modernity.

Հասարակական-քաղաքական առաջընթացի յուրաքանչյուր նոր շրջանում առաջադրվում են նաև մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության, այս համապատկերում՝ համակողմանի զարգացման նոր պահանջներ: Աշխարհաքաղաքական զարգացումները փոխում են կողմնորոշման չափանիշները, վերագնահատում արժեհամակարգերը, մշակում նոր մեթոդներ, եղանակներ ու մոտեցումներ:

Փորձը ցույց է տալիս, որ ինովացիոն յուրաքանչյուր գործընթաց առավել արդյունավետ կարող է լինել, եթե հաշվի առնվի մանկավարժական մտքի դասական փորձը, այն համադրվի նոր խնդիրների ու պահանջների հետ:

Խորհրդային համակարգի փլուզումը, արցախյան ազատամարտը, տարածաշրջանային անկանխատեսելի զարգացումները, բնականաբար, առաջադրեցին առաջընթացի նոր պահանջներ, արժեհամակարգերի նոր չափաբաժիններ:

Հենց այդպես էլ պիտի լինե, որովհետև 21-րդ դարը սկզբից ներհատկանշվեց գիտատեխնիկական աննախադեպ զարգացումներով:

Մշակվեցին մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության բազմաբնույթ նոր տեսություններ, առաջնային պլան մղվեց կրթության

միջազգայնացման առաջնահերթությունը, ինչն ունեցավ իր թե՛ դրական և թե՛ բացասական հետևանքները:

Դրական այն իմաստով, որ միջազգայնացումը ենթադրում է իմացության շրջանակների ընդլայնում, իրազեկվածության բարձր մակարդակ, բազմապիսի համատեղ միջոցառումներ, մրցույթներ և այլն:

Միջազգայնացումը, սակայն, ունի նաև իր վտանգները, որոնք կարող են ճակատագրական լինել՝ հատկապես փոքրաքանակ ժողովուրդների համար, եթե այն ընկալվի ոչ համապատասխան ձևով:

Ամենամեծ վտանգն, անշուշտ, ազգային արմատներից հեռանալն է, աշխարհաքաղաքացու մտածողությամբ ու հոգեբանությամբ դաստիարակվելը, օտար եզերքներում բարեկեցության հովերով տարվելը:

Վտանգներին դիմակայելու լավագույն միջոցը մեր ուսուցիչների կողմից դասական մանկավարժության ավանդույթներն ու փորձը նորագույն պահանջներին համադրելն է, պատմությունից շահեկան դասեր քաղելը, մատաղ սերնդին հայրենիքում տիրոջ իրավունքով ապրելու հոգեբանության սերմանումը: Այս առումով խիստ շահեկան կարող են լինել Ղ. Աղայանի՝ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության կազմակերպման վերաբերյալ մոտեցումներն ու տեսակետները, որոնցից շատերը հույժ արդիական են նաև մեր օրերում:

Ղ. Աղայանն առաջին հերթին հույժ կարևորում էր մատաղ սերնդի համակողմանի դաստիարակության խնդիրները, որոնց նա անդրադարձել է ինչպես գիտականորեն, այնպես էլ գեղարվեստական ստեղծագործություններում («Անահիտ», «Արություն և Մանվել» մանկապատանեկան ընթերցանության շրջանակները մտած այլ ստեղծագործություններ):

«Խորհրդածության դաստիարակության վերա» (1869) ուսումնասիրության մեջ նա գրում է. «Դաստիարակության միակ նպատակը պիտի լինի զարգացնել մարդուն երեք կողմ ի միասին (ֆիզիկական, մտավոր, բարոյական), որպեսզի նա լինի ուժեղ, խելոք ու առաքինի: Ոչ մի մարդու դաստիարակության կերպ պիտի չեղնի այս բնական ճանապարհից միմիայն նորա համար, թե այս կոչումը պիտի ստանա, վասնզի մարդս նախ և առաջ մարդ է, և ապա Կիրակոս կամ Մարկոս»¹:

Մերնդի համակողմանի զարգացումը Ղ. Աղայանը դիտարկում է ազգային մտածելակերպի ու հոգեբանության համապատկերում, ինչը

¹ Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 24:

խիստ այժմեական է մեր օրերում հատկապես այն առումով, որ երեխաներից, ինչու չէ՝ նաև մանկավարժներից շատերը ճիշտ չեն պատկերացնում միջազգայնացման բուն էությունը, և հիմքեր են ստեղծում օտարամոլության համար: Գաղտնիք չէ, որ վերջին շրջանում մեծ ուշադրություն է հատկացվում օտար լեզուների ուսուցմանը, ինչն, անտարակույս, շատ կարևոր է միջազգային գործընթացներին ինտեգրվելու համար: Սակայն ցավալի է, որ շատ հաճախ դա արվում է մայրենիի հաշվին: Ահա թե ինչ է գրում Ղ. Աղայանն այս կապակցությամբ. «Մենք մեր դաստիարակության կերպը մեր ազգի վիճակին պետք է հարմարացնենք. ինչ հարկավորություն կա կուրորեն հետևել օտար ազգաց... Սիրենք մեր ազգը, որով սիրած կլինենք և մարդկությանը և ուսանենք նոցանից սիրել մեր ազգը»²:

Ազգային արժանապատվության ու ինքնության պահպանման գործում Ղ. Աղայանն անչափ կարևորում է ուսուցչի դերը՝ նրան ներկայացնելով մի շարք պահանջներ. «Ուսուցիչը վեհ պիտի լինի աշակերտաց աչքումը և պիտի որոշվի նոցա ծանոթ մարդկանցից, նա պիտի լինի կենդանի կատարելատիպ աշակերտաց աչքում յուր առաքինությամբը, յուր ջանասիրությամբը, կարգապահությամբը»³:

«Ուսուցիչների ուսուցիչը» մատաղ սերնդի դաստիարակության հարցերը պայմանավորում է փոխադարձ սիրով. «Ո՞ւմ չի ոգևորում դաստիարակության գործը. նրան, ով այդ պաշտոնը վարձկանի պես է կատարում, լավ կլինեք, եթե այդպիսին օր առաջ չքվեր այդ սուրբ վայրից»⁴:

Երեխան պիտի ոչ միայն հավատա ու վստահի, այլև սիրի ուսուցչին. «Ո՞վ չգիտի, որ աշակերտը ատելով վարժապետին, ատում է նաև նորա ուսմունքը, որքան էլ որ այն օգտակար լինի և, ընդհակառակը, պատվելով վարժապետին, սիրում է և նորա դասերը... Ո՞վ մեզնից սրբությամբ չի հիշում այն վարժապետի անունը, որ թե բանիլ և թե գործով աշխատում է զարգացնել աշակերտի բարոյականությունը»⁵:

Ղ. Աղայանն իր հոդվածներում և գեղարվեստական երկերում երեխայի մարդկային արժանապատվության ու ազգային ինքնության պահպանման լավագույն միջոցը համարում է նրա համակողմանի զարգացման ճիշտ կազմակերպումը: Նա երեխայի գրագիտությունը համարում է «ոչ թե նպատակ, այլ միջոց». «Մեր բուն նպատակը պետք է

² Նույն տեղում, էջ 16:

³ Նույն տեղում, էջ 93:

⁴ Ղ. Աղայանը մանկավարժ, հոդվածների ժողովածու, Եր., 1941, էջ xxx :

⁵ Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 67:

լինի զարգացնել երեխայի ամբողջ բնությունը: Ուսուցման ձևն ու բովանդակությունը պետք է համապատասխան լինի բուն նպատակին»⁶:

Իսկ ուսուցման «բուն նպատակը» Ղ. Աղայանը տեսնում էր գործընթացի կազմակերպման «զարգացնող ու դաստիարակող» գործառնությունների համադրման մեջ. «Դասավանդման եղանակներից մենք այն ենք համարում հարմարագույնը, որ հարմարեցրած է մանկան ամբողջ բնությանը՝ նորա մտավոր, բարոյական և ֆիզիկական կարողությանը զարգացնելուն»⁷:

Ղ. Աղայանը գտնում էր, որ երեխայի համակողմանի զարգացման բոլոր բաղադրամասերը պետք է հանդես գան միասնաբար՝ սերտ համադրության մեջ, հակառակ դեպքում մենք գործ կունենանք միակողմանիորեն զարգացած (եթե դա զարգացում կարելի է համարել), թերաճ անձնավորությունների հետ. «Քանի-քանի գիտենալու բաներ կան, որոնց մեր միտքը կարող չէր հասնել առանց օգնության մարմնո ուժի և հոգվո վառ երևակայության և ընդհակառակը», - գրում է Ղ. Աղայանը:

Դժվար չէ նկատել, Ղ. Աղայանի՝ մատաղ սերնդի կրթության, դաստիարակության, համակողմանի զարգացման վերաբերյալ գիտական դիտարկումներն ունեն արդիական նշանակություն, նպատակադրված են սերունդների գործունեությունը ազգային շահերին ծառայեցնելու գործին: Անչափ հետաքրքիր են նրա խորհրդածություններն, օրինակ, արտասահմաններում կրթություն ստացող երիտասարդների մասին. ինչպես նրա ժամանակներում, այնպես էլ մեր օրերում արտասահմանում կրթություն ստացող շատ շատերը չեն վերադառնում հայրենիք: Նա պահանջում էր մինչև արտասահմանյան կրթօջախներ գործողելը՝ «մեր զավակներին նախապատրաստել այնպես, որ կարողանան առանց հոգնելու, առանց մեծ կորստի այնքան բան ձեռք բերել, որ կարողանան նորանից ազգին էլ մաս հանել»⁸:

Ժամանակները, ճիշտ է, փոխվել են, փոխվել են նաև մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը ներկայացվող պահանջները, սակայն անփոփոխ են մնացել սերնդին ազգային մտածողությամբ ու ոգով դաստիարակելու մեր նպատակները, որոնց վերաբերյալ Ղ. Աղայանի դիտարկումները խիստ օգտակար կարող է լինել նաև մեր օրերում:

⁶ Նույն տեղում, էջ 139:

⁷ Նույն տեղում, էջ 93:

⁸ Նույն տեղում, էջ 198:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 16, 24, 67, 93, 139, 198:
2. Ղ. Աղայանը մանկավարժ, հոգվածների ժողովածու, Եր., 1941, էջ xxx:

Ռ. Մելքոնյան, Ա. Ավագյան
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԱՏԱՂ ՍԵՐՆՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴԻԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Ամփոփում

Հոգվածում ներկայացվում են մատաղ սերնդի համակողմանի զարգացման ու դաստիարակության վերաբերյալ Ղ. Աղայանի դիտարկումները, փորձ է արվում բացահայտել դրանց արդիական նշանակությունը:

Р. Мелконян, А. Авагян
НАБЛЮДЕНИЯ ВОКРУГ ОДНОСТОРОННЕГО РАЗВИТИЯ
ПРОБЛЕМ И ИХ СОВРЕМЕННОГО ЗНАЧЕНИЯ ПОДРОСТАЮЩЕГО
ПОКОЛЕНИЯ

Резюме

В статье представлены наблюдения Газароса Агаяна о всестороннем развитии и воспитании подрастающего поколения, а также попытки раскрыть их актуальное значение.

R. Melkonyan, A. Avagyan
OBSERVATIONS ALONG THE YOUNG GENERATIONS
COMPREHENSIVE DEVELOPMENT PROBLEMS AND THEIR MODERN
SIGNIFICANCE

Summary

The article presents Ghazaros Aghayan's observations on the comprehensive development and upbringing of the younger generation and attempts to reveal their actual significance.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՑԹ

ՏԻՓՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի տնօրեն
ՀՏԴ 94 (479.25)

**ՓՈԽԱՐՔԱ ՎԱՉԵ Ա ՎԱՀՈՒՏՅԱՆ՝ 13-Դ ԴԱՐԻ
ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱՐԱՐ**

1187-1236 թվականներին, Ջաքարյանների կերտած կեսդարյա անկախության ժամանակահատվածում, Արևելյան Հայաստանում բուռն ծաղկում ապրեց մշակութային կյանքը: Կառուցվեցին հիասքանչ վանական համալիրներ, գրվեցին բազում ձեռագիր գրքեր, բացվեցին դպրոցներ ու համալսարաններ: Դարաշրջանի աչքի ընկած գործիչներից էր Այրարատի կողմնակալության-փոխարքայության հիմնադիր, փոխարքա, իշխանաց իշխան Վաչե Ա Վաչուտյանը¹: Նա ժամանակի ամենաարգասաբեր գործիչն է: 1206-1229 թվականներին նրա հովանավորությամբ և միջոցներով Այրարատ նահանգի մաս կազմող իր հայրենի Նիգ-Արագածոտնում կառուցվել են Թեղենյաց վանքի գավթը, Սաղմոսավանքի կաթողիկե եկեղեցին ու գավիթը, Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցին, Տեղերի Կաթողիկե եկեղեցին ու գավիթը, Ուշիի Կաթողիկե եկեղեցին, ինչպես նաև իր տիրույթից՝ Այրարատի նահանգի տարածքից դուրս՝ Սանահինի մեծ գավիթը, Մակարավանքի գավիթը, Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցին, Հոռոմոսի գրատունը: Ջաքարյան Հայաստանի անկախության կեսդարյա շրջանի ոչ մի ուրիշ գործիչ, ոչ իրենք Ջաքարյան երկու եղբայրները՝ Ջաքարե Բ-ն և Իվանե Ա-ն, ոչ ուրիշները՝ այդ շրջանում գործած Խաչենի տերերը, Դոփյանները, Օրբելյանները, Պռոշյանները, Համազասպյան-Մամիկոնյանները, Տիգրան Հոնենցը, մյուսները նման արգասաբերություն չեն ցուցաբերել: **Իր այս գործունեությամբ փոխարքա Վաչե Ա Վաչուտյանը կարող է անվանվել 13-րդ դարի եկեղեցաշինարար:** Նա բացի հոգևոր համալիրներից կառուցել է նաև Արայիի իջևանատունը, վերակառուցել-ամրացրել է Անբերդի, Կարբիի և այլ բերդերը: Այս կառույցները ժամանակի ամենանշանավոր ու թանկարժեք շինություններից էին:

Հայրենի տարածքներում կառուցված համալիրներ:

¹ **Տ.Պետրոսյանց**, Վաչուտյաններ, Ե., 2001, 363 էջ:

Թեղենյաց վանքի հիմնական գավիթ: Վաչուտյանների գործունեությունը դարձել է այս մշակութային կենտրոնի նոր վերելքի ժամանակաշրջան: Այստեղ է 1211 թ-ին առաջին անգամ վավերագրվել երկրամասի նոր տերերի՝ Վաչուտյանների անունը, Վաչե Ա-ի կնոջ՝ Մամախաթունի արձանագրությամբ:

Հուշարձանախմբի կենտրոնում, Կաթողիկե եկեղեցու և գրատան արևմտյան կողմում, 13-րդ դարի սկզբներին, կցակառուցվել է դարաշրջանի ոճին համապատասխան քառասյուն գավիթ, որը, ցավոք, մեզ է հասել կիսավեր վիճակում: Այստեղ կամարաթռիչքները, հենվելով որմնասյուների և կենտրոնական չորս հզոր սյուների վրա, կազմել են կտուրը, իսկ վերջիններս իրար կապող կամարներն առաջացրել են ութանիստ գմբեթահիմքը, որը սև և կարմիր տուֆի շախմատաձև տեղադրությամբ մեծ հնչեղություն է տվել կառույցին:

Շինության պատերին պահպանված ամենավաղ թվակիր արձանագրությունը 1207 թ-ից է: Արձանագրության համաձայն՝ «Ի թուականութե/ան/ս Հայոց ՈՏԶ /1207/: Ես՝ Վահրամ Չաուշ, որդի Պատրոնկան էտու յարդեանց իմոց աւգնութ/իւ/ն ի շինութ/իւ/ն գաւթին»²: Եթե նկատի ունենանք, որ կառուցման մասին սովորաբար արձանագրություն փորագրել են շինությունն ավարտելուց հետո, ապա այս նվիրագիրը ամենայն հավանականությամբ գավթի կառուցումը սկսելու փաստն է ներկայացրել:

Գավթի արևելյան պատի արևմտյան մասում, բարձրուստ, 1211 թ-ին փոխարքա Վաչե Ա Վաչուտյանի կնոջ՝ իշխանուհի Մամախաթուն Վաչուտյանի անունից փորագրվել է. «Թվ/ին/ ՈԿ /1211/: Ես՝ Մամախաթունս, ամուսին Վաչեի, դուստր ... արարի քջոցանի արծաթի եւ այլ արդիւնս եւ ետու Ս/ուր/բ ուխտս Թեղենեաց»³: Այս արձանագրությամբ փաստվել է գավթի շինարարության ավարտը և Մամախաթուն իշխանուհու նվիրատվությունը հաստատել է, որ գավթի կառուցումը Վաչուտյանների հովանավորությամբ է իրականացվել:

Տեղերի Կաթողիկե եկեղեցի և գավիթ: Արագած լեռան Արարատահայաց լանջին, Անբերդի ձորի աջակողմյան ելուստներից մեկի վրա, բնության հետ ներդաշնակ միասնությամբ, ծավալատարածական հորինվածքի վերասլաց, գեղապատկեր ուրվագծով կանգնած է Տեղերի եկեղեցական համալիրը, որ նախաձեռնել ու կառուցել են Վաչե Ա Վաչուտյանն ու կինը՝ Մամախաթուն իշխանուհին:

² Գ.Սարգսյան, Արձանագրություն Թեղենյաց վանքից, Լրաբեր, 1977, թիվ 8, էջ 102:

³ Մեր հավաքածոյից:

Մատենագրության մեջ ոչ մի հիշատակություն չի պահպանվել Տեղերի եկեղեցական համալիրի կառուցման հանգամանքների, տեղի ընտրության մասին: Ավելի, Անբերդը նոր-նոր մայրաքաղաք դարձրած կողմնակալության-փոխարքայության հզոր տիրուհին, մայրաքաղաքին մոտ այդ ձորաբերանի դիրքից կաշառված, անմիջապես որսացել է բնության այդ հրաշք հատվածը շինությամբ զարդարելու անհրաժեշտությունը: Հիշենք, թե ինչպես է իր կառուցած Գնդեվանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին գնահատել Սյունյաց տիրուհի Ասիփան՝ «...մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա և եղի ակն ի վերայ»⁴: Պետք է նույն կերպ դիտել, որ Անբերդի ձորաբերանն անակ մատանի էր և Տեղերի կառուցմամբ՝ Վաչուտյանները ակ են դրել ձորաբերանին:

Վանական համալիրի առաջին կառույցն Աստվածածին Կաթողիկե եկեղեցին է: Այն դրսից ուղղանկյուն ներքուստ խաչաձև կենտրոնագմբեթ դափնի՝ է: Խաչաձևությունն ապահովվել է շինության արևելյան և արևմտյան անկյուններում տեղադրված կրկնահարկ ավանդատների շնորհիվ: Խորանի կողմից երկրորդ հարկի ավանդատների մուտքը բեմի վրա է: Չորս հզոր որմնամույթեր իրենց վրա են կրում գլանաձև թմբուկն ու սուր վեղարը: Եկեղեցին ներսից անպաճույճ է: Արտաքինից աչքի են ընկնում խաչաթևերի ընդգծված ճակտոնները: Արտաքին գորշ միապաղաղությունը դիտելի դարձնելու նպատակով ճարտարապետը հյուսիսային, արևելյան և արևմտյան պատերը ձևավորել է եռանկյունաձև խոր խորշերով: Եվ եկեղեցուն և գավթին առանձնահատուկ են նեղ, երկար պատուհանները, որոնք վերնամասում ավարտվում են պսակով: Բեմառաջը զարդարված է բարակ որմնասյուներով, որոնք վերնամասում իրար են միացած կիսաշրջան կամարներով: Եկեղեցու միակ մուտքը՝ շքամուտքը, արևմտյան կողմից է: Ձևավորումն իրականացվել է դեկորատիվ պարզ հարդարանքով:

Գմբեթի թմբուկի հարավային կողմի վրա պահպանվել է թվակիր արձանագրություն. «Ի թվ/ին ՌԿԲ /1213»⁵, որը համարվել է Կաթողիկե եկեղեցու կառուցման ավարտի թվականը: Այս արձանագրությունը 19-րդ դարավերջին արտագրել է Գարեգին Հովսեփյանցը:

Վաչուտյանները Այրարատյան կողմնակալություն-փոխարքայությունը, այդ թվում սեփականության իրավունքով Նիգ-Արագածոտնը ստացել են 1206/7 թվականին, հենց այդ տարիներին էլ սկսել

⁴ Ստեփանոս Մինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Միսական, Մոսկվա, 1861, էջ 191:

⁵ Գ.Յովսեփեանց, Խաղբակեանք, Անթիլիաս, Լիբանան, 1969, էջ 76-77:

Ե Տեղերի եկեղեցու շինարարությունը: Սուրբ Աստվածածին Կաթողիկե եկեղեցին կառուցվել է ամենաուշը 1213 թ-ին: Այդ թվականին եկեղեցու բարավորին Վաչե Ա Վաչուտյանի կողմից արձանագրվել է «Ի ՌԿԲ /1213/ թվին ... իւրում Վաչէի, բարեպաշտ իշխանի, որ էր կարգել հրամանաւ Զաքարէի վերակացու գաւառի, ... յիշատակ նոցա մատուցանե պատարագ»⁶:

Կաթողիկե եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո, համալիրն ամբողջացնելու նպատակով, եկեղեցու արևմտյան կողմում կառուցվել է գավիթը: Այն պատկանում է քառասյուն գավիթների տիպին և բավականին ընդարձակ է: Չորս հզոր, կլոր սյուները, թաղերի օգնությամբ ջլատելով գավթի կտուրը, այն բաժանել են տարբեր լուծում ունեցող ինը հատվածների: Սյուների ներսում մնացած հատվածը, դեպի երդիկ բարձրանալով, կտրված կոնի տեսքով կազմել է գավթի գմբեթը, որի երդիկի վրա նստած է չորս սյուների վրա հենված փոքրիկ, թեթև բույք վեղարը: Արտաքինից կտուրը յուրօրինակ լուծում ունի: Ինչպես և եկեղեցին, այստեղ կտուրի կենտրոնական հատվածները բարձրացվել են ընդհանուր մակարդակից և հյուսիսային, արևմտյան ու հարավային կողմերից սեփական ճակտոնից ձգվել են դեպի կոնաձև գմբեթը, որը այդ կրկնակի կտուրների նկատմամբ ձեռք է բերել ընդգծված դիրք: Բավականին յուրօրինակ լուծում է ստացել արևմտյան ճակատը: Այստեղ, երկու անկյունների քիվերից սկսած, բարձրանում են քառակուսի հիմքով երկու եկեղեցի-գանգակատուն-աշտարակներ: Ինչպես և եկեղեցու կտուրը, սրանք ևս մշակված են չորս ընդգծվող ճակտոններով, որոնց կենտրոնում գլանաձև թմբուկն է՝ համամաս, սուր վեղարով: Երկու եկեղեցի-գանգակատների միջնամասում մնացած ճակտոնը, անկյունային ճակտոնների համեմատությամբ սկսելով ավելի ցածր նիշից, եկեղեցի-գանգակատների պատերից բաժանված բարձրանում է և մտնում երկթեք ծածկի տակ՝ ստեղծելով և միասնական, և իրարից անկախ դիտվող ամբողջություն: Կտուրի այսօրինակ ջլատումը տարբեր բարձրությունների, ճարտարապետին հնարավորություն է տվել հասնելու առավել դիտելիության: Գավթի կտուրի արևմտյան կողմի անկյուններում տեղադրված գմբեթավոր ծավալներն ապշեցուցիչ լուծում են ստացել և մեծ գմբեթի հետ դիտողի ուշադրությունը կենտրոնացնում են երկինք մխրճված խաչերին:

Ինչպես և եկեղեցին, գավիթը նույնպես դեկորատիվ հարդարանքներից հիմնականում զուրկ է: Պարզ, անպաճույճ շքամուտքն

⁶ Ս. Կարապետյան, Տեղերի վանքը, Վարձք, 2013, թիվ 10, էջ 18-19:

ընկել է երկաստիճան խորշի ներսում: Եզրերից բարձրացող սյուների վրա նստած են սլաքաձև բարավորները: Ամբողջ շքամուտքը շրջափակված է երկտակ պարանաձև զարդանախշով:

Գավիթը ծառայել է որպես տապանատուն: Այստեղ հաշվվում են երկու տասնյակից ավելի տապանաքարեր, որոնց մի մասը կրում են արձանագրություններ:

Գավթի շինարարական աշխատանքներն ավարտվել են 1221 թ-ին: Գավթի հարավային կողմի արևելյան սյան խոյակի վրա պահպանվել է հետևյալ արձանագրությունը. «Ի թիւ ՈՀ /1221/: Ես՝ Աղբայրիկ վարդպետ շինեցի գեկեղ/ե/ցիս եւ զգաւիթս եւ միաբանեցա արդեամ/բ/ք եւ սպասատրքս հաստատեցին :Բ: ասր ժամ ինձ Ս/ուր/բ Խաչին: Որ խափա/նե/ դատ/ի/ յԱ/ստուծո/յ»⁷: Այս արձանագրությունն անվերապահորեն ճարտարապետ-կառուցողին է, որով վերջինս հայտնում է, որ երկու շենքերն էլ և Կաթողիկե եկեղեցին, և գավիթը ինքն է կառուցել: Համալիրը կառուցել է Աղբայրիկ վարդպետ-ճարտարապետը:

Եկեղեցու շինարարությունն ավարտվել է ամենաուշը 1213 թ-ին իսկ գավթինը՝ 1221 թ-ին, 8 տարի անց: Այդ այն դեպքում, եթե գավթի շինարարությունն սկսված լինի անմիջապես եկեղեցու կառուցման ավարտից հետո, իսկ եթե գավթի կառուցումն սկսված լինի եկեղեցու կառուցման ավարտվելուց մեկ-երկու տարի անց /ինչը նույնպես լրիվ հավանական է/, ապա կստանանք գավթի կառուցման ավելի կարճ ժամանակահատվածը՝ շուրջ 5-6 տարի: Այս դեպքում պետք է հաշվի առնել և այն, որ այստեղ շինարարները գործ են ունեցել կարծր բազալտի հետ և մեկ-երկու տարով ընդհանրապես երկարաձգվել է թե եկեղեցու, թե գավթի կառուցման ժամանակը⁸:

Գավթի շքամուտքի բարավորին փորագրվել է Մամախաթուն Վաչուտյանի արձանագրությունը: Ահա այն. «ՈԶԱ /1232/: Շնորհիւ/ն/ Ա/ստուծո/յ: Ես՝ Մամախաթունս, շինեցի գեկեղեցիքս զմեծ ու զփոքր եւ զժամատունս յիշատակ ինձ եւ առն իմոյ Վաչէի, իսկ բնակիչք Ս/ուր/բ ուխտիս հաստատեցին մեզ ի տարին պատարագ ի տանի Վարագա Ս/ուր/բ Խաչին զամենայն եկեղեցիքս մատաղով եւ սիրով: Իսկ որ զգրեալս խափանէ նայ տայ պատասխան ի առաջի Յ/իսուս/ի Ք/րիստոս/ի: Մխիթար գրիչ»: Առաջին անգամ այս արձանագրությունն ընդօրինակել է

⁷ Մեր հավաքածոյից:

⁸ **Ս.Բարխուդարյան**, Միջնադարյան ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963, էջ 53:

Յով.Շահխաթունեանց⁹: Այս ընդօրինակությունն են օգտագործել Ղ.Ալիշանն ու Կ.Կոստանյանցը: Ավելի անսխալ է Ս.Կարապետյանի ընդօրինակությունը¹⁰:

Մենք հակված ենք քննարկելու Ս.Բարխուդարյանի այն կարծիքը, որ վերաբերում է և 1221-1232 թվականների խնդրին և *զվոքք* եկեղեցիներ արտահայտությանը: Ոչ մի կասկած չի հարուցում Մամախաթունի 1232 թ-ի արձանագրությունը: Կասկած չի հարուցում նաև Աղբայրիկի 1221 թ-ի արձանագրությունը: Այս պարագայում Ս.Բարխուդարյանը կարծել է, որ 1221-ից հետո մինչև 1232 թ-ը Աղբայրիկը կառուցել է գավթի ճակատամասի երկու քառահիմք եկեղեցի-զանգակատները:

Հավանաբար, երբ Աղբայրիկն ավարտել է գավթի շինարարական աշխատանքները, Նիզ /Ապարան/ գավառի Եղիպատրուշ գյուղում ավարտվել կամ ավարտին էր մոտենում Սուրբ Աստվածածին եկեղեցու գավթի շինարարությունը, որի արևելյան անկյուններում տեղադրված էին քառահիմք եկեղեցի-զանգակատներ: Եվ հենց այդ ժամանակ էլ Աղբայրիկը ձեռնարկել է մի բավականին համարձակ ծրագիր. գավթի կտուրին, բայց ոչ թե ետնամասում, ինչպես Եղիպատրուշում, այլ ճակատային մասում կառուցել է նույնպիսի քառահիմք եկեղեցի-զանգակատներ: Հնարավոր է նաև հետևյալը.

1.Աղբայրիկը ղեկավարել է եկեղեցու շրջապարսպի կառուցումը և պարսպի հարավ-արևմտյան անկյունում կառուցել է փոքր, միանավ թաղածածկ մատուռ, որտեղ դրվել է Մամախաթունի մոր Վախախի խաչքարը: Եվ այս բոլոր աշխատանքներն ավարտվել են 1230-ական թվականների սկզբին ու 1232 թ-ին համալիրն օծվել է, ու այդ ժամանակ էլ փորագրվել է Մամախաթունի արձանագրությունը¹¹:

2. Հիմնագուրկ չէ և այն, որ Մամախաթունը պլանավորելով՝ մահից հետո թաղվել Տեղերում, կտուրի վրա կառուցված եկեղեցի-զանգակատների գոյությամբ համալիրին վերապահել է դամբարանային իմաստ: Ավանդության համաձայն՝ Մամախաթունը թաղվել է Տեղերի եկեղեցում: Կաթողիկե եկեղեցու բեմի ձախակողմյան խորանում մի տապանաքար կա: Ավանդաբար փոխանցվում է, որ այդտեղ թաղված է Մամախաթուն

⁹ **Յով.եպ.Շահխաթունեանց**, Ստորագրությին Կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Աշխատասիրությամբ Ա.Տեր-Ստեփանյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014, էջ 251:

¹⁰ **Ս.Կարապետյան**, Տեղերի վանքը, Վարձք, էջ 18-19:

¹¹ Հիշարժան է, որ հանրահռչակ Գանձասարի Կաթողիկե եկեղեցու շինարարությունն ավարտվել է 1238 թ-ին, բայց եկեղեցու օծումը տեղի է ունեցել երկու տարի անց՝ 1240 թ-ի հուլիսի 22-ին:

իշխանուհին: Ինչպես հայտնի է, հայկական եկեղեցու կանոնագրքից, եկեղեցու ներսում թաղում կատարելն արգելվում է: Մակայն այդ կարգը խախտվում է այն անձնավորությունների համար, որոնք կենդանության օրոք արժանացել էին համբավի ու հեղինակության: Իր հայրենանվեր ու ազգանպաստ գործունեությամբ Մամախաթունը, ինչ խոսք, կարող էր արժանանալ այդ պատվին և թաղվել իր կառուցած եկեղեցում: Այդպես իր կառուցած Հովհաննավանքի Սուրբ Կարապետ Կաթողիկե եկեղեցում թաղվել է Մամախաթուն իշխանուհու ամուսին Վաչե Ա Վաչուտյանը:

Բոլոր դեպքերում Մամախաթունի արձանագրության *գլխքը* եկեղեցի կառույցը կամ կառույցները համալիրից հեռու չպետք է փնտրել, դրանք կարող են լինել նշված եկեղեցի-զանգակատները կամ պայմանականորեն Վախախի թաղակապ մատուռը:

Գավթի հատակի տապանաքարերից ելնելով կարելի է պնդել, որ այստեղ մարդաշատ միաբանություն է եղել: Բավականին շատ են պատերին փորագրված կամ ներկով գրված արձանագրությունները: Եկեղեցու անվան հիշատակությունը 16-րդ դարի սկզբներին ևս հաստատում է այն միտքը, որ այստեղ այդ ժամանակ նույնպես աշխույժ կյանքով են ապրել: Ապարանի տարածաշրջանի Արագած գյուղի բնակիչ Զավեն Դանիելյանի տանը պահվող 1486 թ-ի Խարտիշիս գյուղում ընդօրինակված Ավետարանի 244 Բ էջում գրված է. «Մի որ իշխեսցե գրաւել և տաւի անել և կամ հանել ի դրանէ Տեղերա, զի մի պատիժս կրեսցե յԱ/ստուծոյ, այլ մնա անջինջ յիշատակ Մանւել եպիսկոպոսին և ծնաւդաց ի դուռն Ս/ուր/բ Ուխտին Տեղերա և յիշէ յորժամ ընթեռնու զՍ/ուր/բ Աւետարանս... ի թվականիս հա/յոց Ռ և ԽԸ /1599/¹²:

Ուշիի համալիրի Կաթողիկե եկեղեցի: Արագածի արևելյան ստորոտի բարձրունքներից մեկի հարավահայաց լանջին, Հովհաննավանքից ու Կարբիից հյուսիս գտնվում է Հին Ուշի գյուղատեղը, բերդը: Բարձունքի միջնամասում պահպանվել են Սուրբ Սարգիս Զորավարի և Սուրբ Էջմիածնի վանական համալիրի կիսավեր ու ավերված շինությունները:

1213 թ-ին կամ դրան անմիջապես հաջորդող տարում ավարտվել է Ուշիի Կաթողիկե եկեղեցու կառուցումը: Այն կառուցող Վաչե Ա Վաչուտյանը արձանագրել է. «Ես՝ Վաչե իշխանաց իշխան, որդի Սարգսի

¹² **Տ.Պետրոսյանց**, Ապարանի շրջանի ձեռագրերը, հնատիպ գրքերը և այլ հնագրագիտական նյութերը, Պատմա-բանասիրական հանդես, 1981, թիվ 1, էջ 152:

կաղմ/ն/ակալ աշխարհիս, հրամանաւ Բանէի եւ Շահնշահի շինեցի եկեղեցիս, զարդարեցի զսուրբ նշխարքս արծաթով...»¹³:

1827 թ-ի երկրաշարժից համալիրն ավերվել է: Մասամբ պահպանվել էր 5-րդ դարի կառույց Ս.Սարգիս փոքր եկեղեցին, գավթի արևմտյան և հարավային պատերի մի մասը, պարիսպները, իսկ Կաթողիկե եկեղեցին հիմնովին ավերվել է:

Սաղմոսավանքի Կաթողիկե եկեղեցի և գավիթ: Սաղմոսավանքի եկեղեցական համալիրը վեհորեն կանգնած է Քասաղի կիրճի ելուստներից մեկի վրա, Հովհաննավանքից մոտ երեք կիլոմետր հյուսիս: Այն ամբողջովին ձուլված է տեղանքին: Ավանդության համաձայն այստեղ մատուռ է եղել, որի տեղում էլ 13-րդ դարի առաջին կեսում կառուցվել է ներկա համալիրը, որը բաղկացած է Կաթողիկե եկեղեցուց, գավթից, Ս.Աստվածածին փոքր թաղածածկ եկեղեցուց և եկեղեցի-գրատնից, որոնք մի ամբողջություն են կազմում:

Շուրջ երեսուն տարի առաջ ուսումնասիրելով Վաչուտյան տան պատմությունը, Ս.Սիոն Կաթողիկե եկեղեցու մեծ խորանի աջակողմյան 2-րդ հարկի փոքր խորանի բարավորին կարդալով հետևյալ արձանագրությունը «Ես Վաչե, շինեցի եկեղեցիս եւ արարի արդիւնս յոլվս, եւ ետու զիմ դրամ/ագ/ին այգին Սերկ/եւ/լի եւ հաստատեցին :Գ: խորան զշաբաթ ար պատարագ :Ա: ինձ, :Ա: Դաւթի/ն/, :Ա: Մամախաթունին»¹⁴, փորձեցի ճշտել արձանագրության մեջ հիշված անձերի՝ Վաչեի, Դավթի, Մամախաթունի ինքնությունը և տվյալ Վաչեի կառուցած եկեղեցու որը լինելը: Արձանագրության բովանդակությունը բառացի գտա նույն Վաչեի մոտավորապես 1245 թ-ի հիշատակագրությունում, որ պահպանվել է Սաղմոսավանքի գրացուցակի տակ, որից էլ պարզվեց, որ այս Վաչեն կողմնակալ-փոխարքա Վաչե Ա Վաչուտյանը չէ, այլ նրա թոռը՝ Քուրդ Ա-ի որդին /այստեղից՝ նրան տրվեց Վաչե Բ անունը/, Դավիթը նրա եղբայրը, Մամախաթունը կինը: Եվ քանի որ չկարողացա ճշտել նրա կառուցած եկեղեցու որը լինելը՝ եզրակացրեցի, որ այն կարող է գավիթը լինել: Այսօր վերանայում եմ իմ կարծիքը, քանի որ վիմագրագետ Աշոտ Մանուչարյանը կարողացել է վերծանել գրատուն-եկեղեցու հյուսիսային պատին բարձրադիր, քայքայված, անտեսանելի հետևյալ արձանագրությունը. «Ի թուին ԶԴ /1255/: Ես Քուրդ, որդի Վաչեի, կողմնակալ Այրայրատ գաւառիս, սրբա/ս/նեալ ամուսինիս իմո Խորիշահին՝ դստեր Մարծպանա եւ

¹³ **Ֆ.Բաբայան, Ա.Քալանթարյան**, Ուշիի Ս.Սարգիս վանքի վիմական արձանագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 2001, թիվ 2, էջ 171:

¹⁴ Մեր հավաքածոյից:

Մամբանա, շնորաւքն Աստուծոյ, հաճո եղաք աշխարհակալ գաւրացն նետողաց, զկարողութի/ւն/ մեր տաք ի վերա եկեղեցոց հայոց, հաստատեցաք զմիաբանութի/ւն/ հարց մերոց յամենայն եկեղեցիքս, տրաւք եւ զջանաւք *նորոգեցաք զգաւիթ եկեղեցոյս, զոր ի հիմանց շինել էր հայր իմ Վաչէ* զկենաւք մեզ...»¹⁵, որով հաստատվեց, որ գավիթը հիմքից կառուցել է պապ Վաչե Ա-ն:

Փաստորեն 1215 թ-ին Վաչե Ա-ն ավարտել է Ս.Սիոն Կաթողիկե եկեղեցու, մինչև դարի երեսունական թվականները՝ գավիթի կառուցումը, 1245 թ-ին թոռ Վաչե Բ-ն կառուցել է Ս.Աստվածածին եկեղեցին, 1255 թ-ին Քուրդ Ա-ն և Խորիշահը կառուցել են գրատուն-եկեղեցին:

Սաղմոսավանքի Կաթողիկե եկեղեցին, որ Վաչե Ա-ի շինարարական արձանագրության մեջ Սուրբ Սիոն է անվանված, կառուցվել է 13-րդ դարի 10-ական թվականներին: Եկեղեցու շինարարությունն ավարտվել է 1215 թ-ին: Հետագայում հաշվով, եթե շինարարությունը տևած լինի 4-5 տարի, կառուցման սկիզբը կարող է լինել 1210 կամ 1211 թվականը: Եկեղեցու շքամուտքի բարավորին փորագրված շինարարական արձանագրությամբ Վաչե Ա-ն հայտնել է. «Թվ/ին/ ՈԿԴ /1215/: Ես՝ Վաչէ, իշխանաց իշխան, որդի Սարգսի եւ ամուսին իմ Մամախաթուն... շինեցի զեկեղեցիս Ս/ուր/բ Սիւան ի փրկութիւն հոգոց մերոց եւ յիշատակ ամիրսպասաւար Զաքարէի և պահպանութիւն կենաց որդոյ նորին Շահնշահի... և ողորմութեամբ պարոնին տվաք զըզեղն Աղկունծ ի Ս/ուր/բ Սիւան Սաղմոսավանացս»¹⁶: Ամիրսպասաւար Զաքարէ Բ-ն մահացել է 1213 թ-ին: Վաչե Ա-ն արձանագրության մեջ շեշտում է, որ եկեղեցին կառուցվել է նաև նրա հիշատակին, հաստատում է, որ շինությունն իրոք կարող է սկսված լինել 1213 թ-ից առաջ, երբ նա կենդանի էր, բայց ավարտին հասցվել է Զաքարէ Բ-ի մահից հետո ու նվիրվել է նրա հիշատակին:

Կաթողիկե եկեղեցին ներսից խաչաձև, կենտրոնագմբեթ սրածայր վեղարով շինություն է: Եկեղեցու ներսում արևելյան և արևմտյան կողմերում կան կրկնահարկ ավանդատներ: Արևելյան կողմի երկրորդ հարկի ավանդատների մուտքերը բեմի երկու կողմերից են, իսկ արևմտյան կողմի երկրորդ հարկի ավանդատները կարելի է մտնել պատին ագուցված քարե աստիճաններով:

Վաչե Ա-ի կառուցած Սաղմոսավանքի գավիթը պատկանում է քառասյուն շինությունների տիպին: Չորս հզոր կլոր սյուներն ընդարձակ դահլիճը բաժանում են ինը մասի: Ինչպես և Հովհաննավանքում, այստեղ

¹⁵ YSU.am/files/03A_Manucharyan.pdf, էջ 47:

¹⁶ **Տ.Պետրոսյանց**, Սաղմոսավանք, *Էջմիածին*, 1981, Դ, էջ 56:

նույնպես կենտրոնական մասն ավարտվում է 12 նիստանի հատած կոնի տեսքով լուսանցք-երդիկով, որի վրա հենված վեց պուներին հանգչում է գմբեթ-վեղարը: Առաստաղի մնացած հատվածները լուծված են տարբեր եղանակներով /տափակ, գլանաձև, խաչաձև թաղեր/ և ունեն տարբեր նկարազարդում /հնգաթև, ութաթև աստղեր, կեռագծեր, վարդյակներ/, որոնք իրականացվել են գունավոր քարերով կամ ներկերով: Գավիթը հարավային պատի վրա ունի երկգոգավոր պուներով երկու մասի բաժանված լայն պատուհան: Պատուհանները բացվում են դեպի Արարատյան դաշտն ու Արարատ սարը: Նման պատուհան, բայց ավելի փոքր չափի եղել է նաև Հովհաննավանքի գավթի հարավային պատին, բայց այն փակված է: Նկատենք, որ Հովհաննավանքում շքեղ ձևավորմամբ պատուհան կա նաև գավթի արևմտյան շքամուտքի վերնամասում: Նույնպիսի ձևավորում ունի նաև Աստվածընկալի գավիթը:

Գավիթն արևելյան կողմի շքամուտքով հաղորդակցվում է Կաթողիկե եկեղեցու և աջակողմի փոքր դռնով՝ ավելի ուշ կառուցված գրատուն-եկեղեցու հետ: Գավթի շքադուռն աչքի է ընկնում բարավորի դեկորատիվ գեղազարդմամբ:

Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցի: Վաչե Ա-ի շինարարական արձանագրության համաձայն Կաթողիկե եկեղեցու շինարարությունն ավարտվել է 1217 թ-ին¹⁷: Այն 13-րդ դարի ամենամեծ եկեղեցիներից մեկն է 14,26x21,34x29,80 մ չափերով:

Վերապաց շինությունը շքեղորեն նստած է Քասաղի կիրճի ուղղահայաց ելուստներից մեկի վրա: Եկեղեցու արևելյան պատը կարծես ուղղակի ձորապոնկի շարունակությունն է: Եկեղեցին ներքուստ խաչաձև է և այդ տեսքն ստացել է շինության չորս անկյուններում տեղադրված կրկնահարկ ավանդատների շնորհիվ: Արևելյան կողմի առաջին հարկի ավանդատների մուտքը ճակատային մասից է, իսկ վերին հարկերի մուտքերը՝ ավագ խորանի միջից: Արևմտյան կողմի ավանդատների առաջին հարկի դռները գլխավոր մուտքի աջ և ձախ կողմերից են, իսկ երկրորդ հարկի մուտքերը գտնվում են դրանց վերևում և այդտեղ կարելի է բարձրանալ պատին ագուցված 11 քարե աստիճաններով /այդպես է նաև Սաղմոսավանքում, Հառիճում, Եղիպատրուշի գավթում, Նորավանքի Բուրթելաշեն, Կապուտանի եկեղեցիներում, Կարբիի հաղթակամար-եկեղեցու/:

Ավագ խորանի երկու կողմերի և արևմտյան ավանդատները, վերնամասում ուղղահայաց վեր ձգված որմնասյուներով, պսակվում են

¹⁷ Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 82:

որմնախոյակներով, որոնք գմբեթարդի ու թաղերի հիմքը կազմող գոտու հորիզոնի վրա են գտնվում: Հենց այդ որմնախոյակների վրա, որոնք առաստաղի սկզբնավորության հիմքն են կազմում, չորս թաղակապ ծածկերն առաջացնում են եկեղեցու լայնանիստ գմբեթի հիմքը:

Հարավային պատի մեծ մասը, արևելյան պատի հարավային թևը, ամբողջ ծածկը գմբեթի հետ միասին կործանվել է 1918 թ-ի երկրաշարժից¹⁸:

Պատմիչ Ջաքարիա Սարկավագի նկարագրության և տեղում պահպանված մանրամասների հիման վրա պարզվել է գմբեթի նախնական տեսքը: Թմբուկն ունեցել է տասնմեկ կող «էլեւէջ»¹⁹՝ վրան դրված բույս վեղար-«գդակն»²⁰: Եկեղեցին հյուսիսային կողմից դռնով հաղորդակցվում է 4-րդ դարի եկեղեցու հետ, իսկ արևմտյան կողմից ունի շքադուռ, որով հաղորդակցվում է գավթի հետ:

Եկեղեցին ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ պատված է հարուստ քանդակներով, ճոխ քանդակազարդ է: Առանձնապես ընդգծվում է Կաթողիկե եկեղեցու մուտքի ճակատակալ քարի քանդակազարդը: Այդտեղ, ըստ Մատթեոսի Ավետարանի ԻԵ գլխի, պատկերված է տասը իմաստուն և հիմար կույսերի առակի բովանդակությունը:

Եկեղեցու ներսում կիսագլան գոտիներն ու որմնախոյակները, արտաքուստ արևելյան ու հարավային պատերի պատուհանների, եռանկյունաձև խորշերի պսակները, այդ նույն պատերի խաչերը, քիվերը զարդկեն մշակումներով պճնված են: Սակայն առավել ցայտուն է շքամուտքի ձևավորումը: Ճակատակալ քարի վրա արված տասը իմաստուն և հիմար կույսերի հարթաքանդակի ազատ մասերում, դռան շրջակայի կողքերին և բարավորին, երկու կիսագլան պուրների միջնամասում մեծագույն վարպետությամբ քանդակված են ութաթև աստղեր և բուսապատկեր քանդակներ:

Արքունի տարածքներում կառուցված համալիրներ:

Սանահնի մեծ գավիթ: Այս գավիթը կառուցվել է Աստվածածին եկեղեցու արևմտյան և Ամենափրկիչ եկեղեցու գավթի հյուսիսային պատերին կից՝ իրար կապելով այդ կառույցները և ամբողջացրել է համալիրը:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ **Ջաքարիա Քանաքեղի**, Պատմություն, աշխատասիրությամբ Ա.Վիրաբյանի, Ե., 2015, էջ 183:

²⁰ Նույն տեղում:

Շինության ճարտարապետական նկարագիրը բավականին յուրօրինակ է. այն հարավից հյուսիս ձգված ուղղանկյուն քառանկյունի շենք է, որ արևելքից արևմուտք գնացող երկշարք հզոր սյուներով բաժանված է երեք հավասար մասերի, որոնցից ամեն մեկը ծածկված է առանձին երկթեք ծածկով: Գավիթը դռներով հաղորդակցվում է Աստվածածին եկեղեցու և հյուսիսից կից գավթի հետ: Ճարտարապետ, վիմագրագետ Կ.Ղաֆադարյանը նշել է, որ կառուցողական իր նկարագրով այս գավիթը եզակի է հայկական գավիթների մեջ և «ամենայն հավանականությամբ կապվում է աշխարհիկ պալատական սյունազարդ դահլիճների հետ, որոնց օրինակները մեզ չեն հասել»²¹: Գավիթը կառուցող ճարտարապետ-վարդպետի անունը հայտնի չէ: Ժամանակի ընթացքում այս գավիթում կատարվել են թաղումներ և հատակը ծածկված է հարթ տապանաքարերով:

Գավթի կառուցումը իրականացրել է Վաչե Ա Վաչուտյանը: Այդ կառույցով նա իր երախտագիտությունն է հայտնել Ջաքարե Բ Ջաքարյանին՝ իրեն տրված հողատիրության, կողմնակալ-փոխարքայի պաշտոնի, իշխանաց իշխան կոչում շնորհելու համար: Վաչե Ա-ն շինարարական արձանագրության մեջ իր կառուցած շինությունն անվանել է *խորան*, որին նաև նվիրել է «ոսկետուփ ավետարան, խաչ և գործք առաքելոց»²²: Գավթի շինարարությունն ավարտվել է 1211 թ-ին: Մեր կարծիքով գավիթը հիմնադրվել է 1206 թ-ին՝ Վաչե Ա-ի փոխարքա նշանակվելու տարում: Հետևում է, որ շինարարությունն իրականացվել է 5 տարվա ընթացքում, որը բավարար է նման կառույցի համար:

Սակարավանքի գավիթ: Կառուցվել է գլխավոր եկեղեցու հյուսիսային և հին եկեղեցու արևմտյան կողմերում, դռներով հաղորդակցվում է այդ եկեղեցիների հետ և ամբողջացնում է կառույցը: Գավիթն արևելյան պատի հյուսիսային անկյունում գտնվող դռով հաղորդակցվում է կից կառույցի հետ, իսկ հարավային անկյունում գտնվող դռով՝ շենքի չափերից դուրս ընկած ավանդատան հետ: Դեպի երկրորդ հարկի ավանդատուն են տանում պատին ագուցված քարե աստիճանները: Գավիթը դրսից և ներսից քառակուսի /13x12,9 մ/ զմբեթավոր դահլիճ է ու պատկանում է քառասյուն կառույցների տիպին: Միակտուր գլանաձև սյուներն իրենց վրա են կրում կտուրը և կազմում են երդիկի հիմքը: Երդիկի չորս առագաստները քանդակազարդ են, քանդակազարդ է նաև երդիկի ամբողջ հիմքը կազմող գոտին:

²¹ Կ.Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 28-29:

²² Նույն տեղում, էջ 135:

Արտակարգ շքեղ է գավթի արևմտյան պատի վրա գտնվող շքամուտքը: Այն իրականացված է տարբեր բարձրության կիսագլանաձև սյուների, փոքր սյուների, քանդակազարդ գոտիների օգնությամբ: Նույն սկզբունքով է իրականացված նաև շքամուտքի գլխին գտնվող պատուհանի շրջակալը: Շքամուտքի վերնամասի երկու անկյուններում ճարտարապետն ագուցել է երկու բարձրաքանդակ: Ձախ կողմում կենդանակերպ հուշկապարիկ է, իսկ աջ կողմում՝ Ջաքարյան իշխանատան Իվանե Ա-ի ճյուղին պատկանող տոհմանշան-զինանշանը՝ եզանը մաշկազերծող առյուծի պատկերով:

Այս համալիրի գլխավոր Կաթողիկե եկեղեցին կառուցվել է 1205 թ-ին: Շինության կառուցումը նպաստավորել է Բագազ իշխանի որդի Վարդանը՝ Հովհաննես Ա վանահոր առաջնորդության տարիներին: Եկեղեցու բեմառաջքի քանդակազարդերից մեկի մեջ փորագրված է ճարտարապետ-վարդպետի՝ Երիտասարդի բարձրաքանդակը:

Իսկ երբ է կառուցվել գավթը: Վաչե Ա Վաչուտյանի նվիրատվական-շինարարական արձանագրության սկզբնամասում կարդում ենք. «Ես՝ Վաչե Անբերթեցի իշխանաց իշխան, ետու վեց հարիւր դահեկան»²³ ի շինութեան գաւթիս ձեռամբ Գրիգոր վարդապետին եւ յառաջնորդութեան հաւր Դավթի»²⁴: Այստեղ հիշատակվող անձնավորությունների ժամանակը ճշտելու համար կարևոր է Մակարավանքի առաջնորդ Դավթի հիշատակությունը: Մակարավանքի արձանագրություններում առաջնորդ Դավթի անունը հիշատակվել է 1215-1250 թվականներին²⁵: Այստեղից հետևում է, որ նվիրատվությունը 1215 թ-ից առաջ լինել չէր կարող: Գավթի արևելյան պատի հարավային անկյան երկրորդ հարկ տանող աստիճանների վերնամասում պահպանված ամենահին արձանագրությունը փորագրվել է ՈՀԳ /1224/ թ-ին²⁶: Դրա համաձայն 1224 թ-ին գավթին արդեն կառուցված է եղել: Եթե ընդունենք, որ գավթի

²³ Արձանագրությունից հետևում է, որ Վաչե Ա-ն գավթի կառուցման համար տվել է 2,5-2,6 կիլոգրամ ոսկի /1 դահեկանը ըստ **Խ.Ա.Մուշեղյանի** = 4,26 գրամ x 600 դահեկան = 2556 գրամ, տես՝ Դրամական շրջանառությունը Հայաստանում, մ.թ.ա. V դ. – մ.թ. XIV դ., Ե., 1983, էջ 225, իսկ ըստ **Ռ.Հ.Վարդանյանի** = 4.44 գրամ x 600 դահեկան = 2664 գրամ, տես՝ Հայաստանի չափերն ու կշիռները, Ե., 1989, էջ 143 և հետո/, որը սովորական նվիրատվություն չէ, այլ գավթի կառուցման հիմնական գումարը:

²⁴ Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին **Ս.Ա.Ավագյան, Հռ.Մ.Ջանիդադյան**: Ե., 1977, էջ 187-188:

²⁵ Նույն տեղում, էջ 168:

²⁶ Նույն տեղում, էջ 188:

կառուցման համար անհրաժեշտ լինել 5-6 տարի, ապա, եթե անգամ 1215 թ-ին հիմնադրված լինել, ապա 1221 թ-ին գավթի կառուցումն արդեն իրագործված կարող էր լինել: Բոլոր դեպքերում գավթի կառուցումն ավարտվել է 1221-1224 թվականների միջև:

Կեչառիսի Սուրբ Նշան եկեղեցի: Վաչե Ա-ն Կեչառիսի համալիրում երկու արձանագրություն ունի: 1211 թ-ին նա նվերներ է տվել Կեչառիսի Կաթողիկե եկեղեցուն: Նվիրատվական արձանագրությունը փորագրվել է գավթի հարավային պատի վրա, արտաքուստ²⁷:

Ժամանակի հզորները պատահական նվիրատվություններ չեն կատարել: Նրանց յուրաքանչյուր քայլը նաև քաղաքական ենթատեքստ ուներ: Այս դեպքում այդ ենթատեքստը կարող է լինել շնորհակալության խոսք ուղղված Իվանե Ա-ին, քանի որ վերջինիս տիրություն էր գտնվում Կեչառիսը:

Այս նվիրատվությունից տասը տարի հետո Վաչե Ա-ն նորոգել է Կեչառիսի վանական համալիրի Սուրբ Նշան փոքր եկեղեցին՝ այդ փաստը վավերացնելով արձանագրությամբ. «Յիշեսջիք յաղալսս զաստուածասէր պարոն զՎաչէ, որ նորոգեաց վերստին զեկեղեցիս, թիւն ՈՀԲ /1223/ էր»²⁸:

«Նորոգեաց վերստին» բառերն այս դեպքում թերևս ավելի լայն իմաստ ունեն, քան միայն նորոգել հասկացությունը: Միջնադարում այդ կերպ նշվում էր կրկին կառուցելու փաստը: Կարծում ենք, որ գործ ունենք հենց այդպիսի փաստի հետ: Այս արձանագրությամբ հաստատվել է, որ Վաչե Ա-ն ոչ թե նորոգել, այլ կրկին կառուցել է Սուրբ Նշան փոքրիկ եկեղեցին և այն իր այսօրվա տեսքով Վաչեաշեն կառույց է: Ասվածի հաստատումը կարող է լինել և այն, որ Վաչե Ա Վաչուտյանի արձանագրությունը փորագրվել է եկեղեցու մուտքի կամարաքարի վրա, իսկ այդ տեղը սովորաբար հատկացվել է շինության կառուցողին:

Հռոմոսի գրաստուն: Շինությունը կառուցել են Վաչե Ա և Մամախաթուն Վաչուտյանները: Շինարարական արձանագրության համաձայն «ՈՀԸ /1229/, Շնորհիւն Քրիստոսի, ես՝ Վաչէ, որդի Սարգսի եւ ամուսին իմ Մամախաթուն... շինեցաք զՆշխարատունս ի վանքս Հռոմոսի, յառաջնորդութեան տեառն Բարսղի, որդո Ամիր Երկաթայ...»²⁹: Փաստորեն

²⁷ **Հ.Եղիազարյան**, Կեչառիսի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1955, ԺԱ, էջ 40: Հ.Ղևոնդ Ալիշանի աղբյուրը արձանագրության թվականը կարդացել է ՈԿԲ /1213/ [տես՝ Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 261]:

²⁸ Նույն տեղում, էջ 44:

²⁹ **Հ.Ղևոնդ Ալիշան**, Շիրակ, տեղագրություն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 24:

1229 թ-ին շինության կառուցումն արդեն ավարտված էր: Արձանագրության առաջին մասը սխալ թվագրումով՝ ՈՂ /1241/ հրատարակել է Յովհաննես եպիսկոպոս Շահխաթունեանցը³⁰:

Հ.Ղևոնդ Ալիշանը նկարագրել է կառույցը: Այն բաղկացած է եղել երեք սենյակից, որոնք հաջորդել են իրար³¹: Միջին սենյակը մոտ 60 քառակուսի մետր մեծության, հատակագծում քառակուսի կառույց է եղել: Պատերը ջլատված են եղել երկուակն որմնասյուներով, որոնք անկյունայինների հետ յուրաքանչյուր պատի վրա կազմել են երեքական խորշ: Շինությունը ծածկված է եղել վրանաձև կտուրով: Այն ներսից իրականացված է եղել շթաքարերով և վերնամասում ունեցել է սյուներով գմբեթ: Լուսավորումը կատարվել է կտուրի երդիկից:

Այս շինության մի կողմի սենյակը ավելի փոքր է եղել և ունեցել է կամարագոտի, կտուրը ջլատված է եղել մասերի և միջնամասում ունեցել է քառակուսի երդիկ:

Երրորդ սենյակը նույնպես սքանչելի կառույց է եղել: Այն միջնադարյան քառասյուն գավիթի կառուցվածք է ունեցել: Կենտրոնական չորս սյուները և պատերի վրա եղած ութ որմնասյուները կազմել են կամարակապ, հարթ սալածածկ կտուրը:

Նշխարատուն-գրատունը իր ճարտարապետական բազմաձևությամբ բավականին թանկարժեք կառույց է եղել: Վաչուտյան տիրակալները իրենց կառուցած գրատան կենսագործունեությունը ապահովելու համար նվերներ են տվել և արձանագրել. «... եւ տվաք ընձա գրատա/նս/ գմեր գանձագին այգին ի յԱւշական ժամո համար եւ նշխարի... տուաք եկեղեցոյս սպասք եւ երկու քշոց արծաթի...»³²: Կատարած ներդրման համար Վաչուտյան տիրակալները նշանակել են իրենց ուղղված պատարագներ. «... փոխարէն հատուցին մեզ միաբանքս յամէն ամի յամենայն եկեղեցիքս ի Նոր կիրակէին պատարագել զՔրիստոս: Զայգին փակակալն հոգա եւ գինոյն իշխանութիւն ունի որ ի մեր պատարագի յարն հասարակաց սէր առնէ»³³:

Հայրենի փոխարքայության և արքունի տարածքներում շինություններ իրականացրած Վաչուտյան տոհմի հիմնադիր Վաչե Ա-ն ոչ միայն ժամանակի հզոր գորավարներից մեկն էր, այլև բավականին կարողություն է ունեցել և իր կարողությունը օգտագործել է երկրի շենացման համար:

³⁰ Յով.եպ.Շահխաթունեանց, Ստորագրություն, էջ 448:

³¹ Հ.Ղևոնդ Ալիշան, Շիրակ, էջ 23:

³² Նույն տեղում, էջ 24:

³³ Նույն տեղում:

T.Petrosyants

The century's church constructor Vicar Vache A Vachoutyan

Summary

In 1187-1236, during the half century independence period conquered by Zaqaryans, the cultural life flourished in northern and eastern parts of Armenia. Great monastic complexes were built, many handwritten books were written, schools and universities were opened. One of the most prominent figures of the era was Vache A. Vachoutyan, the founder and vicar of Ayrarat vicegerency. He was the most successful figure of the time. From 1206 to 1229, he, with his own sponsorship and means, in his native Nig-Aragatsotni in Ayrarat State, built the tomb of Teghenyants monastery, Catholic Church of Saghmosavank, the Catholic Church of Hovhannavank, the Catholic Church of Teghenevank, the Catholic church of Ushi as well as Sanahin's courtyard, Makaravanq courtyard, Surb Nshan church in Kecharis, Horomos bookstore outside the State of Ayrarat. During the half century of independence neither Zaqaryan brothers-Zaqare A and Ivane A nor others - the Khachen Owners, the Dopyans, the Orbelyans, the Proshyans, Hamazaspian-Mamikonians, Tigran Honents weren't so productive. Vicar Vache A Vachoutyan can be called century's church builder. He also built the Aray's inn, reconstructed Anberd, Karbi and other fortresses. These structures were one of the most significant and expensive buildings of the time.

Т. Петросянц

ВАЧЕ А ВАЧУТЯН, ЦЕРКОВНЫЙ СТРОИТЕЛЬ ВЕКА

Резюме

В 1187-1236 годах, в Северной и Восточной Армении независимость, завоеванная Закарянами длившаяся пол века, бурно расцвела культурная жизнь. Были построены грандиозные монастырские комплексы, написано множество рукописных книг, открылись школы и университеты. Одним из самых выдающихся фигур той эпохи был Ваче А. Вачутян, основатель и наместник Айрарата. Он был самым успешным деятелем того времени. С 1206 по 1229 год он со своими средствами в своем родном Ниг Арагатдотни, находящегося в Айрарате построил Гробницу монастыря Тегенянц, церковь Сагмосаванк, Католическую церковь Ованнаванк, Церковный собор Тегер, Собор Уши, а также вне территории Айрарата большой двор Санахина, внутренний двор Макараванк, церковь Сурб Ншан в Кечарисе, книжный магазин Хоромос. В течение полувековой независимости ни один деятель не был таким плодотворным, ни братья Закаряны - Закэре А и Иване А, ни другие - Хаченские Владельцы, Допяны, Орбеляны, Прошьяны, Хамазаспian-

Мамиконянцы, Тигран Хонентс. Наместника Ваче А Вачутяна можно назвать церковным строителем века. Он также построил пристанище Араи, восстановил Анберд, Карби и другие крепости. Эти сооружения были самыми значительными и дорогими постройками того времени.

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՑԱՆ

Ազգագրության և հնագիտության ինստիտուտի

Միջուռքի հետազոտության բաժնի

կրտսեր գիտաշխատող

ՀՏԴ 27-9:93/94

**ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ**

Բանալի բառեր. եկեղեցի, համայնք, հիմնախնդիրներ, քրիստոնեական եկեղեցիներ, դավանանք:

Key words: church, community, problems, churches of different denomination, religion, faith.

Ключевые слова: церковь, община, проблемы, церкви разного вероисповедания (толка), религия, вера.

Հայ գաղութը ներառում է առաքելական, կաթողիկե և ավետարանական շերտերը: Նրանց հարաբերություններում եկեղեցական տազնապ կամ կրոնական հարց չկա, ինչպես երկու թնի բաժանված միությունների հարաբերություններում: Այդ հարաբերություններն ավելի սահուն են, ամեն մեկն իր սահմանն ունի, իր առաջ ծառացած խնդիրները, և միակ հրամայականն առողջ համագործակցությունն է: Միրիայի հայ գաղութը պետության կողմից գրանցված է իբրև կրոնական փոքրամասնություն: Եվ այս պարագայում որոշ տարբերություն կա Հայ առաքելականի, Հայ կաթողիկեի և Հայ ավետարանականի միջև: Այս հանգամանքը, անշուշտ, զգալի է նաև այն իմաստով, որ եկեղեցուն կամ կրոնական հաստատություններին տրված են որոշ իրավունքներ, ամեն մի եկեղեցի կամ առաջնորդարան ունի իր դատարանը: Եկեղեցին համարվում է տվյալ կրոնական փոքրամասնության ղեկավար մարմինը, կարգավորում է իր համայնքի իրավական գործառնությունները, նաև պետության մոտ իր համայնքի ներկայացուցիչն է, իսկ համայնքի առաջ՝ պետության: Այն, որ մեր եկեղեցին դատաիրավական համակարգ ունի, ընդունված և հաստատված է Արդարադատության նախարարության կողմից, այնպես որ, հայ ավետարանականը չի կարող իր խնդիրները լուծել հայ կաթողիկե եկեղեցում, իսկ հայ կաթողիկեն էլ չի կարող իր հարցերը լուծել Հայ առաքելական եկեղեցում: Միրիայում Հայ կաթողիկե համայնքի պատմությունը վերագրվում է 1670-1700-ականներին: Այդ շրջանում Պարսկաստանից, Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից բազմաթիվ հայեր են ներգաղթել Միրիա և տարբեր

հանգամանքների արդյունքում դավանափոխ եղել, այսինքն՝ ընդունել են կաթոլիկություն: Այս հարցի հետ կապված շատ ու շատ իրողություններ դեռևս անհայտ են պատմությանը: Հայ կաթոլիկները Ցեղասպանության արհավիրքները չեն տեսել: Սակայն, երբ Մարաշի 1920թ. հայտնի դեպքերից հետո հայ կաթոլիկները եկան Հալեպ, նաև Դամասկոս, այնտեղ արդեն կար կաթոլիկե համայնք, հայ կաթոլիկե եկեղեցի և գերեզմանատուն: Նույնիսկ մի մասն առաջին երկու-երեք տարիները գերեզմանատանն են ապաստան գտել:

Հայ կաթոլիկե միությունը հիմնվել է 1944 թ. ին. համայնքը շատ փոքր է, ունի առաջնորդարան: Դամասկոսի կաթոլիկ հայերի առաջնորդը Հովսեփ եպիսկոպոս Արնաուտյանն է: Հայերի կառուցած եկեղեցին չէր օգտագործվում որպես այդպիսին և միայն վերջերս, այսինքն՝ երկու տարի է, որ վերակառուցվեց, բայց այժմ էլ չի օգտագործվում: Գտնվում է Դամասկոսի Բաբ Թումա թաղամասում:

Ամեն կիրակի եկեղեցում հայերեն ծիսակատարություն է արվում, բայց դրա կողքին արաբերենով էլ է ծիսակատարություն արվում այն մարդկանց համար, ովքեր, դժբախտաբար, պատճառաբանում են, թե չեն հասկանում: Պատարագների գլխավոր անցքերը հայերենով են տրվում, երգեցողությունը՝ արաբերենով, մի քանի շարական էլ հայերեն է հնչում: Այսպես, ինչ-որ խառը բան է ստացվում: Բայց տոնական օրերին ողջ ծիսակատարությունը պարտադիր հայերենով է մատուցվում: Միայն Ավետարանն ընթերցվում է արաբերենով: Կաթոլիկե համայնքի հոգևորականները ծագումով են միայն հայ. նրանք հին հայերից են: Այդպիսի մարդիկ կան նաև առաքելական համայնքում, բայց նրանք գրեթե ամբողջությամբ կտրված են եկեղեցուց: Եթե պսակ կամ մկրտություն ունենան, մեկ-մեկ գնում են: Երբ թաղումների ժամանակ գալիս են, տեսնում ես՝ լրիվ արաբացած մարդիկ են¹: 1846-ին Պոլսի մեջ հիմք դրվեց հայ ավետարանական շարժման, և այդ օրվանից շարժումը տարածում գտավ: 1922-ից Դամասկոսում հայ ավետարանականները պաշտոնապես եկեղեցի և դպրոց են ունեցել՝ համոզված լինելով, որ դպրոցն ու եկեղեցին քրիստոնեական դաստիարակության մեջ միշտ պետք է կողք կողքի լինեն: Հատկանշական է, որ բոլոր դպրոցները եկեղեցու հետ են հիմնվել: Դեռևս Օսմանյան կայսրության շրջանում էթնոդավանական փոքրամասնությունների բաժանումները եղել են միլլեթի սկզբունքով: Հայ ավետարանականներն էլ՝ որպես բողոքական, ունեցել են իրենց

¹ Ա1+(2015) Հայկական եկեղեցիների անմխիթար վիճակը Սիրիայում(հոդված), էջ4-5

ինքնությունը կամ պատկանելությունը: Պարզապես Հայաստանյայց ավետարանական եկեղեցի է եղել: Մինչ 2005 թ-ը հովիվ չի եղել, Այնճարի հովիվն էր, որ մոտ լինելու պատճառով ամիսը մեկ գալիս էր Դամասկոս, իսկ կիրակի օրերին տեղական ուժերով տարբեր քարոզիչներ էին քարոզում, որ հավատքը պահպանվի: Համայնքում այնպիսի մարդիկ կան, որ աստվածաբանական ուսում չունեն, բայց կարող են քարոզել. նրանք հզոր հավատք ունեն: Հայ ավետարանական եկեղեցին ունի դպրոց, որ Բաբ Թումա թաղամասում է և եկեղեցուն է պատկանում, դրանից բացի, նորից Բաբ Թումայում բավական մեծ հողատարածք ունի, որ համայնքին է պատկանում: Նաև կալվածքների հանձնախումբ ունեն, որ պատասխանատու է ունեցվածքը տնօրինելու հարցում: Ունեն Տիկնանց վարչություն և Երիտասարդաց պատանյաց վարչություն: Քարոզը, պաշտամունքը, Սուրբ գիրքը, բոլորը հայերեն են: Ի տարբերություն 1950-ականների, երբ համայնքը ներքաշված էր գաղափարախոսական տարբեր վեճերի ու հակասությունների մեջ, ներկայումս այն ավելի միասնական կառույց է, որի տարբեր շերտերի ու շրջանակների մեջ կա երկխոսություն և համագործակցություն: Սակայն սիրիահայ համայնքում կան առանձին կնճռոտ խնդիրներ, որոնք վաղ թե ուշ կարիք ունեն կարգավորվելու: Այդ խնդիրներից է թեմական հարցը, որ գոյություն ունի Դամասկոսի հայ համայնքում: Հայոց թեմի առաջնորդանիստը Ս. Սարգիս եկեղեցին է /թեմը ևս մի եկեղեցի ունի Հոմա քաղաքում/: Դեռևս Օսմանյան տիրապետության ներքո Դամասկոսի փոքրաթիվ համայնքը կենտրոնացած է եղել այդ վանքի շուրջ: XIX դարավերջին և XX դարի սկզբին Դամասկոսում ապրել էր շուրջ 1000 հայ: Դամասկոսահայ համայնքը մեծապես համալրվել է 1915թ. Հայոց ցեղասպանությունից մազապուրծ գաղթականներով, ապա Կիլիկիայից փախստական հայերով: 1925-27թթ. Սիրիայում հակաֆրանսիական ապստամբության հետևանքով Դամասկոսում հաստատված շուրջ 15.000 հայերի զգալի մասը հեռացել է Դամասկոսից և գաղթել Լիբանան ու այլ երկրներ: Ներկայումս դամասկոսահայերի թիվը չի գերազանցում 5-6 հազարը: Դամասկոսի թեմը կազմավորվել է XV դարի կեսին Երուսաղեմի հայոց պատրիարքության կողմից և գործել նրա ենթակայության ներքո մինչև 1929թ.: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Լիբանանում հաստատվելու շրջանում (Մեծ եղեռնից և 1921-ին Կիլիկիայի հայաթափումից հետո նրա ենթակայության տակ էր մնացել միայն Հալեպի թեմը): 1929-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի օրհնությամբ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը Բեյրութի և Կիպրոսի թեմերի հետ Կիլիկիո աթոռին է փոխանցել նաև Դամասկոսի թեմը: Թեմական հարցը պառակտել է դամասկոսահայ համայնքը, որը գործնականում բաժանված է երկու թևի: Առաջինի մեջ մտնում են

Էջմիածնական կողմնորոշում ունեցողները՝ հնչակյան, ռամկավար, քարեգործական և կոմունիստ շրջանակները, մյուս թևում՝ դաշնակցական, որոնք անթիլիասական կողմնորոշում ունեն։ Վերջիններս բոլորովին են այն միջոցառումները, որոնք կազմակերպվում են Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդի հովանավորությամբ։ Թեմական հարցը վերաճել է գործնականում չհանգուցալուծվող խնդրի, որը շատ դեպքերում ջլատում է համայնքի ուժերը։ Այդ պայքարն առավել ակնհայտ է դառնում տեղական ազգային իշխանության ընտրությունների ժամանակ։ Երկու թևերը պարբերաբար հակադարձում են միմյանց, զգալի ռեսուրսներ ներդնում՝ հաղթելու տեղական ազգային ընտրություններում։ Այս իրողությունը վերաճել է ազդեցության ընդլայնման մի յուրատեսակ պայքարի և պայմանավորված է որոշակի քաղաքական և տնտեսական շահերով։ Անգամ համահայկական նշանակություն ունեցող միջոցառումները, այդ թվում՝ Եղեռնի զոհերի հիշատակի օրը՝ Ապրիլի 24-ը, Դամասկոսում նշվում է տարանջատ։

Շատերի կարծիքով՝ թեմական խնդիրն ըստ էության ակտիվություն է մտցնում համայնքում, սակայն այդ երևույթական աշխուժությունն անառողջ մրցակցության արդյունք է դառնում։ Հարկ է նշել, որ չնայած թեմական հարցը հանդես է գալիս որպես տարանջատող գործոն, դամասկոսահայ համայնքն ապրում է ազգային աշխույժ կյանքով։ Դամասկոսում գործում են հայկական ավանդական կուսակցությունների մասնաճյուղերը, մի շարք ազգային դպրոցներ, քարեգործական հաստատություններ²։

Լիբանանը հայ եկեղեցական խոշորագույն կենտրոններից է։ Այստեղ է գտնվում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը։ Իր ողջ պատմության ընթացքում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը ակտիվորեն ներգրավված է եղել հայ ժողովրդի հոգևոր, կրթամշակութային և սոցիալական կյանքում։ 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո այն իր անմիջական մասնակցությունն է բերել հայ սփյուռքի ձևավորման և կազմակերպման գործում։ 1995 թ.-ից ի վեր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսն է Արամ Ա Քեչիճյանը։ Լիբանանի Հայ Առաքելական թեմի առաջնորդն է արքեպիսկոպոս Գեղամ Խաչերյանը։ Լիբանանի հայ կաթողիկե համայնքը ստվարացել է 19-րդ դարի 30-ական թվականներին

² Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, էջ 55-56

<http://libmindiasspora.am/wp-content/uploads/2016/06/01-Siriayi-hay-hamaynk.pdf>

թուրքական գավառներում ծավալված կաթողիկեների հանդեպ հալածանքների հետևանքով: Համայնքի թվաքանակն աճել է 1920-ականներին կիլիկիացի գաղթականների ներհոսքի հաշվին: Դեռևս 19-րդ դարում կառուցված Զմմառի վանքը հանդիսանում է ողջ աշխարհի կաթողիկե հայության վարչական կենտրոնը: Կաթողիկե հայոց կաթողիկոս-պատրիարքը Ներսես Պետրոս ԺԹ Թարմունին է: Լիբանանի թեմի առաջնորդն է եպիսկոպոս Վարդան Աշգարյանը: Հայ Կաթողիկե պատրիարքարանը ուղղակիորեն ենթարկվում է Վատիկանին, որի շնորհիվ լայն կապեր ունի միջազգային շրջանակներում և մեծ օժանդակություն է ցուցաբերում համահայկական ծրագրերին: Հայ Ավետարանական համայնքը փոքրաթիվ է և մաս է կազմում Լիբանանի ավետարանական եկեղեցու, ուր հայ ավետարանականները ունեն մեծամասնություն և զգալի կշիռ: Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների նախագահն է վերապատվելի Մկրտիչ Կարազյոզյանը: Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների կենտրոնական մարմնի առենապետն է վերապատվելի Սողոմոն Քիլադփյանը:

Կազմակերպական գործունեությունն առնչվում է հայ համայնքի կառույցների հետ: Վերջիններս աչքի են ընկնում ոչ միայն առատությամբ և տեսակային բազմազանությամբ (եկեղեցական, կրթական, մշակութային, տեղեկատվական և այլն), այլև իրենց գործունեության նշանակությամբ: Դրանց մեջ կան այնպիսիք, որոնց գործունեությունը դուրս է գալիս նեղ համայնքի շրջանակներից և ձեռք է բերում տարածաշրջանային (գործունեությունը տարածվում է Մերձավոր և Միջին Արևելքի մյուս հայ համայնքների վրա ևս) ու համազգային բնույթ:

Այս տեսակետից հիշատակման արժանի են մասնավորապես հոգևոր-եկեղեցական կառույցները.

1. *Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը (Անթիլիաս)*. որը համազգային կառույց է, քանի որ, լինելով Հայ Առաքելական եկեղեցու չորս նվիրապետություններից մեկը, Սփյուռքի առաքելական հայերի մի մեծ հատվածի հոգևոր կենտրոնն է:

2. *Հայ Կաթողիկե պատրիարքարանը (Զմմառ)*. համազգային կառույց է, քանի որ ողջ կաթողիկե հայության հոգևոր կենտրոնն է:

3. *Մերձավոր Արևելքի Հայ Ավետարանական եկեղեցիների միությունը (Բեյրութ)*. ներառում է տարածաշրջանի 6 երկրների՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի, Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, ինչպես նաև Հունաստանի և Ավստրալիայի հայ ավետարանական համայնքները: Քանի որ Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներն ավելի շատ բնորոշվում են որպես կրոնական ընդհանրություններ և ղեկավարվում են եկեղեցիների կողմից, ապա կարելի է արձանագրել, որ այդ տարածաշրջանի հայ

համայնքների կենտրոնական ղեկավար կառույցները, ի դեմս վերոհիշյալ հաստատությունների, գտնվում են Լիբանանում: Խոսքն իրապես վերաբերում է Մերձավոր և Միջին Արևելքի հայության բոլոր երեք դավանանքային շերտերին՝ հայ առաքելականներին, կաթողիկեներին և ավետարանականներին³:

Ա. Անդրիկյան

**Հայկական եկեղեցիների դերը Սիրիայի և Լիբանանի հայ
համայնքների կյանքում
Ամփոփում**

Հոդվածում քննարկվում են տարբեր հայկական եկեղեցիների բազմակողմանի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի հայ համայնքային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Փորձ է արվում հստակ վերլուծել հայկական եկեղեցիների տարբեր քրիստոնեական դավանանքների առաքելությունը վերը նշված հայ համայնքների և ամբողջ հայ ժողովրդի պատմության ամենակարևոր իրադարձությունների համատեքստում: Այսպիսով, ոչ միայն Սիրիայում և Լիբանանում տարբեր կրոնական դավանանքների հայկական եկեղեցիների ձևավորման, գոյատևման և ամրապնդման ուղին է նկատվում, այլև լուսաբանվում է իրենց ներկա կարգավիճակի և արդի իրողությունների առանձնահատկությունները:

А. Андриян

**Роль армянских церквей в жизни армянских общин в Сирии и Ливане
Резюме**

В статье рассматривается многостороннее участие различных армянских церквей практически во всех аспектах жизни армянских общин в Сирии и Ливане. Представлена попытка анализа миссии армянских церквей разных христианских конфессий в контексте наиболее важных событий в истории вышеупомянутых армянских общин и армянского народа в целом. Таким образом, не только прослеживается путь становления, выживания и укрепления армянских церквей различных религиозных конфессий в Сирии

³ Լիբանանի հայ համայնքի արդի հիմնախնդիրները դասագիրք-Վահան Բայրությունյան էջ 24-25:

и Ливане, но также сделана попытка охватить ключевые атрибуты их нынешнего статуса и особенности современных реалий.

A. Andrikyan

**The role of Armenian Churches in the life of the Armenian Communities
in Syria and Lebanon**

Summary

The article dwells on the multifaceted involvement of different Armenian Churches in almost every single aspect of life in the Armenian communities in Syria and Lebanon. The perspective offered views the fundamental partaking missions of Armenian Churches of different Christian denomination within the contexts of absolutely crucial events in the history of the above-mentioned Armenian communities and Armenian people in general. The paper not only traces back the history of accomplishment or survival of the Armenian Churches of different religious denominations in Syria and Lebanon but also it tries to cover the key attributes of their current status and actuality.

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՑԱՆ

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ

ՀՏԴ 93/94

**ԹԻՖԼԻՍՈՒՄ ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ 1919 Թ.**

**ՎՐԱՑ-ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ
ՆԿԱՏՄԱՄԲ**

Բանալի բառեր և արտահայտություններ. դիվանագիտական ներկայացուցիչ, բոլշևիկներ, կովկասյան Հանրապետություններ, Վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինք, Կամավորական բանակ, Հայկական պատվիրակություն, Վրաստանի դեմոկրատական հանրապետություն, Լևոն Եվանգուլյան, Ռուսաստանի հարավի զինված ուժեր, Հայաստանի ներկայացուցիչ Վրաստանում:

Ключевые слова и выражения: Дипломатический представитель, Большевики, Кавказские Республики, Грузино-Азербайджанский Военно-Политический Альянс, Добровольческая армия, Армянская делегация, Грузинская Демократическая Республика, Левон Евангулян, Вооруженные силы юга России, Представитель Армении в Грузии.

Key words and expressions: Diplomatic representative, The Bolsheviks, Caucasian Republics, Georgian-Azerbaijani Military-Political Alliance, Volunteer army, Armenian delegation, Georgian Democratic Republic, Levon Evangulyan, Armed forces of the south of Russia, Representative of Armenia in Georgia.

1919թ. կեսերին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության ուշադրության կիզակետում էին գտնվում Ռուսաստանի հարավում գտնվող ռազմաքաղական կազմավորումների հետ ոչ միանշանակ և բարդ, հակասական և սակայն կարևոր փոխհարաբերությունների հարցերը, որոնցից կախված էր նաև հայ-վրացական և հայ-ադրբեջանական հարաբերությունների ընթացակարգը և ռազմավարական զարգացումների ընտրությունը: Ադրբեջանի և Վրաստանի ռազմաքաղաքական շրջաններում մտայնություն էր իշխում, թե իբր Հայաստանը գաղտնի համաձայնություն է կնքել Դենիկինի հետ, և վերջինիս կողմից Վրաստանի և Ադրբեջանի վրա հարձակվելու պարագայում նաև Հայաստանի կողմից իրենց թիկունքը վտանգավոր է դառնում¹, քանզի

¹ . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 362, թ. 2-3:

վերջինս դրանից օգտվելով, հավակնում է տիրել Բորչալուի գավառին և Ղարաբաղին:

ՀՀ իրավիճակը պարտադրում էր հաշվարկված քայլեր: 1919 թ. հունիսի 4-ին ՀՀ ԱԳ նախարարությունը լիազորում է Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանգուլյանին բոլոր հնարավոր միջոցներով պարզել, թե իրապես ինչպե՞ս են վերաբերվում Կամավորական բանակը և նրան առնթեր կառավարության դեր կատարող «Հատուկ խորհրդակցությունը» Հայաստանի Հանրապետությանը²: 1918-1920-ական թթ. Ռուսաստանում ընթանում էին արյունահեղ քաղաքացիական կռիվներ, և իշխանության համար համառ պայքար բոլշևիկների ու սպիտակգվարդիականների միջև և ՀՀ քաղաքական առաջնորդները հարկադրված էին հաշվի նստել թե՛ մեկի, և թե՛ մյուսի հետ, աշխատելով հասնել նրանց կողմից քաղաքական-դիվանագիտական ճանաչման, որոշակի հանգամանքներում ակնկալելով նաև նրանց կողմից ռազմաքաղաքական աջակցություն՝ մասնավորապես ի դեմս Սպիտակ Ռուսաստանի: 1918 թ. սեպտեմբերին գեներալ Ա. Դենիկինը փոխարինել էր գեներալ Մ. Ալեքսենին՝ ստանձնելով Կամավորական բանակի՝ ղեկավարությունը: Դառնալով Կամավորական բանակի հրամանատարը՝ Դոնի և Կուբանի հացառատ երկրամասերի ողջ քաղաքացիական և ռազմաքաղաքական իշխանությունը կենտրոնացնելով իր ձեռքում, ձեռնամուխ է լինում բոլոր հակախորհրդային ուժերի միավորմանը: Ձորքերի հրամանատարությանն առնթեր ստեղծված «Հատուկ խորհրդակցությունը» ուներ քաղաքական-հետախուզիչ գործառնություններ և ի դեմս մի շարք ռուս սպաների և գնդապետ Մ. Զինկևիչի 1920 թ. կեսերին ունեցավ իր ներկայացուցիչը ՀՀ-ում, բազմիցս աջակցելով հայկական կողմին զենքի ու զինամթերքի հայթայթման, ալյուրի և պարենի պաշարների առաքման խնդրում, բացասաբար ընդունելով Ադրբեջանին տրամադրվող ռազմական աջակցությունը³:

Հայաստանը Կամավորական բանակի կողմից դիտարկվում էր որպես բարեկամ կազմավորում, իսկ Վրաստանը թշնամական կազմավորումների ցուցակում էր, որի հետ սահմանային-տարածքային հարցերում գտնվում էր պատերազմական իրավիճակում, որն առավել ցայտուն

² . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 41, գ. 211, թ. 153; ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 80:

³ . Տե՛ս Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Եր., 2015, էջ 60-62, 195-197:

արտահայտվեց 1918 թ. վրաց-հայկական պատերազմում⁴: Ոչ վաղ քան 1918 թ., ինչպես փաստում է Ն. Մամխարաձեն, Վրաստանը բանակցեց գեներալ Դենիկինի հետ՝ վերջինիս կողմից կազմված Կուրանի հանրապետության և Վրաստանի սահմանները որոշելու, պահանջելով Սոչիի ու Աբխազիայի շրջանները և նույնիսկ ռազմական գործողություններ ձեռնարկելով Գագրան գրավելու համար, որը ետ մղվեց վրացական զորքերի կողմից, որոնք հսկողություն էին սահմանել Սոչիի շրջանի վրա և կասեցրել Դենիկինի առաջխաղացումը, սակայն բանակցությունները ձախողվեցին⁵:

Իսկ Ադրբեջանը Ա. Դենիկինը համարում էր կրոնաեկեղեցական միավոր⁶, որի ճանաչման խնդրում բացասական դիրքորոշում ուներ: Կամավորական բանակի հզորացման մեջ թե՛ Վրաստանը, և թե՛ Ադրբեջանը իրենց սպառնացող վտանգ էին տեսնում, և դրանից ելնելով քայլեր ձեռնարկեցին ստեղծելու ռազմաքաղաքական դաշինք ընդդեմ Դենիկինի, չնայած վերջինս հավաստիացրել էր, որ իր գլխավոր թշնամին բոլշևիկյան Ռուսաստանն է: Այդ հարցը քննարկման փուլ անցավ 1919 թ. կեսերին անդրկովկասյան պետությունների հանդիպման ժամանակ: Նման պայմաններում, թե՛ կոնֆերանսի հայ պատվիրակները, և թե՛ Եվանգուլյանը քիչ ջանքեր չգործադրեցին, որ ստեղծված անհարմար և դժվարին վիճակից դուրս գային. <<անշուշտ ո՛չ զենքի ուժով, ո՛չ մեկ բողոքագրով հանրապետությունները չպիտի կարողանան ապահովել իրենց անկախությունը դրսի ոտնձգությունների դեմ, եթե հիմնավոր ներքին աշխատանքով, վեճերից ազատ, փոխադարձ սերտ բարեկամական հարաբերություններ ու միություն հաստատելով հանդես չգան...: Մոտ երկու շաբաթ անցած նույն հարցը նորից հանդես բերին արդեն հունիսի 9-ի հրապարակային նիստում

⁴. Տե՛ս այդ մասին Պետրոսյան Գ., 1918 թ. հայ-վրացական պատերազմը և Ռուսաստանի Հարավի Կամավորական բանակը, «Կանթեղ» (Գիտ. հոդվածների ժողովածու), N 1 (22), Եր., «Ասողիկ» հրատ., 2005, էջ 120-128:

⁵. Nikoloz Samkharadze, Georgian State Border – Past and Present, Foreign policy & security programme, August 2012, p. 6-7; Տե՛ս www.css.ge: Ըստ Ս. Մինասյանի և Բ. Մայիլյանի կողմից բերված փաստերի, 1918 թ. հուլիսին Սոչին գրավելուց հետո վրաց զորամասերը կողոպտել և թալանել են հայերին, որոնք այդ շրջանի բնակչության 30 տոկոսը: Իսկ Կամավորական բանակի հրամանատար Ա. Դենիկինը օգտագործում է հայերի դժգոհությունը վրացիների նկատմամբ, և հարմար առիթից օգտվելով նրանց օգնությամբ 1919 թ. հունվարի 24-ից մինչև փետրվարի 10-ը գրավում Սոչիի շրջանը: Մինասյան Ս., Հայերը Հյուսիսային Կովկասում 1918-1920թթ., Եր., 2016, էջ 67-73: Մայիլյան Բ., Ազգային հարցը և հայերի կացությունը Վրաստանի Հանրապետությունում 1918-1921, Եր., 2006, էջ 154-167:

⁶. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 12, թ. 16:

և կոնֆերանսի որոշման նախագծի գրավոր բանաձևով, որից պարզ էր, որ առաջարկը ռազմական-դիվանագիտական գործակցության մասին էր, մինչդեռ հաստատ իմանում էին, որ մեզ հետ ռազմական գործակցության խոսք լինել չի կարող: Թվում է ինձ, որ վրացիք արդեն Ագրբեյջանի հետ դաշն էին կապել /այդ մասին խոսվում էր Թիֆլիսում, ակնարկվում էր թերթերում, իսկ Մոլդովանին օրեր առաջ ասել էր, թե եթե հայերդ չզիջեք, մենք ստիպված կմիանանք թաթարների հետ/: Մեր քաղաքական գործակցության անհրաժեշտությունը մերժել էին, իսկ մեր չեզոքությունը առանց դաշնագրի ու կոմբինացիայի ապահովելու հաստատ ու բավարար միջոցը գտել էին Հայաստանի ներսը և դուրսը մուսուլմանների հարձակումներով ու սպառնալիքով մեր ուժերը զբաղեցնելու, ջլատելու և չեզոքացնելու մեջ /Ղարաբաղի, Օլթիի, Կադզվանի, Շարուրի, Նախիջևանի դեպքերը/: Եվ այն երևաց, երբ մենք Հայաստանի մինիստրներս անշուք և անուշադիր մեկնում էինք Թիֆլիսի կայարանից, նույն կայարանում Վրաստանի մինիստրները պատվի պահակով, երաժշտախմբով շուքով դիմավորում էին Թիֆլիս ժամանող գեներալ Մախմանդարովին, Ագրբայջանի Զօրական մինիստրին: Երեք դելեկացիաներ, ինչպես որ եկան որպես երեք առանձին ու իրարից անջատ կողմեր այնպես էլ մեկուսացած մնացին մինչև վերջը: Զգտնվեց այն ընդհանուր հողը, որի վրա բոլորը միասին պիտի կանգնեին, չստեղծվեց այն ջիղը, որը բոլորին պիտի շաղկապեր ի մի միություն»⁷:

ՀՀ ԱԳ նախարարի կողմից այդ առթիվ հունիսի 12-ին Լ. Եվանգուլյանին ուղարկված գրության մեջ ասվում էր, թե կոնֆերանսի մասնավոր նիստում հարց է հարուցվել, <<թե ահավասիկ Կամավորական գորաբանակը սպառնում է կովկասյան հանրապետությունների գոյությանը, որ իրենք մեզանից զինված գործակցություն չեն խնդրում, բայց ուզում են իմանալ, հո՞ժա՞ր ենք մենք իրենց հետ միասին բողոքով դիմել Փարիզի կոնֆերանսին և երաշխավորում ենք արդյոք իրենց թիկունքի ապահովությունը, երբ իրենք կովի կրոնվեն Դենիկինի զորքերի հետ: Այդ առաջարկն ու հարցումը մեզ արվեց Վրաստանի և Ագրբեյջանի կառավարությունների կողմից, մենք պատասխանեցինք, թե մենք մեր կառավարության կարծիքը չունենք, որ մեր ստացած հրահանգը պատվիրում է նման խնդիրների լուծմանն անցնել սահմանավեճերը փոխադարձ համաձայնությամբ հարթելուց հետո, որ սակայն մինչև այժմ չհաջողվեց կատարել կոնֆերանսում. Ս. Հարությունյանն ու Մամիկոնյանը հավստիացրին, թե ինչ վերաբերվում է թիկնունքի ապահովությանը, իհարկե Հայաստանը չեզոքություն կպահի,

⁷ . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 111, թ. 66-67:

խսկ ես պարտքս համարեցի նկատել, որ չեզոքության ապահովման խնդիրը մեր պատվիրակության իրավասություններից վեր է և պատկանում է կառավարությանը»⁸: Ինչպես երևում է Լ. Եվանգուլյանի կողմից կառավարությանը ներկայացրած զեկուցագրից, հայկական կողմի համար այն աննպատակահարմար գտնվեց. <<Այս հարցերը քաղաքական մասնաժողովի քննությանն ու մշակմանն էին հանձնված, մենք հայտարարեցինք այնտեղ, թե կառավարությունից հրահանգ ունենինք, որ այդ կարելի է գլուխ բերել միմիայն սահմանավեճերը փոխադարձ համաձայնությամբ կարգավորելուց հետո»⁹: Դիվանագիտական հավատարմատարը դա պատճառաբանեց նրանով, որ <<այդպիսի քաղաքական գործակցության համար անհրաժեշտ է հող ու հիմք պատրաստել, ընդհանուր շահերին ու պետքերին փոխադարձ օժանդակությամբ զոհացում տալով, օրինակ, երկաթուղային, տրանզիտի, ապրանքների շրջանառության և այլ խնդիրներում, համերաշխության և բարեկամության մթնոլորտ ստեղծելով: Մեր այս քաղաքական բացատրությունները առանձին գործնական հետևանքներ չէին ունենում»¹⁰:

Իր հերթին, Հայաստանը Ռուսաստանի հարավի զինված ուժերի հետ պահպանում էր հնարավորինս բարյացական ռազմաքաղաքական հարաբերություններ: Ի տարբերություն ՀՀ հետ մշտապես տարածքային սահմանագատման հարցերում լարվածության մեջ գտնվող Ադրբեյջանի և Վրաստանի, Ա. Դենիկինը ռազմական և պարենային-տնտեսական բնույթի աջակցություն էր ցուցաբերում Հայաստանին: Բացի այդ, <<Հատուկ խորհրդակցությանը» կից գործում էր Կուբանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հովհաննես Սաղաթելյանը¹¹: <<Աշխատավոր», <<Ժողովրդի ձայն», <<Кавказское слово», «The Transcaucasian Post» և այլ թերթերի խմբագիրների խորհրդակցության ժամանակ, որը հրավիրվել էր Լ. Եվանգուլյանի նախաձեռնությամբ, հունիսի 14-ին Թիֆլիսում քննարկվեց Կամավորական բանակի դեպի Անդրկովկաս առաջխաղացման և Հայաստանի կողմից զբաղեցվելիք դիրքորոշման հարցը, որի մասնակիցները հանգեցին այն եզրակացության, որ «հայ ժողովուրդը հոգեբանորեն չի կարող ընդունել առաջարկվող պաշտպանական դաշինքը», ելնելով Վրաստանի և Ադրբեյջանի անփոփոխ թշնամական դիրքորոշումից այնտեղ ապ-

⁸ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 111, թ. 67:

⁹ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 111, թ. 64:

¹⁰ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 111, թ. 64:

¹¹ . Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ, էջ 250:

րող հայերի նկատմամբ՝ կապված այդ հանրապետությունների ագրեսիվ տարածքային ձգտումներից Հայաստանի, և մասնավորապես Լոռու և Ղարաբաղի նկատմամբ¹²: Լրատվության միջոցներին առաջարկվեց կոչ անել, որ Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունները ավելի ուշադիր լինեն Հայաստանի կարիքների և Վրաստանում ու Հայաստանում ապրող հայերի նկատմամբ, վերջ դնելով հայ-վրացական միջադեպից ի վերուստ տեղ գտած բռնություններին¹³:

Սակայն 1919 թ. հունիսի 16-ին Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքվեց ռազմաքաղաքական դաշինք՝ երեք տարով, որն անմիջականորեն ուղղված էր Ա. Դենիկինի Կամավորական բանակի դեմ: Այդ մասին իր հետաքրքիր դիտարկումն ունի Զ. Ավալովը. «Հաղորդելով Փարիզի կոնֆերանսին... պայմանագրի տեքստը, վրացական և ադրբեջանական աստվիրակությունները հույս էին հայտնում, որ այդ կոնվենցիան, որը մաքուր պաշտպանողական նպատակներ է հետապնդում, կիրառություն չի ստանա այն մասով, որ վերաբերում է համատեղ ռազմական գործողություններին, և որ Անդրկովկասը կպատնեշվի դրսից ցանկացած հարձակումից, շնորհիվ դաշնակից պետությունների կողմից գեներալ Դենիկինի օպերացիաների նկատմամբ հսկողության»¹⁴: Այն Ադրբեջանի կողմից Թիֆլիսում ստորագրեցին գեներալ Ահմեդ բեկ Մեհմանդարովը, Մ. Ջաֆարովը, Ս. Սուլկևիչը, իսկ Վրաստանի մենշևիկյան Հանրապետության անունից՝ գեներալներ Ի. Օդիշելիձեն, Ա. Գեդևանովը (Գեդևանիշվիլին), Ե. Գեգեչկորին և Ն. Ռամիշվիլին: Այդ մասին Ֆ. Կազեմզադեն գտնում էր. <<Կամավորական բանակից եկող սպառնալիքները սերտորեն մոտեցրին Վրաստանին և Ադրբեջանին: 1919 թ. հունիսի 16-ին այդ երկրները պայմանագիր ստորագրեցին, իր բնույթով բացառապես պաշտպանական բնույթի համաձայնագիր, որի համաձայն, պայմանավորվող կողմերից մեկի վրա հարձակման դեպքում մյուս կողմը իր վրա պարտավորություն էր

¹² . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 103;

¹³ . Տե՛ս Петросян Г., Грузино-азербайджанские антирусские военные договора и Республика Армения (1919 г. июнь, сентябрь): В нх.: Внешняя политика Республики Армения. Проблемы и Вызовы: Научно-практическая конференция, посвященная 22-летию независимости РА (17 октября 2013 г.)/ ЕГУ, Гл. ред.: Г. Петросян, Ер.: Изд-во ЕГУ, 2014, стр. 38-39: Տե՛ս Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ, էջ 257:

¹⁴ . Տե՛ս Авалов З., Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг.: Воспоминания. Очерки, Париж, 1924, стр. 209-210:

վերցնում նրան օգնություն ցուցաբերել»¹⁵: Այն վավերացվեց Վրաստանի Սահմանադիր ժողովի կողմից հունիսի 22-ին, ինչը վրաց մամուլը միաբերան պատմական մի խոշոր ակտ համարեց, որը ամուր հիմքերի վրա է դնում Վրաստանի գոյությունը և անկախությունը: Ի հավելումն կայացրած համաձայնությանը, Վրաստանը և Ադրբեջանը տեխնիկական համագործակցության մասին պայմանագիր ստորագրեցին: Բանակցությունների արդյունքում ստեղծվեց վրաց-ադրբեջանական ռազմական խորհուրդ, որի մեջ մտան երկու երկրների ռազմական նախարարության բարձրաստիճան չինովնիկները՝ Ադրբեջանից՝ գեներալ Շիրվինսկին և Սուլկևիչը, Վրաստանից գեներալ Կատելաձեն և Օդիշելիձեն: Նպատակն էր միմյանց օգնել բանակաշինական գործընթացներում, Վրաստանը պարտավորվում էր օգնել Ադրբեջանին բանակի կառուցման, սպայական կադրերի պատրաստման խնդրում, իսկ Ադրբեջանը՝ Վրաստանին սպահովել նավթամթերքներով¹⁶, որի մասին բազմիցս տազնապահարույց հեռագրեր են հղվել Երևան Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի կողմից¹⁷:

Իսկ այդ իրավիճակում Վրաստանը և Ադրբեջանը բոլոր ջանքերը գործադրեցին, որպեսզի ՀՀ-ին ևս ներքաշեն այդ գործընթացների մեջ, ինչն էլ ամեննին չէր բխում Հայաստանի ռազմաքաղաքական շահերից: Ընդդեմ Ռուսաստանի, հայկական կողմը չէր կարող հանդես գալ, թեկուզև դա Սպիտակ Ռուսաստանն էր¹⁸: Դա ոչ մի կերպ քաղաքական առումով դրական չէր ընկալվում հայ քաղաքական-կուսակցական շրջաններում: Դրան ավելացրած նաև այն կարևոր հանգամանքը, որ Ռուսաստանի հարավում ծվարել էին Եղեռնից մազապուրծ հազարավոր հայ գաղթականներ, որոնց աջակցության հարցին առանց Կամավորական բանակի հնարավոր չէր ընթացք տալ: Գտնվելով որոշակի բարյացակամ ռազմաքա-

¹⁵ . Տե՛ս Կаземзаде Ф., Борьба за Закавказье (1917–1921). Стокгольм, СА&СС Press ® , 2010, стр. 379: Бахтадзе Михаил, О военном договоре 1919 года между Грузией и Азербайджаном «Право и политология», 2010, № 7: Տե՛ս <https://cyberleninka.ru/.../azerbaydzhan-i-gruziya-v-period-stan>: Տե՛ս www.elibrary.ar/docs/JURNAL/jin2010:

¹⁶ . Տե՛ս Գасымов Заур, Азербайджан и Грузия в период становления (1918-1921 гг.): Военное строительство и сотрудничество в вонной сфере, Кавказ и глобализация, 2007, Т. 1 (2): Տե՛ս <https://cyberleninka.ru/.../azerbaydzhan-i-gruziya-v-period-stan...>:

¹⁷ . Տե՛ս՝ ՀԱՄ, ֆ. 275, ց. 5, գ. 93, թ. 213-214:

¹⁸ . Տե՛ս մանրամասն Վիրաբյան Վ. Հ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները, էջ 557-571: Կնյազյան Դ., Ադրբեջանական դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., Հեղ. հրատ., 2008, էջ 109-110:

դաքական հարաբերությունների մեջ Ռուսաստանի Հարավի զինված ուժերի և նրա ղեկավարության հետ, ՀՀ կառավարությունը ակնկալում էր լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝ ապահովել Դոնից և Կուբանից Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող հացահատիկային պաշարների, գենք ու զինամթերքի, այլ ապրանքների ներկրումը Հայաստան: Ամեն դեպքում Հայաստանն ուներ իր կողմնորոշումները և տազնապները: 1919 թ. հունիսի 24-ին Լ. Եվանգուլյանը Թիֆլիսում հանդիպում է Գեգեչկորու և Վրաստանի Զինվորական նախարարի օգնական, գեներալ-մայոր Գեղևանովի հետ, որում խոսք է բացվում Ադրբեջանի բանակում ծառայող վրաց սպաների մասին, որը հայ դիվանագետի կողմից օգտագործվում է ադրբեջանա-վրացական ռազմական դաշինքին ՀՀ չմիանալու պատճառաբանվածության հիմնավորման համար: Սակայն Գեղևանովը ըմբռնելով Եվանգուլյանի խոսքի խորքային իմաստը, ընդամենը փորձում է համոզել, որ վրաց սպաները ոչ մի դեպքում չեն ուղարկվի ո՛չ Ղարաբաղ, ո՛չ Հայաստանին սահմանակից շրջանները, որ ամեն ինչ կարվի հայ-վրացական մերձեցումը ամրապնդելու համար, պնդելով, որ Ս. Տիգրանյանը, Ս. Մամիկոնյանը և մյուսները պետք է կողմ արտահայտվեն ընդդեմ Դենիկինի բարձրացված բողոքին, միաժամանակ հայտարարելով իրենց չեզոքության մասին, սակայն լռել են, որի պայմաններում Վրաստանը պետք է ընդուներ Ադրբեջանի առաջարկությունը և միանար ռազմական դաշինքին: Այդ տեսակետին իր համախոհությունն է հայտնում նաև գեներալ Գեղևանովը, պնդելով, թե Հայաստանը լռելայն միության, գաղտնի ռազմական պայմանագրի մեջ է գտնվում Կոլչակի և Դենիկինի հետ, որ այդ մասին իրենք ունեն անհերքելի փաստեր¹⁹, որոնք

¹⁹ . Ո՛չ մի գաղտնի ռազմական պայմանագիր էլ չկար, ինչի մասին հավաստել էր նաև Դենիկինը, առավել ևս Ադրբեջանը և Վրաստանը ամենին էլ չէին թաքցնում իրենց հակառուսական, առավել ևս հակադենիկինյան տրամադրվածությունը: ՀՀ և Ռուսաստանի Հարավի զինված ուժերի հետ հարաբերությունները ունեին լուրջ նշանակություն և ավելի բարդ իմաստ, և սակայն Վրաստանի և Ադրբեջանի ռազմաքաղաքական և հասարակական շրջաններում քարոզվող լուրերը Դենիկինի հետ ՀՀ ունեցած գաղտնի ռազմական պայմանավորվածության մասին սրում էին իրավիճակը, վատթարացնում առանց այն էլ լարված հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ: Առժամանակ Դենիկինի վճռական գործողությունները որոշակի դեր խաղացին Վրաստանի և Ադրբեջանի ագրեսիվ գործողությունների զսպման գործում. «...մեր դաշինքը Հայաստանի հետ, -հայտնել էր Ա. Դենիկինը, -որն այդպես վախճեր է վրացիներին և դուր չի եկել անգլիացիներին, վրացական լեգեոներին է: Սակայն դա դա մեզ մեծ ծառայություն է մատուցել, շեղելով ուժերը և նշանակալից չափով չափավորելով Ադրբեջանի ու Վրաստանի ռազմաշունչ բռնկումը, որոնք

իր թե մատնանշում էին Հայկական և Կամավորական բանակների կապերը, որ իր տրամադրության տակ կա հայկական բանակում ծառայության անցած ռուս սպաների ցուցակը: Եվանգուլյանը հայտնում է, որ ինքը ժխտել է Գեղնանովի պնդումները, բերել մի շարք հիմնավորումներ, սակայն, իր կարծիքով, դրանք համոզիչ չեն եղել Վրաստանի կառավարության համար: Գեգեչկորին էլ հայտնել էր, որ իրենք հիմք ունեն դժգոհ լինելու Հայաստանից, բերելով հայկական թերթերում, և մասնավորապես <<ժողովրդի ձայն>>-ում հակավրացական հրապարակումները, որոնք վիրավորում էին Վրաստանին²⁰: Վերը բերված փաստերը սակայն Եվանգուլյանի կողմից հերքվում են հակափաստերով՝ մատնացույց անելով վրաց սպաների մասնակցությունը Ջանգեզուրում Մեհմանդարովի և Շիխլինսկու ձեռնարկած ռազմական գործողություններին²¹: Այդ նույն օրը Եվանգուլյանը հանդիպում է Ադրբեջանի ԱԳ նախարար Մամեդ Յուսուֆ Ջաֆարովի հետ, որը փորձում է համոզել միանալու Վրաստանի հետ կնքված ռազմական դաշինքին և այդ ակտով ցուցադրել անդրկովկասյան ժողովուրդների համերաշխությունը՝ որպես զգուշացում Դենիկինին: Եվանգուլյանի դիտողությանը, թե Ադրբեջանը, և հավանաբար Վրաստանը ոչ մի դեպքում Ռուսաստանի դեմ ռազմական գործողությունների մեջ չեն մտնի, որ Ադրբեջանը արդեն կամավորականներին բաց է թողնում կերոսին, մագուրթ, Կամավորականների տարածքից թողնում է Բաքու մտնեն եկող գնացքները, որ Կամավորական բանակի գնդապետ Լազարևը միանգամայն ազատ ապրում է Բաքվում՝ հարաբերվելով Ադրբեջանի կառավարության հետ, որին հակառակ հայերի համար կան սահմանափակումներ, Ջաֆարովը անորոշ հակադարձում է: Եվ դեռ ավելին, Եվանգուլյանը Ջաֆարովին հայտնում է Թուրքիայի կողմից Ադրբեջանի հովանավորության մասին, իսկ Գերմանիայի կողմից՝ Վրաստանին, ասելով, որ հայերը մեկուսացել են և մնացել միայնակ²²: Հաստատագրելով փաստերը, կարևոր է նշել, որ արդեն հունիսի 26-ին, Մ. Ջաֆարովի հետ հանդիպման ժամանակ Լ. Եվանգուլյանը հայտնելով, որ ՀՀ-ն չի ցանկանում միանալ վրաց-ադրբեջա-

իրենց թիկունքը հյուսիսային ուղղությամբ հարձակվելու դեպքում համարում էին բաց: Եվ դեռ ավելին, Վրաստանը և Ադրբեջանը նույնիսկ չէին համարձակվում սկսել ռազմական գործողություններ ընդդեմ Կամավորական բանակի կամ կենտրոնացնել իրենց զորքերը Հյուսիսային Կովկասի մատույցներում: Տե՛ս Деникин А. И., Очерки русской смуты. Вооруженные силы Юга России. Распад Российской империи. Октябрь 1918 – январь 1919 (Воспоминания. Мемуары), М., 2002, стр. 320-321:

²⁰ . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս. II, թ. 424 հալ.:

²¹ . Նույն տեղում:

²² . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս. II, թ. 424-424 հալ.:

նական ռազմական դաշինքին ընդդեմ Դենիկինի, հարցապնդում է արել, ցանկանալով պարզել, թե ինչպե՞ս կվարվի Ադրբեջանը, եթե թուրքական զորքերը հարձակվեն Հայաստանի վրա: Ջաֆարովը ուղղակի պատասխանել է Լ. Եվանգուլյանին, որ Ադրբեջանը Հայաստանին օգնություն չի ցուցաբերի²³: Ադրբեջանցի հետազոտող *Բախտիյար Նաջաֆովը* այս կապակցությամբ թունոտ նկատում է, որ <<առավել թշնամական էր դաշնակցական Հայաստանի վերաբերմունքը Ադրբեջանի նկատմամբ: Դաշնակցականների մեղքով, որոնք չհայտարարված պատերազմ էին սկսել ադրբեջանական ժողովրդի դեմ, անկախության հռչակումից հետո երկու հանրապետությունների միջև նույնիսկ չհաստատվեցին պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ և կապը իրականացվում էր Վրաստանի հանրապետության կառավարությանն առընթեր հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների միջնորդական առաքելությամբ: Միայն 1919 թ. սկզբին Ադրբեջանը և Հայաստանը փոխանակվեցին դիվանագիտական ներկայացուցչություններով>>²⁴. Առհասարակ հայկական քաղաքական-դիվանագիտական շրջանակներում երկակի մտայնություն էր իշխում: Ս. Տիգրանյանը, Ս. Հարությունյանը, Ն. Աղբալյանը, և մասնավորապես Լ. Եվանգուլյանը ձգտում էին Դենիկինի հետ հարաբերություններին զուգընթաց հնարավորինս ապահովվել համերաշխությունը հարևան հանրապետությունների՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ, չնայած նրանց կողմից առաջադրվող ոչ բոլոր առաջարկներն էին ընդունելի, ուստի նրանք առաջարկում էին չիրաժարվել քաղաքական գործակցությունից, բայց ռազմական գործակցության էլ չգնալ: Եվանգուլյանական մոտեցումը տարբերվում էր Ս. Մամիկոնյանի և Խ. Վերմիշևի մոտեցումից, որոնք պնդում էին, թե չպետք է կաշկանդվել որևէ միասնական քայլի խոստումով և ազատ գործելու իրավունք ունենալ, ասելով, թե Վրաստանի և Ադրբեջանի նկատմամբ Դենիկինի վերաբերմունքը կարող է այլ բովանդակություն ունենալ, քան ՀՀ նկատմամբ²⁵: Լ. Եվանգուլյանը ներկայացուցչության տեղեկագրում նշում էր, որ 1919 թ. հունիսի 22-ի նիստում Վրաստանի Սահմանադիր ժողովը վավերացրել է Վրաստանի և Ադրբեջանի միջև կնքված զինվորական դաշ-

²³ . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 181, մաս. II, թ. 425:

²⁴ . Наджафов Бахтияр, Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце XIX - начале XX века. ч. II, Баку, Шарг-Гарб, 1994, стр. 88:

²⁵ . Տե՛ս Внешняя политика Республики Армения. Проблемы и вызовы: Научно-практическая конференция, посвященная 22-летию независимости РА (17 октября 2013 г.)/ ЕГУ; Гл. ред.: Г. Петросян.- Ер.: Изд-во ЕГУ, 2014, стр. 39:

նակցությունը²⁶, որ վրացական մամուլը իր կառավարության այդ քայլը համարում է խոշոր պատմական մի ակտ, որը ամուր հիմքերի վրա է դնում Վրաստանի գոյությունը և անկախությունը, մեղադրանք ներկայացնելով, որ <<Հայաստանը միշտ խույս էր տալիս ռազմական գործակցությունից և այսօր էլ խույս է տալիս իր հարևանների հետ որևէ համաձայնության գալուց>>²⁷: Միաժամանակ այդ տեղեկագրում դիվանագիտական հավատարմատարը ուղղակի շեշտադրում էր, որ ինքը միշտ էլ եղել է հայ-վրացական մերձեցման մեծ կողմնակից, որպես ավելի բնական դաշնակիցներ և բարեկամներ, քան աղբրեջանցիք, դրա հետ մեկտեղ անհամաձայնություն արտահայտելով վրաց-աղբրեջանյան ռազմաքաղաքական պայմանագրի հետ, կարևորելով այն կարևոր պատմաքաղաքական հանգամանքը, թե կկարողանա՝ արդյոք Հայաստանը միայնակ, իր սեփական ուժերով ապահովել տաճկական ֆրոնտը և իրագործել իր ազգային ձգտումները, որ Անդրկովկասյան մյուս ազգությունները չեն կարող աչքաթող անել այդ ֆակտորը, և վարել համապատասխան քաղաքականություն, որ ամենևին էլ չպետք է հենվել աբսոլյուտ թեօրիսանքների վրա, նրան պիտի սնուցեն միայն փաստերը և պետական գործիչը լավ պիտի տեսնի ամեն մի իրադարձություն և սկսվող փոփոխում>>²⁸:

Տեղեկատվական բյուրոյի պետ Մելիք-Քարամյանի ներկայացրած 1919 թ. հունիսի 29-ի տեղեկագրում ևս անդրադարձ կա Վրաստանի և Աղբրեջանի միջև կնքված դաշնագրությանը Լ. Եվանգուլյանի կողմից ունեցած տեսակետին և դիրքորոշմանը: Հայտնվում էր վրաց մամուլի էջերում այդ դաշնակցության չափազանց կարևորությունը պաշտպանելու, ինչպես նաև ի նպաստ այդ դաշնակցության Վրաստանի կառավարության կողմից կազմակերպված զանազան ժողովների և միտինգների մասին, որոնց միաձայն որոշումները գալիս էին հաստատելու վրաց ժողովրդի պատրաստակամությունը պաշտպանելու հայրենիքը մինչև արյան վերջին կաթիլը: Ընդգծվում էր նաև վրաց հասարակական խավերի ջղային արշավանքի մասին Հայաստանի և հայերի դեմ, նշելով վրաց քաղաքագետների վերաբերմունքի մասին, որոնք չէին կարողանում ներել հայերին, որ չեն ցանկանում մասնակցել Կամավորական բանակի դեմ կովին, որ Հայաստանի ղեկավար կուսակցությունը Դաշնակցությունը միշտ եղել է Անդրկովկասի հանրապետություններից ՀՀ անջատման պատճառը, որ

²⁶ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 93, թ. 213:

²⁷ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 93, թ. 213-214: Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ, էջ 256-259 :

²⁸ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 93, թ. 214:

մշտական վտանգը հարավից՝ Տաճկաստանի կողմից թույլ չէ տալիս Հայաստանին բաժանել իր ուժերը, որ այդ վտանգը ավելի է այժմ սպառնում Անդրկովկասին և ամենից շատ Հայաստանին, քան Դենիկինի արշավանքը, ուստի Հայաստանը կարող է միայն չեզոքություն պահպանել²⁹:

Հարկ է ասել, որ վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական պայմանագիրը լարվածության մեջ գցեց Հայաստանին, իսկ վերջինիս հրաժարվելը այդ պայմանագրին միանալուց լարվածության նոր եզրեր ստեղծվեցին հայ-ադրբեջանական հարաբերություններում: Այդ մասին հետաքրքիր դիտարկում կա Եվանգույանի կողմից 1919 թ. սեպտեմբերի 26-ին (N 3111) ԱԳ նախարարին ուղարկված ձեպագրում. <<Ադրբեջանի Զինվորական մինիստրի օգնական և Զորքերի հրամանատար գեն. Մեհմանդարովը Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ կնքուած դաշնագրի գործով եկել է Թիֆլիզ: Երեկ երեկոյան...պատահեցի [ծանոթ] այն գէներալին, որը հայտնեց, որ գեն. Մեհմանդարովը դժգոհ է Հայաստանի կառավարութիւնից, որը, ըստ գեն. Մեհմանդարովի, անտես է առնում այն համաձայնութիւնը, որը կայացել է Ղարաբաղի ազգաբնակութեան եւ Ադրբեջանի կառավարութեան միջեւ: Գեն. Մեհմանդարովի ասելով, Հայաստանի կառավարութիւնը Ղարաբաղում ունի իր ճյուղը, որը աշխատում է տեղական ազգաբնակութիւնը ապստամբեցնել Ադրբեջանի իշխանութիւնների դէմ: Եթէ, ասել է գեն. Մեհմանդարովը Հայաստանի կառավարութիւնը չդադարեցնի իր վնասակար գործունէութիւնը Ղարաբաղում, նա ստիպուած կլինի այնտեղ գորքեր ուղարկել>>³⁰: Դիվանագիտական ներկայացուցչությունը ընդգծելով այդ պահի մասին, փաստում էր, որ դա էլ բավական էր, որ վրաց հասարակական-քաղաքական շրջանները անգամ համոզված պնդեին, որ կրիտիկական րոպեում Հայաստանը թիկունքից հարվածելու է Վրաստանին³¹:

Վրաստանի և Ադրբեջանի կողմից արվող առաջարկը միանալու հակադենիկինյան դաշինքին, իր հիմքում մերժելի էր հենց այդ պետությունների անբարյալացական վերաբերմունքի պատճառով ՀՀ նկատմամբ: Այդ իր արտացոլանքը գտավ նաև նրանում, որ ի պատասխան Վրաստանի և Ադրբեջանի կողմից ձևավորված միացյալ ճակատի, Դենիկինը տնտեսական շրջափակում հայտարարեց թե՛ Ադրբեջանին, և թե՛ Վրաստանին և իր 1919 թ. նոյեմբերի 19-ի (№ 171) հրամանում այդ մասին ուղղակի փաստեց. <<Ես չեմ կարող Վրաստանի և Ադրբեջանի ինքնակոչ

²⁹ . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 93, թ. 213-214:

³⁰ . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 196, թ. 2:

³¹ . Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 93, թ. 214:

կազմավորումներին, որոնք առաջացել են ի վնաս Ռուսական պետության շահերի և հանդիսանում են բացահայտ թշնամական ռուսական պետության գաղափարին՝ թույլ տալ բոլշևիկներից ազատագրված շրջաններից պարենամթերք ստանալ»³²։ Այս առումով հետաքրքիր է նաև իրանական ծագումով Յելի համալսարանի ամերիկյան պրոֆեսոր Ֆ. Կազեմզադեի տեսակետը, որ հայկական հանրապետությանը համարում էր Ա. Բ. Դենիկինի գործոն-սատելիտը Հարավային Կովկասում, վկայակոչելով Ադրբեջանի հանրապետության ԱԳ նախարար Մ. Յու. Ջաֆարովի ելույթը Ադրբեջանի պառլամենտում. «Հայկական հանրապետության վերաբերմունքը կնքված պաշտպանական ռազմական կոնցեպցիայի նկատմամբ քիչ այլ էր։ Նրա կառավարությունը ենթադրում էր, որ մինչև այդ անկախության ընդհանուր պաշտպանության հարցի լուծումը՝ առաջին հերթին անհրաժեշտ է լուծել տարածքային հարցերը։ Հայկական այդ պատգամավորների վերաբերմունքը Վրաստանին և Ադրբեջանին դրդեց գնալու սեպարատ դաշինքի միմյանց հետ»³³։

Հարկ է ասել, որ այս չափազանց կարևոր խնդրին 1919 թ. դեկտեմբերի 9-ին կրկին անդրադառնում է Լևոն Եվանգուլյանը, որը Անդրկովկասում բրիտանական բարձրագույն կոմիսար Ուորդոքուպի հետ ունեցած հանդիպման ժամանակ կարևորել է Դենիկինի հետ հարաբերությունների հարցը. «Ես բացատրեցի Ուորդոքուպին, որ Կամավորական բանակի դեպի մեզ հաճելի վերաբերմունքը հիմնավորված է ոչ թե մեր անձնական կամ ազգայնական հատկություններով, այլ այն բանով, որ Հայաստանի կառավարությունը չի հալածել ռուս սպաներին, թողնելով անգամ նրանց ծառայության մեջ... Ես բացատրեցի Ուորդոքուպին, որ ռուսաց զորքերի Կովկասից հեռանալուց հետո, տաճկական զորքերի արշավանքից ճակատի պաշտպանողները եղել են հայկական զորամասերը և մի քանի ռուս սպաներ և զինվորականներ, որոնք հայրենասիրությամբ տոգորված չեն՝ ուզել թողնել ճակատը և հեռանալ Ռուսաստան, հետո նրանք էլ հեռացան՝ մի մասը որոշ քանակով մնացել է և մտել ծառայելու հայկական բանակի մեջ... այդպիսի սպաների չէր կարելի և հիմի էլ չի կարելի հեռացնել բանակից, քանի որ նրանք քաղաքական գործերով չեն պարապում»³⁴։

³² . Տե՛ս Գусейнзаде Рауф Алишир оглу, Кавказ и армяне, Баку, Печатный дом "Апострофф", 2014. стр. 553:

³³ . Տե՛ս Գусейнзаде Рауф Алишир оглу, указ. соч., стр. 380: АДР. Парламент - Азербайджанская Демократическая республика. 1918-1920 Парламент. Стенографические отчёты. Баку, 1998, стр. 484-485:

³⁴ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 123հալ.:

Եվանգույանը Ուորդրոպի և Հասկելի հետ ունեցած այս հանդիպումից անձնապես գալիս է այն եզրահանգման, որ նրանք Դենիկինի ջախջախումից հետո դեմ էին լինելու Ռուսաստանի Կովկաս վերադառնալուն³⁵, չնայած ստահոգաբար հավաստիացնում էին Կամավորական բանակի հաղթանակի առումով իրենց տրամադրվածության մեջ, իրականում սակայն նրանց գլխավոր նպատակը Ռուսաստանում քառսի և եղբայրասպան կռվի խրախուսումն էր: Եվանգույանը պնդում էր, որ այդ իրավիճակում թե՛ Ուորդրոպը, թե՛ Հասկելը և թե՛ Գաբբան ու Նոնանկուրը, անգալ Վենեզիլոսը առաջարկում էին կոնֆեդերացիայի գաղափարի իրագործում, այսինքն տնտեսության, երկաթուղագծի, փոստ-հեռագրատան, տրանզիտի հարցերում միասնության ստեղծում և հետո նաև՝ քաղաքական միության միավորում, սակայն ըստ Եվանգույանի Հայաստանի համար <<Կրաստանի և Ադրբեջանի հետ միություն կազմելու խնդիրը ուղղակի կապ>> ունեթ <<Կամավորական բանակի հաջողություններից...>>³⁶, կարծելով, որ իրենց <<բոլոր արտաքին օրիենտացիաներից չեն հուսահատվել ռուսական օրիենտացիայից>>³⁷:

Հետևաբար, ստեղծված իրավիճակում Հայաստանի Հանրապետությունը պարզապես չէր կարող հրաժարվել իր համար շահավետ քաղաքական, տնտեսական և ռազմական հարաբերություններից Ա. Դենիկինի Կամավորական բանակի հետ, և կուրորեն միանալ վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքին, որը կհանգեցներ Կովկասյան տարածաշրջանում և նրա շուրջ ՀՀ աշխարհաքաղաքական անցանկալի ու վտանգալից մեկուսացմանը, և կունենար բացահայտ անկանխատեսելի, բացասական ռազմաքաղաքական հետևանքներ, առավել ևս որ բոլշևիկյան Ռուսաստանն էլ դեռ բավականաչափ հզոր չէր՝ ազդելու կովկասյան, և առավել ևս հայաստանյան ռազմաքաղաքական իրողությունների վրա, քանզի դեռ իրապես հեռու էր և ինչ-որ տեղ դեռ իրապես թույլ վճռապես ազդելու Կովկասում ընթացող իրադարձությունների վրա, ինչը պարզ դարձավ միայն 1920 թ. կեսերին և դրանից հետո, թե չէ ամեննին էլ չէր հրաժարվի դրանք իրագործել, ինչպես նա մշտապես փորձել է և ձգտել: Ավելին, ՀՀ կառավարչապետ Հ. Օհանջանյանը այս կապակցությամբ այդ օրերին Թիֆլիսում աներկբա հայտարարություն արեց, որ եթե հարկ լինի ընտրություն կատարել թուրքերի և Դենիկինի միջև, ապա, իհարկե կնախընտրեն

³⁵ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 123հալ.:

³⁶ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 124-124հալ.:

³⁷ . Տե՛ս ՀԱՍ, ֆ. 275, ց. 5, գ. 116, թ. 124հալ.:

վերջինիս³⁸: Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատարը 1919 թ. դեկտեմբերի 30-ին դիմելով ՀՀ ԱԳ նախարարին, կրկին տեղեկացնում է բրիտանական կոմիսար գեներալ Ուորդրոպի հետ ունեցած գրույցի մասին, որում քննարկվել են Դենիկին-Հայաստան կապերի, և մասնավորապես իր կողմից ներկայացված պնդումի մասին, որ ռուս սպաների մի որոշ քանակը մնացել և մտել են հայկական բանակի մեջ, և իրենք գտնում են, որ չի կարելի այդպիսի սպաներին հեռացնել հայկական բանակից, քանի որ նրանք քաղաքական գործերով չեն զբաղվում³⁹: Թիֆլիսի ՀՀ ներկայացուցիչը կրկին անդրադարձ կատարելով դեպի գնդապետ Վ. Հասկելի և գեներալ Ուորդրոպի գրույցներին, նշում է, որ Կամավորական գործերի վատթարացումից հետո նրանց կառավարությունները դեմ են արտահայտվել Ռուսաստանի Կովկաս վերադառնալուն կամ Կովկասը Ռուսաստանին վերադարձնելուն⁴⁰: Լ. Եվանգուլյանը գալիս է եզրահանգման, որ որքան էլ վատ լինեն Կամավորական Ռուսաստանի գործերը, իրենք չպետք է ձեռնարկեն որևիցե բացարձակ ագրեսիվ բնույթի քայլեր ընդդեմ Ռուսաստանի, որ բոլոր իրենց արտաքին կողմնորոշումներից իրենք չեն հուսահատվել միայն ռուսականից⁴¹: Ելնելով կովկասյան տարածաշրջանի իրողություններից, Լ. Եվանգուլյանը կարծում էր, որ կամ լիովին մերժելի չպետք է համարել կամ ավելի շուտ ընդունելի պետք է լինի կոնֆեդերացիայի գաղափարը, սակայն գտնելով, որ իրենք մենակ են մնացել, առաջարկում էր հարթել սահմանավեճերը, գտնելով, որ ամենահեշտն է համաձայնության գալ Վրաստանի հետ, գտնելով, որ վերջինիս հետ համաձայնությունը կհարկադրի նրա պաշտոնական դաշնակից Ադրբեջանին զիջող լինել, միաժամանակ կարծելով, թե իբր Վրաստանի հետ վերջնական սահմանային համաձայնության գալուն խանգարում են Ալավերդու հանքերը⁴²: Եվանգուլյանը նաև կարծում էր, որ Վրաստանի հետ բոլոր վիճելի հարցերը պարզելուց հետո և նրա օգնությամբ Կովկասում հանգստություն պաշտպանելու և Դենիկինի արշավանքը դեպի Ադրբեջան վերացնելու նպատակներից դրդված վերջինս իբր թե պիտի գնա զիջումների, չէ՞ որ միայն սահմանային հարցերն են Հայաստանին բաժանում Ադրբեջանից, իսկ տնտեսական հարցերը՝ որպես հարուստ երկրի չեն

³⁸ . Տե՛ս Ղուլյան Յ., Ռուսաստանի իշխանությունների դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության անկախության վերաբերյալ 1918-1920 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 2017, № 125, էջ 304:

³⁹ . Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 1:

⁴⁰ . Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 2:

⁴¹ . Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 3:

⁴² . Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 4-5:

հետաքրքրում և ծառայում են որպես ճնշում գործադրելու միջոց, դրա հետ մեկտեղ արբիտրաժի պայմանագրի կնքումը ևս համարելով հսկայական քայլ Ադրբեյջանի հետ հաշտվելու խնդրում⁴³, սակայն հետագա իրադարձությունները և այսօրվա իրողությունները դրա հակառակն են ցույց տալիս: Ինքնին հասկանալի է Հայաստանի դժվարին վիճակը այս իրադրությունում, որ հայկական պետականության կայացման տեսանկյունից շատ խնդիրներ էր ստեղծում: Դա լավ էին հասկանում Թիֆլիսի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունում, որը քիչ ջանքեր չգործադրեց իրադրությունում կողմնորոշվելու և կողմնորոշելու ՀՀ կառավարությանը իր արտաքին քաղաքական հաշվարկներում, այդ թվում Դենիկինի հետ հարաբերություններում, միաժամանակ ապահովելով Հայաստանի կենսագործունեությունը թե՛ ռազմական ու պարենային մտակարարման, թե՛ միջպետական հարաբերություններում ոչ լարված հարաբերությունների ապահովման տեսանկյունից, ինչը միշտ չէ, որ հաջողվում էր: Ամեն դեպքում ՀՀ դիրքորոշումը հավասարակշռված էր, և ստեղծված պահին թե՛ ՀՀ կառավարությունը և թե՛ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը ելնելով Հայաստանի շահերից, նախընտրում էին իրավիճակային վճիռներ կայացնել և չփչացնել հարաբերությունները բոլոր երկրների հետ, այդ թվում և Դենիկինի հետ, որոնցից կարելի էր ակնկալել օգնություն, այդ թվում պարենային-առևտրային և ռազմական աջակցության հարցերով:

Օգտագործված գրականությունը և աղբյուրները

1. Հայաստանի Ազգային Արխիվ, ֆոնդ.1022,գ.5,գ.362:ֆ.200,գ.1,գ.158,գ.181,մաս II, գ.164,գ.440,ֆ.275,գ.5,գ.93,գ.116,գ.136,գ.196,գ.197,գ.209,մաս II,գ.5,գ.12,գ.111:
2. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, Երևան 2015թ.:
3. Պետրոսյան Գ., 1918թ. հայ-վրացական պատերազմը և Ռուսաստանի հարավի կամավորական բանակը,<<Կանթեղ>>/Գիտ.հոդվածների խողովածու/, Երևան 2005թ.:

⁴³ . Տե՛ս ՀԱԱ ֆ. 200, ց. 1, գ. 440, . թ. 6:

4. Պետրոսյան Գ. Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920 թթ.), Եր., ԵՊՀ հրատ., 2011:
5. Վիրաբյան Վ. Հ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները և Լոռու Չեզոք գոտին 1920-1921 թթ., (Տարածքային սահմանազատումը), Եր., ԵՊՀ հրատ., 2015:
6. Ղուլյան Յ., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից. 1918-1920 թթ., Եր., «Եգեա» հրատ., 2009:
7. Петросян Г., Грузино-азербайджанские антирусские военные договора и Республика Армения (1919г. июнь, сентябрь): Ереван 2014г.:
8. Авалов З., Независимость Грузии в международной политике. 1918-1921гг.:Париж 1924г.
9. Каземзаде Ф., Борьба за Закавказье (1917-1921). Стокгольм 2010:
10. Гасимов Заур, Азербайджан и Грузия в период становления (1918-1921 гг.): Военное строительство и сотрудничество в военной сфере, Кавказ и глобализация. Айхштетт 2007г.:
11. Наджафов Бахтияр, Лицо врага. История армянского национализма в Закавказье в конце XIX – начале XX века. ч. II, Баку, Шарг-Гарб, 1994:
12. Гусейнзаде Рауф Алишир оглу, Кавказ и армяне, Баку, Печатный дом "Апострофф", 2014:
13. www.css.ge:

А. Казарян

Резюме

Позиция Армении была сбалансирована с грузино-азербайджанским военно-политическим союзом. И правительство Армении и дипломатическое представительство Армении в Тифлисе, исходя из интересов Армении в Тбилиси, предпочли принять ситуационные решения и не испортить отношения со всеми странами, в том числе Деникиным. Вот почему Армения поддерживала сбалансированный нейтралитет и не присоединилась к грузино-азербайджанского военно-политического блока, который был подписан 16 июня 1919 года.

A. Ghazaryan

Summary

The position of Armenia was balanced against the Georgian-Azerbaijani military-political alliance, and at the moment when the Armenian government

and the Armenian diplomatic representation in Tiflis, based on Armenia's interests in Tbilissi, preferred to make situational decisions and not to spoil relations with all countries, including Denikin. That is why Armenia maintained a balanced neutrality and did not join the Georgian-Azerbaijani military-political bloc, which was signed on June 16, 1919.

ԼԻԼԻԹ ՍՈՒՐԱՌՑԱՆ

Կոտայքի մարզի Նորգյուղի միջնակարգ
դպրոցի պատմության ուսուցչուհի
ՀՏՂ 94 (479.25)

**ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԴԱՍԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Հայաստանի առաջին հանրապետություն, համաժողովրդական գոյամարտ, 1918թ. մայիսյան հերոսամարտեր, անկախություն, Ամենայն հայոց կաթողիկոսություն, ժողովուրդների բարեկամություն, Բրեստ-Լիտովսկի հաշտություն:

Ключевые слова и выражения: первая армянская республика, всенародная война за выживания, майские героические сражения 1918г., независимость, дружба народов, Брест-литовский договор.

Key words and expressions: the first Republic of Armenia, Nationwide battle, may heroic battle, independence, catholicos of All Armenians, peoples friendship, the Brest- Litovsk Reconciliation.

1918 թվականը հերոսական և պաթետիկ, մոռալ ու ողբերգական, հակասական և իրարամերժ իրադարձությունների, արմատական հեղափոխումների շրջան էր հայոց պատմության մեջ, երբ հերթական անգամ հայ ժողովրդի գլխին սև ամպեր էին կուտակվում, երբ վերստին ասպարեզ իջավ մեր լինել չլինելու հարցը:

Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովուրդը հայտնվեց աշխարհակործան իրադարձությունների հորձանուտում: Օգտվելով իր համար բարենպաստ՝ պատերազմական և քաղաքական խառնակ իրավիճակից, Օսմանյան Թուրքիան հայ ժողովրդի նկատմամբ իրականացրեց պետականորեն ծրագրված ցեղասպանություն: Հարկ է նշել, որ ցեղասպանության այդ հրեշավոր ծրագրի իրագործումը հնարավոր դարձավ եվրոպական, համաշխարհային տերությունների երկդիմի դիրքորոշման շնորհիվ, երբ մեր դեմ էին արտաքին բոլոր գործոնները՝ հոկտեմբերյան հեղաշրջման արդյունքում ռուսական կայսրության փլուզումը, գերմանական քաղաքականության թուրքամետ բնույթը, անգլո-սաքսոնական կամ ծովային քաղաքականության հակառուսաստանյան ուղղվածությունը և այլն: Հետևաբար, այս իրավիճակում, բացառվում էր հայ ժողովրդի փրկության որևէ շանս:

Ցեղասպանության ենթարկված մի ժողովուրդ, փաստորեն, հայտնվել էր մի ողջ կայսրության դեմ - հանդիման ուժերի բացարձակ անհավասարության պայմաններում և Հայաստանն ու նրա ժողովրդի մի ստվար հատվածը զոհաբերվեց հանուն նրանց շահերի: «Կարևոր է ընդել- իրավացիորեն նշում է Վ. Վիրաբյանը, - որ հենց հոկտեմբերյան հեղաշրջումը և բոլշևիկյան «Համաշխարհային հեղափոխության» նեոքրիստոնեական և կոմունիստական ծրագրերը հնարավորություն ընձեռեցին առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրած և հապճեպ հանրապետական դիմակ հագած Թուրքիային՝ մարսել արևմտահայության նախճիրը, կլանել ոչ միայն ողջ Արևմտահայաստանը, այլև Ռուսական Հայաստանի մի զգալի մասը»:¹

Քաղաքական այս դժվարին պայմաններում հայ ժողովրդի մի հատվածը կարողացավ ուշքի գալ առաջին աշխարհամարտի մոխիրներից, գոյատևել, իսկ «Մայիսյան հերոսամարտերը վիժեցրին Հայաստանի արևելյան հատվածը նվաճելու և այնտեղ հայերին ոչնչացնելու երիտքուրքական ծրագիրը»:²

Ներկա աշխատանքում նպատակ չենք դրել ներկայացնել Մարդարապատի հերոսամարտի ռազմական պատմությունը, հայկական և թուրքական զորքերի հարաբերակցությունը, մարտական գործողությունների ընթացքը: Խնդրո առարկա հիմնահարցի պատմաքաղաքական վերլուծության հիման վրա կփորձենք տալ մի շարք հարցերի պատասխանները, որոնք, մեր կարծիքով, վճռորոշ նշանակություն ունեցան հերոսամարտում հայ ժողովրդի տարած հաղթանակի վրա: Իրադարձությունների զարգացման երկաթյա տրամադրությամբ՝ քառսի, անկալունության և անորոշության մեջ խճճված երկիրն ու ժողովուրդը «գերմարդկային ճիգերով հաղթահարելով իր երեք հազար տարուց ավելի պատմության ընթացքում չտեսնված ճգնաժամը, կանգնեցին փաստի՝ անկախության, ինքնուրույն ազգային պետականության վերստեղծման գերագույն հիմնախնդրի առաջ»:³

Տեսական ընդմիջումից հետո, հաղթահարելով դարերի ստրկացնող լուծը, օտար նվաճողների թողած ծանր ժառանգությունը, պատմական Հայաստանի տարածքի մի փոքր բեկորի վրա ստեղծվեց անկախ հանրապետություն, որը կոչված էր դառնալու հայության իդեերի իրականացման գլխավոր պատվարը:

¹ Վ. Վիրաբյան, Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ, Երևան 2007թ., էջ 42-43

² Նույն տեղում, էջ 44

³ Վ. Վիրաբյան, Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ, Երևան 2007 թ., էջ 44

Մայիսյան հերոսամարտերը հազարամյակների երթով չափվող հայոց պատմության մեջ շրջադարձային էին, որ մղում էր բնօրրան տարածքների մեծագույն մասն արդեն իսկ կորցրած հայ ծողովուրդը՝ հայրենի հողի վերջին պատառիկի հողի վրա:

1918 թվականին Արևմտյան Հայաստանը, ապա նաև՝ Արևելյան Հայաստանից Կարսը, Սարիղամիշն ու Ալեքսանդրապոլը գրավելուց հետո թուրքերը տիրացան նաև Ալեքսանդրապոլ - Ջուլֆա երկաթգծին, որից հետո՝ դեպի Վաղարշապատ ու Երևան տանող ճանապարհի վրա ոչ մի լուրջ ռազմական ամրություն չկար, և նրանք առանց դժվարությունների մտնում են Արարատյան նահանգը՝ Հայոց աշխարհի սիրտը: «Թուրքական բանակը վայրենի հոսքով եկել, լիճ էր տվել Արարատյան դաշտում, այլևս նահանջի տեղ չկար, հետևում Երևանն էր, Սյունիքը, Արցախն ու ...վերջ. կղադարեր հազարամյակներից եկող մեր ժողովրդի երթը»:⁴ Բոլորին պարզ դարձավ, որ դա «հայոց վերջի սկիզբն էր»՝ Որ հենց այս ճակատագրական պահին, Աստծո կամքով, պահի հրամայականով արագորեն ծնվեց ու ձևավորվեց մի զարմանալի ուժ, որն, ինչպես ցույց է տվել մեր բազմադարյա պատմական փորձը, միշտ էլ հաղթանակել է:

Անհրաժեշտ է նշել, որ ռազմական ու ռազմավարական տեսանկյունից սառը հաշվարկների դեպքում անգամ Սարդարապատում հայերի հաղթելու հավանականությունը չնչին էր, սակայն, այնուհանդերձ, հայերն հաղթեցին:

Հարց է ծագում . հապա որո՞նք էին 1918 թվականի Սարդարապատում հայ ժողովրդի տարած հաղթանակի իրական պատճառները, կամ՝ հայերն ունեցե՞լ են արդյոք պետական-քաղաքական ընդհանուր ղեկավարություն, թե՞ հայության մղած ազտագրական պատերազմը ուներ բացառապես տարերային բնույթ:

Հայտնի է, որ տակավին « 1917 թվականի հոկտեմբերին ստեղծված Արևելահայ ազգային խորհուրդը, որ, ըստ էության, պետականության սաղմն էր և պետական իշխանության գործառույթներ էր կատարում»:⁵

Նույն թվականի նոյեմբերին տեղի ունեցած Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ դաշնակցությունը ստացավ ընտրողների

⁴ «Հայ գինվոր», 2018թ., թիվ 21, էջ 10

⁵ Լ. Խուրշուդյան, 1918 թ. մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի Հանրապետության պատմական նշանակությունն ու դասերը, ՊԲՀ, 1999 թ., թիվ 2-3, էջ 31

ձայների ճնշող մեծամասնությունը և բացարձակ ազդեցիկ դիրք գրավեց հայ հասարակական- քաղաքական կյանքում:⁶

Հենց 1917թ. հոկտեմբերին Արևելահայ ազգային խորհուրդը Արամ Մանուկյանին ուղարկեց Երևան՝ իբրև լիազոր-ներկայացուցիչ: Ապա, դեկտեմբերին ստեղծված Երևանի ազգային խորհուրդը, «որը նույնպես պետական մարմնի դեր էր ստանձնել, դեկավարվում էր Արամ Մանուկյանի կողմից»:⁷ Երևանի ազգային խորհրդի առաջին իսկ կոչի մեջ ասվում էր. «Հայրենակիցներ, հայրենիքը վտանգված է, սպառնալիքի ու ոչնչացման անդունդի ծայրին է կանգնած ոչ միայն մոխրակույտերով զարդարուն թուրքահայաստանը, այլև կովկասահայ ժողովուրդը: Արհավիրքը ծավալվում է շտապկոտ արագությամբ, ուստի ժամանակը չի սպասում, օրը տարվա չափ արժեք ունի: Ամեն ոք պիտի լցվի պարտականության գիտակցությամբ և կանգնի իր դիրքի վրա: Այս է պահանջում հայ ժողովրդի Հավաքական կամքը, այս է պահանջում պատմական ժամը: Ազգային խորհուրդը որոշել է կանգ չառնել ո՛չ նյութական և ո՛չ էլ բարոյական զոհողության առաջ: Բոլոր հայաբնակ գավառները, հասարակական գործիչներ ու զինվորական լիազորներ են ուղարկված՝ հայ զինվորներ հավաքելու համար »:⁸

Ճակատագրական այդ օրերին « Արամը, որն առաջադրել էր թշնամու դեմ պայքարում ազգային ուժերն ապավինելու ուղեգիծ, իր վրա վերցրեց հայրենիքի պաշտպանության գործը»:⁹

Նա բազմիցս նշում էր, որ «...եթե մեր ճակատի վրա թուրքերը սկսեցին յառաջխաղացումը, մենք անպայման պետք է դիմադրենք զենքով, թնդանօթով, ոչ թե ստրկօրեն անձնատուր ըլլանք և կոտորվինք»:¹⁰

Բազմազան էր Հայոց ազգային խորհրդի գործունեության ոլորտը. օգնություն փախստականներին, Արևմտյան Հայաստանի վերաբնակեցում, վերականգնվող հայկական մարզերում հայ բնակչությունից ժողավրդական միլիցիայի և կամավորական խմբերի ստեղծում, Հայաստանում ազգային վարչության կազմակերպում, Ռուսաստանում գտնվող արևմտահայ ռազմագերիների ազատ արձակում,

⁶ Նույն տեղում

⁷ Ա. Մելքոնյան, Հայոց պատմություն, դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998թ., էջ 187

⁸ Պատմաբանասիրական հանդես, 1999, թիվ 2-3, էջ 32

⁹ «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2004թ., թիվ 2, էջ 164

¹⁰ Նույն տեղում

հայկական մարզերի տնտեսության վերականգնում և բազում այլ խնդիրներ: Նշենք, որ վերոհիշյալ խնդիրների զգալի մասին լուծում տրվեց: Այսպես. Արևմտյան Հայաստան վերադարձվեց շուրջ 140 հազ.գաղթական, գնե՞րալ կոմիսարության բաժանմունքներում ընդգրկված հայ հայրենասերների ջանքերով բացվեցին որբանոցներ, դպրոցներ, վերաշինվեցին շատ բնակավայրեր:¹¹ Ժամանակավոր կառավարությունը թույլատրեց ռուսական բանակի տարբեր ճակատներում կռվող հազարավոր հայերի վերադառնալ հայրենիք և տեղափոխվել Արևմտյան Հայաստան: 1918 թ.ապրիլի 10-ին Ալեքսանդրապոլում կազմավորվել էր Հայկական առանձին հարվածային կորպուսը, որի կազմում կար շուրջ 14 հազ. Ջինվոր՝ Անդրանիկի հրամանատարությամբ: Հայկական կորպուսի առանձին զորամասեր դրվեցին գնե՞րալ կոմիսարության ենթակայության տակ, նույնիսկ երկիր (Արևմտյան Հայստան) ուղարկվեցին շատ կամավորներ՝ Սեբաստացի Մուրադի, Սեպուհի և այլոց ղեկավարությամբ:¹²

Հայոց ազգային խորհուրդները զգալի հայրենասիրական գործ կատարեցին, «դարձան հայ կյանքի ղեկավարման կենտրոններ , որոնց հիման վրա հետագայում ձևավորվեցին Հայաստանի Հանրապետության պետական մարմինները »:¹³

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Հայոց ազգային խորհուրդը, մինչև 1918 թ. մայիսն ընկած ժամանակահատվածը, իրականացրել էր ազգային կենսական շահերից բխող հայանպաստ մի շարք գործնական քայլեր: Մահմեդական բնակչությունը կազմակերպում էր զինված խմբեր, հարձակվում հայկական բնակավայրերի վրա, զբաղվում թալանով, փակում երկաթուղային ուղիներն ու կամուրջները, սպանում հայերին, կողոպտում նրանց խանութներն ու կրպակները: «Այստեղ ու այնտեղ մահմեդականները հարձակվում էին պետական պահեստների, մասնավոր խանութների և հացի փոերի վրա,-վկայում է Միմոն Վրացյանը,- դրությունը դառնում էր սպառնական, անհրաժեշտ էր ուժեղ և արագ գործող վճռական ու միակամ իշխանություն և այդ իշխանությունը Արարատյան դաշտը ունեցավ՝ հանձին Արամի »:¹⁴ Մինչ հերոսամարտերի սկիզբը, ձեռնարկված որոշ գործողությունների արդյունքում Թալինի և Արագածոտնի տարածաշրջաններից և Արարատյան դաշտից մահմեդական

¹¹ Ա. Մելքոնյան, Հայոց պատմություն, դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998թ., էջ 187

¹² Նույն տեղում

¹³ Նույն տեղում, էջ 187-188

¹⁴ Մ. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993 թ., էջ 142

տարրը հիմնականում դուրս էր մղվել՝ թուրքերին զրկելով Արևելյան Հայաստանում աջակցության հնարավորությունից: «Երևանի կառավարությանը ի վերջո հաջողվեց բանալ ռազմավարական նշանակություն ունեցող գլխավոր ճանապարհները,-վկայում է Սիմոն Վրացյանը,-մաքրել խռովությունների բույն ծառայող մահմեդականների վայրերը և որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակա շրջաններում:»¹⁵

Կատարվեց բանակային ուժերի ճիշտ վերադասավորում ու բաշխում, հրամանատարության և քաղաքական ղեկավարության ճիշտ ընտրություն, միջոցներ ձեռք առնվեցին դասավորության և ավագակության դեմ:

Ստեղծված իրադրության պայմաններում, արդեն իսկ 1918թ. վաղ գարնանը ակնհայտ էր, որ թուրքերը չեն բավարարվելու Բրեստ-Լիտովսկի պայմանագրով իրենց տրվելիք տարածքներով և պատրաստվում են մտնել Արևելյան Հայաստան: Հենց այդ ժամանակ հայ բնակչության պաշտպանական գործն իր վրա վերցրեց 1915 թ. Վանի հերոսամարտի ղեկավար Արամ Մանուկյանը: Շուտով ստանալով նաև դիկտատորի լայն լիազորություններ, փաստորեն, իր ձեռքում կենտրոնացրեց Արևելյան Հայստանի ռազմական և վարչական իշխանությունը: Նա կարողացավ Երևան հրավիրել մի շարք հայտնի զինվորականների՝ Մովսես Սիլիկյանին, Դանիել Բեկ-Փիրումյանին, Դրաստամատ Կանայանին (Դրո), Նիկոլայ Ղորղանյանին և այլոց: Արամը կարգ ու կանոն հաստատեց Երևանի նահանգում, սանձեց ավագակային խմբերին, կազմակերպեց զինական խմբեր:¹⁶ Արդեն իսկ 1918 թ. գարնանը Արամի տրամադրության տակ կար 10-12 հազարանոց մարզված ու կարգապահ զինվորներ:¹⁷

Մեկտեղվեցին կանոնավոր բանակի և ժողովրդական աշխարհագործի ուժերը՝ մեկ հրամանատարության ներքո: Սարդարապատի գործադիրները, հրամանատարությամբ՝ գնդապետ Դանիել Բեկ – Փիրումյանի, սերտորեն համագործակցում էր հայկական հետևակային 5-րդ գնդի և կամավորական միացյալ ուժերի հետ, որի հրամանատարն էր Պողոս Բեկ- Փիրումյանը, որոնց, իրենց կատարած քաջագործությունների համար արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը մկրտել էր «Մահապարտների գունդ» անվամբ:¹⁸

¹⁵ Նույն տեղում

¹⁶ Ա. Մելքոնյան, Հայոց պատմություն, դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998 թ., էջ 193-194

¹⁷ Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993 թ., էջ 142

¹⁸ Վ. Վիրաբյան, Հայաստանի Հանրապետությունը 1918- 1920 թթ., ուսումնական

Սկզբից նեթ անհրաժեշտ ենք համարում փաստել, որ Սարգսրապատի հերոսամարտի վերաբերյալ առկա բազմաթիվ ուսումնասիրություններում հաղթանակի դափնիները «սեփականաշնորհելու» միտումով հայ որոշ պատմաբաններ դրանք վերագրել են կոմունիստ և սպարտակյան գործիչներին, (խորհրդային շրջանում) մյուսները՝ «դաշնակցական գործին»:¹⁹

Մինչդեռ ճակատում թուրք կանոնավոր բանակի դեմ առաջին հերթին կռվում էին հայկական բանակային կորպուսի կանոնավոր զորքերը, որոնց գլխավորում էին կորպուսի հրամանատար, գեներալ Թովմաս Նազարբեկյանը և դիվիզիայի հրամանատար, գեներալ Մովսես Սիլիկյանը: «Այդ զորքերը չէին ենթարկվում դաշնակցական կուսակցությանը, Նազարբեկյանը և Սիլիկյանը դաշնակցականներ չեն եղել, նրանց դեկավրած զորքերը պաշտոնապես մտնում էին Կովկասյան ռազմաճակատի մեջ և ենթարկվում Թիֆլիսի շտաբին:»,- մեջբերելով հայ անվանի ռազմական պատմաբան Ա.Հովհաննիսյանի միտքը, նշում է Ս. Քառյանը:²⁰

Մի կարևոր նկատառում ևս.

Սարգսրապատի հերոսամարտի գնահատման հարցում, մեր կարծիքով, մարտական այդ գործողությունները չպետք է դիտարկել տարածաշրջանի ընդհանուր ոլորտից դուրս որպես առանձնացված , մեկուսի երևույթ: Ճիշտ հակառակը, այն հարկավոր է դիտարկել 1918-1920 թթ..Անդրկովկասում զարգացող ռազմաքաղաքական իրադարձությունների համատեքստում որպես դրա մեկ առանձին դրվագ:²¹

Հայ ժողովրդի անմնացորդ մասնակցությունը հերոսամարտին, դրա հիրավի, հայրենական բնույթը՝ հաղթանակի առաջին գրավականն է:

Այս օրհասական ժամին վերստին խոսեց հայ ժողովրդի ինքնապաշտպանական բնագործ: Վերջ տրվեցին միջկուսակցական տարաձայնություններին,սկսվեց ազգային համախմբման չտեսնված շարժում: Ժողովրդի ինքնապաշտպանական բնագործ հասավ իր գագաթնակետին: Մարգարա—Սարգսրապատ գծի վրա հավաքվեց Երևանի և նրա մոտակա շրջանների հայ բնակչությունը: Այս գորահավաքի

ձեռնարկ բուհերի համար, Երևան , 2011թ., ԵՊՀ հրատարակչություն, էջ 15
¹⁹ Ս. Քառյան, «1918թ. Մայիսյան հերոսամարտերի խնդիրը պատմագիտության մեջ», Հայոց պատմության հարցեր, հ 3, էջ 159

²⁰ Նույն տեղում, էջ 164

²¹ Ս. Քառյան, 1918թ. Մայիսյան հերոսամարտերի խնդիրը պատմագիտության մեջ, Հայոց պատմության հարցեր, հ 3, էջ 165

կազմակերպման գործում մեծ էր Երևանի ազգային խորհրդի նախագահ՝ Արամ Մանուկյանի դերը : Նրա հմուտ ղեկավարության շնորհիվ Սարդարապատում գտնվող հայկական զորքերը ժամանակին ապահովվեցին զինամթերքով, սննդով և ջրով: Նրա կոչով բազմաթիվ կամավոր աշխարագորայիններ շտապեցին Սարդարապատ: Ա. Մանուկյանի հստակ ձևակերպած հրամաններում հիշատակվում էր հայերի ազատ ու անկախ ապրելու իրավունքը՝ սեփական ուժերով պաշտպանելու հնարավորությունը: Անկախ քաղաքական համոզմունքներից ժողովուրդը ոտքի էր կանգնել կենաց ու մահվան կռվի՝ հանուն հայրենիքի, հանուն ազգային արժանապատվության: «Դա հայերի հայրենական պատերազմն էր, համաժողովրդական ինքնապաշտպանություն՝ ֆիզիկական բնաջնջումից խուսափելու համար»:²² Իրավիճակն այնպիսին էր, որ նահանջի մասին մտածելն իսկ անհնարին էր. հաղթանակ կամ՝ մահ: Սարդարապատի համաժողովրդական պատերազմին մասնակցում էին զինվորականությունը, գյուղացիությունը, բանվորներն ու արհեստավորները, հոգևորականությունն ու մտավորականությունը: «Երևանում տիրում էր տենդոտ եռուզեռ,- փաստում է Ս.Վրացյանը,- թիկունքից սայլերով, էշերով, ձեռքերով ռազմամթերք էին հասցնում կռվողներին, հաց, ծխախոտ, խմելու ջուր»:²³ Ժողովրդական համընդհանուր համաժողովրդական ալիքի հուժկու թափը ներկայացնելու լավագույն օրինակ է Մ. Միլիկյանի ժողովրդին ուղղված կոչը. « Հայե՛ր, շտապեցե՛ք Հայրենիքն ազատելու: Հասել է պահը, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի, Հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար... Հայե՛ր, ժամանակը չէ դանդաղելու, մինչև 50 տարեկան բոլոր տղամարդիկ պարտավոր են զենքի տակ գնալ: Ես պահանջում եմ բոլորից՝ ներկայանալ իրենց զենքով ու փամփուշտներով՝ Հայրենիքի պաշտպանության համար... Հանուն բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիկական գոյության, հանուն ոտնակոխ եղած ճշմարտության ոտքի կանգնեցեք: Դեպի՝ սրբազան պատերազմ»:²⁴

Արարատյան դաշտի ժողովուրդը մի մարդու նման ոտքի էր կանգնել, «Կանայք, օրիորդները ուտելիք, ծխախոտ, վիրակապեր են պատրաստում, հոգևորականությունը խաչ ու քարոզով մտնում էր ժողովրդի մեջ: Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը շրջում էր մի մասից մյուսը և իր հրաշունչ

²² **Հ. Թուրշյան**, Սարդարապատի հերոսամարտը, Երևան 1969 թ., էջ 143

²³ **Միմոն Վրացյան**, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993թ., էջ 146

²⁴ **Նույն տեղում**, էջ 147

ճառերով բարձրացնում զորքի տրամադրությունը: Կրկնվում էին Վարդանաց պատմական օրերը»:²⁵

Ստեղծվել էր լիակատար հայրենասիրության, սիրո և փոխօգնության մթնոլորտ: «Երբեք, զուցե, հայ կյանքում իշխանությունն ու հասարակությունը այնպիսի համերաշխ միություն չէին կազմել, քան 1918 թվի գարնան և ամառվա պատմական ամիսներին, Արարատյան դաշտում, Մասիսի հովանու ներքո», - հիացմունքով նկարագրում է Ս. Վրացյանը:²⁶

Սարդարապատում հայ ծողովրդի տարած հաղթանակի մեջ մեծ դեր ուներ հայոց եկեղեցին:

Գաղտնիք չէ, որ դեռևս թուրքական արշավանքից առաջ և հերոսամարտի առաջին ժամերին, Երևանում (բարեբախտաբար ոչ ամենուր) գերիշխում էր հուսալքությունն ու քաղաքը թողնելու և դեպի Սևանի ավազան նահանջելու մտայնությունը: Այդ ախտի դեմ առաջինը ընդվզեց Գևորգ Ե կաթողիկոսը: Պարզապես չենք կարող չմեջբերել վեհափառի՝ հիրավի պատմական և փառավոր խոսքը, որ իր նշանակությամբ հավասարագոր է Վարդանանց պատերազմում Մեծն Վարդանի, Հովսեփ կաթողիկոսի կամ Ղևոնդ երեցի հայրենաշունչ և ոգևորիչ ճառին: Ականատեսների վկայությամբ՝ Գևորգ Ե կաթողիկոսը մոայլված լսելով իր մոտ եկած պատվիրակության առաջարկը՝ էջմիածինը թողնելու և առավել ապահով վայր՝ Կոտայք, Սևան կամ Բյուրական տեղափոխվելու վերաբերյալ, չսպասելով նրանց խոսքի ավարտին՝ պոռթկաց. «Մեր զորապետները Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Ո՛չ և ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդված Մայր Աթոռը: Եթե հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ շեմի վրա՝ Մայր Աթոռի, որի գահակալի պատիվն ունեմ Աստծո ողորմածությամբ»:²⁷ Պատմական վկայությունը փաստում է, որ վեհաբանի դահլիճում և Մայր Աթոռի բակում հավաքված ողջ բազմությունը միահամուռ բացականչում է «...Պատրա՛ստ ենք ելնելու, Վեհափառ Տեք»:²⁸ Ապա ծերունագարդ հայրապետն իր արծվային հայցքն ուղղելով ժողովրդին՝ շարունակեց. «Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն, ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես

²⁵ Նույն տեղում, էջ 145-146

²⁶ Միմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993 թ., էջ 145-էջ 142

²⁷ «Էջմիածին», 1998 թ., թիվ 5, էջ 9-10:

²⁸ Նույն տեղում, էջ 10

համոզված եմ նաև, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթական»:²⁹ Այնուհետև հայոց հայրապետը կարգադրում է հնչեցնել Մայր տաճարի և հայոց բոլոր եկեղեցիների զանգերը, որոնք չլռեցին մինչև ճակատամարտի հաղթական ավարտը՝ հերոսական պայքարի մղելով ժողովրդին:

Ավելորդ չհամարեցինք վեհափառի արտասանած բոցաշունչ ճառից մի ծավալուն հատված ներկայացնել, քանզի, վստահաբար, «Սարդարապատի հրաշքը խտացված և հիմնավորված է այստեղ»:³⁰ Հավելենք, որ թե՛ ճակատամարտին նախորդող և թե՛ դրա ողջ ընթացքում Էջմիածնի ողջ միաբանությունը և շուրջ 500 տարբեր աստիճանի հոգևորականներ Գարեգին եպ. Հովսեփյանի, Զավեն եպ. Բաբայանի, Թադևոս և Եզնիկ վարդապետների գլխավորությամբ հերոսության բազում օրինակներ տալով, զինվորներին մղում էին սխրանքների:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սարդարապատի հերոսամարտին ակտիվորեն մասնակցել է մեր հայրենակից, Տեր-Զաքար Տեր-Հարությունյանը: Ազնիվ, հայրենասեր, հայ քահանայի կատարյալ տիպար Տեր Զաքարը այսօր էլ ոգեշնչման աղբյուր է, ինչպես մեր Կոտայքի մարզի Նորգյուղի (նախկինում Թագագյուղ), այնպես և հարակից բնակավայրերի ազգաբնակչության համար: Մինչ օրս էլ պատմում ու պատմում են Տեր-Զաքարի անօրինակ՝ գրեթե առասպելական սխրանքների մասին, պատմում գուցե ավելազված կամ հնարված պատումներ և նրա փառքը գնալով աճում է ու աճում: Այդ մասին են վկայում նրա շիրիմին (աճյունն ամփոփված է հայրենի գյուղի եկեղեցու բակում) մշտապես դրված ծաղիկները: Փաստենք նաև դաստիարակչական անգնահատելի նշանակություն ունի երևույթն այս և մենք նրան չներկայացնելու իրավունք՝ պարզապես չունենինք: Ուստի մեր խոնարհումը բերելով նրա վառ հիշատակի առջև, հակիրճ ներկայացնենք նաև մեր արժանավոր հայրենակցի գործունեությունը Սարդարապատի հերոսամարտի ժամանակաշրջանում:

Կոտայքի Թագա գյուղի քահանա Տեր-Զաքարը (1868-1943թթ..) հայտնի էր Սարդարապատի ճակատամարտից շատ առաջ՝ որպես հայ ազատագրական շարժման ամենահերոսական դեմքերից մեկը: Դեռևս 19-րդ դարավերջին և 20-րդ դարսկզբին հայ զինական խմբերի հետ Տեր-Զաքարը անցել Արևմտյան Հայաստան, մասնակցել ֆիդայական մարտերին, ծանոթ եղել հայտնի ֆիդայիներին: Առաջին աշխարհամարտից

²⁹ Նույն տեղում

³⁰ Նույն տեղում

հետո, երբ մեր երկիրը լցվում է Արևմտյան Հայաստանից մազապուրծ՝ բազմահազար գաղթականներով, Տեր- Զաքարը, որպես վստահելի, ազնիվ և բարեպաշտ քահանա, նշանակվում է Երևանի փոխանորդ՝ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի տեղակալ և գաղթական հայության համար պարենամթերքի հայթայթման պատասխանատու՝ Կոտայք գավառում:

Սարդարապատի հերոսամարտի օրերին Տեր- Զաքարը հավաքում է ոչ միայն իր համագյուղացիներին, այլև Կոտայքի մյուս գյուղերի, մասնավորապես մերձակա՝ Շահապ գյուղի բնակիչներին և 250 հոգով, տասն օրվա ուտելիքով և սեփական զենքով շարժվում է Երևան և առանց կանգ առնելու՝ մի մասը երկաթուղով, իսկ գումակը՝ սայլերով, շտապում է Սարդարապատ, որտեղ և ամենաեռանդուն մասնակցություն է ունենում ճակատամարտին: Իր սխրանքների համար Գևորգ Ե կաթողիկոսը նրան պարգևատրել է քահանայական լանջախաչով:³¹

Հարկ է նշել, որ հայտնի հոգևոր և ազատագրական գործիչ Տեր – Զաքար Տեր-Հարությունյանի մասին պատմական ուսումնասիրություններ դեռևս չեն գրվել: Լևոն Սողոմոնյանի «Կոտայքի արծիվները» գրքում, առանձին հոդվածներում Տեր- Զաքարի մասին մասնակի հիշատակություններ կան, սակայն կարծում ենք, նրա կյանքի և գործի ծավալուն վերլուծությունը դեռևս կարժանանա մեր պատմաբանների ուշադրությանը: Ուրեմն՝ այս փոքր պատմական տեղեկանքը թող լինի հարգանքի տուրք՝ հայ ազատագրական շարժման ականավոր գործչի և մեր անվանի հայրենակցի հիշատակին:

Սարդարապատի հերոսամարտի օրերին տղամարդկանց հետ միասին կողք-կողքի կռվում էին նաև հայ կանայք՝ տիկնայք փափկասուն հայոց աշխարհի: Կանայք իրենց արժանի դերակատարությունն ունեցան հաղթանակի գործում: Հայ կանանց ակտիվ ներգրավվածությանը մեծապես նպաստեց նաև Մ.Սիլիկյանի հայտնի մարտակոչը, որտեղ դիմելով հայ կանանց գորավարը ասում էր. «Հայուհիներ, հիշեցե՛ք 5- րդ դարի փափկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դեպի մեծ գործը՝ անմահ Վարդանի կռիվների ժամանակ, հետևեցե՛ք նրանց օրինակին, եթե չե՛ք ուզում, որ ձեր պատիվը ոտնատակ լինի, խրախուսեցե՛ք այրերին, նզովե՛ք վախկոտներին, հավաքեցե՛ք ռազմապաշար, հաց, հագուստ...»³²:

³¹ Մ.Մուրադյան, Սարդարապատի և Բաշապարանի հերոսամարտերի հոգևորական մասնակիցներ, Էջմիածին, 1973 թ., թիվ 5, էջ 48

³² Միմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993թ., էջ144

Բժիշկներն ու բուժքույրերը միշտ եղել են առաջավոր դիրքերում և կազմակերպել են առաջին բուժօգնություն, որը մեծ մասամբ վիրաբուժական բնույթի էր: Փիրումովը հիշում է բուժքույրեր Անահիտին և Լույսին (Լույան հետագայում ամուսնանում է գնդապետ Շնետուրի հետ):³³ «...Արարատյան դաշտի տարբեր գյուղերից ու վայրերից կանայք ու ջահել աղջիկներ հաց, ջուր, ուտելիք էին հասցնում կովոդներին: Ամեն օր գնացքները, ծանր բեռնված, Երևանից գալիս էին Սարդարապատ, և հայ կանայք իրենց բերած հացն ու ջուրը հասցնում էին առաջավոր դիրքերում կովոդ զինվորներին:³⁴

Դրոյի հրամանով հայ կանայք ու աղջիկները դաշտերից սիբեխ էին հավաքում ու կերակրում զինվորներին:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սարդարապատի հերոսամարտում հայերի հետ կողք-կողքի կովում էին տարբեր ազգերի զավակները՝ ռուս՝ Պերեկրյոստովն ու Ա. Շնետուրը, հույն՝ Սակիլարին: Սարդարապատում հայ ժողովրդի տարած հաղթանակի մեջ անգնահատելի է Հայաստանում բնակվող բարկամ եզդի ժողովրդի դերը:

Հայ-եզդիական բարեկամությունը ամրապնդվել էր դեռևս Մեծ եղեռնի օրերին և դրանից առաջ, իսկ այդ բարեկամության հիմքը դրվել էր Զահանգիր Աղայի և Անդրանիկ Ջորավարի քաղորդ-սանիկությամբ: Զահանգիր աղան մինչև վերջ հավատարիմ մնաց հայ-եզդիական բարեկամությանը և Անդրանիկի հետ ակտիվորեն մասնակցեց ազատագրական և պաշտպանական մարտերին:

Սարդարապատի օրերին Ուսուր Բեկի հետ միասին նրանք կռիվներ մղեցին թուրքական ուժերի դեմ: Հավատարիմ մնալով հայ-եզդիական բարեկամությանը՝ կարողացան հետ մղել թուրքական զորքները: Եղեգնուտի ուղղությամբ մահմեդական բնակչության շարժը կանգնեցնելու գործում իր դերակատարումն ունեցավ նաև Զահանգիր աղան, ով իր հեծյալներով հետ մղեց թուրքական զորքը, որը շարժվում էր Արաքս կայարանի ուղղությամբ:

Այդ ժամանակ, երբ հակահարձակման անցավ Սարդարապատի գունդը, Սարդարապատի երևանյան ջոկատի հետ միասին կովում էին նաև եզդիական ջոկատները: Զահանգիր աղայի ջոկատային ուժերը փայլեցին Ալազյազի ճակատում: Այստեղ պետք է հիշել նաև Ուսուր Բեկի ուժերի կատարած աշխատանքը, որոնք կարողացան համագործակցել հայկական

³³ Ա.Մելիքյան, 1918թ.Մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2012թ., թիվ2-3, էջ 158

³⁴ Լույս տեղում

ուժերի հետ և միասին հետ մղել թշնամուն: Երբ թուրքերին հաջողվեց գրավել Ջամշու կոչվող գյուղը, այստեղ նրանք սրի քաշեցին տեղի բնակչությանը, և որոշ տվյալներով՝ նաև մինչև 500-600-ի հասնող եզդիական բնակչությանը: Հակահարձակման շնորհիվ հայ-եզդիական ուժերին հաջողվեց ազատագրել Ալագազի շրջանի գյուղերը: Հենց այս ջոկատների մեջ էին նաև Ջահանգիր աղայի ուժերը, որոնք, իրենց վրա ընդունելով թուրքական ուժերի մի մասի գրոհը, կարողացան հետ մղել նրանց և անցնել հակահարձակման: Դա փայլուն համագործակցություն էր հայկական հիմնական ուժերի և եզդիական ջոկատների միջև, ինչի արդյունքում այս շրջանը ազատագրվեց:

Մեր կարծիքով հենց այս և մի շարք այլ գործոններով էր պայմանավորված Սարդարապատի հաղթանակը:

Հատկանշական է, որ ի տարբերություն Վանի և Մուսա լեռան հերոսամարտերի, որտեղ բնաջնջման սպառնալիքը վերացվեց մի դեպքում՝ ռուսական բանակի, իսկ մյուսում՝ ֆրանսիական հաճանավերի օգնության շնորհիվ, իսկ ռազմական հաջողությունները պայմանավորված էին մեծ մասամբ՝ ոչ կանոնավոր ջոկատների բացառիկ արիությամբ, Սարդարապատի հաղթանակը արդյունք էր հայկական կանոնավոր զորամասերի, դրանց հրամանատարների խելամիտ պլանավորված և իրականացված մարտավարական գործողությունների:

Հարկ է նշել սակայն, որ Սարդարապատում (Մայիսյան հերոսամարտերում) ձեռք բերված ռազմական հաջողությունները չամրապնդվեցին պատշաճ դիվանագիտական ձեռքբերումներով և ամեն գնով թուրքերի հետ հաշտություն կնքելու քաղաքականությունն ի վերջո հանգեցրեց դիվանագիտական զիջումների և տարածքային ծանր կորուստների: «Այն, ինչ հետ էր վերցվել թուրքերից արյան գնով, վերադարձվել էր նրան Բաթումի թանաքով», - իրավացիորեն նշում է Ս. Աֆանասյանը:³⁵

Սարդարապատը նախ և առաջ գոյության պատերազմ էր՝ գոյամարտ, որի հաղթական ելքը պայմանավորված էր ապրելու իրավունքը իր իսկ ձեռքով հաստատելու վճռականությամբ և կամքով: Արարատյան դաշտավայրի սրտում Երևանից ոչ հեռու մեր ժողովրդի՝ ցեղասպանությունից մազապուրծ բեկորները կենաց ու մահու գոտեմարտ մղեցին եղեռնագործ թշնամու դեմ՝ հանուն հայրենի երկրի վերջին թիզ հողի, հանուն գոյատևման: Սարդարապատը հերոսամարտ էր «հայոց

³⁵ Ս.Աֆանասյան, Սարդարապատի հաղթանակը, Հայստան 1918թ. մայիսի 21-29, Երևան 1991թ, էջ 70

հայրենական պատերազմը»,³⁶-նշում է պատմաբան Հ.Ավետիսյանը, համաժողովրդական պատերազմ, որում մեկ ոգի և մեկ բռնցք դարձած, միական ու միաբան հանդես էին գալիս ճակատն ու թիկունքը, բոլոր քաղաքական ուժերը, հասարակության ամենատարբեր խավերի ներկայացուցիչները՝ պաշտոնյան ու զինվորականը, մտավորականն ու հոգևորականը, վաճառականն ու գաղթականը:

Գրեթե հոգևարք ապրող ժողովուրդը այս միաբանության արդյունքում ժողովեց իր վերջին ուժերը և բռնցք դարձած անկասելի հարվածով ջախջախեց թշնամու բազմահազարանոց բանակը:

1918 թվականին հայերը թուրքերի դեմ ժողովրդական պատերազմ էին մղում, որին մասնակցում էր ամբողջ հայ ժողովուրդը: Թուրքական զորքերը Արևելյան Հայաստան էին ներխուժել ամբողջ հայությանը ոչնչացնելու նպատակով և հայ ժողովուրդն էլ կռվի ելավ ամբողջությամբ՝ մեծից մինչև փոքրը, իր բոլոր կուսակցություններով և դասակարգերով: Հաղթահարվեց կուսակցական, դասակարգային, քաղաքական, հատվածային պառակտվածությունը, որը նախորդ շրջաններում երբեմն էական վնասներ էր հասցրել ազատագրական շարժմանը:

Սարդարապատը հայոց կանոնավոր ուժի և աշխարհագրի համախմբման բարձրակետն էր, բարեկամի հետ արդար հացի վերջին պատառը և դժվարին փորձությունը կիսելու, թշնամու դեմ աննահանջ ընդվզելու մեր կենսակերպի հավաստումը:

Սարդարապատը մեր ազատության և անկախության գաղափարի դարավոր երազանքի իրականացումն էր՝ ստրկության և հալածանքների շուրջ վեցհարյուրամյա մաքառումներից հետո վերահաստատված ինքնության առհավատչյան: «Կար մի ժամանակ, երբ կարծես մեռած էր անկախության կայծը,- նշում է գեներալ Հակոբ Բազրատունին,- բայց ներկա պատերազմում հայ ազգը արեց չտեսնված զոհաբերություններ և ցույց տվեց, որ ինքը գիտե ոչ միայն մարտիրոսանալ, այլև կռվել իր ազատության համար: Պատերազմով ինքն իրեն արժանացրեց ազատության»:³⁷

Սարդարապատը մեր դարավոր բաղձանքի իրականացման՝ կորուսյալ պետականության վերականգնման հրաշքն էր: «Բաբելոնացիների, ասորեստանցիների, փյունիկեցիների և այդ հնագույն ժողովուրդների հետ պատմության ասպարեզ իջած հայ ժողովուրդը 1918 թվականի մայիսի 22-27-ին, Սև ջրից Սարդարապատ տանող

³⁶ Վ.Վիրաբյան, Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ, Երևան 2007թ., էջ 43

³⁷ «Հայկական բանակ», ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես, 1998թ., թիվ 2, էջ 26

հարթավայրում փայլուն կերպով բռնեց իր գոյատևման իրավունքի դժվարին քննությունը»:³⁸ Այն՝ «դարավոր ստրկությունից ազատագրված ժողովրդի ինքնքիսատատման փայլուն վկայությունն էր, հայոց երկրի ճակատագիրը սեփական ձեռքերով կերտելու կամքի արտահայտությունն ու հավատամքը», - հավելում է Վ. Վիրաբյանը:³⁹

Սարդարապատը մեր դարավոր, անվախճան երթին խարսխվող պատգամների հավերժական դողանջն է, որ հաղթության հենք դարձավ:

Սարդարապատը հայ ժողովրդի հազարամյա պատմության աստեղային ժամն է, մայիսյան այն հրեղեն շաբաթը, որը կործանման եզրին հասած ազգի համար դարձավ գոյատևումի ու ազգապահպանության խարիսխ: Եվ իրավացի է անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ռոքըրը՝ «Հայաստան: Ազգի վերապրումը» նշանավոր գրքի հեղինակը, որ, լիովին ըմբռնելով այդ հաղթանակի ողջ իմաստը, գրել է. «Եթե հայերը պարտություն կրեին Սարդարապատում, Հայաստան բառը կարող էր նշանակել սոսկ մի հին աշխարհագրական տերմին, ինչպես, օրինակ, Կապադովկիան»:⁴⁰

Սարդարապատում հնչած խրորտ մարտակոչի արձագանքն էր, որ հատելով ժամանակային անջրպետը՝ 1988-ին թևածում էր Արցախի լեռերում՝ համայն հայությանը ոտքի հանելով նոր՝ հաղթական ազատամարտի:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԴԱՍԵՐԸ

«Հայ ժողովուրդը միշտ հիացրել է իր պատմությամբ, դարերով կռվել իր քաղաքական ազատության համար, և երբ այսօր Հայստանի անկախությունը փաստ է, ժողովուրդը յուր ամբողջությամբ չի ընդունում, որ այժմ Հայաստանի Հանրապետությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ շարունակությունը նվիրական պատմական Հայստանի»,⁴¹ - նշել է ՀՀ ՆԳ նախարար Ա. Գյուլիսանյանը 1919 թ. կառավարության նիստի ժամանակ արված իր ելույթում: «Բայց որպեսզի հայ ժողովուրդը զգա և գիտակցի, որ նա ապրում է յուր նախնիների հարազատ հողի վրա, որ նա, ուրեմն, մեր երկրի տերն ու տիրականն է եղել հազարավոր տարիներով,

³⁸ «Էջմիածին» ամսագիր, 1968թ., թիվ 5, էջ 16

³⁹ Վ. Վիրաբյան, Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ, Երևան 2007 թ., էջ 44

⁴⁰ Ս. Աֆանասյան, «Սարդարապատի հաղթանակը», 1991, էջ 7

⁴¹ Վ. Վիրաբյան, Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ, Երևան 2007 թ., էջ 45-46;

այժմ, և, պիտի լինի միշտ, անհրաժեշտ է նրա՝ այժմյան մեր երկրի մասին մտապատկերները կապել անցյալի հետ»:⁴²

Մայիսի 28-ի շուրջ մեզանում բախվող ազդակների համադրումն ու հաղթահարումն ավելի բարդ գործ է, ուստի, հերոսամարտերի 100-ամյակի տոնակատարությունների այս օրերին պարտավոր ենք առաջնորդվել այն հստակ համոզմունքով, որ հայ ազգի բոլոր զավակների համար, որտեղ էլ նրանք բնակվեն, 2018 թվականի Մայիսի 28-ը Հայոց պետականության վերականգնման 100- ամյակն է, որը, ի տարբերություն նախորդ միապետությունների, իբրև հանրապետական վարչակարգ, իրենով խորհրդանշում է ոչ միայն մեր անկախության, այլև ազատության օրը: Ավելին, երբեք չպետք է մոռանաք, որ Մայիսի 28-ը եղել ու մնում է ոչ միայն ազատ ու անկախ, այլև **Միացյալ Հայաստանի** (ընդգծումը մերն է, Լ.Մուրադյան) առարկայական խորհրդանիշը:

Հետևաբար, նախ՝ հենց այս պահից սկսած, Հայաստանը, որպես պետություն, «պարտավոր է ողջ աշխարհին հիշեցնել, որ 2018 թվականին վերանկախանալով, իբրև 1878 թվականից միջազգային դիվանագիտության օրակարգ մտած Հայկական հարցի իրավատեր, շարունակում է պահպանել նրա բուն առարկայի Արևմտյան Հայաստանի հանդեպ իր իրավունքները»:⁴³

Այնուհետև Այդ նպատակով ժամանակին խորհրդային շրջանում կազմակերպված ստանդարտ տոնակատարությունները կրկնելու փոխարեն, մենք պարտավոր ենք վերադառնալ մեր ակունքներին՝ Հայաստանի Հանրապետության կողմից ժամանակին որդեգրված, բայց խորհրդային իրողությունների պայմաններում մոռացված արարողակարգերին, մասնավորապես՝ 1919 թվականի մայիսի 28-ին նշված ՀՀ առաջին տարեդարձի հանդիսությունների ազգային բովանդակությանը՝ Համապատասխան տեղեկատվական դաշտի ձևավորման պարագայում դա հնարավորություն կտա ապահովել Հայաստանի Հանրապետության 100 -ամյակի ոգեկոչման արարողությունների քաղաքական բովանդակության ճշգրիտ ընկալումը միջազգային հանրության կողմից, որի առանցքում պետք է դրված լինի՝ Սան - Ռեմո -- Սեր - Վ. Վիլսոնի Իրավարար Վճիռ շղթայում ամրագրված՝ Արևմտյան Հայաստանի իրավատիրոջ իրավունքների անժամանցելիության գաղափարը՝ Ապա՝ մեր երկրում և սփյուռքում

⁴² Մայիսի 28-ն իբրև փորձաքար, խմբագրական, «Վեմ» համահայկական հանդես, 2018 թ. թիվ 1, էջ 7:

⁴³ Նույն տեղում, էջ 8:

պարտավոր ենք ցուցահանդեսների, հաղորդումների, դասախոսությունների և գիտաժողովների միջոցով Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերի անանց գաղափարաքաղաքական ժառանգությունը դնել «անկախության ներկա սերնդի առջև ու ապահովել հաջորդական սերունդների այնպիսի երկխոսություն, որում առաջինի ապրած կյանքի գրքային պատմությունը մեր աչքերի առջև նորից փոխակերպվի երկրորդի կենդանի հիշողության»։ Ինչպես նաև, հարկավոր է սերունդների հիշողության շղթայի վերականգնման միջոցով գտնել արտաքուստ միայն նեղ - գիտական թվացող այն այժմեական և սուր հարցերի պատասխանները, որոնք վաղն անպայման նորից կանգնելու են ներկա անկախ Հայաստանի երիտասարդ քաղաքացիների առջև։ ՀՀ ձևավորման, երկուսուկես տարվա գոյության և անկման պատճառների բացահայտումով ցույց տալ, որ դրանց հիմքում ընկած խորքային օրինաչափություններն ու մարտահրավերները ներկա են նաև մերօրյա Հայաստանում ու նրա շուրջ՝ Հիրավի, 1918 -1920 թվականների Հայաստանի Հանրապետության պատմությունն այն պարզ հայելին է, որի վրա մեկ առ մեկ երևում են մեր ներկա՝ թվով երկրորդ անկախ պետության առջև ծառացած բոլոր մեծ ու փոքր մարտահրավերները, որոնց հաղթահարման պարագայում միայն՝ մենք կդառնանք համաշխարհային հանրության լիարժեք մասնիկը։ Ուրեմն՝ «մեզ համար 1918 -1920 թվականների Հայաստանի Հանրապետությունը ոչ թե անցյալ է, այլ մեզանից բոնությամբ խլված ապագա։ 1991-ին մենք այդ ապագան վերածել ենք սոսկ տարտամ ու անորոշ ներկայի։ Ուստի լիարժեքորեն անկախ Հայաստանի տեսլականի հանդեպ մեր պահանջատիրական կեցվածքը խոստանում է դառնալ ազգի ու պետության կենսունակության վկայությունը»։ Ուրեմն՝ պատմության, հիշողության ու արդիականության մշտանորոգ սահմանագծին գտնվող Հայաստանի Հանրապետության 100-ամյակը պատշաճ կերպով ոգեկոչելու առաջադրանքը ոչ միայն Հայոց պետականության հասունության փորձաքարն է, այլև ողջ հայ ազգի խաթարված քաղաքական ինքնագնահատականի վերականգնման մեկնակետը՝ Մարդարապատի բոցերում ծնված «Մայիսի 28-ը ոչ միայն հայոց պատմության միֆն է, այլև գալիք օրերու դրոշմ, Հայ Ազգի հարության պատարագը, որը կըմատուցվի ցեղին հավիտենական կենսունակությունը հռչակելու համար»⁴⁴։

⁴⁴ Վ. Վիրաբյան, Հայոց պատմության հիմնահարցերի շուրջ, Երևան 2007 թ., էջ 45

Լ.Մուրադյան

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԱՍԵՐԸ

Ամփոփում

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացրել ենք Սարդարապատի հերոսամարտի նշանակությունը հայ ժողովրդի պատմության հետագա ընթացքի պատմական ճակատագրի վրա: Սարդարապատի հերոսամարտում հայ ժողովրդի տարած հաղթանակն արդյունք էր հայ հասարակական-քաղաքական բոլոր շերտերի համագգային միաբանության, հայ և Հայաստանում բնակվող բարեկամ ժողովուրդների եղբայրության, եկեղեցու և ժողովրդի միասնականության: Պատմական նշանակությունը՝ հայ ժողովրդի բնաջնջման թուրքական քաղաքականության վիժեցումը, հայոց պետականության վերածնունդը, հետագա տասնամյակներում տնտեսական և մշակութային աննախադեպ վերելքը և Հայաստանի երրորդ հանրապետության ծնունդը: Դասերը ազգային համախմբումն ու հայրենիք-սփյուռք կապերի զարգացման անհրաժեշտությունը, Արցախի անկախության պահպանումն ու ամրապնդումը, հզորացումն ու համաշխարհային տնտեսական-քաղաքական համակարգին ինտեգրվելը, համագգային գաղափարների իրագործումը:

Л.Мурадян

ЗНАЧЕНИЕ И УРОКИ САРДАРАПАТСКОЙ ГЕРОИЧЕСКОЙ БИТВЫ

Резюме

В данном исследовании представлено значение, уроки и роль Сардарапатской героической битвы. Результатом Сардарапатской битвы является победа всех слоев армянского народа, их солидарность и дружба братских народов, проживающих в Армении. Значение Сардарапатской битвы заключается в провали плана нового геноцида со стороны Турции и в провозглашении армянского государства, уроках национального единства, в сохранении армянской государственности, социально-политическом и культурном развитии Армении, укреплении связей диаспоры с Арменией и в осуществлении целей армянского народа.

L. Muradyan

THE MEANING AND LESSONS OF SARDARAPAT BATTLE

Summary

In 1918 the Armenion nation was about to destruct. Armenians took a brilliant victory in May heroic battle due to nationwide struggle. The reasons of the victory were: 1. Armenians unity, 2. Unity of all social classes,

3. Peopples friendship, 4. Participation of Armenian Church, 5. Active participation of women in fighting operations. The Role of Sardarapat Battle

1. The saliation of Armenian people from another genocide, 2. The proclamation of the First Republic of Armenia. The biggest lessom of Sardarapat Battle is national solidarity and independence preservation.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ, ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ Բառախաղը որպես թարգմանական խնդիր	3
ՆԱՐԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ Հայերենում և իսպաներենում տարածական իմաստների արտահայտման զուգադրական քննություն	15
ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՅԱՆ Բառակազմության ուսումնասիրման հիմնախնդիրները հանրակրթության միջին դպրոցում	26
ՀՈՒՓՄԻՄԵ ԹՈՐՈՍՅԱՆ Անձի հատկանիշ արտահայտող գոյականական դարձվածային միավորները հայերենում և պարսկերենում	34
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
ՄԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ Ցավ, որ ուզում է խոսել	47
ՆԱՌԱ ՄԱՐԳՍՅԱՆ 1894-96 թթ. ջարդերի երգիծադրերգական արտացոլումը Առանձարի նորավեպերում	58
ЭГИНЕ СААКЯН Сказка А. М. Ремизова «Саркси-Шун»: волки и псы святых полководцев	72
ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՒՍՅԱՆ Հայոց լեզվի տպագիր առաջին երեք դասագրքերը	86
ԱՄԱԼՅԱ ՔՈՉԱՐՅԱՆ Մանկական գրականությունը որպես մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց	94

ԱՐՓԻՆԵ ՄԻՄՈՆՑԱՆ

Եպիսկոպոս Թովմա Վանանդեցին և նրա
հրատարակությունները 100

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՍԵՓՑԱՆ

Գրիգոր Մազիստրոսի «Առ հեղգ աշակերտս
յուսումն եւ հպարտս գոլ» թուղթը
(փորձ նոր թարգմանության) 110

ՆԱՐԻՆԵ ՇԱՀԲԱԶՑԱՆ

Սիրո մոտիվը «Հազար ու մի խաղ» ժողովածուում 120

ԼԻԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Նիկողայոս Մառի և Գարեգին Հովսեփյանի
նամակագրությունը 129

ՎԱԼՏԵՐ ԲԵՐԲԵՐՑԱՆ

Վանկաշեշտական ոտանավորի կառուցման եղանակները
Վ. Տերյանի պոեզիայում 135

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

**ԾՈՎԻՆԱՐ ՇԱՀԻՐՑԱՆ, ՄԵՏԱՔՍՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ,
ԱՐԵՎԻԿ ՄԱՂՈՅԱՆ**

ՀՀ հիմնական դպրոցի տարրական դասարաններում
բառապաշարի ուսուցումն/ուսումնառությունը նորագույն
տեխնոլոգիաների կիրառման միջոցով 147

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՓԱՌԱՆՁԵՄ ՏՈՆՈՅԱՆ

Կառուցողական կրթության նախադրյալները Խ. Աբովյանի
Նախաշաւիղ երկում 160

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ
էթնոմանկավարժության մեջ 167

ՇԱՐՄԱՂ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գունային մակդիրները Վ. Տերյանի «Գիշեր և հուշեր»
շարքում 176

ԱՐՄԻՆԵ ՇԵԳՈՒՆՑ

Ուսուցչի աշխատանքի վերահսկողության իրականացման
մոդելները 184

ՌԻՄԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ԱՎԱԳՅԱՆ

Դիտարկումներ մատաղ սերնդի համակողմանի զարգացման
խնդիրների և դրանց արդիական նշանակության շուրջ 191

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Փոխարքա Վաչե Ա Վաչուտյան՝ 13-րդ դարի
եկեղեցաշինարար 196

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ

Հայկական եկեղեցիների դերը Սիրիայի և Լիբանանի հայ
համայնքերի կյանքում 213

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության
վերաբերմունքը 1919 թ.
վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի
նկատմամբ 220

ԼԻԼԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մարդարապատի հերոսամարտի նշանակությունն ու
դասերը 238